Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1901
1902
1903

B4
7-60

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

ԷՕԺԷՆ ՍԻՒ

ԵՕԹՆ ՄԱՀԱՑՈՒ ՄԵՂՔԵՐ

ԹԱՐԳՄԱՆԻՉ

ՊԵՏՐՈՍ ԱՏՐՈՒՆԻ

ՀՐԱՏԱՐԱԿԻՉՔ

Յ. ՋԷՆՃԻՐՃԵԱՆ ԵՒ ՆՇԱՆ Կ. ՊԷՐՊԷՐԵԱՆ

Բ

ԲԱՂՔԱՔԱՂԱՔՄԱՀՄՈՒԵՐՈՒՄԸ

معارف نظارت جلیله‌سنك رخصتیله طبع اولنمشدر — ۲ شباط سنه ۹۸ — نومرو ۱۰۷۷

Կ. ՊՕԼԻՍ
ՏՊԱԳՐ. ՆՇԱՆ Կ. ՊԷՐՊԷՐԵԱՆ
—
1885

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

ԷՕԺԷՆ ՍԻՒ

ԵՕԹՆ ՄԱՀԱՑՈՒ ՄԵՂՔԵՐ

ԹԱՐԳՄԱՆԻՉ

ՊԵՏՐՈՍ ԱՏՐՈՒՆԻ

ՀՐԱՏԱՐԱԿԻՉՔ

Յ. ՉԷՆՃԻՐՃԵԱՆ ԵՒ ՆՈՅԱՆ Կ. ՊԷՐՊԷՐԵԱՆ

Բ

ԲՂԵՍԱՆԱՑ ՀԱՅՈՑ ԹՈՒԹԱՆ

معارف نظارت جلیله‌سنك رخصتیله طبع اولنمشدر — ۲ شباط سنه ۹۸ — نومرو ۱۰۷۷

Կ. ՊՕԼԻՍ
ՏՊԱԳՐ. ԶԱՐԴԱՐԵԱՆ
—
1883

95447-42

900-2003

ԵՕԹՆ ՄԱՀԱՑՈՒ ՄԵՂՔԵՐ

ԲՂՋԱԼԽՈՄՈՒԹԻՒՆ

ՄԱՏԼԷՆ

Ա.

Էլիզէ – Պուրպոնի ապարանը (Բօսֆաորի մարքիզուհւոյն նախկին ապարանքը) որ Սէնթ – Օնորէ արուարձանին մէջ տեղն է, փետրուարի յեղափոխութենէն առաջ, գերմանական դաշնակցութեան իշխաններէն սկսեալ մինչեւ Իպրահիմ – բաշայ, բոլոր օտար արքայազուններու և իշխանազանց իջեւանն էր։

Անցեալ տարիներէն մէկուն յուլիս ամսուն վերջերը, առաւօտեան ժամը 11ի միջոցին, վեց շաբաթէ ի վեր Էլիզէ բնակող Ն. Ա. Վ. Լէօբօլտ Մաքսիմիլիէն արքիդքսին քանի մը աղնուականներն ու երիտասարդ քարտուղարները պալատին սրահներէն մէկուն մէջ ժողուուած էին։

«Շան տը Մառսի մէջ Նորին արքունի վեհափառութեան ի պատիւ տրուած զօրահանդէսն երկար տեւեց –, կ'ըսէր մին։ — Այս առտու իշխանին ներկայանալու անձինք շատ պիտի խռնին։ — Արդէն, յարեց ուրիշ մը, 5-6 հոգի կէս ժամէ ի վեր կը սպասեն։ — Եւ իշխանը, որ գինուորական ճշդապահութեան այնքան նախանձախնդիր է, շատ պիտի ցաւի ակամայ ուշ մնալուն»։

Այն պահուն սրահին մէկ դուռը բացուեցաւ. առ առաւելն քսան տարեկան երիտասարդ մը, որ պալատին մէջ կը բնակէր, սրահէն անցաւ եւ գնաց քովի սենեակը. տեսակ մը բարութեամբ և ամօթխածութեամբ բարեւելով մեր յիշած անձինքը, որք, գինքը տեսնելնուն պէս, անանկ յարգանք մը ցոյց տուին անոր, որու արժանի չէր երեւնար իւր տարիքովն ու դիրքովը։

Երբ նա անհրեւութացաւ, աղնուականներէն մին սրահէն անցնող երիտասարդն ակնարկելով՝ ըսաւ.

— Խեղճ կոմս Ֆրա՛նց, միշտ միևնոյն ամօթխածն է. վանքէն եկնող 15 տարեկան աղջիկ մը իրմէ աւելի համարձակ կ'ըլլայ . . . : Իւր այս վիճակը տեսնողը կրնայ հաւատալ որ երեք տարի Կովկասու մէջ նշանաւոր քաջութեամբ մը պատերազմած ըլլայ . . . և Վիէննայի մէջ ալ կատաղի մենամարտութիւն մ' ըրած ըլլայ, որմէ յաղթութեամբ դուրս եկաւ։ Ես այնպէս կը կարծեմ որ, պարոններ, Ֆրանց կոմսը աչքերն անմեղօրէն խոնարհելով սուրբ հարուածներ կուտար Զէրքէզներուն։

— Եւ կարծեմ թէ Ն. արքունի վեհափառութիւնն գոհ է որ իւր . . .

— Սը՛սա, անխոհեմութիւն չ՚ուզեր, սիրելիս։

— Թողէ՛ք որ խօսքս լմնցնեմ։ Կ՚ըսէի թէ իշխանը շատ գոհ է իւր սանին անապալ ամօթխածութենէն։

— Ես ալ ձեզի պէս անանկ կը կարծեմ որ իշխանը ի սկզբան շատ վախցաւ թէ մի՛ գուցէ այս գեղեցիկ տղան սաստանայական Բարիզու փորձութեանց ենթարկուի։ Ինչո՞ւ կը ծիծաղիք, սիրելիս։

— Ո՛չինչ։

— Կը կարծէ՞ք որ Ֆրանց կոմսը, իւր առերեւոյթ անմեղութեանն հակառակ, սիրահարութիւն մ՚ըրած ըլլայ։

— Տեսէ՛ք, պարոններ, ժպիտ մը ի՛նչ նշանակութիւններ կրնայ եղեր ունենալ, վասն զի դուք վկայ էք որ ես միմիայն ծիծաղեցայ։

— Առանց կատակի, սիրելիս, կը կարծէ՞ք որ Ֆրանց կոմսը . . .

— Ես բան մը չ՚եմ կարծեր, բան մը չ՚եմ ըսեր, և լուռ կը մնամ նման այն քաղաքագէտին, որու շահը լռել կը պահանջէ, կամ այն նորատի աղնուական ընտանին, որ առաջին անգամ ըլլալով իշխանին կը ներկայանայ։

— Իշխանն ալ անանկ նայուածք մ՚ունի որ, ամենէն լիրբերն անգամ կը քաշուին։ Բայց գալով Ֆրանց կոմսին . . .

Սրահին մէջ խմբուող անձանց մէկ պաշտօնակիցն այս խօսակցութիւնն ընդմիջեց։

Այս նորեկն Ֆրանց կոմսը մոռցնել տուաւ և երեք հոգի միաձայն հարցուցին իրեն.

— Էյ, նայինք սա ձեր հրաշալիքը, Սէն-Մարսօ արուարձանին հռչակաւոր գործարանը կ՚արժէ՞ որ մարդ երթայ տեսնէ։

— Ինձ համար, պարոններ, որ մեքենայից շինութեանը շատ հեռաքրքիր եմ, պատասխանեց նոր եկողն, այս առաւօտ շատ նշանաւոր առաւօտ մ՚էր, և կը վկայեմ՝ որ այս գործարանին տէրը, պարոն Շարլը Տիւթէրթրը ճանչցած ամենէն վարպետ և գիտուն մեքենագէտներէն մին է, առանց նկատելու որ իրեն պէս սիրուն մարդ ալ քիչ կայ. կը յուսամ թէ իշխանը կը համոզեմ որ երթայ անոր գործարանը աչքէ անցնէ։

— Սիրելի՛ս, դուք ձեր ժամանակը չնչին բաներու չ՚էք վատներ. ես այդպիսի բարձր յատկութիւններ չ՚ունիմ, և իմ յաւակնութիւնս ալ դեռ պարզապէս յոյս մ՚է։

— Այդ յոյսն ի՞նչ է տեսնենք։

— Հռչակաւորն տօքթօր Կասթէրինեի տունը ճաշի հրաւիրուիլ։

— Այո՛, Եւրոպայի ամենէն մեծանուն և հմուտ որկրամոլին տունը։

— Կ՚ըսեն թէ իւր սեղանը որկրամոլաց Արքայութեանը մէկ օրինակն է։

— Աւա՜ղ, չ՚եմ գիտեր թէ այս Արքայութիւնն ալ միւսին պէս պիտի փախչի մի ձեռքէս, բայց կը յուսամ։

— Ես ալ իմ մեղքս խոստովանիմ։ Բարիզու մէջ դիս ամենէն աւելի հրապուրողը, շլացնողը, հիացնողը, մինչեւ իսկ ինձ բան սովրեցնողն . . .

— Ի՞նչ է նայինք։

— Է, (այս հայհոյութիւնն թո՛ղ խըպնեցնէ, եթէ կուզէ, մեր ամէկոտ և հըպարտ Գերմանիան) այդ բան է . . .

— Չ՚ըսե՞ս . . .

— Մապիլի պարահանդէսն է։

Այս անկեղծ խոստովանութենէն յառաջ եկած խնդուքներն ու քահ քահները դեռ կը շարունակուէին, երբ արքիդքսին քարտուղարներէն մին ներս մտաւ՝ ձեռքը երկու նամակ բռնած և զուարթութեամբ դոչեց.

— Պարոննե՛ր, Պոլօնեաէն և Վենեսիկէն նոր նոր լուրեր։

— Կեցցե՛ս, սիրելիս Իւլրիք. ի՞նչ լուր կայ։

— Ամենահետաքրքրական եւ տոտրոց լուրեր։

— Իրա՞ւ։

— Շո՛ւտ, պատմեցէ՛ք մեզ նայինք, սիրելիս։

— Նախ Պոլօնեա եւ ապա Վենեսիկ

— Ա՛յո՛, եթէ այդ կինը սատանան չէ։

— Իւլրի՛ք, սրտերնիս մի՛ հատցներ և բացատրէ՛։

— Կը յիշէ՞ք, պարոններ, որ անցեալ տարի Գերմանիոյ մէջ Մերանտայի Մարքիզուհի անուամբ նորատի այրի կնկան մը խօսքը կ'ըլլար։

— Անշո՛ւշտ, մեր Մոզէր–Հարթմանն բանաստեղծը սքանչելի և բոցավառ ո-

Բայց, պա՛րոն, ո՞ւր կ'երթաք։ (Երես 8)

բաւական օրեր անհաւատալի խառնաշփոթութեան մը մէջ ինկեր են։ Ոչ նուազ անհաւատալի դէպքերու պատճառաւ։

— Թեղափոխութի՞ւն մ'է ծագեր։

— Իտալացի՞ք ապստամբեր են։

— Պապը նոր հրամա՞ն մ'է հաներ։

— Ո՛չ, պարոններ, խնդիրը կնկան մը վրայ է։

— Կնկա՞ն մը։

տանաւորներ գրեց իւր վրայ՝ նոր Ամիրոդիտէ անուամբ։

— Հա՛, հա՛, հա՛, ի՜նչ ծիծաղելի սըխալ, ըսաւ խօսակցաց մին բարձրաձայն խնդալով. Մոզէր–Հարթման, այն կրօնական բանաստեղծը, այն անբիծ մարդը, որ անարատ ձեան նման մաքուր և ցուրտ է, հրավառ ոտանաւորներ գրէ՞ Ամիրոդիտէի վրայ։ Այդ իրաւունքէ սքանչելի ոտա-

նաւորներն լսեցի, բայց անշուշտ անոնց հեղինակն ուրիշ Հարթման մ'է։

— Եւ ես, սիրելիս, կը հաստատեմ թէ այդ քերթուածն, զոր Իրաւամբ Սափոկլի ամենէն գեղեցիկ տաղերուն հաւասար կը դնեն, Մօղէր — Հարթմանի շինածն է, և Իլլրիք ալ կրնայ վկայել ասոր։

— Շատ իրաւ է, յարեց Իլլրիք. ես այս հնութեան արժանի ոտանաւորները նոյն իսկ Մօղէր — Հարթմանի բերնէն լսեցի։

— Քանի որ այդպէս է՝ կը հաւատամ. բայց այս անհասկնալի փոփոխութիւնը ինչպէս մեկնելու է։

— Բանաստեղծին երդած կինը, այսինքն Միրանտայի մարքիզուհին յառաջ բերաւ այդ փոփոխութիւնը, որով տաղանդաւոր՝ բայց ցուրտ մարդն եղաւ հզօր հանճար մը, որու անունն այսօր տարածուած է ամբողջ Եւրոպայի մէջ։

— Ես անկարելի կը կարծէի Մօղէր — Հարթմանի այսպէս փոխուիլն։

— Պա՛հ, յարեց Իլլրիք, մարքիզուհին դեռ ի՛նչ փոփոխութիւններ ըրեր է ո՛ր . . . ։ Ամենաբիկ Պոլսնեաէն իւր նշանաւոր մէկ խաղը գրեր են ինձ։ Այդ քաղքին մէջ պատուիրակ կարդինալ մը կայ եղեր, զոր ժողովուրդը կատէ և մանգամայն կը վախնայ եղեր իրմէ։

— Այդ Օրսենին ըլլալու է, որ շատ ատելի մարդ մ'է։

— Ես Լօմպարտիոյ մէջ տեսայ զինքը, ի՛նչ դիականման և գարշելի դէմք։ Ես հաւատաքննիչներն միշտ այդ դէմքով կ'երևակայեմ։

— Լա՛ւ, մարքիզուհին զինքը Պոլսնեաի Բաղինսին պարահանդէսը տարեր է, Բանդոսը ձիաւորի հագուստով և դիմակով։

— Կարդինալը Բանդոսը ձիաւորի հագուստո՞վ, գոչեցին ամէնքը միաձայն։

— Օ՛ն անդը, Իլլրիք, ապ սուտ է։

— Սա նամակը կարդացէք, եւ երբ ստորագրութիւնը տեսնէք, ա՛լ չ'է.ք տարակուսիր, թերահաւատնե՛ր, յարեց Իլլրիք։ Այո՛, մարքիզուհին Օլսենիի հետ պարահանդէս գացեր է. ապա, բազմութեան մէջ, անոր դիմակը քաշեր և բարձրաձայն գոչեր է. «Գիշե՛ր բարի, կարդինալ Օրսենի». ապա քահ քահ խնդալով՝ աներեւութացեր է, կարդինալն ժողովրդեան նախատանացն և Եռահ՝ներուն մէջ թողլով։ Անշուշտ գլխուն վտանգ մը պիտի գայ եղեր, եթէ ոստիկանութիւնը զինքը չի պաշտպաներ. յաջորդ օրն ամբողջ քաղաքն Օրսենիի պաշտօնանկութիւնը պահանջեր է, և կարդինալն, երկու օր վերջը, ստիպուեր է գիշերանց քաղքէն փախչիլ։ Նոյն երեկոյին բոլոր տուներն լուսավարութիւններ ըրեր են ի նշան ուրախութեան. խել մը կանթեղներու վրայ իրարու մէջ անցած երկու Մ գրուած են եղեր, որ մարքիզուհւոյն անունը սկզբնատառերն են։

— Էյ ինքն ի՞նչ է եղեր։

— Ա՛լ քաղքին մէջ չ'է երեւցեր եւ Վենետիկ գացեր է, յարեց Իլլրիք՝ երկրորդ նամակ մը ցոյց տալով. հոն ալ ուրիշ դէպքեր։

— Ի՛նչ կին, ի՛նչ կին։

— Ի՞նչ տեսակ կին է։

— Տեսե՞ր է.ք։

— Ո՛չ։

— Ես ալ չ'եմ տեսեր։

— Կ'ըսեն թէ բարձրահասակ եւ նիհար է։

— Ես ալ լսեր եմ որ հասակը բաւական երկայն է։

— Թուխ ըլլալն սոյգ է, վասն զի Մօղէր — Հարթման կ'ըսէ թէ աչքերն ու յօնքերը սեւ են։

— Սա միայն կրնամ ըսել որ, յարեց Իւլրիք, Վենետիկէն եկած նամակին մէջ բանաստեղծօրէն խոշոր ապրղ կոչեր են զինքը, ինչ որ կարծել կուտայ թէ այդ տարօրինակ կինը խարտեաշ է։ Վենետիկէն ալ ճամբայ ելեր է, իբր թէ Ֆրանսա գալու համար։

— Բայց Վենետիկի մէջ ի՞նչ է ըրեր։

— Շիտակը պատասխանեց Իւլրիք, անանկ դէպք մը պատահեր է որ, թէ նախկին հեթանոսութեան եւ թէ՛ միջին դարու Իտալիոյ բարուց հետ վերաբերութիւններ ունի։

Դժբաղդաբար, ի զուր Իւլրիքի ունկընդրաց, թմբուկին ձայնը Լէօրօլտ արքիդքսին վերադարձը ծանուցանելով, ամէն ոք իւր պաշտօնին գլուխը գնաց եւ պատրաստուեցան Ն. արքունի վեհափառութիւնն ընդունելու։

Արդարեւ Էլիզէ—Պուրպօնի պահնորդը, Ֆրանսայի թագաւորին զինանշանովը խել մը կառքերու սրընթաց գալը տեսնելով «Ի զէն» գոչեր էր։ Պահնորդ զինուորք, իրենց սպային հետ միասին, շարուեր էին, և այն պահուն որ արքունի կառքերն հետզհետէ կը մտնէին Էլիզէի ընդարձակ բակն, թմբուկը զարկաւ եւ զօրագունդն զէնքի կայնեցաւ։

Առաջին կառքը պալատին առջև կանգառաւ. կարմիր համազգեստով սպասաւորները դռնակը բացին, եւ Ն. վեհափառութիւն Լէօրօլտ—Մաքսիմիլիէն արքիդուքսն ծանր ծանր սկսաւ սանդուղքէն վեր ելնել՝ խօսակցելով դնդապետի մը հետ, որ իրեն կ'ընկերանար. իշխանին եւ տեւէն կուգային իւր զինակիրներն՝ ճոխ զգեստներ հագած։

Արքիդուքսն, որ 39 տարու կար, բարձր և բարեձև հասակ մ'ունէր. ազնական վայելչութեամբ մը հագեր էր մեծ-մարտական ջախտի համազգեստն, որ ոսկի ուսնոցներով ճերմակ հագուստ մ'է կարմիր ասուի տափատ, որու վրայ խիստ գեղեցիկ կ'երևնար իւր փոշոտ մեծ կօշիկներն, վասն զի ձիով ներկայ գտնուեր էր ի պատիւ իրեն տրուած զօրահանդէսի մը. մեծ կարմիր երիզը, ոսկեգեղմնի մանեակն և հինգ վեց զանազան շքանշանք իւր կուրծքը կը պճնէին. իւր մազերն խարտեաշ էին, ինչպէս նաև զինուորական կերպիւ ցցուած երկար պեխերն, որ իւր դէմքին աւելի խիստ երեւոյթ մը կուտային. իւր կապոյտ, սուր և արտեւանունքներովն կիսափակ աչուքներն շատ բարձր յօնքերու ներքեւ շրջափակեալ էին, որով իշխանն կարծես միշտ վերէն կը նայէր. այս խիստ և արհամարական նայուածքն, իւր հպարտ դիրքն և գլխուն բռնուածքը, սէգ և ցուրտ իշխանութեան նշանաւոր երեւոյթ մը կուտային արքիդքսին։

Իշխանին կառքն հաղիւ քառորդէ մը ի վեր Էլիզէ հասեր էր, երբ Ֆրանսայի պաշտօնէի մը և Հիւսիսային մեծ պետութեան մը դեսպանին կառքերն հետզհետէ գալով, պետական մարդն ու քաղաքագէտը պալատը մտան։

Գրեթէ նոյն միջոցին այս պատմութեան գլխաւոր անձանց մին հեռիոն եկաւ Էլիզէ Պուրպօնի բակը։

Պ. Բասքալ (մեր դիւցազնին անունն այս էր) 36 տարու կ'երևնար. միջահասակ և շատ թուխ էր. բաւական երկար մօրուք մ'ունէր՝ յօնքերուն պէս սև, որոց ներքև կը փայլէին երկու մանր ու խիստ փայլուն. քիչ մը կոր կը քալէր, ոչ թէ հասակին տձեւութենէն, այլ տեսակ մը անհոգութենէ. ասկից զատ միշտ գլուխը ծռելու եւ ձեռքերը տափատին գրպաններուն մէջ դնելու սովոր ըլլալով, այս դիրքն ի հարկէ իւր լայն ուսերն կը

կլորցներ. իր դէմքն գլխաւորաբար նշանաւոր էր տեսակ մը հեգնական խստութեամբ, որու կը միանար այն անողոք յանձնապաստանութեան կերպարանքն, որ իրենց ամենազօրութիւնն համարուող անձանց յատուկ է. Քօլէնի ձեւով կապուած նեղ սեւ փողպատ մը, սկոլտիական կըտաւէ երկայն բաճկոն մը, բաց գոյն ամառուան թեթեւ թիկնոց մը, հինցած գլխարկ մը և նանքինէ լայն տափատ մը, որու գրպաններուն մէջ դրեր էր պարոն Բասքալ իր ձեռքերն. այս էր ահա՛ իր հագուստն, բաւական ալտոտ և ըստ ամենայնի համաձայն օդին չափազանց տաքութեանն և այս անձին սովորական անֆոռնութեանը:

Պահնորդը երբ տեսաւ Պ. Բասքալի իր օթեկին առջեւէն անցնիլն, գոչեց.

— Է՛. . . . ինձ նայեցէ՛ք, պա՛րոն, ո՞ւր կ՚երթաք:

Սեպէ՛ թէ Պ. Բասքալ զինուորին ըսածը չի լսեց եւ կամ թէ չ՚ուզեց անոր պատասխանել, առանց ձայն հանելու՝ սկսաւ դէպ ի սանդուղը երթալ:

Այն ատեն զինուորը տեղէն ելլելով վազեց այս համր այցելուին ետեւէն եւ սրտնեղութեամբ ըսաւ անոր.

— Բայց. պարո՛ն, ո՞ւր կ՚երթաք: Կոնէ պատասխան տուէ՛ք:

Պ. Բասքալ կանգ առաւ, արհամարհանօք իր խօսակիցն չափեց յոտից ցգլուխ, ուսերը ցնցեց և դէպ ի սանդուղն երթալով՝ ըսաւ.

— Աղքիդքսին քով կ՚երթամ:

Պ. պահնորդը գործէ կը հասկնար. չի կրցաւ երեւակայել որ այս ամառուան թիկնոցով և Քօլէնի փողպատով այցելուն իրաւունք իշխանին պիտի ներկայանայ, մանաւանդ որ համարձակի այդ հագուստներով անոր դէմ ելնել, վասն զի բոլոր այն անձինք որ պալատն ընդունուելու պատիւն ունէին, ընդհանրապէս սեւ կը հագնէին. ուստի Պ. պահնորդը, Պ. Բասքալը պարզ մատակարար մը կարծելով, որ սխալ կողմ եկեր էր, ետեւէն գնաց՝ բարձրաձայն ըսելով.

— Բայց, պա՛ր ն . . . Ն. վեհափառութեան բերել տուած խանութպանները մեծ սանդուղէն չ՚են ելներ. հունա՛, աջ կողմը, հասարակաց դուռը կայ, անկից պէտք է մտնէք:

Պ. Բասքալ անօգուտ խօսքերը չ՚էր սիրեր, նորէն ուսերը ցնցեց, եւ առանց պատասխանելու՝ դէպ ի սանդուղ գնաց:

Զինուորն, անոր լռութեանն ու յամառութեանը բարկանալով, պարոն Բասքալի թեւէն բռնեց, և ձայնը բարձրացնելով՝ գոչեց.

— Նորէն կ՚ըսեմ, պա՛րոն, անկից մըտնել չ՚ելլար . . .

— Ի՞նչ ըսել է, ապո՛ւշ, գոչեց Պ. Բասքալ տեսակ մը բարկութեամբ և զարմանօք, իբրեւ թէ զինուորին ըրածը յանդգնութիւն եւ միանգամայն անմեկնելի երեւնար իրեն, գիտե՞ս որու հետ կը խօսիս . . .

Այս խօսքերուն և Պ. Բասքալի ձայնին մէջ անտեսկ ապառնական ձեւ մը որ, խեղճ զինուորն, պահ մը սոսկալով, թոթովեց.

— Պարո՛ն . . . . չը՛ . . . . չը՛ . . . . չ՚գիտեմ:

Այն միջոցին անդրասենեկին մեծ դուռը բացուեցաւ. իշխանին զինակցաց մին սրահին պատուհանէն տեսնելով զնուորին և այցելուին միջեւ ծագած կռիւն, շտապաւ սանդուղէն վար իջաւ, յարգանօք Պ. Բասքալի մօտեցաւ, եւ մաքուր ֆրանսերէնով ըսաւ անոր.

— Ա՛հ, պարո՛ն, Ն. վեհափառութիւնն ապահով եմ թէ շատ պիտի ցաւի

այս դիւրիմացութեան։ Բարեհաճեցէ՛ք հետս գալ . . . անմիջապէս ներս մտցը-նեմ զձեզ . . . Իշխանը քիչ մ՚առաջ ձեր մասին մասնաւոր հրամաններ տուաւ ինձ, պարոն։

Պ. Բասքալ գլուխը ծռեց ի նշան հաւանութեան և զինակցին ետևէն գնաց, զինուորն իւր անյաջողութեանն վրայ ապշած ու վշտացած թողլով։

Երբ Պ. Բասքալ և իւր առաջնորդը հասան սպասելու դահլիճն, ուր կը գտնը-ուէին ուրիշ թիկնապահներ, նորատի ըսպայն յարեց.

— Ն. արքունի վեհափառութեան ներ-կայանալի անձինք խիստ շատ են այս առաւօտ, վասն զի Իշխանը կարծածէն շատ աւելի ուշացաւ. ուստի ուզելով ձեզ կա-րելի եղածին չափ քիչ սպասեցնել, պա-րո՛ն, հրամայեց ինձ որ գալերնուդ պէս ձեզ իւր սենեկին քովի սենեակն տանիմ։ Ն. արքունի վեհափառութիւնն այս միջո-ցին արտաքին գործոց վսեմաշուք պաշ-տօնէին հետ ունեցած տեսակցութիւնն լմնցնելուն պէս՝ ձեզ պիտի ընդունի։

Պ. Բասքալ նորէն հաւանութեան նշան մ՚ըրաւ, և զինակցին հետ անցաւ բա-ւական մութ ճեմելիէ մը և հասաւ սրահ մը, որ Էլիզէի սքանչելի պարտէզին վրայ կը նայէր։

Զինակիցն քաշուելու միջոցին նշմարեց Պ. Բասքալի հագուստին անկարգութիւնն, զոր մինչեւ այն ատեն չէր նշմարած՝ պահ-նորդ զինուորին և Պ. Բասքալի կուռոյն պատճառաւ։ Նորատի պալատականն, որ վարժուած էր խիստ պատշաճութեանց, նեղացաւ այս անձին անպատկառ հա-գուստներուն. մէկ կողմէ կը վախնար որ Պ. Բասքալի պէս մարդ մը կը նեղացնէ, միւս կողմէ ալ կ՚ուզէր երեսին զարնել իր հագուստներուն անվայելչութիւնն, որ տեսակ մը նախատինք էր Իշխանին, բայց առաջին վախն յաղթեց և մտածելով թէ ալ ժամանակ չկար այդ մարդուն ըսելու որ երթայ պատշաճօրէն հագուի, ըսաւ.

— Արտաքին գործոց պաշտօնեայն՝ Ն. Վեհափառութեան սենեակէն դուրս ելնելուն պէս, պարո՛ն, Իշխանին իմաց պի-տի տամ որ դուք իւր հրամանին պատ-րաստ էք։

Այս վերջին բառերն «հրամանին պատ-րաստ էք», կարծես գէշ զարկին պարոն Բասքալի ականջին. հեգնական կիսաժպիտ մը իւր շրթունքներուն վրայէն անցաւ. բայց, ինչպէս որ կ՚ըսեն, էրէ գոնը պէս-էրէ՞ն, և սրահը չափազանց տաք գըտ-նելով, պատուհան մը բացաւ, վանդակին կռթնեցաւ, և գլխարկը գլուխը, սկսաւ պարտէզը դիտել։

Բ.

Ամէն մարդ գիտէ Էլիզէիի սքանչելի պարտէզը, ուր տնկուած են աշխարհի ամենէն գեղեցիկ ծառերն, և որու թարմ դալարիքն կ՚ուռոգէ անկլիական գետակ մը. այս պարտէզին մէկ դին, Մարինեի ծառուղւոյն կողմէն բարձրակեկ ճամբայ մը կայ, զոր կը հովանաւորեն դարեւոր կնձնիներ. նմանօրինակ ճամբայ մ՚ալ կայ զուգահեռաբար՝ դիմացի կողմը. ցած պատ մը կը զատէ զայն շրջակայ պար-տէզներէն։

Այս վերջին ճամբան պարոն Բասքալի կեցած սրահին պատուհանին մօտն էր. քիչ վերջն իւր ուշադրութիւնը սաստիկ դրգռուեցաւ՝ քանի մը պատճառաւ։

Փարտուղարաց և ազնուականաց սրա-հէն անցնող և իւր ամբիծութեամբն

շատ մը դիտողութեանց առարկայ եղող երիտասարդն այն պահուն ծանր ծանր կը պտըտկէր հովանուտ ճամբուն մէջ։ Ասի վայելուչ հասակ մ՚ունէր. ատեն ատեն կանգ կ՚առնէր, գլուխը կը ծռէր, պահ մ՚անշարժ կը կենար, ապա նորէն շրջագայելու կը սկսէր. երբ ճամբուն ծայրն հասաւ, գրեթէ գաղտագողի մօտեցաւ մօտակայ պարտէզի մը սահմանակից պատին, և որովհետև այդ պատը հազիւ չորս ոտք բարձրութիւն ունէր, անոր կռթնեցաւ, և մտածմանց մէջ ընկղմեցաւ։

Այս շրջագայողն ցայն վայր կռնակը դարձուցեր էր Պ. Բասքալի, որ հետաքրքրութեամբ կը մտածէր թէ ի՞նչ կը դիտէ կամ կ՚ըսպասէ այս անձն, որու դիրքը դեռ չէր կրցած նշմարել. բայց երբ երիտասարդն, անշուշտ բընտռածը չի գտնելով, ետ դարձաւ, Պ. Բասքալ դէմքը տեսաւ։

Արդէն ըսինք թէ Նէօպէրկի Ֆրանց կոմսը արքիդքսին սանը կը համարուէր, և իշխանը սաստիկ կը սիրէր զինքը։ Եթէ արքունեացմէջ ըսուածներուն նայուէր, կ՚ըսէին թէ իշխանն, Սաքս–Թէշէնի մէկ իշխանուհւոյն հետ ամուսնանալէն ի վեր զաւակ չ՚ունենալով, հոգ պէտ կը սիրէր Ֆրանց տը Նէօպէրկը, որ առաջին և խորհրդաւոր սիրոյ մը գաղտնի պտուղն էր։

Ֆրանց, որ այս պատմութեան ատեն հազիւ 20 տարու կար, հիւսիսային մեղմաղձոտ գեղեցկութեան կատարեալ տիպարն էր. իւր երկայն ու խարտեաշ մազերն, որք աղջկան ճակտի նման անբիծ եւ սպիտակ ճակտին մէջտեղէն երկուքի բաժնուած էին, կը շրջապատէին իւր կանոնաւոր դէմքն. իւր երկնակապոյտ մեծ աչքերուն մէջ, անուշ և խոհուն նայուածքին հետ կարծես կը ցոլանար հոգւոյն մաքրութիւնը. նորաբոյս մօրուքն՝ մետաքսանման թելերուին ծածկելով նորա թուշն եւ վերին շրթունքն, առնական երեւոյթ մը կուտար այս չքնաղ դէմքին։

Ֆրանց, ցորչափ կը յառաջանար ճամբուն մէջ, այնքան Պ. Բասքալի ուշադրութիւնը կը գրաւեր։ Այս անձը տեսակ մը հիացմամբ և զարմանօք կը դիտէր զայն, վասն զի դժուարին էր Ֆրանցի դէմքին հազուագիւտ կատարելութիւնը չի նշմարել։ Երիտասարդն, երբ պատուհանին մօտեցաւ, Պ. Բասքալի անխախտ նայուածքը նշմարեց, շփոթեցաւ, նեղացաւ, կարմրեցաւ, աչքերը ծռեց և մէկէն ի մէկ ետ դառնալով՝ շրջագայութիւնը շարունակեց, քիչ մը քայլերը փութացնելով մինչև ճամբուն կէսը. հոն սկսաւ նորէն ծանր քալել, և ի հարկէ կը նեղուէր, մտածելով որ օտարական մը իւր բոլոր քայլերը կը դիտէր։ Ի սկզբան հազիւ թէ համարձակեցաւ մօտակայ պարտէզին պատին մօտենալ. բայց յանկարծ, ամէն ինչ մոռնալով, դէպ ի պատը վազեց, երբ անոր ետեւէն տեսաւ փոքրիկ յարդեայ գլխարկ մը, որ վարդագոյն մետաքսով կրկնուած եղերքներովն 15 տարեկան ամենաթարմ և ամենաչքնաղ դէմք մը կը շրջապատէր։

— Օրիորդ Անթօնին, ըսաւ Ֆրանց աշխուժիւ և ցած ձայնիւ, մեզ դիտող կայ։

— Այս իրիկո՛ւն, մրմնջեց անուշ ձայն մը։

Եւ յարդեայ փոքրիկ գլխարկն անհրեւութացաւ կարծես հմայութեամբ, նորատի աղջիկը թեթեւութեամբ վար ցատկելով այն նստարանէն, որու վրայ եղեր էր ի հարկէ՝ պատին միւս կողմը։

Բայց, կարծես այս յանկարծական հեռացման իբր փոխարինութիւն, գեղեցիկ վարդ մ՚ինկաւ Ֆրանցի ոտքերուն առջև, որ, անմիջապէս զայն գետնէն վերուց և գորովանօք շրթանցը տարաւ. ապա ծա-

ղիկը բաճկոնին մէջ պահելով, փոխանակ շրջագայութիւնը շարունակելու ճամբուն երկայնքը՝ թփոյ ետեւ անհերեւութացաւ։

Հակառակ այս տեսարանին արագութեանն, հակառակ յարդէ գլխարկին անմիջական անհերեւութանալուն, Պ. Բասքալ կատարելապէս նշմարեր էր այն աղջկան հիանալի դէմքն և Ֆրանցի՝ վարդը սիրահարաբար համբուրելը։

Այն ատեն Պ. Բասքալի հեգնական դէմքը սոսկալի կերպիւ մթնցաւ։ Բացայայտ կը տեսնուէր անդ նախանձով, ատելութեամբ և ցաւօք խառն բուռն ցասում մը. քանի մը վայրկեան երեւան ելաւ ինչ այն մարդը որ, ամէն բանի իւր առաջքը խոնարհիլը տեսնելու վարժուած ըլլալով, սատանայական զգացումներ կ'ունենայ և անդիի ծայր չար գործեր կը ընայ քնել, երբ անակնկալ արգելք մը իւր երկաթի կամքին դէմ կը կենայ։

— Ինքը՛, ինքը՛, Էլիզէի մօտակայ պարտէզին մէ՛ջ, կ'ըսէր կատաղութեամբ, ի՞նչ գործ ունի . . . ։ Անմի՛տ. անշուշտ սա խարտեաշ պատանին քծնելու եկեր է։ Կարելի է քովի տունը կը բնակի։ Անի՛ծ, այսպէս մէկէն ի մէկ իմանալ իւր բնակարանը, թէ և ամէն բան ըրեր էի զայն գտնելու համար, յորմէ հետէ սա անիծեալ աղջիկը զիս խենթեցուց, զիս որ ինքզինքս մեռած կը կարծէի ասանկ վայրկենական մտահաճութեանց համար, որոց բաղդատմամբ սրտի ամենէն բուռն կիրքերն սառ են. վասն զի այս պզտիկ աղջիկը երեք անգամ միայն տեսայ, և երիտասարդի մը պէս ինքզինքս ամէն բան ընելու կարող կզգամ՝ զինքը ձեռք ձգելու համար, մանաւանդ այս ժամուս որ նախանձը ՝կը լափէ ու կը տոչորէ զիս։ Ա՛հ, ասի անմտութիւն է, ապշութիւն է, բայց կը տառապիմ։

Եւ զայս ըսած միջոցին, Պ. Բասքալի դէմքին վրայ տեսակ մը ատելութեամբ խառն կատաղի ցաւ նշմարուեցաւ. ապա, կռուին երկնցնելով դէպ ի այն կողմն, ուսկից երեւցեր էր յարդէ գլխարկը, կատաղութեամբ մռմռաց.

— Ես քեզի կը սորվեցնեմ, անիծեա՛լ աղջիկ, և ի՛նչ որ ալ ըլլայ՝ դու իմս պիտի ըլլաս։

Եւ վանդակին կռթնած, աչքերը չի կրնալով զատել այն կողմէն, ուր Ֆռանց երկու խօսք փոխանակեր էր այս աղջկան հետ, Պ. Բասքալ տակաւին այս մթին հայեցողութեան մէջ ընկղմած էր, երբ սբրահին դռներէն մին բացուեցաւ կամաց մը և արքիդուքսն ներս մտաւ։

Իշխանը գիտնալով որ իրեն սպասող անձին դէմ պիտի դտնուի, առաջուց կարելի եղած անուշութիւնն տուեր էր իւր դէմքին, որ սովորաբար հպարտ ու ցուրտ էր. ուստի ժպտելով սրահը մտաւ։

Բայց Պ. Բասքալ; կիսովին պատուհանէն դուրս ծռած ըլլալուն դրան բացուիլը չէր լսած և իշխանին ներկայ ըլլալը չէր գիտեր. ուստի կռնակն անոր դարձուցած և պատուհանին կռթնած կեցաւ։

Դիմագէտ մը, եթէ ներկայ գտնուէր այս տեսարանին, պիտի կարենար իշխանին դէմքին վրայ՝ իւր զգացմանց ազդեցութիւնը տեսնել։

Արքիդուքսն քար կտրեցաւ տեսնելով զՊ. Բասքալ՝ պատուհանէն վար ծռած, ամռան թիկնոցով և գլխարկ ի գլուխ. իւր կեղծ ժպիտը անհերեւութացաւ շքերթանցը վրայէն, և սովորականէն ալ աւելի սիգօրէն կանգնելով իւր գիստերուն վրայ, բարկութենէն կարմրեցաւ, յօնքերն պռատեց, և աչքերէն ցասման կայծակներ կ'արձակուէին։ Բայց ընդ հուպ, անշուշտ մտածումն այս ներքին մրրիկն հանդար-

տեղնելով, իշխանին դէմքն դառն ու վշտագին համակերպութեան երևոյթ մ՚առաւ, և գլուխը ծռեց՝ դժնդակ հարկաւորութեան մը ծանրութեանն ներքեւ կքելու պէս։

Այն ատեն հառաչանքն զսպելով եւ տակաւին քինախնդիր ու արհամարհոտ նայուածք մը ձգելով Պ. Բասքալի վրայ, որ միշտ պատուհանէն վար ծռած էր, իշխանը ժպիտն նորէն առաւ, դէպ ի պատուհանն յառաջացաւ բաւական բարձրակէզ հաղալով, որպէս զի իւր ներկայութիւնն իմացուի և չի պարտաւորի նոր նուաստութիւն մ՚ալ յանձն առնելու, այսինքն ձեռօք դպչիլ այս ընտանի մարդուն ուսին, որպէս զի անոր ուշադրութիւնն հրաւիրէ։

Պ. Բասքալ իշխանին ուժգին հէ՛-հ, հէ՛-հ-ները լսելով, մէկէն ի մէկ ետին դարձաւ։ Իւր դէմքին խոժոռութեանն յաջորդեց տեսակ մը վայրագ և հեգնական գոհունակութիւն, իբր թէ առիթը գոհ մը բերած ըլլար իրեն, որմէ կրնար իւր զբաղուած բարկութեանն ու տանջանաց վրէժն առնուլ։

Ուստի Պ. Բասքալ իշխանին մօտեցաւ և անփութօրէն բարեւեց զայն՝ մէկ ձեռօք գլխարկը բռնելով և միւս ձեռքը գրպանը դնելով.

— Ներեցէ՛ք, տէր, ըսաւ, չէի գիտեր որ հոս էք . . .։

— Համոզուած եմ ադոր, Պ. Բասքալ, պատասխանեց իշխանն այնպիսի հպարտութեամբ մը, զոր դժուարաւ կը ծածկէր։

Ապա յարեց.

— Հաճեցէ՛ք հեռս իմ սենեակս գալ, պարո՛ն, քանի մը պաշտօնական թղթեր ունիմ ձեզ հաղորդելու։

Եւ դէպ ի իւր սենեկին դուռը կ՚երթար, երբ Պ. Բասքալ առերևոյթ հանդարտութեամբ մ՚ըսաւ անոր, վասն զի այս մարդը, պէտք եղած ատեն, հաղուագիւտ իշխանութիւն մ՚ունէր ինքզինքին վրայ։

— Ցէ՛ր, կը ներէ՞ք որ հարցում մը ընեմ։

— Խօսեցէ՛ք, պարո՛ն, պատասխանեց իշխանն կանգ առնելով, և զարմանօք ետին դառնալով։

— Ցէ՛ր, ո՞վ է այն դրեթէ քսան տարու երկայն խարտեաշ մազերով երիտասարդը, որ քիչ մ՚առաջ սա ճամբուն մէջ կը պտտկէր։

— Կ՚երեւնայ որ ըսածնիդ Ֆռանց տը Նէօպէրկ կոմսն է. պարո՛ն, իմ սանս։

— Վա՛յ, ադ երիտասարդը ձեր սա՞ն է, տէր, իմ անկեղծ շնորհաւորութիւններս կ՚ընեմ ձեզ. անանկ սիրուն տղայ մը հաղուագիւտ է։

— Չէ՞ մի, յարեց իշխանն, որու համար այս գոլէստն շատ անուշ էր, նոյն իսկ Պ. Բասքալի բերնէն. սրտի հաղուագիւտ ձիրքեր ունի և շատ քաջ է։

— Շատ ուրախ եմ, տէր, որ այդպիսի ազնիւ սան մ՚ունիք։ Շատո՞նց է որ Բարիզ է։

— Ինձի հետ եկաւ։

— Եւ անշուշտ ձեզի հետ ալ պիտի մեկնի, տէր, վասն զի ի հարկէ ձեզի համար դժուար է սանակ սիրուն տղէ մը զատուիլ։

— Այո՛, պարո՛ն, ուստի Ֆրանց կոմսը հեռս Գերմանիա տանելու մտադիր եմ։

— Ներեցէ՛ք, տէր, իմ անպատեհ հետաքրքրութեանս. բայց ձեր սանն այն տեսակ էակ մ՚է որ, մարդ ակամայ կը սիրէ զինքը։ Հիմա պատրաստ եմ. . .։

— Հաճեցէք ուրեմն հեռս գալ, պարո՛ն։

Բասքալ գլխովն հաւանութեան նշան

մ'ըրաւ և արքիդքսին քովէն քալելով՝ մինչեւ սենեկին դուռն հասաւ. հոն, յարդական շարժմամբ մը կանգ առնելով որ ուրիշ բան չէր, բայց եթէ նոր լրբութիւն մը, թեթև մը խոնարհեցաւ և իշխանին ըսաւ, իբրու թէ նա վարանած ըլլար առաջ անցնիլ։

— Անցէ՛ք, տէ՛ր, անցէք։

Իշխանն զգաց այս լրբութիւնն, բայց ձայն չի հանեց և սենեակը մտաւ, նշան ընելով Պ. Բասքալի որ ետեւէն գայ։

Սա, թէ և վարժուած չէր արքունիքի պատշաճութեանց, բաւական մտացի ըլլալով, կրնար իւր գործոցն ու խօսքերուն իմաստն զգալ, ոչ թէ միայն գիտէր իւր լրբութիւնն, զոր աւելի ևս կը գերգերեին վերջին դէպքերը, այլ և այդ լրբութիւնն կը քննէր, կ'ուսումնասիրէր, և նոյն իսկ այս պարագային մէջ ինքնիրենն մտածեր էր թէ արդեօք իշխանը պարզապէս պոռոն կոչէ՞ մի. բայց յետին ծայր սատանութեամբ մտածեց որ «էջ մակդիրն ա՛լ աւելի պիտի ծանրացնէ իւր ընտանութիւնն իշխանին համար, վասն զի մեծ հակապատկեր մը պիտի ընծայէ առերեւոյթ յարգանաց հետ։

Արդէն վերջէն պիտի խօսինք Պ. Բասքալի նկարագրին վրայ, որ առջի բերան երևցածին չափ արտակերդրոն չէր։ Միայն սա քսենք թէ այս մարդը, որ ստորին վիճակի մը մէջ ծնած էր, տասը տարի տոկացեր էր ամենածանր նուաստութեանց, նախատանաց և արհամարհանաց։ Ասանկով անողոք ատելութեան ոխեր դիդուեր էին իւր սրտին մէջ և երբ եկաւ այն օրն որ ինքն ալ հզօր եղաւ, անդթօրէն անձնատուր եղաւ վրիժառութեան կատաղի հաճոյից, առանց փոյթ ընելու որ վրէժն անմեղներէ կ'առնու։

Արքիդուքսն, որ գերագոյն մտքի մը տէր չէր, իւր երկրին զինուորական նուիրապետութեան մէջ մեծ պաշտօն մ'ունենալով՝ վարժուած էր մարդիկը ճանչնալու. ուստի Պ. Բասքալի հետ երկրորդ տեսնուելուն, (որու ներկայ ենք մենք) հասկցեր էր այս մարդուն լրբութեան չափը, և երբ իր հետ սենեակը մտնելով՝ գրեթէ առանց իւր նստեցէ՛ք ըսելուն ըսպասելու, ընտանեբար բազմեցաւ այն թիկնաթոռին վրայ, ուր քիչ մ'առաջ առաջին պաշտօնեայ մը նստեր էր յարգանօք, իշխանին սիրտը վերստին սեղմուեցաւ։

Պ. Բասքալի թափանցիկ նայուածքը այս տպաւորութիւնը նշմարեց արքիդքսին ճակտին վրայ, և յաղթական արհամարհանքով մը ըսաւ.

— Ահաւասիկ գահու աստիճաններուն վրայ ծնած իշխան մը, Եւրոպայի բոլոր թագաւորաց մէկ ազգականն, 100 հազար հոգւոյ բանակի մը ընդհանուր զօրապետը, ահա՛ իւր պատերազմի համազգեստը հագեր, շքանշաններով զարդարուեր է. այս մարդը զիս կ'անարդէ իւր տոհմային հպարտութեամբը։ Զիս կ'ատէ, վասն զի ինձի պէտք ունի եւ գիտէ որ պէտք է խոնարհի, և սակայն այս մարդն, հակառակ իւր ատելութեանն ու արհամարհանային, իմ ձեռքս է, իմ զօրութեանս տակ է, եւ այս բանն աղէկ մը պիտի զգացնեմ իրեն, վասն զի այսօր սիրտս թոյնով լի է։

Գ.

Պ. Բասքալ ոսկեզօծ թիկնաթոռի մը վրայ նստելով՝ այն սեղանին դիմացը, որու քով կեցեր էր իշխանն, առաւ ձեռքին տակ գտնուած սատափէ թղթի դա-

նակ մը և սկսաւ երերցնել զայն՝ ըսելով.

— Տէ՛ր, եթէ կը բարեհաճիք՝ գործի վրայ խօսինք, վասն զի ճիշդ ժամը մէկին Սէն–Մարսօի արուարձանը պէտք է դըտնուիմ, բարեկամներէս գործարանապետի մը տունը։

— Դիտել կուտամ ձեզ որ, պարո՛ն, պատասխանեց Իշխանը՝ հազիւ թէ ինքզինքը բռնելով, բարեհաճեցայ այսօրուան ընդունելիք անձինքս բոլոր վաղուան թողուլ, որպէս զի ամբողջ ժամանակս ձեզ նուիրեմ։

— Շնորհակալ եմ, տէ՛ր, բայց գործի նայինք։

Իշխանը սեղանին վրայէն մեծ թերթ մը թուղթ առաւ և Պ. Բասքալի տալով զայն՝ ըսաւ.

— Այս ծանօթագրութիւնը ձեզ պիտի ապացուցանէ որ, պարո՛ն, ինձ առաջարկուած գործին մէջ շահ ունեցող բոլոր անձինք ոչ թէ միայն բացէ ի բաց թոյլ կուտան ինձ այդ զոհողութիւնն ընել, այլ և կը ստիպեն որ ընեմ և իմ ընդունելութեանս բոլոր պարագայները կ'երաշխաւորեն։

Պ. Բասքալ, առանց տեղէն շարժելու, ձեռքը սեղանին մէկ կողմէն միւսը երկընցուց՝ ծանօթագրութիւնն առնելու համար և ըսաւ.

— Արդէն առանց այդ երաշխաւորութեան բան մը չ'էր կրնար ըլլալ։

Եւ սկսաւ ծանր ծանր կարդալ, շարունակ սատափեայ դանակին ծայրը խաժատելով։

Իշխանն անհանգստութեամբ կը նայէր Պ. Բասքալի երեսը, չանալով անոր դէմքէն հասկնալ թէ արդեօք ուզած երաշխաւորութիւնները կը գտնէր մի ծանօթագրութեան մէջ։

Քանի մը վայրկեան վերջը Պ. Բասքալ ընթերցումն ընդհատեց և նեղացած կերպով մը ու իբր թէ ինքնիրեն խօսելով՝ ըսաւ.

— Հը՛. հը՛... սա Շրդ. յօդուածը գործիս չ'եկաւ, ամենեւին չ'եկաւ։

— Մեկնեցէ՛ք, պարո՛ն, գոչեց Իշխանն անձկութեամբ։

— Սակայն, շարունակեց Պ. Բասքալ՝ նորէն կարդալու սկսելով և առանց արքիդքսին պատասխանելու, այս Շրդ. յօդուածը քիչ մը շտկուեր է 8 րդ. ին մէջ..., այո՛... Է՛հ, այո՛, գէշ չ'է, բաւական աղէկ է։

Իշխանին ճակատը պարզուեցաւ, վասն զի միտքը զբաղած ըլլալով այն մեծամեծ շահերուն, որոց դատաւորն էր Պ. Բասքալ, այս անձին չարութիւնն ու լրբութիւնը կը մոռնար, և Պ. Բասքալ կատաղի վայելք մը կ'զգար իւր զոհն հետզհետէ վախի և յուսոյ անձկութեանց ենթարկելով.

Քանի մը վայրկեանէն՝ Իշխանը նորէն անձկութեան մէջ ինկաւ, վասն զի պարոն Բասքալ գոչեց.

— Անհնա՛ր է, անհնա՛ր է... այս յաւելուածին առաջին յօդուածն ամէն բան կը ջնջէ ինձ համար։

— Բայց վերջապէս, պարո՛ն, գոչեց Իշխանը, յայտնի խօսեցէք։

— Ներեցէ՛ք, տէ՛ր, այս պահուս ես ինքզինքիս համար կը կարդամ։ Վերջէն, եթէ կուզէք, երկուքնուս համար կը կարդամ։

Արքիդուքսը գլուխը ծռեց, բարկութենէն կարմրեցաւ, յուսաթափ երեւցաւ և գլուխը ձեռքին կռթնցուց։

Պ. Բասքալ իւր ընթերցումը շարունակելով, գաղտնի նայուածք մը ձգեց Իշխանին վրայ, և քիչ մը վերջը գոհ ձայնով մը յարեց.

— Ահա ստոյգ և անժխտելի երաշխաւորութիւն մը։

Եւ երբ Իշխանը քիչ մը յոյս առնուլ կ'երեւնար, Պ. Բասքալ ըսաւ.

— Դժբախտաբար այս երաշխաւորութիւնն ալ զուրկ է . . .

Խօսքը չ'աւարտեց և լռիկ մնջիկ իւր ընթերցումը շարունակեց։

Ո՛չ, երբէք հպարտ պաշտպանի մը դիմող թախանձող մը, խոնարհաբար խիստ փոխատուի մը աղաչող փոխառու մը, դատաւորին աչացը մէջ իւր դատապարտութիւնն կամ թողութիւնը կարդալու աշխատող ամբաստանեալ մը զգացած չ'են այն տանջանքներն, զորս զգաց Իշխանը մինչդեռ Պ. Բասքալ կը կարդար այն ծանօթագրութիւնը, զոր պէտք էր քննել և զոր քիչ վերջը սեղանին վրայ դրաւ։

— Է՛, պարոն, ըսաւ Իշխանն՝ իւր անհամբերութիւնը զսպելով, ի՞նչ կ'որոշէք։

— Տէ՛ր, կը բարեհաճի՞ք քիչ մը թուղթ ու գրիչ տալ ինձ։

Իշխանը կաղամար մը, գրիչ մը եւ թուղթ հրեց Պ. Բասքալի առջեւ։ Սա սկսաւ խել մը թուանշաններ գրել, երբեմն աչքը ձեղունք վերցնելով՝ իբրու թէ մտքէն հաշուելու համար, երբեմն ալ կիսկատար պարբերութիւններ մրմնջելով, ինչպէս.

— Ո՛չ . . . սխալեցայ, վասն զի . . . բայց մոռցայ . . . սա յայտնի է . . . կը-շիռը հաւասար կ'ելլար, եթէ . . .

Իշխանն երկար ատեն սպասելէ վերջը, Պ. Բասքալ գրիչը սեղանին վրայ ձգեց, ձեռքերը տափատին գրպանը խօթեց, գլուխը ետի ծռեց և աչքերը գոցեց, իբրու թէ մտքէն վերջին հաշիւ մ'ընելու համար, ապա, շտկուելով, սուր և հաստ ձայնով մը ըսաւ.

— Անհնա՛ր է, տէր։

— Ի՞նչպէս, պարո՛ն, գոչեց Իշխանը յուսահատ. մեր առաջին տեսակցութեան ատեն ապահովեցիք զիս որ այս գործը կրնայ ելլալ։

— Կրնայ ելլալ, պարոն, և ոչ թէ եղած։

— Բայց այս ծանօթագրութիւնն, պարո՛ն, և իմ տուած երաշխաւորութիւններս . . .

— Այո՛, գիտեմ որ այս ծանօթագրութիւնն ասանկ գործի մը համար անհրաժեշտ եղած ապահովութիւններն կ'ամբողջացնէ։

— Ուրեմն, պարո՛ն, ինչո՞ւ կը մերժէք։

— Մասնաւոր պատճառներ ունիմ, տէ՛ր։

— Բայց, նորէն կ'ըսեմ, չէ՞ մի որ ամէն երաշխաւորութիւն կուտամ ձեզ։

— Այո՛, տէր։ Սա ալ ըսեմ որ այս գործն ոչ միայն կրնայ ելլալ, այլ և ընդունելի համար ալ ապահով ու շահաւոր է։ Ասոր համար ապահով եմ թէ պիտի կարենաք մէկը գտնել որ . . .

— Է՛հ, պարո՛ն, գոչեց Իշխանը՝ Բասքալի խօսքն ընդմիջելով, գիտէք որ այս դրամական տագնապի միջոցին և ուրիշ պատճառներով, զորս աղէկ գիտէք, դուք միայն կրնաք ընել այս գործը։

— Ձեր արքունի վեհափառութեան ընտրութիւնը մեծ պատիւ է ինձ, ըսաւ Պ. Բասքալ՝ հեգնական երախտագիտութեան ձայնով մը, ասոր համար կրկնակի կը ցաւիմ որ չպիտի կարենամ անոր պատասխանել։

Իշխանը զգաց այս խայթոցն և ըսաւ.

— Անիրաւ էք, պարոն։ Այս գործը ձեզի հետ լմնցնել ուզելուս ապացոյցը սա է որ Ֆիւրանի տանը առաջարկութիւնները մոռիկ չ'ըրի։

— Ասոր գրեթէ սուտ ելլալուն ապա-

հով եմ, ըսաւ Պ. Բասքալ ինքնին. բայց նորէն գործը պիտի հասկնամ, վասն զի այդ տունը երբեմն զիս անհանդիստ կ'ընէ։ Բարեբաղդաբար սա խաբեբայ Մարսլանժի շնորհիւ ձեռքս սքանչելի միջոց մը ունիմ ապագային մէջ այս անպատեհութեան առաջքն առնելու։

— Այս գործը ուղղակի և անձնականապէս ձեզի հետ տեսնել ուզելուս մէկ ուրիշ ապացոյցն ալ սա է որ, շարունակեց իշխանն, միջնորդ չուզեցի, վասն զի ապահով էի թէ պիտի համաձայնինք։ Այո՛, յարեց արքիդուքսն՝ ևս քան զեւս շողոմ ձայնիւ, կը յուսայի որ ձեր հանրածանօթ դրամական տաղանդին մատուցուած արդարացի պատիւն . . .։

— Ա՛հ, տէ՛ր . . .։

— Եւ ձեր պատուաւոր բնաւորութեան համար . . .։

— Տէ՛ր . . . շիտակը . . .։

— Կը յուսայի, կ'ըսեմ, սիրելիս պարոն Բասքալ, որ անկեղծօրէն ձեզ դիմելով և այսպիսի գործ մ'առաջարկելով, որու ապահովութիւնն ու օգուտները դուք ալ կը խոստովանիք, պիտի բարեհաճէիք մտիկ ընել, վասն զի ես ոչ միայն դրամատէրին դիմեցի, այլ և պատուոյ տէր մարդուն. կը յուսայի նաև որ, բաց ի դրամական շահերէ, իմ համարմանս և երախտագիտութեանս մասնաւոր ցոյցերուն վստահելով։

— Տէ՛ր . . .։

— Կը կրկնեմ, սիրելիս պարոն Բասքալ, իմ Եբոխոքէիսոնիանս, վասն զի ասով ամենամեծ ծառայութիւն մը պիտի մատուցանէք՝ ինձ. վասն զի չէք կրնար կարծել թէ խնդրած փոխառութիւնս ինչ հետևանքներ կրնայ ունենալ իմ ընտանեկան ամենասիրելի շահուցս համար։

— Տէ՛ր, չէի գիտեր . . .։

— Եւ երբ ընտանեկան շահ կ'ըսեմ, դուշեց իշխանն՝ պարոն Բասքալի խօսքն ընդմիջելով և յուսալով որ զայն կը համոզէ, երբ ընտանեկան շահ կ'ըսեմ, մի՛ կարծէք թէ ամէն բան կը լմննայ. պետական մեծ խնդիր մը կայ յարակից ինձ առաջարկուած դքսութեան, զոր չեմ կրնար ձեռք ձգել, առանց ձեր դրամական հզօր օգնութեանն։ Ասով թէ՛ ինձ անձնական ծառայութիւն մը պիտի մատուցանէք և թէ ազգիս օգտակար պիտի ըլլաք, և, սիրելիս Պ. Բասքալ, գիտէք որ մեծ կայսրութիւններն ի՛նչպէս կը վարձատրեն պետութեան ծառայութիւն մատուցանողները։

— Ներեցէք տգիտութեանս, տէ՛ր, բայց բնաւ չեմ գիտեր։

Իշխանը ժպտեցաւ, պահ մը լուռ մընաց և յարեց անանկ ձայնով մը, զոր անդիմադրելի կը կարծէր.

— Սիրելիս Պ. Բասքալ, նշանաւոր Թօրթօլիա սեղանաւորը կը ճանչնա՞ք։

— Անուամբ միայն, տէ՛ր։

— Գիտէ՞ք որ Սուրբ-Կայսրութեան իշխան է։

— Սուրբ-Կայսրութեան իշխա՛ն, տէ՛ր, յարեց Բասքալ ապշութեամբ։

— Բռնեցի, ըսաւ ինքնիրեն իշխանն և բարձր ձայնիւ յարեց. գիտէ՞ք որ Թօրթօլիա սեղանաւորն ամենէն մեծ կարգի աստիճաններն ու շքանշաններն ունի։

— Կարելի՞ է, տէ՛ր։

— Ո՛չ միայն կարելի է, այլ և այսպէս է, սիրելիս Պ. Բասքալ։ Արդ, միթէ չի՞ կրնար ըլլալ որ Պ. Թօրթօլիաի համար եղածը ձեզի համար ալ ընենք։

— Ի՞նչ ըսիք, տէ՛ր։

— Կ'ըսեմ որ, յարեց իշխանը՝ բառերը շեշտելով, կ'ըսեմ որ ինչո՞ւ ձեզ ալ աս-

տիճաններով եւ շքանշաններով չի վարձատրենք։

— Զի՞ս, տէ՛ր։

— Այո՛, ձեզ։

— Ես Բասթալ էշխա՞ն ըլլամ։

— Ինչո՞ւ չէ։

Եւրոպայի ազնուապետական բարեկենդանին մէջ էշխանէ, գոնէ կամ մոլէղէ կերպարանք մտնելու չափ անմիտ ըլլայիս։ Ես, տէ՛ր պարզ մարդ մ'եմ, հայրս փողոցները գիրք կը ծախէր։ Մանր մունր գործեր ընելով քանի մը ստակ մէկ կողմ դրի, եւ իմ ուղ-

նորատի եւ վառվռուն սպասուհի մը . . . (Երես՝ 24)

—Օ՛ն, օ՛ն, կուզէք ձեր խեղճ ծառայն ծաղրել։

— Ոչ ոք իմ խոստմանցս վրայ տարակուսած չ'է, պարո՛ն, և զիս կը նախատէք, եթէ կը կարծէք որ ձեր վրայ կը խնդամ։

— Այն ատեն, տէ՛ր, ես պիտի խնդայի ինքզինքիս վրայ, և միշտ և ուժով, եթէ զամուսնանայս զատ բան չ'ունիմ; բայց այդ ուղղամտութիւնն, տէր, չի թողուր՝ որ ծանօթանիս մոլէղ ըլլամ (՝ասի վօլթէրին մէկ գեղեցիկ վէպն է, զոր պէտք է կարդալ, տէ՛ր) այնքա՛ն ի զբօսանս այն չարամիտ մարդոց, որք մեզի պէս՝ խեղճերը մոլէղացնելով և էշխանացնելով կը զուարճանան։

Արքիդուքսն այս մերժման եւ հեգնութեան չէր սպասեր. սակայն յարեց.

— Պարո՛ն Բասքալ, այդ անկեղծութիւնն ու անշահախնդրութիւնը կը սիրեմ։ Փա՛ռք Աստուծոյ, իմ երախտագիտութիւնս ապացուցանելու ուրիշ միջոցներ կան, և օր մը իմ բարեկամութիւնս...

— Ձեր բարեկամութիւնն ինձի՞, տէ՛ր։

— Բարեկամութեանս արժէքը գիտնալուս համար, ըսաւ իշխանը պատկառելի արժանապատուութեամբ մը, զայն կը խոստանայի ձեզ, եթէ...

— Դուք իմ բարեկամս ըլլա՛ք, տէ՛ր, յարեց Պ. Բասքալ՝ իշխանին խօսքն ընդմիջելով, իմ որ փոքրիկ հարստութիւնս հարիւրապատկեցի անիրաւ միջոցներով ինչպէս որ կ'ըսեն չարլեզուները, թէեւ աղաւնիի պէս անբիծ եւլայ անոնց զրպարտիչ ամբաստանութիւններէն։

— Իրենց աշխատութեամբն ու տաղանդովը բարձրացող անձինք միշտ գարշելի զրպարտութեանց կ'ենթարկուին, և այդ զրպարտութիւններէն անարատ ելլելնուդ համար իմ բարեկամական երախտագիտութիւնս պիտի խոստանայի ձեզ, եթէ խնդրած կարեւոր ծառայութիւնս մատուցանէիք ինձ։

— Տէ՛ր, շնորհակալ եմ ձեր բարութեանցն, բայց դժբաղդաբար գործը գործ է, ըսաւ Պ. Բասքալ ոտքի ելլելով, և այս գործն իմ բանիս չի գար։ Ձեր արքունի վեհափառութիւնը կրնայ հասկնալ թէ ո՛րքան դժուար է ինձ իւր բարեկամութիւնը կորսնցնել....

Իշխանն այս նուաստացուցիչ եւ հեգնական պատասխանը լսելով, քիչ մնաց որ պիտի պայթէր. բայց սասանկ բարկութեան մը անօգուտ և միանգամայն անվայել ըլլալը միտքը բերելով՝ ինքզինքը զսպեց, ուզեց վերջին փորձ մ՝ալ ընել և ըսաւ.

— Ըսել է, Պ. Բասքալ, ես պարապ տեղը ձեզ աղաչեցի, թախանձեցի, պաղատեցայ։

Այս ողջոյն, ընդունելոյ, պաղատելոյ բառերն անկեղծօրէն արտասանուելով, իշխանը կարծեց որ Պ. Բասքալի վրայ տպաւորութիւն ըրին եւ իրաւունք ալ ըրին. մինչև այն ատեն, ըստ իրեն, արքիդուքսը պէտք եղածին չափ նուաստացած չէր. բայց Պ. Բասքալ, այն մերժումէն վերջը, տեսնելով որ այն արքունի անձը մինչեւ խոնարհաբար պաղատելու կը զիջանի, մեծ հաճոյք մը զգաց։

Իշխանը, տեսնելով որ լուռ կը մնայ, կարծեց որ հաւանեցաւ և ըսաւ.

— Օ՛ն, սիրելիս Պ. Բասքալ, պարապ տեղը դիմած չպիտի ըլլամ ձեր վեհանձն սրտին։

— Շիտակը, տէ՛ր, պատասխանեց դահիճը որ, գործին շահաւոր ըլլալը գիտնալով, տրամադիր էր զայն ընելու, բայց միանգամայն զուարճութիւնն ալ կորսնցընել չէր ուզեր. շիտակը դուք այնպէս մը կը խօսիք որ... Գործը գործ է, բայց ահաւասիկ ակամայ սիրտս կը շարժի, տքղու մը պէս։ Այնքան տկար եմ որ...

— Կը հաւանի՞ք, գոչեց իշխանն ուրախութեամբ և դրամատիրոջ ձեռքերը բռնելով։ Կը հաւանի՞ք, սիրելիս Պ. Բասքալ։

— Ի՞նչպէս մերժեմ, տէր։

— Վերջապէ՛ս, գոչեց արքիդուքսն, ուրախութեամբ շունչ առնելով և կարծես ծանր բեռէ մ՝ազատելով, վերջապէ՛ս...

— Միայն թէ, տէ՛ր, յարեց Պ. Բասքալ, փոքրիկ պայման մը պիտի դնեմ։

— Ո՛հ, այդ պայմանն ինչ որ ալ ըլլայ՝ կանխաւ կ'ընդունիմ։

— Կարելի է որ առանց մոռածելու չափէն աւելի կը խոստանաք։

— Ի՞նչ ըսել կուզէք, գոչեց իշխանը

թեթեւ մը մտահոգութեան մէջ իյնալով, ի՞նչ պայման է այդ։

— Երեք օրէն կ'ըսեմ, տէ՛ր։

— Ինչպէ՞ս, ըսաւ Իշխանն ապշելով, դարձեալ յապաղո՞ւմ. վերջնական խօսքերնիդ չ'է՞ք ըսեր։

— Երեք օրէն կ'ըսեմ, տէր, եթէ պայմանս ընդունիք։

— Բայց գոնէ այդ պայմանն ըսէք։

— Անկարելի է, տէ՛ր։

— Սիրելիս Պ. Բասքալ . . .

— Տէ՛ր, յարեց միւսը հեգնական և ծանր ձայնիւ, մէկ նատի մէջ երկու անգամ խանդաղատելու սովորութիւն չ'ունիմ։ Ամենասիրելի Սէն—Մարսոյի արուարձանին ժամադրութեանս ատենը եկաւ. յարգանօք Ձեր Վեհափառութիւնն ողջունելու պատիւն ունիմ։

Պ. Բասքալ, Իշխանն անձկութեան մէջ ձգելով, դուռը պիտի բանար, երբ ետին դարձաւ ու ըսաւ.

— Այսօր երկուշաբթի է, ըսել է հինգշաբթի օր կէս օրին պատիւ պիտի ունենամ Ձեր արքունի Վեհափառութեանը ներկայանալ և պայմանս առաջարկել։

— Լա՛ւ, պարո՛ն, հինգշաբթի։

Պ. Բասքալ բարեւեց և դուրս ելաւ։

Երբ անցաւ այն սրահէն, ուր կեցեր էին զինակիցներն, ամէնքն ալ յարգանօք ոտքի ելան, վասն զի Իշխանին ընդունած անձին կարեւորութիւնը գիտէին։ Պ. Բասքալ գլխովը բարեւեց այն ապուշներն և պալատէն դուրս ելաւ՝ ինչպէս որ ներս մտեր էր, երկու ձեռքը գրպանը դրած և (այս մարդը բան մը չ'էր կորսնցներ) պահնորդին օթեկին առջև կենալով և ըսելով.

— Է՛, ապո՛ւշ, ուրիշ անգամ դիս պիտի ճանչնա՞ս։

Զինուորը շուարելով՝ խոնարհեցաւ և թոթովեց.

— Օ՛, հիմայ պարոնը կը ճանչնամ։ Կ'աղաչեմ որ պարոնը բարեհաճի ինձ ներելու։

— Կ'աղաչէ, ըսաւ Պ. Բասքալ ցած ձայնիւ և հեգնական դառն ժպտով մը, ամէնքն ալ աղաչելէն զատ բան չ'են գիտեր, Իշխանէն սկսեալ մինչև դռնապանը։

Պ. Բասքալ, Էլիզէէն դուրս ելած ատեն, ինկաւ վերստին այն դժնդակ մտազբաղութեանց մէջ, որոց ծնունդ տուեր էր այն նորատի աղջկան և Ֆրանց տը Նէօպէրկ կոմսին գաղտնի տեսակցութիւնն։ Ուզելով գիտնալ թէ արդեօք պալատին կից տո՞ւնը կը բնակի, տեղեկութիւն հաւաքելու փափագեցաւ, բայց մտածելով որ մի՛ գուցէ դիտաւորութեանը վնասէ, որոնց առանց անխոհեմութեան իւր նպատակին հասնիլ և երեկոյեան սպասել։

Ան ատեն պարապ կառք մը տեսնելով, կառապանին նշան ըրաւ որ կենայ, կառքը նստաւ և ըսաւ.

— Սէն-Մարսօ արուարձանը, թիւ 15 գործարան մը, որու ծխնելոյզը փողոցէն կ'երեւնայ։

— Պ. Տիւթէրթրի գործարա՞նը։ Գիտեմ, պարո՛ն, գիտեմ, ամէն մարդ գիտէ զայն։

Կառքը հեռացաւ։

Դ.

Ընթացք որ Պ. Բասքալ իւր կենաց մէկ մասը ստորին և խեղճ վիճակի մը մէջ անցուցեր էր, ատելութեամբ և ոխակալութեամբ տոկալով ամենէն նախատական անարգանաց։

Հայրը փողոցները գիրք կը ծախէր և գրկմամբ ու ապօրինի կամ կասկածելի առևտուրներով քանի մը ստակ ժողուած էր. ինքն ալ ի սկզբան իբր ծառայ մտած

էր տեսակ մը գաւառացի վաշխառուի քով, որու կը յանձնէր Պ. Բասքալի հայրն իւր ստակը շահեցնելու հոգը։

Ըսել է մեր դիւցազին առաջին տարիները դժուարին և նուաստացուցիչ ծառայութեան մը մէջ անցան։ Սակայն որովհետև շատ խելացի և նրբամիտ էր, որովհետև իւր հաղուագիւտ կերպիւ հաստատուն կամքն ի հարկին շողոքորդութեան և նուաստութեան ցոյցերու տակ ծածկելու ճամբան գիտէր, Բասքալ առանց տիրոջը գիտնալու, գրեթէ առանձինն ուսաւ գրել, կարդալ և հաշուել. թիւերու և գրական հաշուոց կարողութիւնը մէկէն ի մէկ զարմանալի կերպիւ զարգացաւ իւր մտքին մէջ։ Իւր արժէքն զգալով, մտածեց թէ արդեօք կրնա՞յ զայն ծածկելով՝ օգտիլ անկից և զայն վտանգաւոր զէնք մ' ընել իւր տիրոջը դէմ, զոր կ'ատէր։

Բասքալ, յետ հասուն մտածմանց, շահաւոր գտաւ իւր ընդունած դաստիարակութիւնն երեւան հանել. վաշխառուն իր ապասաւորին մտաց կարողութեանը հիանալով, զայն իր տօմարակալն ըրաւ, քիչ մ'աւելցուց նորա չնչին ամսականն և շարունակեց անասնական անարգանօք վարուիլ անոր հետ, ջանալով որ առաջուց աւելի նուաստացնէ զինքն, որպէս զի չի հասկնէ անոր թէ՝ որքան կարեւորութիւն կուտայ իւր նոր պաշտօնին։

Բասքալ՝ որ աշխատութեան մէջ անխոնջ էր և կուզէր օր ըստ օրէ իւր դրական ուսումն աւելցնել, շարունակեց տակաւ այս նախատանաց, և ինքն ալ իւր ստորնութիւնը կը կրկնապատկէր, ցորչափ տէրն իւր նախատինքներն ու խրատութիւնը կ'աւելցնէր։

Քանի մը տարի այսպէս անցնելէ վերջը, գաւառէն ելնելու և իրեն արժանագոյն ասպարէզ մը բնտռելու ոյժ զգաց վրան. տիրոջն անուամբը գործի թղթակցութեան մտեր էր Բարիզու սեղանաւորի մը հետ, և առաջարկեց անոր քով մտնել. սա շատոնց ի վեր Բասքալի արժէքը հասկցած ըլլալով, առաջարկութիւնն ընդունեց և Բասքալ իւր փոքրիկ քաղքէն ելաւ, ի մեծ ցաւ իւր առաջին տիրոջն, որ աշխատեցաւ զանազան շահեր ցոյց տալով զինքը վար դնել, բայց ալ ուշ էր։

Մեր մարդուն նոր տէրն գլուխ էր այն մեծ տուներէն մէկուն որք, թէև բարոյապէս կորսուած, բայց (և ասի հաղուագիւտ չ'է) առևտրականութեան մէջ իբր պատուաւոր կը նկատուին, վասն զի թէև այդ տուներն երբեմն անանկ գործեր կ'ընեն, որք գողութեան կը նմանին, թէև ճարտարահիւս անանկութիւններով կը հարստանան, սակայն, ինչպէս որ կ'ըսեն, էջէնց «ոչ-բոքբոքնեանը» չէ են, թէև այդ ստորագրութիւնն անպատիւ է բարի մարդոց համար։

Աշակերտ ըլլալով մեր ժամանակին սա գեղեցիկ սկզբան՝ ՀԱՐՍՏԱՑԷՔ, Խորհրդարանը կը բաղմին, դիւցազնաբար պոռոքջան տիտղոսը կ'առնուն և պաշտօնեայ ըլլալու կը ձգտին։ Ինչո՞ւ չէ։

Նախկին հարկահաններու եւ ընդհանուր հողատերաց այնքան գովուած պերճութիւնը Պ. Թօմս Ռուսսըլէի շքեղութեանը բաղդատմամբ աղքատութիւն էր։

Բասքալ այս մեծ տանը մէջ մտնելով, աւելի դառն ու կծու նուաստութիւններ կրեց քան թէ այն սրիկայ ծերուկ վաշխառուին քով, որ իրեն հետ նուաստ վարձկանի մը պէս կը վարուէր, բայց շատ անգամ գրեթէ ընտանեբար կ'աշխատէր անոր հետ։

Արդ, անհնար է աղնուականաց հըպարտութեան և աղնուապետական մնապարծութեան մէջ գտնել անանկ բան մը որ նմանի այն ծանր անարգանաց, որով կը վարուէին Պ. և Տիկին Ռուսսըլէ իրենց ստորակարգեալներուն հետ, զորս իրենցմէ

անչափ հեռու կը համարէին։ Այս տանը աշխատաւորք, իրենց մութ դրասենեակներուն մէջ փակուած, ուսկից կը տեսնէին Ռուսըլէի ապարանաց փայլն, իբր դիւթական աւանդութիւն կամ իբր առասպել իմացած էին այն սրահին և ճաշատան հրաշալիքներն, ուստի բացարձակապէս կ'արտաքսէր զիրենք տիկին Ռուսըլէի արժանապատուութիւնը, վասն զի այս կինը Լօրէնի կամ Ռօհանի իշխանուհւոյ մը առաջին սպասուհւոյն չափ սէգ և հըպարտ էր։

Այս նուաստութիւնք, թէև տեսակաւ նոր, սակայն սոսկալի ազդեցութիւն մը ունեցան Բասքալի վրայ. հոն ամէն ատենուընէ աւելի զգաց իւր ոչնչութիւնն. և պերճ սեղանաւորին լուծն աւելի ծանր եկաւ իրեն քան թէ վաշխառուինը։ Բայց մեր մարդն, իւր դրութեանը հաւատարիմ մնալով, վէրքերն ծածկեց, ժպտիլ ձեւացուց, լղեց այն փայլուն կօշիկն, որ երբեմն զինքը հարուածելով կը զբօսնուր, աշխատութիւնն ու ուսմունքը կրկնապատկեց և այս տանը գործերուն մէջ սովրեցաւ վերջապէս ինչ որ գործոց ճշմարիտ ոգին կը նկատէր, այսինքն՝

«Կարելի եղածին չափ քիչ ստակով և կարելի եղած միջոցներով կարելի եղածին չափ շատ ստակ վաստկիլ, խնամք տանելով որ ոստիկանութեան և դատարաններու ձեռք չ'ինայ»։

Լուսանցքը լայն է, և մարդ կրնայ ուզածին պէս շարժիլ հոն։

Հինգ վեց տարի ալ այսպէս անցան. մարդուս միտքը սոսկմամբ կ'ընկրկի, երբ կը մտածէ թէ ո՛րքան ոխեր, ատելութիւններ, բարկութիւններ և թոյն դիզուեցան այս քինախնդիր հոգւոյն անդունդներուն մէջ, որ դրսէն միշտ հանդարտ էր ճախճախուտ ճահիճի մը սեւ մակերեւութին պէս։

Պ. Բասքալ օր մը իւր հօրը մահը իմացաւ։

Այս ծերունւոյն խնայած ստակն, վաշխառուին ճարտար գործածութեամբը մեծնալով, շատ խոշոր գումար մ'եղեր էր։ Բասքալ երբ այս դրամագլխոյն տէր եղաւ, և զգալով իւր գործունէութեանն ու յանդգնութեանը չափը, պատուոյն վրայ երդում ըրաւ որ մեծ հարստութիւն մը ձեռք ձգէ, մինչև իսկ, եթէ շուտ հասնելու համար (վերջապէս մարդ բան մը աչք առնելու է) հարկ ըլլայ՝ ուղղութեան ճամբէն քիչ մը շեղիլ։

Մեր մարդն իր երդումը պահեց։ Ռուսըլէի տունէն ելաւ. ապա ճարպիկութիւնը, դիպուածը, նենգութիւնը, բաղդը, խաբէութիւնն և ժամանակին ուղղութիւնն օգնելով, ահագին գումարներ շահեցաւ, կանխիկ ստակաւ գնեց պաշտօնէի մը բարեկամութիւնն, որ ամէն բան կանխաւ իմաց կուտար անոր և Բասքալ պ՚օրոյէ անլուր խաղերով երկու միլիոն դիզեց։ Քիչ ատեն վերջը, անկլիացի միլիոնորդ մը նկատել տուաւ անոր թէ անհուն շահեր կրնար առնուիլ յանդգնօրէն նետուելով երկաթուղւոյ գործերու մէջ, որք դեռ նոր ծագում կ'առնէին յԱնկլիա։ Բասքալ Լօնտրա գնաց, ամէնուն իր վրայ ունեցած հիացումէն օգտեցաւ, ամբողջ հարստութիւնը վտանգի դրաւ եւ ժամանակին ստակները գանձելով՝ Ֆրանսա դարձաւ 15 միլիոն ստակով։ Այն ատեն որքան յանդուգն, նոյնքան ալ խոհեմ և ցուրտ ըլլալով, ուրիշ բան չի մտածեց բայց եթէ շարունակ աւելցնել այս անյուսալի հարստութիւնն, և յաջողեցաւ, ամէն առթէ օգտելով։ Բասքալ ճոխ կ'ապրէր, իւր զգայարանաց բազմաթիւ մտա-

հաճութիւնները կը գոհացնէր ամէն միջոցաւ, բայց բնաւ շռայլութիւն ցոյց չէր տար և գինետունը կ'ընթրէր։ Ասանկով իւր եկամուտին հազիւ մէկ հինգերորդը կը ծախսէր, և մնացորդը տարուէ տարի գիզուելով, անդադար իւր հարստութիւնը կ'աւելցնէր։

Այն ատեն Բասքալի համար հասաւ վրէժխնդրութեան մեծ և սոսկալի օրը։

Այս հոգին, որ տարիներով նուաստութեան և ատելութեան մէջ մնալով կարծրացեր էր, անողոք եղաւ, և հազար հաճոյք կզգար այլոց զգացնել տալով այն ստակի լուծին ծանրութիւնը, զոր ինքն երկար ատեն կրեր էր։

Հաճոյք կզգար իր նախկին վիճակին մէջ ձգելով ուրիշներն։ Ոմանց բնական ստրկութենէն օգտելով, զոմանս չքաւորութեան ենթարկելով, վերջապէս ստակին ամենազօրութեանն անձնաւորելով յինքեան, և իւր ձեռքին մէջ ունենալով պզտիկ խանութպանէն սկսեալ մինչեւ արքունի եշխանն, որ կը նուաստանար՝ փոխառութիւն մ'ընդունելու համար։

Պ. Բասքալ ի գործ կը դնէր այն սոսկալի բռնութիւնը, զոր փոխատու կրնայ ի գործ դնել ի հարկէ ստիպեալ փոխառուին դիմող մարդուն վրայ և ամենանուրբ բարբարոսութեամբ մը կը ճաշակէր նորա հաճոյքն։

Կ'ըսեն թէ Սատանան հոգիներու վրայ իշխանութիւն ունի։ Բաց ի Սատանայէն, Պ. Բասքալ ալ կրնար նորա չափ և աւելի իսկ հոգիներ կորանցնել և ակել։

Երբ մի անգամ մարդ մը իւր ձեռքն իյնար փոխառութեամբ մը կամ վարձով մը, զորս անուշութեամբ կը շնորհէր եւ կամ թէ կեղծ վեհանձնութեամբ ինքը կ'առաջարկէր, (բայց ամէն ատեն բարոյական և նիւթական հարկ եղած երաշխաւորութիւններն առնելով), ան մարդն ալ եւս ինքզինքին տէրը չէր, նա իւր հոգին ծախած կ'ելլար Սատանա—Բասքալին։

Դժոխային վարպետութեամբ մը կը սկսէր սակարկութեան։

Սեպենք թէ առևտրական տագնապ մը կայ, դրամագլուխներ չ'են գտնուիր կամ այնպիսի չափազանց տոկոս կը պահանջեն որ, հատուցանող և պատուաւոր վաճառականներ սաստիկ կը նեղուին և մնանկանալու վիճակի մէջ կ'իյնան։ Պ. Բասքալ, ամէն տեղեկութիւն առնելով, եւ ապահով ըլլալով որ ապրանքներն կամ գործիքներն իւր փոխ տուած ստակին տեղ կրնան բռնել, կ'առաջարկէր փոխատուութիւն ընել պարագային նկատմամբ չնչին տոկոսով մը, որ սակայն իրեն համար շատ շահաւոր էր. միայն թէ այս փոխատուութեան սա պայմանը կը դնէր որ, հատուցումն էր ուղած ատենը պիտի ըլլայ, և կ'ըսէր որ այդ իրաւունքն ի գործ չպիտի դնէ, որովհետեւ շահը այնպէս կը պահանջէ. ասկից զատ իւր մեծ հարստութիւնը 50 կամ 100 հազար սկուտի վճարման պէտք չէր ձգեր իրեն. բայց կ'ըսէր իր սովորութիւնն է անպատճառ սա պայմանաւ ստակ փոխ տալ որ, հոգոցումն էր ուզած ատենն ըլլայ։

Սատանայ—Բասքալի ձեռքն իյնողներու համար այս վիճակը սոսկալի էր. մէկ կողմէ մնանկութիւն, միւս կողմէ անյուսալի օգնութիւն մը, որ կրնար վեհանձն ծառայութիւն մը համարուիլ, ուրիշ տեղ կրկին տոկոսով դրամագլուխ գտնելու դրեթէ անկարելիութիւնն, և վերջապէս Պ. Բասքալի ներշնչած վստահութիւնն, փորձութիւնը կ'աւելցնէին. այս միլիոնատէրը կ'ըսէր թէ հնախանձախնդիր է, իբրեւ դրամական նախախնամութիւն, օգ-

նութեան հանիլ բոլոր աշխատասէր եւ պարկեշտ անձանց։

Վերջապէս ամէն բան կ'օգնէր այն անխոհեմները կորսնցնելու և կ'ընդունէին։

Յայնմ հետէ Բասքալի յեր-գն էին։

Մէկ մը որ իյնային ամէն վայրկեան նախկին յուսահատ կացութեան մէջ իյնալու վտանգին տակ, այլ եւ մէկ նպատակ միայն կ'ունենային, պարոն Բասքալի հաճելի ըլլալ, և մէկ վախ, այն է պարոն Բասքալի անհաճոյ ըլլալ, որով նոցա ճակատագիրն այն մարդուն ձեռքը կ'ըլլար։

Շատ հեղ մեր Սատանան ի սկզբան իւր իշխանութիւնն ի գործ չ'էր դներ և հեգնական չարութեամբ մը՝ նախ բարուն կը կեղծէր, օրհնութեանց անձրեւները կը ճաշակէր և. սանկով իւր զոհերն երկար ատեն իրենց սխալանացը կը վարժեցնէր։ Ապա, քիչ քիչ ինքզինքն երեւան կը հաներ, երբէք սպառնալիք, խստութիւն կամ բարկութիւն չ'էր բաներ, ընդհակառակն անուշ նենգութիւն մը կը դրծածէր, որ երբեմն սոսկալի կ'ըլլար։

Ըստ երևոյթին ամենէն աննշան և չընչին պարագաներն հազար միջոց կ'ընծայէին իրեն՝ ձեռքին տակ գտնուողները տանջելու։

Օրինակի համար իւր հպարտնէրէն մէկուն տունը կ'երթար. սա իր կնոջն ու զաւակացը հետ ճամբայ կ'ելլէր շատոնց ի վեր պատրաստուած ընտանեկան հանդէսի մը ներկայ գտնուելու համար։

— Ձեզի հետ ընթրելու եկայ, բարեկամներս, կ'ըսէր Սատանան։

— Աստուա՛ծ իմ, Պ. Բասքալ, ո՛րքան կը ցաւինք։ Այսօր մօրս ծննդեան տարեդարձն է, մենք ալ անոր տունը կ'երթանք ընթրելու. այս տարեդարձն ամէն տարի կը տօնենք։

— Ա՛հ, ես ալ կը յուսայի այս երեկոյ ձեզի հետ ժամանակ անցնել։

— Հապա մենք որքան կը ցաւինք, Պ. Բասքալ։

— Պա՛հ, ձեր ընտանեկան հանդէսն կրնաք ինձ զոհել։ Մէկ տարի տարեդարձը չի տօնուելով՝ մայրերնիդ չի մեռնիր ա՛։

— Ո՛հ, Պ. Բասքալ, այդ անկարելի է։ Մեր ամուսնութենէն ի վեր առաջին անգամը պիտի ըլլայ որ այս ընտանեկան փոքր հանդէսին չպիտի գտնուինք։

— Օ՛ն, այսքան բան մը չ'է՞ք ըներ ինձի համար։

— Բայց, պարո՛ն Բասքալ . . .

— Ես ապահով եմ որ այս զոհողութիւնը պիտի ընէք Պ. Բասքալին համար, չ'է՞ մի։

— Շատ կուզէինք, բայց . . .

— Ի՞նչպէս, կը մերժէ՞ք այս բանն, էնչ՝, առաջին խնդրած բանս։

Եւ Պ. Բասքալ անանկ հնչում մը կուտար այս էնչ բառին որ, ամբողջ ընտանիքը կը սոսկար. կզգար որ նա իւր տէրն է, և առանց բան մը հասկնալու դրամատիրոջ մոտահաճութենէն, կը համակերպէր անոր, որպէս զի զինքը չի վշտացնէ։ Ուստի ճաշ մը կը պատրաստէին։ Կը ջանային ժպտիլ, զուարթ երևնալ։ Բայց քիչ վերջը սրտերնուն մէջ վախ մը կը ծնէր. ընթրիքն երթալով կը տխրէր։ Պ. Բասքալ այս բանին կը զարմանար և հառաչելով կը գանգատէր.

— Օ՛ն, կ'ըսէր, ձեզ վշտացուցի. կը տեսնեմ որ ինձի ոխ ունիք։

— Ա՛հ, պարոն Բասքալ, կը գոչէին խեղճերը, կրնա՞նք առանկ բան մը մոռբերել։

— Օ՛, ես չ'եմ սխալիր։ Է՛հ, ամէն ատեն յանձանք է բարեկամներդ փորձել,

նոյն իսկ ամենափոքր բանով մը, վասն զի երբեմն այդ ամենափոքր բաներէն մեծ բաներ կը հասկցուին։ Ես որ ձեզ ճշմարիտ բարեկամներ կը կարծէի . . . . : Դարձեալ սխալեր եմ եղեր։

Եւ Սատանա—Բասքալ ձեռքը աչքին կը տանէր, սեղանէն կ'ելլէր, և վշտացած դիմօք տունէն կը մեկներ, այս խեղճերը սոսկալի անձկութեանց մէջ ձգելով. վասն զի եթէ այլ ևս անոնց բարեկամութեանը չի հաւատար, կրնայ ըլլալ որ զիրենք անդունդի մը մէջ գահավիժէ՝ վերհանձնաբար փոխ տուած ստակն ետ առնելով . . . : Անոնցմէ սպասած երախտագիտութիւնն միայն կրնար իր պաշտպանութիւնն երաշխաւորել։

Դիտմամբ խօսեցանք այս քստ երևութին չնչին պարագայից վրայ, որոց հետեւանքը սակայն սոսկալի է, ցոյց տալու համար պարոն Բասքալի՝ իր զոհերուն քաշել տուած տանջանաց առաջին աստիճանն։

Այսոր համեմատ երևակայեցէք թէ ի՞նչ սոսկալի տանջանքներու կրնար ենթարկել զանոնք, երբ ընտանեկան հանդէսի մը նման չնչին դէպք մը այնքան ճարակ կը շնորհէր իր բարբարոսութեանն։

Նա հրէշ մ'էր։

Դժբաղդաբար ամէն դարու և ամէն աստիճանի մէջ Ներոններ կան. բայց ո՞վ կը համարձակի ըսել թէ Բասքալ այս վիճակին պիտի հասնէր, եթէ թունաւոր օրինակներ չունենար իր դէմն և տարիներով հոգւոյն մէջ ոխ չի դիզուեր։

Վէյ՛ժ—ՈՒ՛ՆԷ՝ բառն այս մարդուն կատաղութիւնը չ'արդարացներ, բայց կը մեկնէ։ Մարդս առանց պատճառի չար չ'ըլլար։ Զո՞ւն է որ միշտ չար կ'արտադրէ։

. . . . . .

Պ. Բասքալն այսպէս նկարագրելէ վերջը, իրմէ ժամ մը առաջ երթանք Պ. Շարլը Տիւթէրթրի տունը։

Ե.

Պ. Տիւթէրթրի գործարանը, որ երկաթուղւոյ մեքենաներ շինելու սահմանեալ էր, ընդարձակ տեղ մը կը գրաւէր Սէն—Մարսօի արուարձանին մէջ, և իր շարունակ ծխացող աղիւսէ բարձր ծխնելոյզներն հեռուէն կ'երեւնային։

Պ. Տիւթէրթրը և իր ընտանիքն մասնաւոր շէնք մը կը բնակէին, որ ընդարձակ պարտէզով մը բուն գործարանէն զատուած էր։

Ընթերցողն այս համեստ բնակարանը մոցուցած միջոցնիս, անոր մէջ տօնի երեւոյթ մը կայ. կարծես պատրաստութիւններ կ'ըլլան հիւր մ'ընդունելու համար. նորատի և վառվռուն սպասուհի մը սեղանը կը շտկէր փոքրիկ սեղանատան մէջ, որու պատուհանը պարտէզին վրայ կը նայէր և որու մօտ էր խոհանոցն. պառաւ խոհարար մը աճապարանօք կ'երթար կուգար այս խոհարարական գործատան մէջտեղ, ուսկից անուշահոտ շոգիներ կ'ելլէին եւ մինչեւ սեղանատան մէջ կը տարածուէին։

Սրահին մէջ, որ զարդարուած էր Իւթրէխդի թաւիշով ծածկուած ընկուզենիէ կահերով և սպիտակ քալիքօէ վարագոյրներով, ուրիշ պատրաստութիւններ կ'ըլլուէին։ Վառարանին վրայի երկու սպիտակ յախճապակեայ անօթներն թարմ ծաղկօք լեցուեր էին. այս երկու անօթներուն մէջ տեղ ապակիի մը տակ կը տես-

նուէր փոքրիկ վայրաշարժ մը, որ մեքենագիտութեան և դարբնութեան ճշմարիտ մէկ հրաշակերտն էր. այս երկաթի, պղինձի և պողպատի գոհարին սեւ պատուանդանին վրայ սա բառերն փորագրուած էին.

Ծերունի մը, որու սպիտակ մազերն ուսերուն վրայ կ'իյնային, թիկնաթոռի մը վրայ նստեր էր, և ծնգացը վրայ երկու տղայ բռներ էր. երեք տարու մանչ մը և հինգ տարու աղջիկ մը, սիրուն և շնորհալի երկու հրեշտակներ։

Շարլը Տիւրիրրը

ԵՒ Գ. ՅԱՐԼԸ ՏԻՒՐԻՐՐԸ

Գորշաւոր է՝ ոչ երախտագէտ

Թէնիէ և Ժէրար Տօս, կրնային չքնաղ խմբանկար մը շինել այս պահուն սրահին մէջ գտնուող դէմքերէն։

Ցարգելի և մելամաղձոտ դիմօք կոյր Թուխ և վարդագոյն մանչն խոշոր սեւ աչքեր ունէր, և երբեմն գոհ նայուածք մը կը ձգէր իւր բաց կապոյտ ասուի պըլուզին և նոր սպիտակ տափատին վրայ. բայց ամենէն աւելի զինքն հպարտացնողը սպիտակ մետաքսէ կարմիր գծերով գուլպայն էր։

Փոքրիկ աղջիկն, որ մօրը մէկ մտերմուհւոյն անուամբն Մատլէն կը կոչուէր, և այդ մտերմուհին աղջկանը կնքամայրը եղած էր. աղջիկը, ըսինք, խարտեաշ էր, կապոյտ աչքերով եւ սպիտակ շրջաբզգեստ մը հագեր էր. ուսերն ու թեւերը մերկ էին, եւ միայն սրունքներն կիսովին գոցուած էին սկոլտիական սիրուն կօշիկներով։ Մայր մը միայն կրնար գիտնալ թէ ո՛րքան բաներ կային այս ուսերուն, թեւերուն և այտերուն վրայ, եւ այս երկու սիրուն տղոց մայրն ի հարկէ գիտէր։

Տիկին Տիւթէրթրը, կոյրին թիկնաթոռին յենարանին կռթնած, մօր մը լրջութեամբ մտիկ կ'ընէր ծերունւոյն ծնգացը վրայ թառած այս երկու թռչնոց դայլայլիկը, որք անշուշտ շատ կարեւոր բանի մը վրայ կը խօսէին անոր հետ, վասն զի երկուքը միատեղ կը խօսէին այն մանկական լեզուաւ, զոր մայրերը միայն կըրնան լաւ թարգմանել։

Տիկին Սօֆի Տիւթէրթրը շուրջ 25 տարու էր. թէև ծաղկի թերթեւ հեռքեր կը կրէր դէմքին վրայ, և իրմէ շատ աւելի գեղեցիկ կիներ կրնային գտնուիլ, սակայն անկարելի էր աւելի շնորհալի դէմք մը, աւելի անուշ ժպիտ մը երեւակայել, սա անուշութեան և հրապուրի իտէալն էր։ Սքանչելի մազեր, մարդարտանման ակռաներ, փայլուն մորթ մը, վայելուչ հասակ մը նորա մարմինք կ'ամբողջացնէին. և երբ իւր խոշոր սեւ աչքերը կը վերցընէր իւր ամուսնոյն վրայ, որ այն միջոցին ծերունւոյն թիկնաթոռին միւս կողմը կեցեր էր, սէրն ու մայրութիւնն անոր անուշ նայուածքին անբացատրելի հրապոյր մը կուտային, վասն զի Սօֆի եւ Շարլը Տիւթէրթրը սիրահարութեամբ ամուսնացեր էին։

Սօֆի Տիւթէրթրի միակ պակասութիւնն էր զարդարանքին անյարմարութիւնը, վասն զի զաւակացը զարդարանքէն ուրիշ զարդարանք չ'էր գիտեր նա։ Անշահ կերպասէ և գեշ շինուած շրջազգեստ մը իւր հասակին վայելչութիւնը կը կորսնցնէր. ոտքի կօշիկներն աղէկ չ'էին, և իւր քանչելի մազերն աւելի խնամօք կրնայի յարդարուիլ։

Անկեղծութիւն և հաստատամտութիւն, իմաստութիւն և բարութիւն, ասոնք դըրոշմուած էին Պ. Տիւթէրթրի դէմքին վրայ, որ այն ատեն գրեթէ քսան և ութ տարեկան էր, աշխոյժ աչքերն, հուժկու մարմինն, գործօն եւ եռանդուն բընութիւն մը իմաց կուտային։ Ատենով երկրաչափ, հմուտ և փորձառու մարդ, ամենապէժուար խնդիրներն գրչով լուծելու և միանգամայն խարտոցը, ճախարակն ու մուրճը վարպետութեամբ գործածելու կարող, հրամայել գիտցող։ Որովհետեւ գործադրելու ճամբան գիտէր, ձեռաց աշխատութիւնը կը պատուէր ու կը բարձրացնէր՝ երբեմն իւր օրինակ կամ իւր քաջալերութիւն աշխատելով, անդիի ծայր ուղիղ, ազնիւ և վստահ, իւր բաղմաթիւ գործաւորաց հետ հայրաբար և արդարօրէն կը վարուէր. պարզ բարուց տէր, աշխատութեան մէջ կրակոտ, իւր երկաթի, պղնձի և պողպատի արարածոց սիրահար, նորա կեանքն մինչեւ այն ատեն մարդուս երեք մեծագոյն երջանկութեանց մէջ բաժնուած էր. — «էջ. — ընտանիք. — աշխատանք»։

Շարլը Տիւթէրթրը մէկ վիշտ ունէր միայն. հօրը կուրութիւնն, և այս հիւանդութիւնն ալ անանկ փափուկ անձնուիրութեանց անանկ զանազան խնամոց առիթ կուտար որ, Տիւթէրթրը և իւր կինը կը ջանային մխիթարուիլ, ըսելով որ կըր-

նային իրենց սէրն կրկնակի ապացուցանել ծերունւոյն։ Հակառակ հանդիսին պատրաստութեանցն, Շարլը Տիւթէրթրը յաջորդ աւուր ձգեր էր ածիլուելու հոգը և հագեր էր իւր գործի հագուստները, մինչդեռ կտաւէ պլուզ մը, որ տեղ տեղ սեւցած ու այրած էր դարբնոցին մէջ։ Իւր աղնիւ և բարձր ճակատը, իւր սպիտակ և ջղուտ ձեռքերն քիչ մը սեւցած էին գործարանին մուխէն։ Իւր աշխատութեանն կամ անոր յաջորդող հանգստի միջոցին կը մոռնար այն անձնական խնամքներն, զորս ոմանք բնաւ զանց չ'են ըներ իրաւամբ։

Ասոնք էին գործարանին համեստ սրահին մէջ խմբուած անձինք։

Երկու տղաք միշտ կը դայլայլէին, երկուքը միասին կը ջանային մտքերնին հասկցնել իրենց պապուն. ծերունին ալ կը ջանար հասկնալ և ժպտելով կը հարցնէր.

— Տեսնե՛նք, ի՛նչ կ'ըսես, Օկիւսթս, և դո՛ւ, պզտիկ Մատլէնս։

— Տիկին թարգմանուհին կը բարեհաճի այս սիրուն դայլայլիկն հասարակ լեզուով մեզ թարգմանելու շնորհն ընել, ըսաւ Շարլը Տիւթէրթրը զուարթօրէն իւր կնոջը։

— Ի՛նչ, Շարլը, չե՞ս հասկընար։

— Ամենեւին։

— Դո՞ւք, հա՛յր իմ, հարցուց նորատի կինը ծերունւոյն։

— Առջի բերան կիրակի և զգեստի պէս բան մը լսեցի, պատասխանեց ծերունին ժպտելով, բայց վերջէն այնպէս կենճռոտեցաւ որ հասկնալէ ետ կեցայ։

— Սակայն գրեթէ այդ է, կ'երևնայ որ մայրերն ու պապերը միայն կրնան տղոց լեզուն հասկնալ, ըսաւ Սոֆի յաղթական կերպիւ։

Ապա խօսքը տղոցն ուղղելով՝

— Սիրելիներս, դուք ձեր պապուն աս չէ՞ք ըսեր. «Այսօր կիրակի է, քանի որ մեր գեղեցիկ նոր հագուստներն հագեր ենք։

Մատլէն խարտեաշն իւր խոշոր կապոյտ աչքերն բացաւ և գանգուր գլուխն ծռեց ի նշան հաստատութեան։

— Դու մայրերու Շամբոլիոնն ես, գոչեց Շարլը Տիւթէրթրը, Մինչդեռ ծերունին տղոց կ'ըսէր.

— Ո՛չ, այսօր կիրակի չէ, տղաքս, այլ տօնի օր մ'է։

Այն ատեն Սոֆի ստիպուեցաւ նորէն միջամտել և թարգմանել։

— Կը հարցնեն թէ այդ տօնը ի՞նչ է հայր իմ։

— Վասն զի բարեկամ մը պիտի գայ յարեց ծերունին բռնազբօսիկ ժպտով մը, և երբ բարեկամ մը գայ՝ միշտ տօն է, տղա՛քս։

— Բայց քսակն ո՞ւր է, ըսաւ Տիւթէրթրը իր կնոջ։

— Ամաւասիկ, պարո՛ն, պատասխանեց Սոֆի զուարթօրէն՝ ամուսնոյն նշանացի ցոյց տալով սեղանին վրայ խաւաքարտի փոքրիկ տուփ մը, կը կարծես որ ես մեր բարերարը, այն աղնիւ Պ. Բասքալը կը մոռնա՛մ։

Պապը, խօսքը փոքրիկ Մատլէնին ուղղելով և անոր ճակատն համբուրելով՝ ըսաւ.

— Պ. Բասքալը պիտի գայ, Պ. Բասքալը չե՞ս գիտեր։

Մատլէն արդէն աչքերը բացաւ, դէմքը գրեթէ երկչոտ արտայայտութիւն մը առաւ, և գլուխը տխրութեամբ մը ցընցելով՝ ըսաւ.

— Ան չար է։

— Պ. Բասքա՞լը, ըսաւ. Սոֆի։

— Սիրելիներս, դուք ձեր պապուն աս չէ՞ք ըսեր. «Այսօր կիրակի է, քանի որ մեր գեղեցիկ նոր հագուստներն հագեր ենք։

— Այո՛, շատ չար է, պատասխանեց տղան։

— Բայց, յարեց մայրն, ինչո՞ւ կ'ըսես որ Պ. Բասքալ չար է, Մատլէն։

— Օ՛ն, Սոֆի, ըսաւ Շարլը Տիւթէրթ.ը, այս տղայական խօսքերն բանի տե՞ղ կը դնես։

Զարմանալի բան, ծերունւոյն կերպարանքը տեսակ մը մտահոգութեան մէջ երեւցաւ. և կամ տղոց բնազդին անվրիպութեանն հաւատալով և կամ ուրիշ մը-տածմամբ մը, առանց Մատլէնի խօսքերն կատակի դարնելու, ինչպէս որ ըրեր էր իւր որդին, անոր ըսաւ.

— Ըսէ՛ նայիմ զաւակս, Պ. Բասքալ ինչո՞ւ չար է։

— Զեմ գիտեր, բայց չար է։

Սոֆի, որ տղոց զարմանալի հեռատեսութեանը մասին քիչ մը ծերունիին համակարծիք էր, թեթև սարսռաց, վասն զի գաղտնի և խորհրդաւոր յարաբերութիւններ կան մօրն և իւր արիւնէն ծնած արարածոց մէջտեղ. անբացատրելի կանխազգացում մը, որու Սոֆի բոլոր ուժով դէմ կ'ուզէր դնել, վասն զի զայն անիրաւ կը դտնէր, կ'ըսէր ինքնիրեն թէ իւր աղջկան բնազդը զինքը չէր խաբեր Պ. Բասքալի մասին, թէ և մինչեւ այն ատեն նորատի մայրն, առանց այդ մարդու վրայ ամենափոքր կասկած մ'ունենալու, զայն աղնիւ և վեհանձն մարդ մը կը նկատէր։

Շարլը Տիւթէրթը, հօրն ու կնոջը զգացած տպաւորութիւնն չդիտնալով, խնդաց ու ըսաւ.

— Հիմայ ալ ես դաս պիտի տամ սա պապուն և սա մօրը, որոց տղոց շաղփաղփանքը հասկնալ կը կարծեն։ Մեր աղնիւ բարեկամն դէմքով տգեղ է, յօնքերն հաստ, մօրուքը սեւ, դէմքը թուխ, ձայնն հաստ է, և այսչափը բաւ է տղոց կողմէն չար տիտղոսին արժանանալու համար։

Այս պահուն նորատի սպասուհին ներս մտաւ և տիրուհւոյն ըսաւ.

— Տիկին, օրիորդ Հիւպէր դուրսն է իւր ծառային հետ, և . . . ։

— Անթօնի՞ն, ի՞նչ երջանկութիւն, ըսաւ Սոֆի աշխուժիւ ոտքի ելլելով՝ որպէս զի նորատի աղջիկը դիմաւորէ։

— Տիկի՛ն, ըսաւ սպասուհին ցած ձայնիւ, Ակաթ կը հարցնէ թէ Պ. Բասքալ ոսպը շաքարո՞վ կը սիրէ թէ ճարպով։

— Շարլը, ըսաւ Սոֆի խնդալով իւր ամուսնոյն, սա ծանր խնդիր է. դու ի՞նչ կ'ըսես։

— Պնակ մը շաքարով և պնակ մ'ալ ճարպով եփելու է, պատասխանեց Շարլը խոհուն դէմքով։

— Խնդիր լուծելու համար չափադէտներուն ոտքը հասնող չկայ, յարեց Սոֆի, վերջը, երկու տղոցը ձեռքէն բռնելով, ըսաւ.

— Կ'ուզեմ Անթօնինի ցոյց տալ թէ ի՞նչպէս աղուորցան ու մեծցան։

— Բայց յուսամ թէ, ըսաւ Պ. Տիւթէրթը, օրիորդ Հիւպէրի պիտի աղաչես որ հոս գայ, ապա թէ ոչ ես կուգամ զինքը կ'առնեմ։

— Տղաքը դայեակնուն ձգեմ և Անթօնինի հետ գամ։

— Շա՛ր լը, ըսաւ ծերունին ոտքի ելլելով՝ երբ նորատի կինը անհրեւութացաւ, կաղաչեմ, թեւդ ինձի տո՛ւր։

— Պատրաստ եմ, հա՛յր իմ. բայց Պ. Բասքալ հիմայ կուգայ։

— Եւ կ'ուզե՞ս որ ե՞ս ալ հոս ըլլամ սիրելիս։

— Հա՛յր իմ, գիտէք որ մեր բարեկամն շատ կը յարգէ զձեզ և ինքզինքը

երջանիկ կը համարի՝ երբ կարենայ իւր յարգանքն յայտնել ձեզ։

Ծերունին պահ մը լուռ կենալէ ետքը, ըսաւ.

— Գիտե՞ս որ սա Մարսլանժ գանձապետը վռնտելէդ ի վեր, շատ անգամ գացեր է Պ. Բասքալը տեսնելու։

— Առաջին անգամն է որ կը լսեմ, հա՛յր իմ։

— Եւ այս բանը զարմանալի չե՞ւնար քեզ։

— Հարկաւ։

— Զիս մոռիկ ըրէ՛, Շարլը, ես . . . ։

— Ներեցէ՛ք, հա՛յր իմ. յարեց Տիւթէրթրը ծերունւոյն խօսքն ընդմիջելով, հիմայ միտքս եկաւ. Մարսլանժը վռնտելէս ի վեր՝ մեր բարեկամը չի տեսայ. Մարսլանժ ալեկ գիտէ որ Պ. Բասքալը շատ կը սիրեմ, և կարելի է որ գացած աղաչած է անոր որ միջնորդութիւն ընէ ղինքը քովս առնելու համար։

— Կարելի է, ըսաւ ծերունին մտածելով։ Սակայն . . . ։

— Ի՞նչ կայ հա՛յր իմ. . . ։

— Փիչ մ՚առաջ աղջկանդ ըսածը զարմացուց զիս . . . ։

—Օ՛ն, հա՛յր իմ, յարեց Տիւթէրթրը ժպտելով, դուք կնոջս աչքը մտնելու համար կ՚ըսէք այդ խօսքը։ Դժբաղդաբար այս պահուս չի կրնար ըսածնիդ լսել, բայց ես կը զրուցեմ իրեն . . . ։

— Շա՛րլը, ըսաւ ծերունին տխուր ձայնով մը, այս բանս քեզ ըսելուս պատճառը սա է որ, աղջկանդ զգացած տրպաւորութիւնն որքան ալ որ չնչին երևի քեզ, ինձ համար քիչ շատ կարեւորութիւն ունի, և երբ այս միջոցիս զայն կը բաղդատեմ քանի մը պարագայից հետ, երբ միտքս կը բերեմ՝ վերջապէս Մարսլանժի և Պ. Բասքալի յաճախակի տեսակցութիւնները, կը խոստովանիմ թէ այդ մարդուն վրայ տեսակ մ՚անորոշ կասկած կ՚զգամ ակամայ։

— Հա՛յր եմ, հա՛յր իմ, ըսաւ Տիւթէրթրը այլայլմամբ, առանց ուղելու եւ նոյն իսկ զիս շատ սիրելնուդ զիս կը վշտացընէք։ Պ. Բասքալէն կասկածի՛լ, կասկածի՛լ մեր վեհանձն բարերարէն։ Ա՛հ, հա՛յր իմ, երկար ատենէ ի վեր առաջին անգամն է որ վիշտ մը կ՚զգամ։ Առանց ապացոյցի կասկածի՛լ, տղումը անհիմն տպաւորութեան ազդեցութեանն կարեւորութիւն տալ, գոչեց Տիւթէրթրը՝ իւր վեհանձն բնութեանն եռանդեամբը, ադանիրաւութիւն է։

— Շարլը՛, ըսաւ ծերունին՝ տղուն խօսուածքէն վիրաւորուելով։

— Ներեցէ՛ք, ներեցէ՛ք, աղնի՛ւ հայրս, գոչեց Տիւթէրթրը՝ ծերունւոյն ձեռքերը բռնելով, ներեցէ՛ք որ պահ մը բարեկամութիւնս որդիական յարգանքէս աւելի ուժով գտնուեցաւ։

— Խե՛ղճ Շարլս, պատասխանեց ծերունին գորովանօք, Աստուա՛ծ տար որ ես անիրաւ ելլամ և դու իրաւունք ունենաս։ Բայց մարդ կուգայ, օ՛ն, տա՛ր զիս։

Տիւթէրթրը կոյրը սենեակ մը մտցնելէ վերջը, երբ անոր դուռը կը փակէր, օրիորդ Անթօնին Հիւպէր սրահը մտաւ՝ տիկին Տիւթէրթրի հետ։

Զ.

Ներուի մեզ դիցաբանական հինցած բաղդատութիւն մ՚ընել. Ոզիմպոսի վրայ մատռուակութիւն ընող դիցուհին այնքան թարմութիւն և գերմարդկային գեղեցկութիւն չ՚ունէր, որչափ որ ունէր օրիորդ

Անթոնին Հիւպէր, որու Ֆրանցի հետ ունեցած գաղտնի սիրահարութեանն ականատես եղեր էր Պ. Բասքալ։

Այս աղջկան վրայ ամենէն հրապուրիչ բանն էր տանելհինգուկէս տարուան այն նորափթիթ գեղեցկութիւնն, որ թէ՛ տղու մը և թէ նորահաս աղջկան մը գեղեցկութեանը կը նմանի. հրապուրիչ տարիք, որ տակաւին լի է խորհուրդներով եւ անբիծ տգիտութիւններով, մաքուր արշալոյս, սպիտակ և թափանցիկ, զոր անուշ գոյնով մը կը նկարեն անմեղ սրտի մը առաջին բաբաղխումներն։

Այս էր ահա՛ Անթոնինի տարիքը, եւ այս աղջիկը նոյն հասակին հրապոյրներն ունէր ամբողջ։

Մեր աստուածուհին մարդացնելու համար, իջեցնենք զինքն իւր պատուանդաններէն, և իւր կուսական փափկաձեւ մարմարեայ սիրուն մարմինն համեստօրէն քողարկելով, հագցնենք իրեն ամռան վայելուչ շրջազգեստ մը, սև մետաքսէ թիկնոց մը թո՛ղ ծածկէ իւր իրանն, և այտերուն պէս վարդագոյն անդուսով կրկնուած յարդէ գլխարկ մը, իւր բաց շագանակագոյն մազերուն գիսակները բաց թողլով, թող պսակէ՝ այս հիանալի փոքրիկ գլուխն, որ նորատի աղջկան համբուրած տղոց գլխուն պէս սպիտակ և բեհեզանման է։

Օրիորդ Հիւպէր, Սոֆիի հետ սրահը մտած ատեն՝ թեթեւ մը կարմրեցաւ վասն զի տակաւին երկչոտ էր. ապա, Տիւթէրթրի և կնոջն անկեղծ ընդունելութենէն քաջալերուելով, տեսակ մը ակնածութեամբ ըսաւ տիկին Տիւթէրթրի։

— Գիտէ՞ք ինչ յաջող բանի համար եկայ, սիրելիս Սոֆի։

— Վա՛յ, պզտիկ Անթոնինաս, ըսէ՛ տեսնեմ։

— Սրբոհոյն — Մարիէն նամակ մ՚առի, ըսաւ աղջիկը՝ գրպանէն պահարան մը հանելով։

— Իրա՛ւ, գոչեց Սոֆի, զարմանքէն և ուրախութենէն կարմրելով և ձեռքն երկընցնելով, որպէս զի նամակն առնէ։

— Վա՛յ, օրիորդ Անթոնին, ըսաւ Շարլը Տիւթէրթրը, արքայութեան հետ թըղթակցութեան մէ՞ջ էք։ Սակայն այդ բանն ինձ զարմանք պատճառելու չէ...

— Լռեցէ՛ք, պարո՛ն հեգնաբան, յարեց Սոֆի, և Անթոնինի ու իմ լաւագոյն մտերմուհւոյն վրայ կատակ մի՛ ընէք։

— Շատ աղէկ։ Սակայն այդ Սրբուհի-Մարիէն անունն ի՞նչ է։

— Շա՛րլը, միթէ հազար անգամ խօսած չ՚ե՞մ քեզ իմ դպրոցի ընկերոջս օրիորդ Մարիէն Օելվէյրսի վրայ, որ բացակայ ըլլալով, հեռուէն միայն կրցաւ կընքամայր ըլլալ մեր փոքրիկ աղջկանն։ Միտքդ չի՞ դար։

— Շատ լաւ կը յիշեմ, սիրելի Սոֆի, յարեց Տիւթէրթրը, վասն զի միտքս է որ այդ Մէքսիկացի նորատի կինն անանկ տարօրինակ գեղեցկութիւն մ՚ունի կ՚ըսէիր որ, որքան հիացում, նոյնքան եւ զարմանք ու հրապոյր կը պատճառէ։

— Նոյն ինքն, բարեկա՛մս. ինձմէ վերջը Մարիէն մայրութիւն ըրաւ Անթոնինի, վասն զի դպրոցի մէջ մէն մի մեծ աշակերտուհիի 10 — 11 տարու տղէկ մը կը յանձնեն։ Ես դպրոցէն ելած ատենս սիրելի Անթոնինը Սրբուհի — Մարիէնի խնամքը յանձնեցի։

— Զիս շուարեցնողն այդ մակդիրն էր, յարեց Տիւթէրթրը, և կը խոստովանիմ թէ այդ մակդիրն շատ փառասիրական և կամ շատ խոնարհ կը գտնեմ առանկ սիրուն անձի մը համար, վասն զի գրեթէ քեզի տարեկից ըլլալու է։

— Դպրոցին մէջ Մարիէնը Սրբուհի կո-

չեցին՝ վասն զի արժանի էր, Պ. Տիւ-Թէրթրը, բսաւ Անթօնին, իւր հնգետասանամեայ լրջութեամբն։

— Ըսել է այդ օրիորդ Սբբ-հէ—Մարլէնը շատ բծախնդիր ջերմեռանդ մ'էր։

— Մատլէն, ինչպէս իւր երկրին գբրեթէ բոլոր բնակիչներն (իւր Մակտալէնա անունը մենք ֆռանսացուցեր էինք) մասնաւոր ջերմեռանդութիւն մ'ունէր։ Նա Քրիստոսն ընդունած էր, և Փրկչին համար ունեցած պաշտամունքն երբեմն հիացման կը դառնար, բսաւ Սօֆի։ Ասկից զատ Մատլէն սիրալիր բնութիւն մը, կաթոդին սիրտ մը եւ սուր միտք ունէր։ Բայց կ'աղաչեմ, Շարլը, թո՛ղ որ իւր նամակը կարդամ. գիտնա՛ս որքան անհամբեր եմ։ Երկու տարի է որ բաժնուեր ենք, և առաջին անգամն է որ իրմէ նամակ կ'ընդունիմ։ Ես ու Անթօնին կ'ուզէինք իր լուութեանն համար ոխ պահել իրեն դէմ. բայց կը տեսնես որ այդ չարաճճի Սբբ-հէ մտքերնիս գալուն պէս, զինաթափ եղանք,

Սօֆի՝ օրիորդ Հիւպէրի տուած նամակն առնելով և կարդալով՝ այլայլմամբ բսաւ.

— Սիրո՛ւն Մատլէն, մի՛շտ սիրալիր, մի՛շտ զուարթ և մտացի, անցելոյն յիշատակաց համար մի՛շտ զգայուն։ Վենետիկէն ելլելէն վերջը, քանի մ'օր Մարսիլիա կենալով՝ անկէց Բարիզ պիտի գայ՝ գրեթէ իւր նամակին հետ միասին, և մեծ երջանկութիւն կ'զգայ որ պիտի կարենայ տեսնել իւր Սօֆի մտերմուհին և Անթօնին աղջիկը. նամակն ալ Սբբ-հէ—Մարլէն ստորագրեր է։

— Ըսել է դեռ չէ՞ ամուսնացած, հարցուց Շարլը Տիւ-Թէրթրը։

— Չեմ՛ գիտեր, բարեկամս, պատասխանեց կինը, քանի որ միմիայն աւագանի անուամբն ստորագրեր է։

— Ես ալ, յարեց Շարլը ժպտելով, ի՞նչ անվիտ հարցումներ կ'ընեմ։ Սրբուհի մը ամուսնանա՛յ։

Այս պահուս նորատի սպասուհին ներս մտաւ, և դրան սեմին վրայ կենալով՝ տիրուհւոյն նշան մ'ըրաւ. բայց Սօֆի պատասխանեց.

— Խօսէ՛, ժիւլի, Օր. Անթօնին մենէ է։

— Տիկի՛ն, բսաւ սպասուհին, Ակաթկը հարցնէ թէ հաւը շիշը անցնէ՞, թէ և Պ. Բասքալ տակաւին չ'եկաւ։

— Անշուշտ, բսաւ տիկին Տիւ-Թէրթրը, Պ. Բասքալ քիչ մ'ուշացաւ, բայց ուր որ է կուգայ։

— Ըսել է մարդո՞ւ կը սպասէք, Սօֆի, բսաւ Անթօնին՝ երբ սպասուհին հեռացաւ. ուրեմն ցտեսութի՛ւն, յարեց թեթեւ մը հառաչելով, միմիայն Սրբուհի—Մատլէնի նամակը բերելու համար չ'էի եկեր ես, այլ կուզէի երկար բարակ խօսիլ հետերնիդ. վաղը նորէն կուգամ, սիրելիս Սօֆի։

— Բայց չ'ըլլար, սիրելի Անթօնինս, և ես իմ նախկին մօր իրաւունքս ի գործ պիտի դնեմ՝ աղջիկս կերակուրի չի ձգելու համար։ Այսօր տեսակ մը ընտանեկան խնջոյք ունինք։ Մինթէ ընտանեաց մէջ դու ալ տեղ չ'ունի՞ս, սիրելիս։

— Օ՛ն, օրիորդ Անթօնի՛ն, բսաւ Շարլը, այս զոհողութիւնն ըրէ՛ մեզ։

— Շատ շնորհակալ եմ, պարոն Տիւ-Թէրթրը, բայց ճշմարիտ կ'ըսեմ թէ չ'եմ կրնար ընդունիլ։

— Ուրեմն, բսաւ Շարլը, ես ալ մեծ միջոցներու կը դիմեմ, օրիորդ Անթօնին, եթէ կերակուրի կենալու պատիւն ընէք մեզ, պիտի կարենաք տեսնել այն վեհանձն մարդն որ, տարի՞մ՝ առաջ մեզ օգնութեան հասաւ. վասն զի այսօր այն ազ-

նիւ գործին տարեդարձն է որ կը տօնենք։

Սօֆի մոռցած ելլալով իւր աղջկանն բսածներէն սիրտը մոտած տեսակ մը կասկածը, յարեց.

— Այո՛, սիրուն Անթօնին, այն սոսկալի տագնապին և գործոց նեղութեան ժիջոցին, Պ. Բասքալ Շարլին բսաւ. «Պարո՛ն, ես անձնականապէս ձեզ չ'եմ ճանչնար, բայց գիտեմ որ խելացի, աշխատասէր և ուղիղ էք։ Գործերնիդ յառաջ տանելու համար 50 հազար սկուտի պէտք ունիք. ես իբրեւ բարեկամ այդ գումարը կուտամ ձեզ, դուք ալ իբրեւ բարեկամ ընդունեցէք. իսկ շահու պայմանները վերջէն կը կարգադրենք, դարձեալ իբրեւ բարեկամ»։

— Իրաւ, յարեց Անթօնին, այդ ազնիւ գործ մ'է։

— Այո՛, յարեց Պ. Տիւթէրթրը՝ խորյուզմամբ մը, վասն զի այդ մարդն ասով միմիայն իմ արուեստս չի փրկեց, այլ իմ քովս աշխատող բազմաթիւ գործաւորաց աշխատութիւնը, հօրս ծերութեան անդորրութիւնը, կնոջս երջանկութիւնն եւ զաւակաց ապագայն ապահովեց։ Ա՛հ, կեցէ՛ք, կեցէ՛ք, օրիորդ Անթօնին։ Բարերար մարդիկ հազուագիւտ են. բայց ահա՛ ինքն, յարեց Պ. Տիւթէրթրը՝ տեսնելով որ Պ. Բասքալ սրահին պատուհանները ուն տակէն կ'անցնի։

— Սօֆիի և ձեր բսածներն սաստիկ գրաւեցին սիրտս, պարոն Տիւթէրթրը, և կը ցաւիմ որ այդ վեհանձն մարդուն հետ չպիտի կարենամ գտնուիլ, վասն զի շատ կուշանամ, պէտք է որ կանուխ տուն դառնամ։ Հօրեղբայրս ինձի կը սպասէ. այս գիշեր նորէն շատ գեշ էր. ցաւը բռնած ատեն, կուզէ որ քովը գտնուիմ, և կարելի է որ նորէն ցաւը բռնէ։

Ապա, ձեռքը Սօֆիի երկնցնելով, բսաւ.

— Քիչ ատենէն պիտի կարենամ ձեզ տեսնել, չէ՞ մի։

— Վաղը կամ միւս օր, սիրելիս Անթօնին, ես քեզի կուգամ, և ուզածիդ չափ երկար կը խօսինք։

Դուռը բացուեցաւ. Պ. Բասքալ ներս մտաւ։

Անթօնին իւր բարեկամուհին գրկեց, և Սօֆի սիրալիր մտերմութեամբ մ'բսաւ դրամագէտին.

— Անշուշտ կը ներէք որ օրիորդն յուղարկեմ, Պ. Բասքալ։ Ապա անմիջապէս կը վերադառնամ։

— Ինչ քաշուիլ պէտք չ'է, սիրելիս տիկին Տիւթէրթրը, թօթօվեց Պ. Բասքալ, որ ապշած էր հոն տեսնելով զԱնթօնին, զոր բոցավառ աչօք դիտեց, մինչեւ որ սենեակէն դուրս ելաւ։

Է.

Ըսինք թէ Պ. Բասքալ Անթօնինք տեսնելով պահ մը զարմացեալ ու հիացեալ կեցեր էր այս անբիծ ու մաքուր գեղեցկութեան առջեւ։

— Վերջապէս եկա՛ք, ըսաւ Շարլը Տիւթէրթրը եռանդեամբ և ձեռքերն Պ. Բասքալի երկնցնելով. երբ անոր հետ առանձին մնաց։ Գիտէ՞ք որ քիչ քիչ ձեր խոստմանը վրայ կասկածելու սկսանք։ Շաբաթ մ'է որ կինս ու ես այս առտուան համար պատրաստութիւն կը տեսնէինք, վասն զի, մեր զաւակաց ծննդեան տարեդարձէն վերջը ամենէն աւելի երջանկութեամբ ոնած օրերնիս այն օրն է որ,

ձեր շնորհիւ, նոցա ազգային ապահովուեցաւ։

Պ. Բասքալ Պ. Տիւթէրթրի ըսածները չի լսելու զարկաւ և անոր ըսաւ,

— Ասկէ դուրս եկնող աղջիկն ո՞վ է։

— Օրիորդ Անթոնին Հիւպէր։

— Արդեօք աղգակա՞ն է այն Հիւպէր նախագահին, որ վերջերս ծանր հիւանդ էր։

— Անոր եղբօրաղջիկն է։

— Ա՛, ըսաւ Բասքալ մտածելով։

— Գիտէք որ եթէ հայրս հոս չըլլայ, ինչոյ.քնիս կատարեալ չըլլար։ Երթամ ձեր գալուստն իմացնեմ իրեն, սիրելիս Պարոն Բասքալ։

Եւ երբ դէպ ի ծերունւոյն սենեակը կերթար, Պ. Բասքալ նշանացի կեցուց զինքն և ըսաւ.

— Հիւպէր նախագահը ո՞ւր կը բնակի։

Տիւթէրթրը ըսաւ.

— Սէնթ-Օնորէ արուարձանն, պարտէզը Էլիզէ-Պուրպոնի պարտիզին կից է։

— Շատո՞նց է որ այս աղջիկն իւր հօրեղբօրը հետ կը բնակի։

Տիւթէրթրը, բաւական զարմանալով Պ. Բասքալի՝ Անթոնինի մասին ըրած հարցմանցն, պատասխանեց.

Երեք ամիս կայ որ Պ. Հիւպէր գնաց օրիորդ Անթոնինը բերաւ Նիսէն, ուր մընացեր էր ազգականաց մէկուն մեռնելէն վերջը։

— Կ'երևնայ որ տիկին Տիւթէրթրը շատ աղեկ է այդ աղջկան հետ։

— Դպրոցին մէջ Սոֆի անոր մայրն էր գրեթէ և անկից ի վեր ամենափափուկ սէր մը ունին իրարու վրայ։

— Ա՛... ըսաւ նորէն Բասքալ և քանի մը վայրկեան խորունկ մտածեց։

Այս մարդը մեծ և հաղուագիւտ կարողութիւն մ'ունէր, որ մեծապէս նպաստած էր իւր հարստանալուն. ինչպէս որ մարդ ուզածին պէս այս ինչ դարակը կը բանայ և այն ինչը կը գտնէ, նոյնպէս Պ. Բասքալ կրնար մէկէն ի մէկ իւր ամենախորին մտազբաղութիւններն թողլով, բոլորովին հակառակ գաղափարաց շարք մը ձեռք առնուլ։ Օրինակի համար Ֆրանցի և Անթոնինի տեսակցութենէն վերջը, որ սաստիկ յուզեր էր զինքն, մտաց ամենայն հանդարտութեամբ գործի վրայ խօսեցաւ արքիդքսին հետ և ղայն չարչրկեց։

Նոյնպէս նաև Տիւթէրթրի տունը Անթոնինի պատահելէն վերջն նորատի աղջկան մասին ունեցած դիտաւորութիւնն ուրիշ ատենի թողուց, և բոլորովին ուրիշ բան մտածելով, Սոֆիի ամուսնոյն ըսաւ.

— Մինչեւ որ ձեր ամուսինն գալու ըլլայ, բարեկամս, ես ձենէ փոքրիկ ծառայութիւն մը պիտի խնդրեմ։

— Վերջապէ՛ս, գոչեց Տիւթէրթրը, ուրախութեամբ ձեռքերն շփելով, վերջապէ՛ս։

— Մարսլանժ անունով դանձապետ մը ունէիք։

— Դժբաղդաբար։

— Դժբա՞ղդաբար։

— Այս տեղ անանկ բան մը ըրաւ որ, հասկցայ թէ այդ մարդն թշուառականին մէկն է և վռնտեցի զայն։

— Այո՛, Մարսլանժ ինձ ըսաւ որ զինքը վռնտեր էք։

— Դուք զինքը կը ճանչնա՞ք, յարեց Տիւթէրթրը, որ հօրք խօքերն յիշելով՝ կը զարմանար։

— Քանի մ'օր առաջ ինձ եկաւ։ Կուզէ Տիւրանենց քով մտնել։

— Նա՛, անանկ պատուաւոր մարդոց քո՛վ։

— Ինչո՞ւ չէ։ Միթէ ատենով ձեր քովը չէ՞ր։

— Բայց, սիրելիս Պ. Բասքալ, արդէն ըսի ձեզ որ ի՛նչ բարուց տէր ըլլալն հասկընալուս պէս՝ վռնտեցի։

— Հասկցայ։ Միայն թէ որովհետեւ պարապն է և որպէս զի կարենայ Տիւրանենց քով մտնել, որք պատրաստ են զինքն ընդունելու, այդ խեղճ տղան յանձնարարական գրի մը պէտք ունի ձեր կողմէն. այդ երաշխաւորութեամբ՝ անմիջապէս կ'ընդունուի. ես ալ բացէ ի բաց այդ յանձնարարագիրն ուղելու եկայ ձենէ։

Տիւթէրթրը, պահ մը շանթահար մընալէ վերջը, ժպտելով ըսաւ.

— Բայց զարմանալու չեմ, վասն զի դուք բարեսիրտ էք, և այդ մարդն իւր նենգամտութեամբն ու կեղծաւորութեամբը ձեզ խաբած ըլլալու է։

— Այո՛, ես ալ այնպէս կը կարծեմ որ Մարսլանժ շատ նենգամիտ և կեղծաւոր է. բայց ասի արդեւք մը չէ ուզած յանձնարարագիրս տալու։

Տիւթէրթրը կարծեց թէ սխալ լսեց և կամ չի կրցաւ իւր միտքն հասկցնել Պ. Բասքալի. ուստի յարեց . . .

— Ներեցէ՛ք, ըսի որ . . . ։

— Այդ տղան անպատիւ բան մ'ըրաւ ձեր քոջը, աղեկ. բայց ի՞նչ կ'ըլլայ։

— Ի՞նչպէս, Պ. Բասքալ, ի՞նչ կ'ըլլայ մի։ Բայց բա՞ս իս այդ մարդուն ըրածը գողութենէ աւելի մեծ յանցանք մ'է։

— Կը հաւատամ, սիրելիս Տիւթէրթրը, կը հաւատամ, պատուոյ խնդիրներու մէջ ձենէ աղեկ դատաւոր չի կրնար ըլլալ. Մարսլանժ մեծ խաբեբայ մը կ'երեւնայ ինձ, և, շիտակն ըսելու համար, այդ է պատճառ որ աս մարդուն ձեր կողմէն յանձնարարուիլը կ'ուզեմ։

— Շիտակը Պ. Բասքալ, եթէ Մարսլանժի օգնեմ որ բա՞ս ամենայնի պատուաւոր տուն մը մտնէ, անպատիւ բան մը ըրած պիտի համարիմ ինքզինքս։

— Օ՛ն անդր, այս բանն ըրէք ինձի համար։

— Լրջօրէ՞ն կը խօսի՛ք, Պ. Բասքալ։

— Բոլորովին լրջօրէն։

— Բայց քիչ մ'առաջ բաածս։

— Ի՛նչ փոյթ.

— Դո՛ւք, դո՛ւք որ, այնքան պատուաւոր և ազնիւ էք . . . ։

— Այո՛, ես որ այնքան պատուաւոր և ազնիւ եմ, այս յանձնարարագիրն կը խնդրեմ ձենէ։

Տիւթէրթրը նախ ապշութեամբ նայեցաւ Պ. Բասքալին. ապա, պահ մը մտածելէ վերջն, կէս յանդիմանութեամբ մը ըսաւ.

— Ա՜հ, պարո՛ն, տարի մ'անցնելէ վերջը՝ այս փորձը պէ՞տք էր մի։

— Ի՞նչ փորձ։

— Անպատիւ գործ մ'առաջարկել ի՛նձ, որպէս զի հասկնաք թէ ձեր վստահութեանն արժանի՞ եմ մի։

— Սիրելիս Տիւթէրթրը, նորէն կ'ըսեմ թէ այդ յանձնարարագրին պէտք ունիմ, խնդիրն ինձ համար խիստ փափուկ և խիստ կարեւոր գործի մը վրայ է։

Պ. Բասքալ լրջօրէն կը խօսէր։ Տիւթէրթրը այլ ևս չէր կրնար տարակուսիլ ասոր. այն ատեն յիշեց հօրը խօսքերն, աղջկանը նախազգացումն, և անատոյգ վախ մը դալով վրան՝ թոթովեց։

— Ուրեմն կը մոռնա՞ք թէ ի՛նչ ծանր պատասխանատուութիւն պիտի ծանրանայ վրաս, եթէ ուզածնիդ ընեմ։

— Է՛հ, սիրելիս, եթէ մարդ իւր բարեկամներէն դիւրին բաներ խնդրէ . . . ։

— Բայց դուք անկարելի բան մը կը պահանջէք, պարո՛ն։

— Ըսել է այս բանն կը մերժէք, ինձի՞ . . . :

— Պարոն Բասքալ, ըսաւ Տիւթէրթրը հաստատուն ձայնիւ. ես ամէն բան ձեզ պարտաւոր եմ, Ամէն օր հայրս, կինս ու ես կը յիշենք թէ տարի մ՚առաջ, եթէ ձեր անակնկալ օգնութիւնն չըլլար, մեր և մեր մարդոց կործանումն անխուսափելի էր: Այնքան սէր և յարգանք կ՚զգանք ձեզ համար, որքան որ կրնայ ներշնչել երախտագիտութիւնն: Պատրաստ ենք անձնուիրութեան ամէն կարելի ապացոյց տալ ձեզ ուրախութեամբ և երջանկութեամբ, բայց . . . :

— Խօսք մ՚ալ ըսեմ և այն ատեն միտքս կը հասկնաք, ըսաւ Պ. Բասքալ՝ Տիւթէրթրի խօսքն ընդմիջելով: Իմ շահս կը պահանջէ որ Տիւրանենց քով մարդ մ՚ունենամ, բոլորովին ինձի յատկացած մարդ մը. արդ, կրնաք ըմբռնել որ, եթէ այդ յանձնարարագիրն տաք ինձ և Մարսլանժի անցելոյն վրայ գիտցածներովս, նա իմ կոյր գործիքս կ՚ըլլայ: Այս խօսքը մէջերնիս մնայ, սիրելիս Տիւթէրթրը, և ձեր գաղտնապահութեանը վրայ վստահ ըլլալով, սա ալ ըսեմ ձեզ որ . . . :

— Այս մասին ալ մի՛ խօսիք, պարո՛ն, կ՚աղաչեմ, գոչեց Տիւթէրթրը զարմանօք և վշտագին, վասն զի մինչեւ այն ատեն Պ. Բասքալն անդիի ծայր ուղիղ մարդ մը կը կարծէր: Կը բաւէ: Գաղտնիքներ կան զորս մարդ չի կրնար մտիկ ընել:

— Ինչո՞ւ համար:

— Վասն զի կրնան շատ նեղութիւն պատճառել, պարո՛ն:

— Վա՛յ, հինաւուրց բարեկամի մը գաղտնիքներն կրնա՞ն նեղութիւն պատճառել: Լա՛ւ, կը պահեմ զանոնք: Ուրեմն, առանց բացատրութիւն խնդրելու այդ յանձնարարագիրն տուէ՛ք ինձ:

— Վերստին կ՚ըսեմ թէ անհնար է, պարո՛ն:

Պ. Բասքալ շրթունքն խածաւ և անընչմարելի կերպիւ յօնքերն պռստեց. Տիւթէրթրի մերժմանը զարմանալով և միանգամայն բարկանալով, չէր կրնար հաւատալ թէ իւր ձեռքին տակ գտնուող մարդը մը յանդգնի իր կամացը դէմ դնել և ներկայն ու ապագայն պատուոյ խնդրի մը զոհել:

Սակայն, որովհետեւ Պ. Բասքալ իրաւունքն է մեծ շահ մ՚ունէր այդ ուզած յանձնարարագիրն ընդունելու, յանդիմանութեան ձայնով մը ըսաւ.

— Ինչպէ՞ս, սիրելիս Տիւթէրթրը, այս բանն կը մերժէ՞ք ինձ, ձեր բարեկամին:

— Մանաւանդ թէ ձեզ կը մերժեմ, պարո՛ն, ձեզ որ իմ ուղղութեանս հաւատալով, առանց զիս ճանչնալու, մեծ գումար մը փոխ տուիք ինձ:

— Օ՛ն, սիրելիս Տիւթէրթրը, զիս չափէն աւելի անխոհեմ մի՛ կարծէք: Չէ՛ մի որ ձեր ուղղութիւնք, տաղանդն ու ձեր անձնական շահն (և գլխաւորաբար ձեր գործարանին մեքենայներն) իմ ստակս կ՚երաշխաւորէին: Չէ՞ մի որ իմ կացութիւնս միշտ ապէկ է, քանի որ իմ կամքէս կախեալ է վճարման ժամանակն որոշել, թէ և այդ որոշումն տակաւին երկար ատեն պիտի յետաձգեմ . . . վասն զի կը սիրեմ զձեզ, փութաց ըսել Պ. Բասքալ՝ տեսնելով որ մէկէն ի մէկ անձկութիւն ու զարմանք նկարուեցան Տիւթէրթրի դէմքին վրայ. բայց վերջապէս ենթադրենք թէ, հրապարակի այս չափազանց անձկութեան և տագնապի պահուն՝ օր մը ըսեմ ձեզ. պարո՛ն Տիւթէրթրը, մինչեւ ամիս մը ստակիս պէտք ունիմ և

վարկս կը գոցեմ ձեզ։

— Տէ՛ր Աստուած, գոչեց Տիւթէրթը վշտագին և ասանկ աղեստ մը ենթադրելով իսկ, բայց կը մնանկանամ, արուեստս կը կործանես այն ատեն. եթէ գործ գտնեմ, պիտի ստիպուիմ ձեռօքս աշխատիլ, որպէս զի հիւանդ հայրս, կինս ու զաւկներս ապրեցնեմ . . .։

— Լռէ՛, չար մարդ, և ասանկ սքրտակեղէք գաղափարներ մի՛ ձգեր՝ միտքս, գոչեց Պ. Բասքալ՝ Տիւթէրթրի ձեռքերն բռնելով։ Այսօր ադանկ խօսքեր ընե՛լ, և ե՛ս որ ձեզի պէս այս առտուան խընջոյքը մոռածելով՝ կ'ուրախանայի՛ . . . բայց ի՞նչ ունիք, կը դեղնիք . . .։

— Ներեցէ՛ք, պարո՛ն, ըսաւ Տիւթէրթրը՝ ճակտէն վազած պաղ քրտինքը որբելով. բայց ատանկ սոսկալի հարուած մը, որ պատիւս, ընտանիքս, աշխատութիւնս, ամէն բան կ'ոչնչացնէ . . . ա՜հ, պարո՛ն, իրաւունք ունիք, մէկդի ընենք այս գաղափարն, վասն զի շատ սոսկալի է։

— Հապա՛, ի՞նչ պէտք է մեր ուրախութիւնն պղտորել։ Ուստի, յարեց պարոն Բասքալ զուարթօրէն, գործերնիս լըմընցնենք, այն յանձնարարագիրն տուէք ինձ։

Տիւթէրթրը սարսռած, ահռելի անձկութիւն մը տիրեց սրտին և պատասխանեց.

— Ձեր այդպէս պնդելն զարմանք եւ ցաւ կը պատճառէ ինձ, պարո՛ն։ Նորէն կ'ըսեմ թէ բացարձակապէս անկարելի է որ ուզածնիդ ընեմ։

— Բայց, տղայ դո՛ւ, պնդելէս պէտք էր հասկնայիք որ այս գործը մեծ կարեւորութիւն ունի ինձ համար։

— Կրնայ ըլլալ, պարո՛ն։

— Եւ այսքան կարեւորութիւն տալուս պատճառն գիտէք ի՞նչ է, տիրելիս Տիւթէրթրը. վասն զի որքան ինձ, նոյնքան ալ ձեզ կը վերաբերի։

— Ի՞նչ կ'ըսէք, պարո՛ն։

— Հապա՛։ Քանի որ չէք ուզեր օգնել ինձ որ աս սրիկայ Մարսլանժն ուղածիս պէս գործածեմ, Տիւրանենց մասին ունեցած դիտաւորութիւնս չպիտի յաջողի, և այն ատեն թերևս, այլ և այլ պատճառներով, յարեց Պ. Բասքալ հետևեալ բառերն շեշտելով ու ցուրտնայուածք մը նետելով իր ղոհին վրայ, թերևս պիտի ստիպուիմ ակամայ ստակս ետ ուղել եւ վարկս գոցել ձեզ,

— Ո՜հ, Աստուա՜ծ իմ, գոչեց պարոն Տիւթէրթրը, ձեռքերը միացնելով և ուրուականի մը պէս դեղնելով։

— Ուստի տեսէ՛ք թէ դուք ի՛նչ սոսկալի կացութեան մէջ կ'իյնաք։ Հարկադրե՛լ զիս անանկ գործ մը ընելու, որ սիրտս կը կեղեքէ . . .։

— Բայց, պարո՛ն . . . դեռ քիչ մը առաջ . . . կապահովէիք զիս թէ . . .։

— Է՜հ, իմ դիտաւորութիւնս այդ ըսաակն տակաւին երկար ատեն ձեր քով ձգել է. անոր տոկոսն ճիշդ ժամանակին կը վճարէք . . . դեռ ի՞նչ կ'ուզեմ . . . և մեր պայմանին համեմատ՝ տասը տարիէն ձեր պարտքը վճարած պիտի ըլլանք, որով ես թէ ձեզ ծառայութիւն մը մատուցած թէ շահաւոր գործ մ'ըրած պիտի ըլլամ։

— Արդարեւ, պարո՛ն, մրմնջեց Տիւթէրթրը, այսպէս էր ձեր խոստումն, և ձեր վեհանձնութիւնն ու ուղղութիւնն քստ ամենայնի կը վստահացնէին զիս։ Աստուած տար որ այդ վստահութիւնն անմիտութեան և անխոհեմութեան չի դառնայ։

— Այս մասին, սիրելիս Տիւթէրթը, սա լաւ գիտցիք որ, այն առևտրական տաժանելի տագնապի միջոցին բնաւ տեղէ մը ստակ չէիք կրնար գտնել այսքան չափաւոր տոկոսով։

— Գիտեմ, պարո՛ն։

— Ադոր համար կրցիք\և ի հարկէ ըստիպեալ, պարտաւորեցաք դրած պայմանս ընդունիլ։

— Բայց, պարո՛ն, գոչեց Տիւթէրթը անբացատրելի սոսկմամբ, ձեր պատուոյն կը դիմեմ. բացարձակապէս խոստացաք ինձ որ . . .։

— Այո՛, խոստացայ, բայց անդիմադրելի պատճառներ կան, և այդ յանձնարարագիրն չտալով՝ անդիմադրելի պատճառ մը կ'արտադրէք, որ կը հարկադրէ զիս . . . ստակս ետ ուղելու։

— Բայց, պարո՛ն, դուք անպատիւ բան մը կ'առաջարկէք ինձ. մոռացեցէք անգամ մը։

Այս միջոցին դրսէն լսուեցաւ Սոֆի Տիւթէրթի անոյշ խնդուածքն։

— Ա՜հ, պարո՛ն, գոչեց ամուսինը. այս մասին խօսք մը մի՛ ընէք կնոջս առջեւ, վասն զի յուսամ թէ այս չէ ձեր վերջին որոշումն . . .։

Շարլը Տիւթէրթը չի կրցաւ խօսքը լրմընցնել, վասն զի Սոֆի սրահը մտաւ։

Խեղճ մարդն պաղատական նշան մ'ըրաւ Բասքալի, որ անոյշ նշանով մը պատասխանեց։

Ը.

Երբ Սոֆի Տիւթէրթը մտաւ սրահը, ուր կը գտնուէին իւր ամուսինն և պարոն Բասքալ, Նորատի կնոջ գէմքին սովորականէն աւելի կարմրութիւնն, կուրծքին թեթեւ փափխու�և աչացը թացութիւնն կ'ապացուցանէին թէ շատ խնդացեր էր։

— Ա՜, ա՜, տիկին Տիւթէրթը, ըսաւ Պ. Բասքալ զուարթօրէն, ես լսեցի, չափազանց կը խնդայիք։

Ապա, Պ. Տիւթէրթի դառնալով, որ կը ջանար իր սոսկալի անձկութիւնն ծածկել և տակաւին յուսալ, յարեց։

— Երջանկութիւնն ի՞նչպէս կը զուարթացնէ սա նորատի կիներն։ Մարդ զանոնք տեսնելով՝ ուրախութիւն կ'զգայ, անանկ չէ՞, սիրելիս Տիւթէրթը։

— Այո՛, քիչ մ'առաջ խնդացի, բայց հաւատացէ՛ք որ ակամայ էր, Պ. Բասքալ յարեց Սոֆի։

— Ակամա՞յ, ըսաւ մեր մարդն. ի՞նչպէս, արդեօք վի՞շտ մը . . .։

— Վի՞շտ մը, ո՛հ, ոչ, Փառք Աստուծոյ։ Բայց աւելի որամադիր էի խանդաղատելու քան թէ խնդալու։ Շարլը, յարեց Նորատի կինն այլայլելով, գիտնայիր թէ այն սիրելի Անթօնինը որքան յուզեց զիս, անբիծ և ստագրաւ խոստովանութիւն մ'ընելով, վասն զի խեղճ աղջկան սիրտը չափազանց լի էր, և չիկրցաւ առանց ամէն բան ինձ ըսելու՝ երիտա՛։

Եւ խանդաղատանաց արտասուք մը Սոֆիի գեղեցիկ աչքերն թրջեց։

Պ. Բասքալ, Անթօնինի անունը լսած ատեն, թէ և ինքզինքին վրայ մեծ ազդեցութիւն ունէր, սարսռաց. այն աղջկան համար ունեցած գաղափարներն նորէն միտքը եկան և մինչդեռ Սոֆի իւր աչքերը կը սրբէր, նա սուր նայուածք մը ձգեց անոր վրայ, ջանալով հասկնալ թէ ի՞նչ կրնար յուսալ իրմէ։

Տիկին Տիւթէրթը, խօսքը ամուսնոյն ուղղելով՝ ըսաւ,

— Բայց, Շարլը, այս բանը վերջէն կը պատմեմ քեզ, բայց տակաւին Անթօ-նինի պատմութեան իմ վրայ բրած տպաւորութիւնը չէր գացած, երբ պզտիկ Մատրլէնս եկաւ և իր սիրուն լեզուաւն անանկ բաներ ըսաւ որ, չի կրցի խնդալս բռնել։ Բայց ներեցէ՛ք, Պ. Բասքալ, ձեր սիրտն կրնայ մայրական տկարութիւններն հասկնալ ու ներողամիտ գտնուիլ, անանկ չէ՞։

— Ինձի՞ կը հարցնէք այդ բանն, յարեց Բասքալ մտերմօրէն, ինձի՛, որ բարեմիտ մարդ մ'եմ։

— Իրաւ է, ըսաւ Սոֆի խանդաղատանօք, այս տեղ ձեզ այսչափ սիրելնուս պատճառն այս է որ, ինչպէս որ կ'ըսէք, քաղաքիա մարդ մ'էք...։ Հարցուցէ՛ք Շարլին, տեսնենք կրնա՞յ ըսածս ժխտել։

Տիւթէրթրը բռնաղբօսիկ ժպիտով մը պատասխանեց և յաջողեցաւ քաջութեամբ բաւական բռնել ինքզինքն կնոջն առջեւ. սա ևս, ի սկզբան բնաւ ամուսնոյն անձնկութեանցը վրայ տեղեկութիւն չունենալով՝ դէպ ի սեղանը գնաց և բանած քըսակն առնելով՝ Պ. Բասքալին ներկայացուց և ըսաւ.

— Սիրելիս Պ. Բասքալ, այս քսակն լաւագոյն գիշերներուս աշխատութեանց արդիւնքն է, այսինքն ամուսնոյս, նորա հօրն ու զաւակաց հետ անցուցած գիշերներուս։ Եթէ այս պողպատի մարգարիտներն լեզու ունենային, յարեց Սոֆի ժպտելով, պիտի ըսէին ձեզ թէ ձեր անունը քանի՛ցս յիշուեր է մեր մէջն, բոլոր արժանի եղած դորովանօք և երախտագիտութեամբ։

— Ա՛հ, շնորհակա՛լ եմ, շնորհակա՛լ եմ, սիրելի տիկին Տիւթէրթրը, պատասխանեց Բասքալ, չեմ կրնար ըսել թէ այս սիրուն ընծայն որքան սիրտս կը գրաւէ. միայն թէ քիչ մը կը շփոթեցնէ զիս։

— Ինչպէ՞ս։

— Դուք հիսայ բան մը տուիք ինձ և ես նորէն պիտի ուզեմ։

— Ի՜նչ երջանկութիւն։ Ուզեցէ՛ք, ուզեցէ՛ք, սիրելիս պարո՛ն Բասքալ։

Ապա զարմանօք ամուսնոյն դառնալով՝ ըսաւ.

— Շարլը, ի՞նչ կ'ընես այդ գրասեղանին առջեւ նստած։

— Պ. Բասքալ կը ներէ ինձ. միտքս եկաւ որ շատ կարեւոր գործի մը վերաբերեալ ծանօթագրութիւններ կան, որ մոռցեր էի, պատասխանեց Տիւթէրթրը, քստդիպաց այլ և այլ թղթեր թղթատելով, որպէս զի դէմքին այլայլութիւնը ծածկէ կնոջմէն։

— Սիրելի՛ս, ըսաւ Սոֆի յանդիմանօրէն, չէի՞ր կրնար այդ աշխատութիւնն յետաձգել և սպասել որ...։

— Տիկին Տիւթէրթրը, կը սրդողիմ, թէ որ իմ պատճառաւս ձեր ամուսինը վրդովէք, գոչեց Պ. Բասքալ. միթէ գործը ի՞նչ է չեմ գիտեր։ Ո՜հ, դուք երջանիկ կին մ'էք. գիտցիք որ Տիւթէրթրը իւր անխոնջ աշխատութեամբն է որ այսօր գործարանին գլուխը կը գտնուի։

— Այդ աշխատութիւնն ո՞վ քաջալերեց, ո՞վ վարձատրեց. ո՞չ ապաքէն դուք, պարո՛ն Բասքալ։ Եթէ Շարլը այս պահուս իւր գործարանին գլուխն է, եթէ մեր և մեր զաւակաց ապագայն առ յաւէտ ապահովեալ է, ձեր շնորհիւն չէ՞ մի։

— Սիրելիս տիկին Տիւթէրթրը, դիս պիտի շփոթեցնէք և չպիտի կարենամ յուսացած փոքրիկ ծառայութիւնս խնդրել ձենէ։

— Ես ալ մոռցայ, յարեց Սոֆի ժըպտելով, բարեբաղդաբար ձեր մեղ մատու-

ցած մեծագոյն ծառայութեանց վրայ կը խօսէի. ուստի ներեցէ՛ք։ բայց տեսնենք խնդիրն ի՞նչ է, յարեց նորատի կինն հրապուրիչ աճապարանքով մը։

— Ըսելիքս թերևս մեծ զարմանք պատճառէ ձեզ։

— Աւելի աղեկ. ես զարմանք պատճառող բաները կը սիրեմ։

— Ամուրիի կենաց մենութիւնն անտանելի է ինձ այլ ևս, և . . . ։

— Ե՞ւ . . . ։

— Կ՚ուզեմ ամուսնանալ,

— Իրա՛ւ։

— Կը զարմանա՞ք։ Ասոր ստոյգ էի։

— Կը սխալէի, վասն զի իմ կարծիքս այն էր որ վերջապէս ասոր պիտի յանդէիք։

— Ի՞նչպէս։

— Շատ անգամ ինքնիրենս կ՚ըսէի։ վաղ կամ անագան Պ. Բասքալ, որ այնքան զգայուն սիրտ մ՚ունի, պիտի ուզէ ընտանեկան անուշ բերկրութիւններն ճաշակել, և կ՚ուզէ՞ք որ իմ հպարտութիւնս խոստովանիմ ձեզ, յաւել Սոֆի ժպտելով։ ինքնիրենս կ՚ըսէի ալ թէ՝ անկարելի է որ Շարլի ու իմ երջանկութիւնս տեսնելով, օր մը չի փափագի ամուսնանալ։ Հիմայ կրնաք հասկնալ թէ ո՛րքան երջանիկ եմ ձեր դիտաւորութիւնն կանխաւ զգացած ըլլալուս։

— Յաղթանակեցի՛ք ուրեմն, սիրելիս տիկին Տիւթէրթը, վասն զի իրաւցնէ ձեր և ձեր ամուսնոյն օրինակէն հրապուրուելով, կ՚ուզեմ ձեզի պէս սիրահարութեամբ ամուսնանալ։

— Մինթէ ուրիշ տեսակ ամուսնութիւն կրնա՞յ ըլլալ։ ըսաւ Սոֆի ուսերն ցնցելով և ի սկզբան առանց յիշելու որ պարոն Բասքալ երեսուն և ութ տարեկան է, և ապա յարեց,

— Ձեր սիրած անձն ալ ձեզ կը սիրէ՞։

— Այդ ձենէ կախումն ունի։

— Ինէ՞։

— Բացարձակապէս։

— Ինէ՞, յարեց Սոֆի ևս քան զեւս զարմանալով, Շարլը, կը լսե՞ս Պ. Բասքալի ըսածն։

— Կը լսեմ, պատասխանեց Տիւթէրթը որ, կնոջը չափ զարմանալով՝ անձկութեամբ մտիկ կ՚ընէր.

— Ի՞նչպէս, պարոն Բասքալ, ես կըրնա՞մ ձեզ սիրցնել, յարեց Սոֆի։

— Այո՛, սիրելիս տիկին Տիւթէրթը։

— Թէև ասի անհասկնալի կ՚երեւնայ ինձ, բայց քանի որ այդ ձեր ենթադրած դիւթական կարողութիւնն ունիմ, սիրելիս Պ. Բասքալ, ըսաւ Սոֆի անուշ ձայնով մը, դուք ալ պիտի սիրուիք, ինչպէս որ արժանի էք։

— Ձեր խօսքանն վրայ վստահելով, բացէ ի բաց պիտի խոստովանիմ ձեզ, սիրելիս տիկին Տիւթէրթը թէ, օրիորդ Անթօնին Հիւպէրը խենթի պէս կը սիրեմ։

— Անթօնի՛նը, գոչեց Սոֆի ապշութեամբ. մինչդեռ Տիւթէրթը, իւր գերասեղանին առջեւ նստած, մէկէն ի մէկ կնոջը դարձաւ. որու չափ ինքն ալ ապշած էր։

— Զինքը կը սիրեմ։ Հիմայ չորրորդ անգամն է որ տեսայ զինքը. բայց բնաւ հետը խօսած չեմ. սակայն որոշումս ըրեր եմ, վասն զի ես այն մարդերէն եմ, որոնք իրենց որոշումն շուտ և բնազդմամբ կուտան։ Օրինակի համար երբ այս աղնիւ Տիւթէրթին օգնութեան գալ մտաբերեցի, երկու ժամուան մէջ ամէն բան լմընցաւ։ Օրիորդ Անթօնինի հիանալի գեղեցկութիւնն, դէմքին անբծութիւնը, չեմ գիտեր ի՞նչ բան մը, որ կ՚ապահովէ զիս թէ այս աղջիկն լաւագոյն ձիրքերու տէր

է։ Վերջապէս ամէն բան նպաստեց զինքն ինձ սիրցնելու և ձեզի պէս, սիրելի տիկին Տիւթէրթրը, ամուսնութեան մէջ փնտռելու այն ներքին երջանկութիւնը և սրտի վայելքները, զորս ճանչնալու եւ վայելելու արժանի կը կարծէք զիս։

— Պարո՛ն, բաւ Սոֆի շփոթելով, ներեցէ՛ք ինձ որ . . . ։

— Պիտի ըսէք թէ ասի վայրկենական սէր մ՚է. բայց ասանկ վայրկենական եւ միանգամայն խորունկ սէրեր շատ տեսնուած են։ Ասկէց զատ բնազդմանց եւ կանխազդացմանց հնազանդող մարդ մ՚եմ. միշտ գործի մը աղեկ կամ դէշ ըլլալը մէկ նայելով հասկցած եմ. ինչո՞ւ ամուսնանալու ատենս ալ չի հետեւիմ այս դրրութեան, որ մինչեւ ցայսօր յաջողած է։ Ըսի թէ ձեր ձեռքն է Օրիորդ Անթօնինի զիս սիրելը։ Կեցի՛ք որ բացատրեմ, տասն և հինգ տարեկան աղջկունք, և կարծեմ անկէց աւելի չկայ, մասնաւոր կամք մը չունին. Պ. Տիւթէրթրը ըսաւ ինձ թէ դուք օրիորդ Անթօնինի մայրութիւն ըրած էք. քանի որ գաղտնիքներն ձեզ կը վստահի, ըսել է մեծ ազդեցութիւն ունիք իր վրայ. ուստի վաղուընէ շուտը չկայ, զիս իրեն ներկայացնելով եւ իմ վրաս գովեստիւ խօսելով, կրնաք դիւրաւ համոզել զինքն որ սիրոյս մասնակցի և հետս ամուսնանայ։ Եթէ այս երջանկութիւնը շնորհէք ինձ, սիրելիս տիկին Տիւթէրթրը յարեց Պ. Բասքալ անկեղծ ձայնիւ, իմ ձեզ համար զգալիք երախտագիտութիւնս այնքան մեծ պիտի ըլլայ որ, ձեր ինձ համար զգացածն ապերախտութիւն պիտի սեպուի անոր բաղդատմամբ։

Սոֆի ցաւօք և զարմացմամբ մտիկ ըրեր էր Պ. Բասքալի ըսածներն, վասն զի կը հաւատար և իրաւունք ունէր հաւատալու այս մարդուն սիրոյն կամ գէթ տենչանացն իրականութեանը. ուստի վշտագին ձայնիւ, վասն զի ծանր կուգար իրեն Պ. Բասքալի յոյսերն տապալել, բաւաւ.

— Սիրելիս պարո՛ն Բասքալ, կը տեսնէք որ չափազանց կը վշտանամ ձեր առաջին խնդիրքն չի կարենալ կատարելուս։

— Բայց ի՞նչ անկարելիութիւն կայ։

— Հաւատացէք խօսքիս, այս ամուսնութիւնն մտքերնուդ հանեցէ՛ք։

— Արդեօք օրիորդ Անթօնին արժանի չէ՞ . . . ։

— Անթօնին հրեշտակ մ՚է, ես տղայութենէն ի վեր կը ճանչնամ զինքը։ Աշխարհի մէջ լաւագոյն սիրտ և բնտրելագոյն բնաւորութիւն չկայ։

— Այդ ըսածներնիդ, սիրելիս տիկին Տիւթէրթրը։ իմ փափաքս աւելցնելէ ուրիշ օգուտ չունին։

— Նորէն կ՚ըսեմ թէ այս ամուսնութիւնն անկարելի է։

— Բայց վերջապէս ինչո՞ւ։

— Նախ և առաջ մտածեցէք որ Անթօնին հազիւ տասն և հինգ տարու կայ, և դուք . . . ։

— Եւ ես երեսուն և ութ տարու եմ, ա՞ս է։

— Խոստովանեցէ՛ք թէ տարիքներու տարբերութիւնն մեծ է, և որովհետեւ ասանկ անհամեմատ ամուսնութիւն մը ոչ քրոջս և աղջկանս կրնամ խորհուրդ տալ, չեմ կրնար նաև Անթօնինի ըսել որ ամուսնանայ ձեզի հետ, վասն զի ո՛չ ձեր և ո՛չ իր թշուառ ըլլալն կ՚ուզեմ։

— Ո՛հ, մի՛ վախնաք, ես իմ երջանկութեան համար խօսք կուտամ ձեզ։

— Հապա Անթօնի՞նք։

— Պա՛հ, քանի մը տարի աւելի կամ պակաս . . . ։

— Ես սիրահարութեամբ ամուսնացայ, սիրելիս Պ. Բասքալ, և ուրիշ տեսակ ամուսնութիւն չեմ կրնար ըմբռնել։ Թերևս սխալ է. բայց վերջապէս իմ կարծիքս այս է և ձեզի ալ կը հաղորդեմ, քանի որ ինձ խորհուրդ կը հարցնէք։

— Դարձեալ կ'ըսեմ, սիրելիս տիկին Տիւթերթրը, տասն և հինգ տարու աղջիկ մը որոշ գաղափար չունի ամուսնութեան վրայ. օրիորդ Անթօնին կոյր վստահութիւն մ'ունի ձեր վրայ։ Զիս իրեն ներկայացուցէ՛ք և վրաս աղեկ խօսեցէք։



Շարլը Տիւթերթրի գործարանը

— Ըսել է ձեր կարծիքն այն է որ ես չեմ կրնար օրիորդ Անթօնինի հաճելի ըլլալ, հէ՞։

— Կը կարծեմ որ նա ևս, ինձի ու Շարլին պէս, ամէն վեհանձն սրտերու պէս, պիտի գնահատէ ձեր բնաւորութեան ազնուութիւնն, բայց . . .։

— Գործը ապահով է, և եթէ ուզէք՝ կրնաք։

— Ա՜հ, սիրելիս պարոն Բասքալ, այս խօսակցութիւնն չափէն աւելի կը վշտացընէ զիս։ Ուստի այս խնդիրն վերջացընելու համար գաղտնիք մը պիտի վստահիմ՝ ձեզ։

— Ի՞նչ է տեսնենք այդ գաղտնիքը։

— Անթօնին մէկը կը սիրէ և անկէ կը սիրուի։ Ա՛հ, պարոն Բասքալ, այս սէրն խիստ մանքուր և սրտագրաւ է, ու շատ պատճառներով ապահով եմ թէ Անթօնինի երջանկութիւնն կրնայ ապահովել։ Հօրեղբայրն հիւանդ է. եթէ նա մեռնի, խեղճ տղան պիտի ստիպուի այնպիսի ազգականաց հետ բնակիլ, որոցմէ իրաւամբ կը գարշի։ Բայց երբ իւր սրտին համեմատ ամուսնանայ, կրնայ խիստ երջանիկ ապագայ մը յուսալ, վասն զի իւր սիրած անձն արժանի է այդ սիրոյն։ Ուստի կը տեսնէք որ, սիրելիս Պ. Բասքալ, նոյն իսկ եթէ ես ալ աջակցիմ ձեզ, յաջողելու յոյս չկայ, և ես ալ, որ հոգի և խիղճ ունիմ, կրնա՞մ աջակցիլ ձեզ, քանի որ ստոյգ եմ թէ, բաց ի տարիքի անհամեմատութենէ, որ քան իս անկարելի է, Անթօնինի ըզգացած ու ներշնչած սէրն զինքն ցմիշտ երջանիկ պիտի ընէ։

Պ. Բասքալ, երբ լսեց որ այսպէս կը հաստատուէր Անթօնինի և Ֆրանցի սիրահարութիւնն, զոր ինքն քիչ մը նշմարած էր, կատաղութիւն և վիշտ զգաց և աւելի ևս բարկացաւ տիկին Տիւթէրթրի մերժմանն, որ չէր ուզէր իւր դիտաւորութեանցն օգնել. բայց ինքզինքն զբսպեց՝ վերջին փորձ մ՚ալ ընելու, և եթէ չի յաջողի, աւելի ահարկու վրէժ մ՚առնելու համար։

Ուստի առերեւոյթ հանդարտութեամբ մ՚քաւ։

— Վա՛յ, օրիորդ Անթօնին մէ՞կը կը սիրէ. լաւ. բայց նորահաս աղջկանց այդ բոռոն սիրոյն ի՞նչ բան ըլլալը գիտենք, սիրելիս տիկին Տիւթէրթրը, ճիշդ յարդի կրակ մ՚է։ Եթէ անոր վրայ փչելու ըլլաք՝ կը մարի և այդ գեղեցիկ սէրը չի կրնար ձեր աղդեցութեանն դիմանալ։

— Նախ սա կայ որ այս մասին Անթօնինի վրայ ազդեցութիւն չեմ կրնար բանեցնել, պարոն Բասքալ, վասն զի անօգուտ է։

— Այդպէ՞ս կը կարծէք։

— Ապահով եմ։

— Լա՛ւ, բայց անգամ մը փորձեցէք։

— Բայց, պարո՛ն, արդէն քսի որ Անթօնին . . .

— Մէկը կը սիրէ, հասկցա՛ք. ասկից զատ Բասքալ երեսուն և ութ տարեկան ու տգեղ է, աս ալ յայտնի է. բայց ասոնց փոխարէն աղուոր միլիոններ ունի, և երբ այս երեկոյ, (վասն զի յուսամ թէ այս երեկոյ պիտի երթաք) այդ մատղաշ աղջկան հասկցնէք թէ, սէրը թէ և աղուոր բան մ՚է, բայց ստակն աւելի աղուոր է, վասն զի սէրը կ՚անցնի ու ըստակը կը մնայ, նա ձեր խրատուն պիտի հետեւի, վաղն իւր սիրահարը պիտի ճամբէ և այն ատեն ես ալ՝ փառ՛ք ձեզ, պիտի գոչեմ, սիրելիս տիկին Տիւթէրթրը։

Սօֆի զարմանօք և մտահոգութեամբ նայեցաւ պարոն Բասքալին. իւր կնային փափուկ դիւրազգածութիւնն վիրաւորուեր էր. բնազդն իրեն կ՚ըսէր թէ պարոն Բասքալի պէս խօսող մարդ մը չէր կրնար իւր կարծած սրտի, պատուոյ և ուղղութեան տէր մարդն ըլլալ։

Այս միջոցին Տիւթէրթրը ևս ոտքի ելաւ ցաւագին անձկութեամբ մը. կինը այն ատեն նշմարեց նորա դիմաց այլայլութիւնն և գոչեց.

— Շա՛րլը, ի՞նչպէս դեղներ ես. ի՞նչ ունիս։

— Ոչի՛նչ, Սօֆի, բան չունիմ, թեթև գլխու ցաւ մը։

— Ո՛չ, դու ուրիշ բան մ՚ունիս։ Այդ դեղնութիւնն բնական չէ։ Պ. Բասքալ, նայեցէ՛ք անգամ մը Շարլի երեսը։

— Իրաւ, սիրելիս Տիւթէրթրը, կ՚երեւի թէ բան մ՚ունիք։

— Ո՛չ, պարո՛ն. պատասխանեց Տիւ-թէրթրը անանկ ցուրտ ձայնով մը, որ Սօֆիի անատոյգ կասկածներն աւելցան։

Մէկ մը ամուսնոյն և մէկ մ՚ալ պարոն Բասքալի երեսը կը նայէր, ջանալով այս փոփոխութեան պատճառն հասկնալ, փոփոխութիւն մը, որ զինքը կ՚ահաբեկէր։

— Սիրելիս Տիւթէրթրը, յարեց Պ. Բասքալ, մեր խօսակցութիւնն լսեցիք, ուստի ինձի օգնեցէք ձեր ազնիւ կնոջն հասկցնելու թէ՝ օրիորդ Անթօնին ինձմէ շնորհքով պատառ մը չի կրնար գտնել։

— Պարո՛ն, այս մասին ըստ ամենայնի համակարծիք եմ կնոջս։

— Ի՛նչպէս, դո՞ւք ևս։

— Ա՛յո՛, պարո՛ն։

— Մտածեցէ՛ք որ . . .

— Արդէն կինս ըսաւ ձեզ, պարո՛ն. մենք սիրահարութեամբ ամուսնացանք, և իմ կարծիքս ալ այն է որ այս տեսակ ամուսնութիւնք միայն կրնան երջանիկ ըլլալ։

— Անթօնինք ծախու հանե՛լ, ըսաւ Սօֆի դառնութեամբ, խրատե՛լ իրեն որ վատութիւն մը գործէ, շահադիտութեամբ ամուսնանայ, երբ դեռ քիչ մ՚առաջ իւր անբիծ և ազնիւ սէրը խոստովանեցաւ ինձ. ա՛հ, պարո՛ն, կը կարծէի որ լաւագոյն կարծիք ունիք իմ վրաս։

— Բայց, սիրելիս Տիւթէրթրը, դուք որ դրական մարդ մ՚էք, խոստովանեցէք թէ ասոնք վիպական պատճառներ են. օգնեցէ՛ք ինձ որ ձեր կիներն համոզեմ։

— Նորէն կ՚ըսեմ որ ես ալ իրեն համակարծիք եմ, պարո՛ն։

— Ա՛հ, գոչեց Պ. Բասքալ, չէի կարծեր որ դուք այդքան ցուրտ և անտարբեր գտնուիք ինձ վերաբերեալ բանի մը մէջ։

— Պարո՛ն, գոչեց Սօֆի, այդ յանդիմանութիւնն անիրաւ է։

— Անիրա՛ւ . . . ափսո՛ս, ես ալ կուզէի անիրաւ ըլլալ, բայց դժբաղդաբար իրաւունք ունիմ։ Քիչ մ՚առաջ ձեր ամուսինն իմ մէկ խնդիրս կը մերժէր, հիմայ ալ դուք։ Ա՛հ, ցաւալի՛ բան։ Ի՞նչ բանի վրայ յոյս դնելու է ասկից վերջը։

— Ի՞նչ խնդիր, ըսաւ Սօֆի, ամուսնոյն հետզհետէ մտահոգութեան մէջ լինելը տեսնելով. ի՞նչ է ըսածն։

— Անօգուտ է ադոր վրայ խօսիլ քեզ, սիրելիս Սօֆի։

— Ընդհակառակն ես կը կարծեմ որ յարեց պարոն Բասքալ, աղեկ կ՚ըլլայ եթէ խնդիրն հասկցնենք ձեր կնոջն. որպէս զի անոր կարծիքն ալ հասկնանք։

— Պարո՛ն, գոչեց Տիւթէրթրը, սոսկմամբ ձեռներն կցելով։

— Օ՛ն, միթէ սիրահարութեամբ կատարուած ամուսնութեանց մէջ՝ ամուսինք իրարմէ բան կը պահե՞ն։

— Շարլը, կ՚աղաչեմ, բացատրէ՛ ինձ թէ ի՞նչ կը նշանակէ այս։ Ա՛հ, ես հասկըցայ որ դու բան մ՚ունիս։ Բայց պարո՛ն, ըսել է ձեր ու Շարլին միջեւ բան մ՚անցաւ, ըսաւ Բասքալի՝ պաղատական ձայնիւ. պատասխանեցէք, կ՚աղաչեմ։

— Պա՛հ, շատ պարզ բան մը։ Հիմայ կը տեսնէք, սիրելի տիկինս։

— Պարո՛ն, գոչեց Տիւթէրթրը, յանո՛ւն այն երախտագիտութեան, զոր կը պարտիմք ձեզ, յանո՛ւն Աստուծոյ, լռեցէք, կ՚աղաչեմ. վասն զի չ՚եմ կրնար հաւատալ որ ձեր որոշմանը մէջ անխախտ մնաք։ Ուստի ի՞նչ օգուտ ունի անտեղի վախ մը տալ կնոջս։

Ապա, խօսքը կնոջն ուղղելով, ըսաւ.

— Մի՛ վախնար, Սօֆի, բան չկայ։

Հայր Տիւթէրթրը, որ սենեակէն լսեր էր ձայներուն հետզհետէ բարձրանալն, մէկէն ի մէկ դուռը բացաւ, ձեռքերն դէպ յառաջ երկնցնելով՝ սրահը մտաւ և այլայլեալ դիմօք գոչեց.

— Շարլը՛, Սոֆի՛, ի՞նչ կայ։

— Հա՛յրս, մրմնջեց Տիւթէրթրը ուժաթափ։

— Ծերունի՛ն, ըսաւ Բասքալ։ Լա՛ռ, ան իմ գործիս կուգայ։

Թ.

Կոյր ծերունին սրահը մտնելէն վերջը, պահ մը լռութիւն տիրեց։

Տիւթէրթրը աշխուժիւ հօրը դէմ եւ լաւ, անոր գողգոջուն ձեռքէն բռնեց և գորովանօք սեղմելով՝ ըսաւ.

— Մի՛ վախնաք, հա՛յր իմ, բան չկայ, պարզ գործի վէճ մը. ներեցէ՛ք որ ձեզ վերստին ձեր սենեակը տանիմ։

— Շարլը, ըսաւ կոյրը՝ գլուխը տխրութեամբ ցնցելով, ձեռքդ պաղ է, կը դողաս, ձայնդ այլայլած է, հոս բան մը կայ, զոր կ'ուզես ինէ ծածկել։

— Զէ՛ք սխալիր, պարո՛ն, ըսաւ Բասքալ ծերունւոյն, ձեր որդին բան կը ծածկէ ձենէ, զոր պէտք է իմանաք նոյն իսկ ձեր, ձեր որդւոյն, ձեր հարսին և ձեր թոռանց շահուն համար։

— Բայց, պարո՛ն, դուք բնաւ գութ չ'ունի՞ք, գոչեց Շարլը Տիւթէրթրը, դուք ազիք չ'ունի՞ք։

— Սիրելի՛ս, ձեր և ձեր կնոջն անմիտ յամառութեանը վրայ գթալուս համար է որ կուզեմ ձեր պատկառելի հօրն ուղղախոհութեանը դիմել։

— Շարլը, գոչեց Սոֆի, ճշմարտութիւնն ըսէ՛ մեզ, որքան սոսկալի կուզէ ըլլայ։ Այս տարակոյսն, այս անձկութիւնն իմ կարողութենէս վեր է։

— Զաւա՛կս, ըսաւ ծերունին, ամէն ատենուան պէս անկեղծ եղիր. իսկ մենք քաջութեամբ մտիկ կ'ընենք։

— Կը տեսնէ՛ք, սիրելիս Տիւթէրթրը, ձեր ազնիւ հայրն ալ կուզէ ճշմարտութիւնն իմանալ։

— Պարո՛ն, գոչեց Տիւթէրթրը սրբատակեղեք ձայնիւ և արտասուաթոր աչքերն յառելով Բասքալի վրայ, վեհանձն ու բարի եղիք, ինչպէս որ եղաք ցայսօր։ Գիտեմ որ ամենամեծ կարողութիւն մ'ունիք ի ձեռին. մէկ բառով կրնաք ամէնքս սգոյ և յուսահատութեան մէջ ձգել. բայց մէկ բառով կրնաք նաև վերստին դարձընել մեզ այն երջանկութիւնն ու հանգըստութիւնը, զոր ձեզ պարտաւոր ենք։ Կը պաղատիմ, անգութ մի՛ ըլլաք։

Սոֆի տեսնելով որ Տիւթէրթրը, այն հաստատամիտ եւ քաջ մարդն ակամայ կուլար, զգաց վտանգին մեծութիւնն և սրտառուչ ձայնիւ ըսաւ Պ. Բասքալի.

— Ձեմ գիտեր թէ ի՛նչ վտանգ կը սպառնայ մեզ, բայց կը սոսկամ, եւ ես ալ կը պաղատիմ ձեզ, Պ. Բասքալ։

— Ատենով մեր փրկիչն ըլլալէ վերջը, գոչեց Տիւթէրթրը՝ արցունքները սրբելով, հիմայ չ'էք կրնար մեր դահիճն ըլլալ։

— Ձեր դահի՛ճն, յարեց Բասքալ, Ատուած չ'ընէ՛, խեղճ բարեկամներս. ես չ'եմ որ կուզեմ ձեր դահիճն ըլլալ, այլ դուք։ Այն բառը, զոր ինձմէ կը սպասէք, այն բառը որ կրնայ ձեր երջանկութիւնն ապահովել, ըսէ՛ք այն բառը, սիրելիս Տիւթէրթրը, եւ մեր փոքրիկ խընջոյքն իւր պատշաճ զուարթութիւնը կը գտնէ, ապա թէ ոչ ձեր գլխուն գալիքէն մի գանգատիք, վասն զի դուք ձեռքովնիդ կ'ընէք։

— Բայց, Շարլը, քանի որ քու ձեռքդ է, գոչեց Սոֆի՝ անբացատրելի անձկութեամբ մը, ըսէ՛ Պ. Բասքալի ուզած

բառն, որպէս զի հայրդ եւ զաւակներդ փրկես։

— Կը լսէ՞ք ձեր կնոջն ըսածը, սիրելիս Տիւթէրթրը, յարեց Բասքալ, անոր ձայնն ալ մտիկ չպիտի ընէք։

— Լա՛ւ ուրեմն, գոչեց Տիւթերթրը՝ դեղնած և յուսահատ, քանի որ այս մարդը չունի գութ չունի, դուք ալ, հա՛յր իմ և Սօֆի, ամէն բան իմացէք։ Մարսլանժը քովէս վռնտեցի։ Պ. Բասքալի շահը կը պահանջէ եղեր որ այս մարդը Տիւրանենց քով մնայ և կուզէ որ իբր պատուաւոր երաշխաւորեմ այդ խաբեբայ սրիկայն, զոր ասկից դուրս ըրի։

— Ա՛հ, պարո՛ն, ըսաւ ծերունին դէպ ի Բասքալի կողմը դառնալով, ադ անհընար է. այդպիսի վատութիւն մը մի՛ յուսաք զաւկէս։

— Եւ եթէ այս վատութիւնը մերժեմ, յարեց Տիւթէրթրը, Պ. Բասքալ ետ պիտի առնէ յանդգնութեամբ փոխ առած ստակս, վարկը պիտի դադրեցնէ և այս տագնապի միջոցին, այս բանը մեր կործանումն է։

— Տէ՛ր Աստուած, մրմնջեց Սօֆի սոսկմամբ։

— Ամէնն այս չ'է, հա՛յր իմ, յարեց Տիւթէրթրը, կուզէ որ կինս ալ իւր կողմէն վատութիւն մը գործէ։ Պ. Բասքալ օրիորդ Անթօնինի սիրահարեր է եղեր, և կուզէ որ Սօֆի օգնէ այս սիրոյն, որու անկարելիութիւնը գիտէ և հաւանութիւն չի տար՝ ազնիւ նկատումներով. բայց եթէ չ'օգնէ, վերստին սպառնալիք մը կայ մեր գլխուն վրայ։ Ահա՛ ճշմարտութիւնն, հա՛յր իմ։ Սոսկալի և անակնկալ կործանման մը ենթարկուիլ կամ անպատիւ գործ մ'ընել, ահա՛ այս կացութեան մէջ կը ձգէ զիս այն մարդը, զոր երկար ատեն ազնիւ ու վեհանձն կարծեցինք։

— Այո՛, ատանկ է, մի՛շտ ատանկ է։ Աշխարհս այսպէս է, յարեց Պ. Բասքալ հառաչելով և ուսերը ցնցելով։ Երբ ծառայութիւններ կ'ընդունին՝ առանց փոխարէն մը մատուցանելու, քեզ կը շոյեն, կը պատուեն, «ընչ՝ բարբարոս», վեհանձն «ղոտ՝ը կը կոչեն, քսակներ կը բանին քեզ, ելլն։ Պզտի տղաքներն շնորհաւորութեան խօսքեր կարտասանեն. ապա կուգայ օր մը որ այն խեղճ բարերարը կը յանդգնի ինքն ալ մէկ երկու չնչին ծառայութիւն խնդրել, այն ատեն վատութի՛ւն, անպատուութի՛ւն կը գոչեն...

— Եթէ պատուոյս չի վնասող ո՛և է զոհողութիւն ուզէիք ինէ, պարո՛ն, գոչեց Տիւթէրթրը, ուրախութեամբ կը կատարէի։

— Այն ատեն, յարեց Բասքալ՝ առանց Տիւթէրթրի պատասխան տալու, այդ բարերարն ալ, ո՛րքան որ ապուշ և տխմար ըլլայ, վերջապէս կը ձանձրանայ, մանաւանդ ապերախտութիւնն։ Իւր սիրտը կը յօշոտէ, վասն զի ինքը զգայուն, շատ զգայուն ծնած է։

— Ապերախտութի՛ւն, գոչեց Սօֆի արտասուելով, մենք ապերա՛խտ։ Ո՛հ, Աստուած իմ։

— Եւ որովհետեւ ապուշը քիչ մը ուշ կը հասկնայ որ սխալեր է, ըսաւ Բասքալ՝ առանց Սօֆիի պատասխանելու, որովհետեւ ցաւօք կը նշմարէ թէ իւր դիմացիններն անկարող են երախտագիտական բարեկամութիւնը մէկ քանի չնչին նըկատումներէ վեր բռնել, ինքնիրենն կ'ըսէ թէ ալ ապշութեան չափը կ'անցնի, եթէ տակաւին իւր քսակը բանայ ատանկ թոյլ բարեկամաց։ Ուստի ստակն ու վարկը ետ կ'առնու անոնցմէ, ինչպէս որ ես կ'ընեմ, մանաւանդ որ ստիպուած եմ ընելու սիրելի Տիւթէրթրի մերժումէն յառաջ եկած

պատճառներով։ Վերջին խօսք մ'ալ բեռեմ, յարեց Բասքալ՝ խօսքը ծերունւոյն ուղղելով, անկեղծօրէն նկարագրեցի ձեզ իմ և ձեր որդւոյն վարմունքն. բայց որովհետեւ շատ ծանր է ինձ Տիւթէրթրի սիրոյն վրայ ունեցած համոզումս կորսնցընել, որովհետեւ գիտեմ թէ իւր այս յանցանքն կրնայ ահարկու աղետներ տեղալ իր և իւր ընտանիքին գլխուն, քառորդ մը միջոց կը շնորհեմ իրեն խորհելու համար։ Թող յիշեալ յանձնարարագիրն տայ ինձ, տիկին Տիւթէրթրը ուղած խոստումն թո՛ղ ընէ, և ամէն բան վերստին կարգի կը մտնէ ու կը նստինք բարեկամաբար կը ճաշենք։ Դուք Տիւթէրթրի հայրն է՛ք, պարո՛ն, և իր վրայ մեծ ազդեցութիւն ունիք, դատեցէ՛ք և որոշեցէ՛ք։

— Շա՛ր լը, ըսաւ ծերունին իւր որդւոյն՝ այլայլեալ ձայնիւ, իբր պատուաւոր մարդ վարուեցար։ Լա՛ւ, բայց դեռ բան մը կայ ընելու. բաւական չ'է թշուառականի մը պատուաւորութիւնն չ'երաշխաւորել...

— Վա՛յ, ըսաւ Բասքալ, հապա դեռ ի՞նչ ընելու է։

— Եթէ Պ. Բասքալ իւր նենգամիտ գիտաւորութիւնը շարունակէ, յարեց ծերունին, դու, զաւա՛կս, պէտք է Տիւրանենց դրես թէ, այնպիսի պատճառներով, որք քեզ անծանօթ, բայց դուցէ վտանգաւոր են, Պ. Բասքալ կուզէ այս Մարսլանժը իրենց քով մոցնել եւ թէ պէտք է զգուշանան, վասն զի ասանկ վատ դիտաւորութեան մը մասին լուռ կենալը, անոր մեղսակից ելլալ է։

— Ձեր խրատուն պիտի հետեւիմ, հա՛յր իմ, ըսաւ Տիւթէրթրը հաստատուն ձայնիւ։

— Աս աւելի՛ աղէկ, յարեց Բասքալ հառաչելով, ապերախտութիւնը բաւ չ'է եւ անոր վրայ վստահութեան դարշելի զեղծում մ'ալ կը բարդեն։ Օ՛ն, բաժակը ցմրուր խմելու է։ Միայն թէ, ո՛վ էր դէպ-էն բաբեկամնը, յաւել՝ ներկայ եղողներուն վրայ տարօրինակ և սոսկալի նայուածք մը ձգելով, կը վախնամ որ խմելէս վերջը սրտիս մէջ չափազանց դառնութիւն եւ թոյն պիտի մնայ, և այն ատեն, երբ օրինաւոր ատելութիւն մը կը յաջորդէ փափուկ մտերմութեան մը, դժբաղդաբար այդ ատելութիւնը սոսկալի կ'ելլայ։

— Ո՜հ, Շարլը, այս մարդը կը սոսկացնէ զիս, մրմնջեց նորատի կինն՝ ամուսնոյն մօտենալով։

— Իսկ դուք, սիրելիս Սօֆի, յաւել ծերունին անխախտ հանդարտութեամբ մը և առանց Պ. Բասքալի սպառնալեաց ականջ կախելու, ոչ թէ միայն բնաւ ձեռընտու պէտք չ'է դտնուիք այդ ամուսնութեան դիտաւորութիւններուն, այլ և, եթէ Պ. Բասքալ յամառի իւր մտադրութեանը մէջ, պէտք է օրիորդ Անթօնինի և իւր ծնողացը յայտնէք՝ զինքն ամուսնութեան ուզող մարդուն բնաւորութիւնն, և այս մասին ձեզ ըրած բարեացը փոխարէն պահանջածը յայտնելնիդ բաւական է։

— Այդ իմ պարտքս է, պատասխանեց Սօֆի այլայլեալ ձայնիւ, և պիտի կատարեմ, հա՛յր իմ։

— Դո՛ւք ալ, սիրելիս տիկին Տիւթէրթրը, պատասխանեց Պ. Բասքալ ծածուկ կատաղութեամբ մը, իմ ամենասիրելի յոյսերուս պիտի ճնշասէ՛ք. ի՛նչ վերհանձնութիւն։ Ստուած տա՛ր որ ես ալ կատաղի վրէժխնդրութիւն մը ձեռք չ'առնում։ Երկու տարուան բարեկամութենէ վերջը այսպէս զատուի՛լ իրարմէ։ Ըսել է ամէն բան լմնցա՞ւ մէջերնիս, հէ՞, յաւել Բասքալ Տիւթէրթրի և կնոջը նայելով։

Սօֆի և Տիւթէրթը հաստատամտութեամբ եւ արժանապատուութեամբ լռեցին։

— Օ՛ն, քսաւ Բասքալ գլխարկն առնելով, ահա մարդոց ապերախտութեան մէկ ապացոյցն ալ, ափսո՛ս։

— Պարո՛ն, գոչեց Տիւթէրթը, որու համբերութիւնն հատաւ Բասքալի հեգնական զգայնութենէն, զմեզ ասանկ սոսկալի հարուածով մը հարուածելէ վերջն, անգթութիւն է այդպէս ծաղրել։ Թողէ՛ք մեզ, թողէ՛ք։

— Հիմայ ալ ահա՛ կը վռնտուիմ այս տունէն այնպիսի մարդոց ձեռօք, որք երկար ատեն իմ՝ պատճառովս երջանիկ ապրեցան, յարեց Բասքալ՝ ծանրաքայլ դէպ ի դուռը երթալով, ես ասկից վռընտուի՛մ։ Ա՜հ, այս նուաստացուցիչ վիշտը պակաս էր ինձ։

Ապա կանգ առնելով՝ գրպանը խառնեց և դուրս քաշեց քիչ մ՚առաջ Սօֆիի տուած փոքրիկ քսակն ու զայն նորատի կնոջ երկնցնելով՝ իւր հեգնական անողոք ձայնիւ ըսաւ.

— Բարեբաղդաբար համբ են սա պողպատեայ մարդրիտներն որք ամէն վայրկեան պիտի ըսէին ինձ թէ անուշս ո՛րքան կ՚օրհնուի այս տան մէջ, ուսկից կը վռընտեն զիս։

Բայց, կարծես միտքը բան մը գալով, քսակը գրպանը դրաւ, մելամաղձոտ ժպիտով մը զայն դիտելով և ըսելով.

— Ո՛չ, ո՛չ, քուխս կեցիր, անմե՛ղ քրտակ։ Դու պիտի յիշեցնես ինձ ըրած դոյզն բարիքս և գտած վարձատրութիւնս։

Պ. Բասքալ զայնս ըսելով՝ ձեռքը դրաւ դրան կոճակին վրայ, դուռը բացաւ և դուրս ելաւ, Սօֆին, ամուսինն և նորա հայրը մահացու լռութեան մը մէջ թողլով։

Այս անտանելի լռութիւնը տակաւին կը շարունակէր, երբ պարոն Բասքալ, եռ դառնալով և դուռը կէս մը բանալով, կիսաբաց փեղկերէն քսաւ.

— Աղէկ միտքս եկաւ։ Մտիկ ըրէք, սիրելիս Տիւթէրթը...

Ցուսոյ նշոյլ մը Տիւթէրթրի դէմքը լուսաւորեց. պահ մը կարծեց թէ, Պ. Բասքալի ցոյց տուած ցուրտ եւ հեգնական անգթութեանը հակառակ, կը սկսէր կարեկցիլ։

Սօֆի եւս նոյն յոյսն ունեցաւ. նա ալ իւր ամուսնոյն պէս անմեկնելի անձկութեամբ մը սպասեց այս մարդուն խօսքերուն, որու ձեռքն էր իրենց բաղդը։ Պ. Բասքալ յարեց.

— Շաբաթ օր ձեր վճարման օրն է, անանկ չ՚է՞, սիրելիս Տիւթէրթրը. թողէ՛ք որ, հակառակ մեր մէջն անցած դէպքերուն, տակաւին այսպէս կոչեմ զձեզ։

— Փա՛ռք Աստուծոյ, կը գթայ, մը՝ տածեց Տիւթէրթրը, և բարձր ձայնիւ ըսաւ. այո՛, պարո՛ն։

— Չեմ ուզեր, սիրելիս Տիւթէրթրը, դժուարին կացութեան մը մէջ ձգել զձեզ։ Բարիզու հրապարակը ծանօթ է ինձ, եւ այս դրամական տագնապի միջոցին, բնաւ վարկ չ՚էք կրնար գտնել, մանաւանդ երթէ իմանան թէ ես իմ վարկս գոցած եմ ձեզ. և որովհետեւ իմ սնտուկիս վրայ յոյս դրած էիք՝ ձեր պարտքերն վճարելու համար, անանկ չ՚է՞...

— Շարլը, ազատեցանք, մրմնջեց Սօֆի դողդոջուն ձայնիւ, ըրածը փորձ մ՚է եղեր։

Տիւթէրթրը, որ ի սկզբան մի և նոյն կարծիքն ունեցեր էր, ա՛ լ չի տարակուսեցաւ իւր ազատութեանը վրայ. սիրտն ուժգին բաբախեց, դէմքը պարզուեցաւ, և այլայլութենէն թոթովելով՝ ըսաւ.

— Արդարեւ, պարո՛ն, կուրօրէն ձեր խոստման հաւատալով, սովորականին պէս յոյսս ձեր վրայ դրի։

— Լա՛ւ, սիրելիս Տիւթէրթրը, որպէս զի նեղ կացութեան մէջ չի գտնուիք, ինչպէս որ ըսի, և որովհետեւ տակաւին ութ օր ժամանակ ունիք, ուստի լաւ կ'ընէք թէ որ ուրիշ տեղ մը նայիք և ոչ իմ և ոչ Բարիզու հրապարակին վրայ յոյս չի դնէք։

Պ. Բասքալ դուռը գոցեց և հեռացաւ։

Այս յոյսին ի գերև ելլելն անանկ սոսկալի հարուած մ'եղաւ Տիւթէրթրի որ, աթոռի մը վրայ ինկաւ դեղնած, անշընչացած, ուժաթափ և դէմքը ձեռքերուն մէջ ծածկելով ու հառաչանքներն կուլ տալով՝ գոչեց։

— Կորսուեցա՛նք, կորսուեցա՛նք։

— Ո՛հ, զաւակներս, գոչեց Սօֆի սքրտակեղեք ձայնիւ ամուսնոյն ոտքը նետուելով, խե՛ղճ զաւակներս։

— Շա՛րլը, քսաւ ծերունին՝ ձեռքերն երկնցնելով և խարխաբելով դէպ ի իւր որդին յառաջանալով, Շա՛րլը, զաւակս, քաջութի՛ւն։

— Հա՛յր իմ, կործանեցայ, անանկացայ, կ'ըսէր թշուառն՝ ջղաձգական հառաչանօք։ Քաջութի՛ւն, ո՛հ, Աստուա՛ծ իմ, ամէնուս համար չքաւորութի՛ւն։

Սոսկալի հակապատկեր մը այս վիշտն ի կատար բարձրացուց. երկու փոքրիկ տըղաքն խնդալով ու ցատկելով՝ սրահը վազեցին ու գոչեցին.

— Մատլէնն է՛, Մատլէնն է՛։

Ժ.

Մատլէն ներս մտնելուն պէս (որ նոյն իսկ Միրանտայի մարքիզուհին էր) տիկին Տիւթէրթրը այնքան երջանիկ եղաւ որ, պահ մը իւր բոլոր վշտերն ու ապագային համար զգացած վախերն մոռցուեցան. իւր անուշ և շնորհալի դէմքն ուրախութեամբ կը ցոլար և հազիւ կրնար կիսատ ձայնիւ սա բառերն ըսել.

— Մատլէ՛ն, սիրելի՛ս Մատլէն, այնքան երկար բացակայութենէ մը ետքը՝ վերջապէս կը տեսնե՛մ զքեզ։

Երկու նորատի կանայք զիրար գրկելէ և համբուրելէ ետքը, Սօֆի, Տիւթէրթրը և ծերունին ցոյց տալով իւր բարեկամուհւոյն, քսաւ անոր.

— Մատլէ՛ն, ամուսինս և իւր հայրն է, այսինքն մեր հայրը, վասն զի զիս ալ իւր աղջիկը կը կոչէ։

Մարքիզուհին ներս մտած ատեն անանկ բուռն կերպով մը Սօֆիի վիզը նետուեր էր որ, Շարլը Տիւթէրթրը չ'էր կրցած ա-նոր դէմքը նշմարել. բայց երբ Մատլէն, տիկին Տիւթէրթրի այս վերջին խօսքերը լսելով, դէպ ի նա դարձաւ, Շարլը յանկարծական և տարօրինակ տպաւորութիւն մը զգաց, անանկ ուժգին տպաւորութիւն մը որ, ինքն ալ կնոջը պէս քանի մը վայրկեան մոռցաւ Պ. Բասքալի քինախնդիր խօսքերն։

Շարլը Տիւթէրթրի զգացածն զարմացման, հիացման և գրեթէ անհանգստութեան խառնուրդ մ'էր, վասն զի ասանկ կնճռոտ պարագայի մը մէջ իւր կործանումէն զատ ուրիշ բան մտաբերելուն համար խիղճն կարծես կը խայթէր զինքը։

Միրանտայի մարքիզուհին ի սկզբան սանկ ոյժգին և վայրկենական տպաւորութիւն մ՚ընելու անձ մը չէր երեւնար։ Հասակը բաւական բարձր էր, մէջքն ու իրանը կատարելապէս կ՚աներևութանային դարնան կերպասէ լայն թիկնոցակի մը տակ. շրջազգեստին երկար ծալքերն հապատէր նորա ձուաձեւ դէմքն ու անոր գոյնն աւելի եւս դուրս կը ցայտեցնէր, վասն զի Մատլէն անդիի ծայր թուխ կընական մը պէս թալուկ էր, սեւ յօնքերով ու թարթիչներով զարդարուն խոշոր կապոյտ աչքեր ունէր, մինչդեռ իւր մազերն, որք խել մը գանգուրներ կը ձեւացնէին, ունէին այն գեղեցիկ խարտեաշ գոյնն, որու ծոպերն կը հեղու Ռիւպէնս իւր սպիտակ Նայեադներուն ուսերուն վրայ։

Այս գեղին գոյնն, այս կապոյտ աչքերն, այս սեւ յօնքերն ու խարտեաշ մազերն իւր կօշիկներուն ծայրերը ցոյց կուտային. նոյնպէս նաև ձեռքերն գրեթէ ամբողջապէս գոցուած էին թեզանիքներուն տակ, որք՝ իւր սովորութեանն հակառակ, երկար ու լայն էին. ձիւնասպիտակ դէնթ փոքրիկ գլխարկ մը կը շրջազգիւ իւր կօշիկներուն ծայրերը ցոյց կուտային. նոյնպէս նաև ձեռքերն գրեթէ ամբողջապէս գոցուած էին թեզանիքներուն տակ, որք՝ իւր սովորութեանն հակառակ, երկար ու լայն էին. ձիւնասպիտակ դէնթ փոքրիկ գլխարկ մը կը շրջա-

Օրիորդ Անրօճիկ

զերը յափշտակիչ երեւոյթ մը կուտային Մատլէնին. իւր երենոսեայ թարթիչներն այնքան հաստ ու խիտ էին որ, կարծես արեւելքի կանանց պէս, որք ասանկով հրաւառ հաճոյից երեւոյթ մը կուտան իրենց նայուածքին, սեւ ներկեր էր գրեթէ միշտ կիսաբաց արտեւանունքներուն տակը. իւր վարդագոյն, դիւրաշարժ, ըլլուտ ունգունքն բարեձեւ յունական քթի մը երկու կողմն կը զարդարէին, մինչդեռ իւր շրթունքն, այնքան կարմիր որ, կարծես բարակ մարմին ներքեւ արեան շրջանը ընելն կը տեսնուէր, բաւական հաստ և քիչ մը դուրս ցցուած էին նախկին Երիզոնի շրթանցը պէս և երբեմն նոցա ծիրանեգոյն եղերաց միջեւ կարդ մը սպիտակ ակռաներ կը տեսնուէին։

Բայց ի՞նչ հարկ է այս կենդանագիրն ջարդունակել։ Մեր նկարագրութիւնն որքան ալ որ ճշգրիտ ըլլայ, անոր և իրականութեան միջեւ միշտ պիտի գտնուի այն անչափ հեռաւորութիւնն, որ կայ նը-կարի մը և շնչաւոր էակի մը միջեւ։ Անկարելին փորձել է ջանալ որ շօշափելի ընեն ք այն անդիմադրելի և մագնիսական ձգողութեան մթնոլորտն, որ կարծես այս տարօրինակ արարածին մարմնէն կը բուրէր։ Օրինակի համար, ինչ որ ուրիշ ո և է անձի վրայ եղած ատեն անախորժ տպաւորութիւն պիտի ընէր, կարծես հրապուրանաց միջոցներն կը հարիւրապատկէր ի նմա. այսինքն հագուստներուն լայնութիւն ու երկայնութիւն, որոց տակէն մարմնոյն ամենափոքր մէկ մասն չէր երևնար, կօշիկներուն և մատներուն ծայրն հազիւ կը նշմարուէր. վերջապէս, եթէ հնօրեայ մոռախոհ և անաչառ դիմօք Մուսայի մը վրայ ձգուած պատմուճանն նորա պատկառելի երեւոյթն կ'աւելցնէ, և Ափրոդիտէ Ասաղկան չքնաղ մարմնոյն վրայ ձգուած քօղն մեր երեւակայութիւնը կը գրգռէ ու կը վառէ։

Ահա՛ այս տպաւորութիւնն ըրաւ Մատլէն Շարլը Տիւթէրթրի վրայ որ, ըլուռ ու շփոթած, քանի մը վայրկեան զայն դիտեց։

Սոֆի, չկրնալով ամուսնոյն ըլուրթեանն ու շփոթութեանը պատճառն մակաբերել, կարծեց որ իւր կործանման անխուսափելիութիւնը կը մոտաձէր. և այս դաղափարն իւր միտքն ալ ձգելով իրենց կացութիւնը, զոր պահ մը մոռցեր էր, ժըպտելու ջանաց և մարքիզուհւոյն ըսաւ.

— Ներեցէ՛ք Շարլի մոռազբաղութեանը, սիրելիս Մատլէն։ Քու ներս մոտաձ միջոցիդ շատ ծանր գործոց վրայ կը խօսէինք։

— Արդարեւ, տիկին, բարեհաճեցէք ներել ինձ, յարեց Տիւթէրթրը, դողալով և կնոջը մոտերմուհւոյն իր վրայ բրած տպաւորութենէն սոսկալով. բարեբաղդաբար ձեր մասին Սոֆիէն իմացածներս յոյս կուտան ինձ որ ներողամիտ պիտի գտնուիք։

— Ներողամի՞տ գտնուիմ, բայց ես ձեր նմանն պէտք ունիմ, պարո՛ն, յարեց մարքիզուհին ժպտելով, վասն զի սիրելի Սոֆիս ժամ առաջ տեսնելու անզուսպ փափաքով, անոր վիզը նետուեցայ, առանց ձեր և ձեր Պ. հօրք ներկայութիւնը նկատողութեան առնելու։ Բայց անշուշտ ինքն ալ պիտի բարեհաճի ներել ինձ որ իրը քոյր վարուեցայ Սոֆիի հետ, ինքն որ աղջկանը պէս կը սիրէ զայն։

Եւ Մատլէն, այս խօսքերն ըսելով, ծերունւոյն դարձաւ։

— Աւա՛ղ, տիկին, ըսաւ ծերունին ակամայ, խեղճ զաւկներս գուցէ երբեք այս աւուր չափ պէտք ունեցած չեն ի-

րենց բարեկամաց սիրոյն։ Գուցէ Աստուած կը զրկէ ձեզ . . .

— Հա՛յր իմ, զդուշացէ՛ք, ըսաւ Տիւթէրթրը ցած ձայնիւ իւր հօրը, թեթեւ մը յանդիմանելով անոր որ իրենց ընտանեկան վիշտերն կը հաղորդէ օտար կնկան մը, վասն զի Մատլէն մէկէն ի մէկ զարմացական և հարցական նայուածք մը ձըգեր էր Սոֆիի վրայ։

Մերոնին հասկցաւ տղուն միտքը եւ ցած ձայնիւ պատասխանեց.

— Իրաւունք ունիս, պէտք էր լռէի. բայց սրտիս ցաւէն . . . Օ՛ն, եկո՛ւր, Շարլը, զիս սենեակս տար, վասն զի հանգչելու պէտք ունիմ։

Եւ տղուն թեւը մտաւ։ Այն պահուն որ Տիւթէրթրը սրահէն դուրս պիտի ելլէր, մարքիզուհին անոր մօտեցաւ և ըսաւ.

— Ցտեսութի՛ւն, պարո՛ն Տիւթէրթրը. վասն զի գիտցած ըլլաք թէ որոշած եմ Բարիզ գտնուած միջոցիս ատեպ Սոֆին տեսնելու գալ։ Բաց յաստի ձենէ ծառայութիւն մը պիտի խնդրեմ, և որպէս զի հաւանիք, Սոֆիի պիտի յանձնեմ իմ կողմէս այդ խնդիրը ձեզ մատուցանելու պաշտօնը։ Կը տեսնէ՛ք որ ես հին բարեկամի մը պէս կը վարուիմ, վասն զի, Պ. Տիւթէրթրը, ես ձեր բարեկամուհին եմ այն օրէն ի վեր որ Սոֆին երջանիկ ըրիք։ Ցտեսութի՛ւն ուրեմն, յաւել մարքիզուհին՝ շնորհալի մտերմութեամբ մը ձեռքը Տիւթէրթրի երկնցնելով։

Առաջին անգամն ըլլալով՝ Սոֆիի ամուսինն խաղնեցաւ իւր աշխատութենէ սեւցած ձեռքերէն եւ հազիւ թէ համարձակեցաւ Մատլէնի վարդագոյն մատանց ծայրը սեղմել։ Այն ատեն թեթեւ մը սարսռաց, հրակէզ տաքութիւն մը տարածուեցաւ ճակտին վրայ և իւր շփոթութիւնը ծածկելու համար՝ մարքիզուհւոյն առջեւ խոնարհեցաւ և հօրը հետ դուրս ելաւ։

Այս տեսարանին սկիզբէն ի վեր Սոֆիի երկու տղաքը ձեռք ձեռքի բռնած և մօրերնուն ետին պահուըտած, աչուընին բացեր և անձայն կը դիտէին այն դէպքը ամենամեծ հետաքրքրութեամբ։

Մարքիզուհին, այն ատեն նշմարելով նոցա ներկայութիւնն, մտերմուհւոյն երեսը նայեցաւ և գոչեց.

— Ասո՞նք են տղաքդ։ Աստուած իմ, ո՛րքան գեղեցիկ են և ո՛րքան կը հպարտանաս արդեօք անոնց վրայ նայելով։

Եւ անոնց առջև ծունգի եկաւ, ապա, մէկ ձեռքով մէկդի ընելով սանուհւոյն ճակտին վրայի խարտեաշ գանգուրներն և միւս ձեռօք անոր ծնօտն վեր առնելով, պահ մը դիտեց այս թարմ ու վարդագոյն փոքրիկ դէմքը, և մայրական գորովանօք համբուրեց տղուն այտերն, աչքերը, ճակատը, մազերն ու վիզը։

— Դու ալ մի՛ նախանձիր, սիրուն քերովբէ, ըսաւ, եւ փոքրիկ տղուն թուխ գլուխը փոքրիկ աղջկան խարտեաշ գլխուն մօտեցնելով՝ սկսաւ երկուքն ալ շոյել։

Սոֆի Տիւթէրթրը, սաստիկ խանդաղատելով, մելամաղձութեամբ կը ժըպտէր, երբ մարքիզուհին աչքերն անոր վրայ վերուց և առանց տղոց գլուխն ձգելու, ըսաւ.

— Կը հաւատա՞ս որ, Սոֆի, այս փոքրիկ հրեշտակներն համբուրած ատենս, գրեթէ կզգամ ու կը հասկնամ այն երջանկութիւնը զոր դու կ'իմանաս զանոնք գգուանօք լափելով, և կարծես թէ քու երջանիկ, կատարելապէս երջանիկ ըլլալդ գիտնալով, ա՛լ աւելի կը սիրեմ զքեզ։

Սոֆի, լսելով որ այսպէս իւր երջանկութիւնը կը գովէ Մատլէն, վերստին յի-

քեց ներկայ կացութիւնը. զոր պահ մը մոռցեր էր, գլուխը ծռեց, դեղնեցաւ և դէմքը մէկէն ի մէկ անանկ անձկութեան մը մէջ ինկաւ որ Մատլէն աշխուժիւ ոտքի ելաւ և գոչեց.

— Տէ՛ր Աստուած. Սոֆի՛, ի՞նչ ունիս, կը դեղնիս.

Տիկին Տիւթէրթը հառաչանքն զսպեց, գլուխը տխրութեամբ ցնցեց և պատասխանեց.

— Բան չ՚ունիմ, Մատլէ՛ն, ասանկ երկար հեռաւորութենէ մը վերջը քեզ տեսնելու ուրախութիւնն ու այլայլութիւնը...

— Ուրախութի՞ւն, այլայլութի՞ւն, ըսաւ մարքիզուհին երկբայանօք. ո՛չ, ո՛չ, քիչ մ՚առաջ այնպէս էր, բայց այս միջոցիս թշուառ կ՚երեւնաս, խե՛ղճ Սոֆիս։

Տիկին Տիւթէրթը պատասխան չի տըուաւ, տղաքն համբուրեց և ցած ձայնիւ ըսաւ անոնց.

— Դայեակնուդ քով գացէ՛ք, սիրուն տղա՛քս։

Մատլէն և Օկիւսթ հնազանդեցան և սրահէն դուրս ելան՝ քանի մ՚անգամ եւ տեւնին դառնալով և դիտելով այն տիկինը, զոր շատ վայելուչ կը գտնէին։

ԺԱ.

Երկու տղաք հազիւ թէ սրահէն դուրս ելեր էին, որ Մատլէն աշխուժիւ ըսաւ իւր մտերմուհւոյն.

— Ահաւասիկ մինակ ենք, Սոֆի։ Կ՚աղաչեմ. պատասխանէ՛ ինձ. ի՞նչ ունիս։ Ինչո՞ւ մէկէն ի մէկ տխրեցար։ Արդեօք հեռաւորութիւնն քու վստահութիւնդ յաջողշտակ՞ց ինէ։

Սոֆի բոլոր ոյժը ամփոփելով՝ տխրութեանն յաղթեց և յաջողեցաւ ծածկել այն տաժանելի գաղտնիքն, որ իւր գաղտնիքը չէր։ Զի համարձակելով Տիւթէրթերի հաւանական և մօտալուտ անանկութիւնքն խոստովանիլ նոյն իսկ իւր լաւագոյն բարեկամուհւոյն, առերեւոյթ հանդարտութեամբ մը պատասխան տուաւ Մատլէնի.

— Կ՚ուզե՞ս որ յանցանքս խոստովանիմ քեզ, սիրելիս. երբեմն չափազանց վախ կը բերեմ ինքզինքիս՝ այս միջոցին հրապարակի վրայ տիրած դրամական տագնապի մասին ամուսնոյս զգացած մըտահոգութիւններն չափազանցելով, վասն զի, յաւել Սոֆի՝ ժպտելու ջանալով. տիկին մարքիզուհին ի հարկէ չգիտեր որ մենք համեստ արուեստագէտքս, տագնապի մը մէջ ենք։

— Բայց այդ տագնապն անցաւոր է, անանկ չէ՞, սիրելի Սոֆիս։ Ձեմ կարծեր որ շատ ծանր ըլլայ և եթէ՛ է իսկ, ի՞նչ ընել պէտք է քեզ ու ամուսինդ ազատելու համար։ Առանց շատ հարուստ ըլլալու, բաւական լաւ վիճակ մ՚ունիմ. արդեօք չե՞մ կրնար...։

— Ազնի՛ւ սիրտ, ըսաւ Սոֆի, այլայլութեամբ Մատլէնի խօսքն ընդմիջելով, միշտ նոյն ես։ Մի՛ վախնար. յուսամ որ այս տագնապն շուտ կ՚անցնի. ուստի ա՛լ այս խօսքը դոցենք և թող որ մի՛ միայն քեզ տեսնելուս ուրախութեանն անձնատուր ըլլամ։

— Բայց վերջապէս, եթէ քու մտահոգութիւններդ...։

— Մատլէ՛ն, յարեց Սոֆի անուշութեամբ ժպտելով և մտերմուհւոյն խօսքը ընդմիջելով, նախ քու վրադ խօսինք։

— Անձնասէ՛ր։

— Այո՛, քեզի պէս, բայց ըսէ՛ տես.

նեմ, երջանիկ ես, անանկ չէ՞. վասն զի, որքան որ մարքիզուհի ես, անշուշտ ինձի պէս դու ալ սիրահարութեամբ ամուսնացար, ամուսինդ ի՞նչ կ'ընէ։

— Այրի եմ։

— Ա՜հ, տէ՛ր Աստուած, ի՜նչ շուտ։

— Հարնանիքիս գիշերն այրի մնացի, սիրելիս Սոֆի։

— Ադ ի՞նչ ըսել է։

— Ասի որքան որ տարօրինակ երեւի քեզ, սակայն շատ պարզ է։ Զիս մտիկ ըրէ. դպրոցէն ելնելով և Մեքսիկո վերադառնալով, ուր կը կոչէր զիս հայրս, հոն ուրիշ մարդ չի գտայ, բայց եթէ մօրս ազգականներէն մին, Միրանտայի մարքիզը, որ այն միջոցին Լիմայի մէջ ճարակեալ ախտէն բռնուեր էր. նա իմ տղայութիւնս տեսեր էր, զաւակ չունէր, գիտէր որ հօրս հարստութիւնն գրեթէ ամբողջապէս սպառեր էր երկարատեւ դատերու մէջ։ Զիս զաւկին պէս սիրեց։ Մահուան անկողնոյն մէջ առաջարկեց որ իւր կինն ըլլամ։ «Ընդունէ՛, սիրելի Մակտալինաս, խեղճ որբս, ըսաւ։ Անուանս ընկերական կացութիւն մը կը շնորհէ քեզ, հարստութիւնս քու անկախութիւնդ կ'ապահովէ, և երջանիկ ըլլալդ գիտնալով՝ գոհ պիտի մեռնիմ։»

— Ազնի՛ւ սիրտ, ըսաւ Սոֆի։

— Այո՛, յարեց Մատլէն այլայլելով, նա մարդոց ազնուագոյնն էր։ Վիճակիս ռանձնութիւնն ու իւր թախանձանքն համոզեցին որ նորա վերհանձն առաջարկութիւնն ընդունիմ։ Քահանայն եկաւ նորա անկողնոյն քով մեր միութիւնն օրհնեց եւ արարողութիւնն հաղիւ կ'աւարտէր, երբ Պ. տը Միրանտայի ձեռքն իմ ձեռքիս մէջ սառեցաւ։

— Մատլէ՛ն, ներէ, ըսաւ տիկին Տիւթէրթրը ակամայ տաժանելի յիշատակներ միտքդ բերելով՝ ախրեցուցի զքեզ։

— Տաժանելի՞, ո՛չ, ամէն ատեն անուշ մելամաղձութեամբ մը կը յիշեմ Պ. տը Միրանտան։ Մարդուս սրտին համար ապերախտութիւնը միայն դառն է։

— Եւ այդ երիտասարդ հասակիդ մէջ ազատութիւնդ նեղութիւն չի՞ պատճառեր քեզ։ Ըսել է վարժուեցար այդպէս առանձին և առանց ընտանիքի՝ մենաւոր կեանք մ'անցնելու։

— Քենէ վերջը կանանց երջանկագոյնն կը համարիմ ինքզինքս, պատասխանեց Մատլէն ժպտելով։

— Բայց երբէք չի փափագեցա՞ր նորէն ամուսնանալ, կամ մանաւանդ, ըսաւ Սոֆի ժպտելով, ամուսնանալ, վասն զի, թէ և այրի, բայց տակաւին աղջիկ ես։

— Ես քենէ բան չեմ պահեր, սիրելիս Սոֆի, անգամ մը ուզեցի ամուսնանալ, բայց ասի երկար վէպ մ'է, մեծ սէր մը ըսաւ Մատլէն զուարթութեամբ։

— Այդ ազատութեանդ մէջ ի՞նչ բան արգելք եղաւ քեզ։

— Աւա՜ղ, իմ սիրահարս հինգ վայրկեան միայն տեսայ, այն ալ իմ պատրաստամէս։

— Այդչա՞փ միայն։

— Այոչափ։

— Եւ անմիջապէս սիրեցի՞ր զինքը։

— Տեղնանօք։

— Ուրիշ անգամ չի տեսա՞ր զայն։

— Բնաւ։ Անշուշտ նորէն բարձրացաւ իւր եղբարց՝ հրեշտակաց քով, որոց նման իտէական գեղեցկութիւն մ'ունէր։

— Մատլէ՛ն, լրջօրէ՞ն կը խօսիս։

— Մտիկ ըրէ՛, վեց ամիս առաջ Վիէննա էի. քաղքին արուարձաններուն մօտ գեղ մը կը բնակէի։ Առտու մը քէօշք մը նստեր էի, որու պատուհանէն դաշտը կ'երեւնար։ Ցանկարծ ականջիս սուրերու

ընդհարման ձայն մ՚եկաւ. մենամարտու-թիւն մ՚էր։

— Ո՛, Աստուա՛ծ իմ։

— Առ առաւելն 19—20 տարեկան երիտասարդ մը, հրեշտակաց նման գեղեցիկ, կատաղի դէմքով տեսակ մը հսկայի հետ կը կռուէր։ Առաջին իրձս այն եղաւ որ խարտեաշ քերովբէն (վասն զի իմ սիրելիս խարտեաշ է) յաղթէ ահարկու հրէշին և թէև մենամարտութիւնն հազիւ երկու վայրկեան տեւեց, այդ կարճ միջոցն բաւ եղաւ իմ դիւցազնիս անվեհերութիւնն, հանդարտութիւնն ու ճարպիկութիւնը նշմարելու համար. իւր սպիտակ կուրծքը կիսաբաց, երկար խարտեաշ մազերը հովուն տուած, ճակատը պայծառ, աչքերը փայլուն, ժպիտ ի շրթունս կարծես առ ոչինչ կը դրէր վտանգն եւ այն պահուն կը խոստովանիմ թէ իւր գեղեցկութիւնն գերբնական երեւցաւ ինձ. մեկ մ՚ալ, սուրերու ճարճատմանց ինձ պատճառած շլացմանը միջոցին, տեսայ որ հսկայն երերաց և գետին ինկաւ։ Գեղեցիկ դիւցազնս անմիջապէս սուրը հեռուն նետելով՝ ձեռները միացուց և իւր ոսոխին առջեւ ծունգի գալով, յերկինս բարձրացուց իւր հրապուրիչ դէմքն, ուր մէկէն ի մէկ անանկ արտագրաւ և անբիծ արտայայտութիւն մը կարդացուեցաւ որ, զինքը պարտեալ թշնամւոյն վրայ խոնարհած տեսնողը պիտի կարծեր թէ վշտադին կոյս մ՚է, որու աղաւին վիրաւորուեր է, եթէ ներելի է սակայն աղաւնիի մը բաղդատել այն անշահ հսկայն որ, ծանր վիրաւորուած չէր երեւնար, վասն զի նըստաւ եւ իւր հաստ ձայնովն, որ վանդակներուն ետեւէն մինչեւ ինձի կը հասնէր, ըսաւ իւր երիտասարդ ոսոխին.

— Ծունգի եկած ներումն խնդրելու էի ձենէ, պարո՛ն, իմանալայել վարմանցս համար. եթէ դիս սպաննէիք՝ արդարութիւն գործած կ՚ըլլայիք։ »

Գրեթէ անմիջապէս կառք մը մատեցաւ, վիրաւորը մէջը դրին. քանի մը վայրկեան վերջը՝ ամենքն ալ անհետացան։ Այս դէպքն այնքան շուտ անցաւ որ, պիտի կարծէի թէ երազ մ՚եմ տեսեր. եթէ իմ մատաղ դիւցազնիս յիշատակն միշտ աչացս առջեւ չըլլար իրրեւ գեղեցկութեան, քաջութեան և վեհանձնութեան իտէալը։

— Հիմայ, Մատլէն, կ՚ըմբռնեմ որ այսպիսի պարադայից մէջ մարդ կարենայ մէկէն ի մէկ խոր, գուցէ իսկ անջինջ տըպաւորութիւն մը կրել։ Ըսելէ վերջը ալ բնաւ քու դիւցազնդ չի տեսա՞ր։

— Բնաւ։ Անունն անդամ չեմ գիտեր, և եթէ երբեք ամուսնանամ՝ անոր հետ կ՚ամուսնանամ։

— Մատլէն, գիտես որ մեր նախկին մտերմութիւնն թոյլ կուտայ ինձ հետդ անկեղծութեամբ վարուելու։

— Հարկաւ։

— Ինձի անանկ կուգայ որ դու խիստ զուարթութեամբ կը տոկաս այդ մեծ սիրոյն։

— Ինչո՞ւ համար տխուր ըլլամ։

— Բայց երբ մարդ սաստիկ սիրէ, իրեն համար բացակայութենէ, բաժանումէն և մանաւանդ սիրած անձն ալ ևս չի տեսնելու վախէն աւելի սոսկալի բան չի կայ։

— Իրաւ է, և սակայն կ՚երդնումթէ այս խոր սէրն բոլորովին տարբեր արդիւնք յառաջ կը բերէ յիս։

— Ի՞նչ ըսեմ, ես երբ Շարլն սիրելու սկսայ, ցաւէս կը մեռնէի. թէ որ զիս իրմէ զատէին։

— Զարմանալի՛ է. իմ սէրս բոլորովին հակառակն է։ Ամէն օր իմ դիւցազնս իմ

իսէական կը մոռանամ. ամէն օր սիրով միտքս կը բերեմ այն միակ առիթն, յորում չկրցի տեսնել զինքը. ամէն օր միտքս առ նա կը բարձրանայ. ամէն օր զինքը ուրիշներուն հետ բաղդատելով՝ կը հպարտանամ. վասն զի ամենէն գեղեցիկներէն աւելի վեհանձն է. վերջապէս ամեն օր իւր շնորհին, անոյշ երաշներու մէջ կը ծփամ։ Այո՛, ինձի անանկ կուգայ որ իմ հոգիս իւր հոգւոյն կցուած է խորհրդաւոր եւ անքակտելի կապերով։ Վերջապէս չեմ գիտեր թէ բնաւ պիտի տեսնե՞մ զինքն, և սակայն սրտիս մէջ հրապոյր և ուրախութիւն միայն կզգամ։

— Հիմայ ալ, սիրելիս, ես քեզի պէս պիտի ըսեմ թէ՝ զարմանալի է։

— Սօֆի, անկեղծութեամբ խօսինք, առանձին ենք և կանայք (թէ և ես տակաւին հարսնցու օրիորդ եմ.) ամէն բան կ'ըսեն իրարու։ Իմ սէրս քիչ մը պղատոնական կ'երևի քեզ, չէ՞ մի։ Կը զարմանաս թէ տակաւին չեմ զգացած կամ փոյթ չեմ ըներ այն յափշտակիչ այլայլութիւնն զոր զգացիր դու, երբ առաջին անգամ Շարլը գորովանօք քու ձեռքդ սեղմեց, չէ՞ մի։

— Ա՛, Մաղէն, դու խենթ ես։

— Անկեղծօրէն խօսէ՛, ես հասկցայ։

— Քիչ մը, բայց կարծածիդ չափ չէ։

— Այդ քիչն բաւ է ինձ քու դաղտնի մտածումդ հասկնալու համար, տիկին նիւթապաշտ։

— Նորեն կ'ըսեմ, Մաղէն դու խենթ ես։

— ո՛չ։

Ապա, պահ մը լռութենէ վերջը, Մարքիզուհին խնդալով յարեց.

— Գիտնա՞ս, Սօֆի, թէ կենացս մէկ քանի պորագայներուն մէջ որքան տարօրինակ, զարմանալի և նոյն իսկ ինձ համար անհասկնալի բաներ կան։ Իրարմէ զատուելնուս ի վեր ո՛րքան անհեղեղ արկածներ պատահեցան ինձ։ Իմ բժիշկս աւ բարեկամս, նշանաւորն տօքթօր Կոնէքին որ միանգամայն մեծ փիլիսոփայէ, հազար անգամ ըսած է ինձ որ աշխարհի վրայ ինձի պէս զարմանալի էակ չկայ։

— Մեկնէ ըսածդ։

— Գուցէ ուրիշ ատեն։

— Ինչո՞ւ հիմայ չ'ես ըսեր։

— Եթէ վիշտ մ'ըլլար հաղորդելիքս, միթէ կը վարանէի, Բայց, թէև կենացս մէջ շատ տարօրինակ բաներ կան, և գուցէ նոյն իսկ այս պատճառաւ կանանց ամենէն երջանիկն եմ։ Դեռ վիշտ չ'եմ ըզգացած։ Բա՛յց, տէ՛ր Ամուսած, այս վայրկենիս գրեթէ վիշտ մը կզգամ, վասն զի յիշողութեան պակասութիւնն ալ վիշտ մ'է։

— Յիշողութեան պակասութի՞ւն։

— Հապա՛, գալէս ի վեր ինքզինքիս վրայ խօսեցայ քեզ, և Անթօնինը մոռցայ, աս կը վայլէ՞։

— Ես ալ քեզի չափ յանցաւոր կըրնամ համարուիլ, բայց իրարու ըսելիք չ'ունինք այս առաւօտ հոս եկաւ՝ քու վերադարձդ ինձ իմաց տալու համար։ Ցեռնէիր ո՛րքան ուրախ էր, վասն զի շատ կը սիրէ զքեզ։

— Խե՛ղճ պզտիկ. ինչ փափուկ և ազնիւ բնութիւն։ Բայց նա հիմայ, որ տասնեւհինգ տարու է, հրեշտակի մը պէս գեղեցիկ ըլլալու է։

— Իրաւունք ունիս, վարդի կոկոնի մը պէս թարմ՝է։ Իւր ամենէն մօտ ազգականին մեռնելէն վերջը, անշուշտ գիտես որ հօրեղբօրը, Հիւպէր նախագահին քով եկաւ. որ զինքը շատ լաւ կը նայի։ Դիւրաբաղդաբար հիմայ ծանր հիւանդ է, և եթէ նա ալ մեռնելու ըլլայ, Անթօնին պիտի ստիպուի հեռաւոր ազգականնե-

բուն քով երթալ և այս գաղափարն զինքը կը տխրեցնէ։ Բայց դու զինքը պիտի տեսնես, նա ամէն բան կը զրուցէ քեզ։ Գաղտնիք մը կայ, զոր դրեթէ ամբողջապէս քսաւ ինձ, որպէս զի ինէ խորհուրդ առնու, վասն զի պարագայներն բաւական ծանր էին։

— Ադ ի՞նչ է նայինք։

— «Եթէ դուք Մատլէնն ինէ առաջ տեսնելու ըլլաք, քսաւ ինձ Անթօնին, իրեն բան մը մի՛ ըսէ՛ք, սիրելիս Սոֆի։ Կը փափագիմ ես ինքս ամէն բան յայտնել իրեն. ասկեց զատ՝ ուրիշ պատճառներ ալ ունիմ այս մասին։» Կը տեսնես որ, սիրելիս, ստիպուած եմ լռել։

— Աղե՛կ։ Այսօր կամ վաղը ես զինքը տեսնելու պիտի երթամ, պատասխանեց Մարքիզուհին ոտքի ելլելով, որպէս զի մեկնի։

— Կ'երթա՞ս, Մատլէն։

— Դժբաղդաբար ստիպուած եմ։ Ժամը երեքէն մինչև չորս ժամադիր եմ Մէքսիկոյի նուիրակին հետ, որ իմ հայրենակից է. վաղը չեմ գիտեր որ իշխանին պիտի ներկայացնէ զիս։ Կը տեսնես որ հիմայ գործս մեծերու հետ է։

— Իշխա՞ն մը։

— Այնքան իշխան որ, բոլոր արքունի ընտանիքէ եղող օտարազգի իշխանաց պէս, նա ալ Էլիզէ-Պուրպոն կը բնակի հոս գտնուած միջոցին։

Տիկին Տիւթէրթրը զարմանքը չի կրցաւ ծածկել, և պա՛հ մը մոռցելէ վերջ՝ ըսաւ.

— Տարօրինակ բա՛ն։

— Ի՞նչ։

— Անթօնին Էլիզէի կից տուն մը կը բնակի։ Ասիկայ շատ զարմանալի չէ, բայց . . .

— Ի՞նչ։

— Ասկեց աւելին չեմ կրնար ըսել, Մատլէն. երբ Անթօնին իր գաղտնիքն հաղորդէ քեզ, իմ զարմանալուս պատճառն կը հասկնաս այն ատեն։

— Բայց Անթօնինի և Էլիզէի մինչև ի՞նչ վերափերութիւն կայ։

— Սիրելի՛ս, Անթօնինի ըսելիքներուն սպասէ՛։

— Լա՛ւ, Սոֆի։ Բայց չէի գիտեր որ պալատին քով կը բնակի. ես նամակներս իր հին հասցէին կ'ուղղէի։ Ան շատ աղեկ պատահեցաւ. վաղը իշխանին ներկայանալէս առաջ կամ վերջը զինքը տեսնելու կ'երթամ։

— Ահա՛ բոլորովին մեծ տիկին մ'ելլար։

— Ցաւէ՛ վրաս, սիրելի Սոֆի, վասն զի խնդիրն աղերսագրի մը վրայ է, չէ թէ ինձ համար, ես աղերսելու սովորութիւն չունիմ, այլ աքսորեալ և համակրութեան արժանի ընտանիքի մը համար, որու մեծ ծառայութիւն մը կ'ուզեմ մատուցանել։ Պաշտօնս շատ փափուկ ու դժուարին է. բայց Վենետիկէն մեկնած ատենս յանձն առի այս բանը, և կուզեմ գոնէ ձեռքէս եկածն ընել՝ յաջողելու համար։

— Եւ անշուշտ պիտի յաջողիս։ Միթէ կարելի՞ է քեզի բան մը մերժել։ Մոռցա՞ր որ դպրոցին մէջ, երբ խնդիրք մ'ունենայինք վարժուհիին, քեզ դեսպանուհի կ'ընտրէինք իրաւամբ. վասն զի կարծես թէ դու ամէն բան ընդունելու համար հմայեակ մ'ունէիր։

— Սիրելիս Սոֆի, պատասխանեց Մատլէն ակամայ ժպտելով, կ'երդնում որ շատ անգամ վհուկ եմ՝ առանց գիտնալու։ Ա՛հ, յաւել Մարքիզուհին խնդալով, այս մասին ո՛րքան յիմարութիւններ

ունիմ քեզ պատմելու, բայց ուրիշ ատեն։ Մնաս բարո՛վ, Օօֆիս, ցտեսութի՛ւն . . .

— Այո՛, ցտեսութի՛ւն, և կ՚աղաչեմ որ չ՚ուշանաս . . .

— Գրեթէ ամէն օր պիտի գամ, վասն զի շուտ պիտի մեկնիմ, և կ՚ուզեմ ժա-

Միրանտայի Մարիզուիին

մանակս աղեկ գործածել։

— Ի՞նչպէս, ե՞րբ պիտի մեկնիս։

— Չեմ գիտեր. ատի իմ դիւցազնիս, իմ իտէականիս տալիք ներշնչումէն կախեալ է, վասն զի առանց մտովի անոր հարցնելու, երբեք բան մը չեմ որոշեր։ Բայց որովհետև միշտ լաւ խորհուրդ կուտայ, ապահով եմ թէ պիտի ստիպէ զիս որ կարելի եղածին չափ շատ ատեն կենամ քովդ։

— Ա՛, Մատլէն, քիչ մ՚առաջ ամուսնոյս քսիր որ ծառայութիւն մը պիտի խնդրես իրմէ։

— Իրա՛ւ, մոռցայ։ Շատ պարզ բան մ՚է. ես ատակի վերաբերեալ գործերէ չեմ հասկնար։ Վերջին անգամ Ալմանիոյ մէջ նշմարեցի զայս։ Վիէննացի Ալեքսիսո Շմիտ անուն սեղանաւորի մը վրայ փոխա-

նակագիր մ՚ունէի, անիծածը զիս խաբեց։ Ասոր համար միտքս դրի որ ապագային մէջ ամէն զգուշութիւն ձեռք առնեմ։ Այս անգամ Բարիզու վրայ փոխանակագիր մը առի։ Կը փափագիմ որ ամուսինդ, պէտք ունեցած ատենս, երթայ ինձի համար ատակ առնէ. սանկով իմ շահերուս կը հակէ և անոր շնորհիւ նորէն Ալեքսիս Եմիտի մը ճիրաններուն տակ իյնալու վտանգին չ՚եմ ենթարկուիր։

— Ա՛հ շատ դիւրին է, սիրելիս Մաթլէն. փոխանակագիրը Շարլի կը դարձնես և ինքը քու բոլոր հաշիւներդ կը ճշդէ։

— Ասի շատ կարևոր է, մանաւանդ թէ կ՚ըսեն որ փոխանակագիրն վճարող մարդը շատ հարուստ, բայց վերջին ծայր խաբեբայ է եղեր։

— Աղեկ որ իմաց տուիր. Շարլը աչքը թո՛ղ բանայ։

— Բայց ամուսինդ, որ գործի մէջ է, այդ մարդը ճանչնալու է. կ՚ըսեն թէ Ֆրանսայի մեծագոյն դրամատեարց մին է։

— Անունն ի՞նչ է։

— Պ. Բասքալ։

— Բասքա՛լ, կրնեց տիկին Տիւթէրթրը, եւ ակամայ գեղնեցաւ ու սարսռաց։

Մարիքիզուհին իր մտերմուհւոյն այլայլութիւնն նշմարելով, աշխուժիւ ըսաւ.

— Սօֆի, ի՞նչ ունիս։

— Ո՛չինչ, ոչինչ . . .

— Կ՚աղաչեմ, պատասխանէ՛, ի՞նչ ունիս . . .

— Ամուսինս այդ Պ. Բասքալին հետ բաւական գործ ունեցաւ։ Դժբաղդաբար մէջերնին մեծ անհամաձայնութիւն մը ծագեցաւ և . . . :

— Ի՞նչպէս, Սօֆի, ամուսինդ Պ. Բասքալին հետ անհամաձայնութեան մէջ ըլլալուն՝ չպիտի կարենայ իմ խնդրած ծառայութիւնս մատուցանել և ադոր համար այդքան կը յուզուի՞ս։

Տիկին Տիւթէրթրը չուզելով Մաթլէնի սխալն ուղղել, ջանաց նորէն իւր հանդարտութիւնը ձեռք առնուլ և ըսաւ.

— Ա՛յո՛, շատ կը ցաւիմ՝ մտածելով որ Շարլը չպիտի կարենայ առաջին խընդիրդ կատարել։

— Օֆի, կ՚ուզե՞ս որ մտերմաբար քեզ դիմելուս զղջամ։

— Մաթլէ՛ն . . . ։

— Զնայի՛ս, ի՜նչ մեծ դժբաղդութիւն։ Զի խաբուելու համար՝ ես ինքս պիտի երթամ Պ. Բասքալին, բայց շաբթէ շաբաթ հաշիւս պիտի ուզեմ իրմէ. ամուսինդ զանոնք կը քննէ, և եթէ ուղիղ չըլլան, սեղանաւորս կը փոխեմ։

— Իրաւունք ունիս, Մաթլէն, ըսաւ Սօֆի՝ քիչ քիչ իր պաղարիւնութիւնն ձեռք առնելով, մանաւանդ թէ ամուսնոյս քննութիւնն կարծածէդ աւելի պիտանի է քեզ։

— Ըսել է Պ. Բասքալ խաբեբայ անձ մ՚է։

— Մաթլէն, ըսաւ տիկին Տիւթէրթրը՝ այս անգամ՝ չկարենալով իւր այլայլութիւնն զսպել, կ՚աղաչեմ, իրը քոյր մտիկ ըրէ՛ ըսածս, և ի՜նչ պատրուակաւ որ ըլլայ, Պ. Բասքալի ձեռքին տակ մ՚իյնա՛ր։

— Ի՞նչ ըսել կ՚ուզես, Սօֆի։

— Եթէ առաջարկէ քեզ ծառայութիւն մը մատուցանել՝ մերժէ։

— Բայց ես իրմէ բան մը չպիտի խընդրեմ։ Իր վրայ փոխանակագիր մ՚ունիմ. պէտք ունեցած ատենս պիտի երթամ և կամ մարդ պիտի ղրկեմ իրմէ ստակ առնելու, այնչափ։

— Աղե՛կ, բայց վերջապէս կրնայ ըլլալ որ, մոռնալով կամ չգիտնալով, փոխանակագրէդ աւելի ստակ առնես, եւ այն ատեն . . . ։

— Ինչ կ'ըլլայ։

— Այս բանս մէկն ըսաւ մեզ։ Անգամ մը որ Պ. Բասքալի ձեռքն անցնիս, ա՛լ նա իւր իշխանութիւնն չարաչար կը գործածէ։

— Օ՜հ, սիրելիս Սոֆի, կը տեսնեմ որ դու զիս շռայլ ու անկարգ կին մը կը կարծես։ Մի՛ վախնար. այնքան խնայող եմ որ տարուէ տարի եկամուտներէս բան մը կ'աւելցնեմ, և այդ աւելցուցածներս են որ քիչ մ'առաջ քեզ կ'առաջարկէի տալ։

— Ազնի՛ւ Մատլէնս, շնորհակալ եմ, հազար անգամ շնորհակա՛լ եմ։ Այս տագնապն յուսամ թէ շուտ կը վերջանայ, բայց նորէն կ'ըսեմ, Պ. Բասքալէն զգուշացիր։ Անթօնինը տեսնելէդ վերջը՝ դեռ շատ բաներ ունիմ ըսելիք քեզ։

— Դարձեա՛լ Անթօնին։ Քիչ մ'առաջ ալ անոր խօսքն ըրիր . . .։

— Այո՛, ասոնք բոլոր իրարու յարակից են. վաղը չէ միւս օր դու ալ կը հասկընաս։

— Ուրեմն վաղը չէ միւս օր կը տեսնուինք, սիրելիս Սոֆի, կը խոստովանիմ թէ հետաքրքրութիւնս սաստիկ կը գրգռուեաս, և ի զուր կը ջանամ հասկնալ թէ ի՞նչ վերաբերութիւն կրնայ ըլլալ Անթօնինի և Էլիզէի, Անթօնինի և այդ անշահ Պ. Բասքալի միջև։

Գործարանին ժամացոյցը երեք ու կէս զարկաւ։

— Տէ՛ր Աստուա՛ծ, ո՛րքան ուշ մնացեր եմ, ըսաւ Մատլէն իւր բարեկամուհուոյն։ Ուրեմն երթամ, բայց նախ կ'ուզեմ տղաքդ համբուրել։

Երկու կանայք սրահէն դուրս ելան։

Ընթերցողին հետ երթանք նորէն յէլիզէ-Պուրպոն, ուր արքիդուքսը առանձին ձգեցինք՝ Պ. Բասքալի երթալէն վերջը։

ԺԲ.

Արքիդուքսն մտազբաղ կը շրջէր իւր սենեկին մէջ, մինչդեռ իւր քարտուղարը նոյն օրն ընդունուած նամակները մի առ մի բանալով, կը մեկնէր իրեն։

— Այս նամակն, տէ՛ր, կը վերաբերի Բէրնէթթի գնդապետին, որ իւր ընտանեօք Անկլիա աքսորուած է. կը փութան ծանուցանել Ձեր վսեմութեան որ, գընդապետ Բէրնէթթի բարեկամաց աղաչանքներուն մտիկ չընէք։

— Այդ յանձնարարութեան պէտք չը կար։ Այս մարդուն հասարակապետական սկզբունքներն չափազանց վտանգաւոր ըլլալով, անկարելի է որ ի նպաստ իրեն եղած ո՛և է աղաչանք մտիկ ընեմ։ Շարունակեցէ՛ք։

— Ն. վսեմութիւն, Մէքսիկեան հանրապետութեան լիազօր դեսպանն իւր հայրենակցուհիներուն մին Ձեր վսեմութեան ներկայացնելու շնորհն կը խնդրէ։ Խնդիրն շատ կարեւոր բանի մը համար է եղեր, և կը խնդրեն որ, եթէ հնար է, վաղն բարեհաճիք զիրենք ընդունիլ։

— Վաղուան ներկայանալի անձինք շա՞տ են։

— Ո՛չ, տէր։

— Գրեցէք որ վաղը, ժամը երկուքին պիտի ընդունիմ Մէքսիկայի Պ. դեսպանն և նորա հայրենակցուհին։

— Քարտուղարը գրեց։

Քիչ մը վերջը արքիդուքսն ըսաւ.

— Նամակին մէջ յիշուա՞ծ է այն կնոջ անունն, որ կը փափաքի ինձ ներկայանալ։

— Ո՛չ, տէր։

— Ասի ամէն պատշաճութեան դէմ է. չեմ ընդունիր զինքը։

Քարտուղարը մէկ կողմ դրաւ գրելու սկսած նամակը, և ուրիշ թերթ մը թուղթ առաւ։

Սակայն իշխանը, քիչ մը խորհելէ վերջը, ըսաւ.

— Թո՛ղ դան։

— Քարտուղարն գլուխը ծռեց և ուրիշ նամակ մ՚առնելով, ոտքի ելաւ և առանց բանալու, իշխանին տուաւ և ըսաւ.

— Պահարանին վրայ անշնական ու գաղտնի գրուած է, տէ՛ր։

Արքիդուքսը նամակն առաւ ու կարդաց. այս նամակը, զոր Պ. Բասքալ գրած էր, հետեւեալ բոլորովին մտերմական տողերն կը պարունակէր։

Լաւ մը խորհեցայ, Տէ՛ր, և փոխանակ հինգշաբթիի, վաղը, ժամը երեքի միջոցին պիտի դամ ձեզ տեսնելու, և մեր տեսակցութեան միջոցին գործին լմննալն ու սորագրելուն բոլորովին ձեր ձեռքն է։

Ձեր անձնուէրն

ԲԱՍՔԱԼ.

Իշխանը պահ մը ծայրայեղ ուրախութեան անձնատուր եղաւ, բայց յիշելով Պ. Բասքալի արտակերդրոն բնաւորութիւնն, պաղութեամբ ըսաւ.

— Վաղը ժամը երեքին Պ. Բասքալը պիտի ընդունիմ, չի մոռնաք նշանակելու։

Զինակից մը ներս մտնելով, հարցուց թէ իշխանը կրնա՞յ Պ. Ֆրանց տը Նէօպէրկ կոմսն ընդունիլ։

— Հապա՛, ըսաւ արքիդուքսն։

Եւ քանի մը վայրկեան ևս իւր քարտուղարին հետ աշխատելէ վերջը, հրամայեց որ Ֆրանցը ներս մտցնեն։

Ֆրանց չիկնելով ներկայացաւ իշխանին որ իւր կնքահայրն էր, վասն զի Ֆրանց չափազանց երկչոտ և այնքան ամօթխած էր որ մեր քսան տարեկան սրիկայներն պիտի խնդային վրան, եթէ զինքը տեսնէին. արքիդքսին բազմաթիւ ՝կալուածներէն միոյն մէկ գիւղին խորը բողոքական հովուի մը ձեռքը մեծնալով, իշխանին սանը 16 տարեկան էր երբ այդ մենութենէն ելնելով մտաւ ազնուականաց սահմանեալ զինուորական դպրոցն։

Անտի Ֆրանց, իշխանին հրամանաւն իբր կամաւոր զինուոր մտաւ Ռուսաց բանակն, Կովկասու պատերազմի միջոցին. բանակին խիստ կարգապահութիւնը, իւր հրամանատարն եղող ծերունի զօրապետին բծախնդրութիւնն, կատաղի պատերազմի մը միջոցին ճակատամարտի դաշտերու տեսքը՝ քաջ, բայց մելամաղձոտ և փափուկ հոգիներու վրայ ըրած տխուր և լուրջ տպաւորութիւնն, մտածմանց այն սովորական ծանրութիւնն, որ մեծամեծ վտանգներու մէջ արհամարհեալ մահուան մը կարելիութեանն արդիւնքն է, իւր ծընընդեանը գաղտնիքը, որու կը միանար հօր կամ մօր գգուանաց անուշութիւնն զգալու անկարելիութիւնն, վերջապէս ամէն բան օգնած էր Ֆրանցն անանկ պարագայից մէջ դնելու միշտ, որք չէին կըրնար իւր բնաւորութեան երկչոտութիւնը և մանկան մը սրտին պէս անկեղծ ու բարի սրտին անբծութիւնը ջնջել. Ֆրանցի դիւցազնական քաջութեանն կը յաջորդէր ծայրայեղ և անյաղթելի ամչկոտութիւն մը՝ կենաց առօրեայ յարաբերութիւններուն մէջ։

Ասկէց զատ, խոհեմութիւն համարէ՛ կամ՝ հեռատեսութիւն, իշխանը արքունիքէն հեռու պահեց զՖրանց, երբ սա վեց ամիս Ալմանեա կեցաւ։ Այս որոշումն լաւ կը յարմարէր տղուն պարզ և ուսումնասէր ճաշակին, վասն զի անոր երազած երջանկութիւնն հանդարտ ու անծանօթ

կեանքի մը մէջ աշխատիլն էր, իշխանին համար երախտագիտութիւն, հնազանդութիւն և յարգական սէր կզգար, զորս կը վախնար չափէ աւելի երեւան հանել այս արքունի պաշտպանին առջեւ։

Ֆրանց, քարտուղարին դուրս ելնելէն վերջը՝ իւր կնքահօրն ներկայացած ատեն այնպէս շուարած էր որ, նախ լուռ և անշարժ մնաց, աչքերը գետին խոնարհած։

Բարեբաղդաբար, իշխանը երիտասարդը տեսած ատեն, կարծես մոռցաւ իւր տաժանելի մտաղբաղումներն. իւր պաղ և հպարտ դէմքն գորովեցաւ, ճակատն պայծառացաւ. փափուկ ժպիտ մ'անցաւ շրթանցն վրայէն և գորովանօք ըսաւ Ֆրանցի.

— Բարի լո՛յս, տղա՛ս։

Եւ երիտասարդին խարտեաշ գլուխն երկու ձեռացը մէջ առնելով, ճակտէն համբուրեց. ապա, կարծես թէ սիրտը կիսովին պարպելու պէտքն զգալով՝ ըսաւ.

— Գոհ եմ քեզ տեսնելուս, Ֆրա՛նց. այս առաւօտ շատ գործ, շատ տխուր գործեր ունեցայ։ Օ՛ն, թեւս մտիր, երթանք միասին անգամ մը պարտէզը շրջագայինք։

Ֆրանց պարտէզին սանդուղը տանող ապակիէ դռներէն մին բացաւ և կնքահայր ու սան, թեւ թեւի, սկսան երթալ դէպ ի այն հովանոցաւոր ծառուղին, ուր երիտասարդը երկար ատեն պտտկեր էր առաւօտուն։

— Բայց ի՞նչ ունիս, տղաս, ըսաւ իշխանը, երիտասարդին չփոթութիւնն նշմարելով։

— Տէ՛ր, պատասխանեց Ֆրանց, ևս քան զեւս շուարելով, գաղտնիք մ'ունիմ Ձեր վսեմութեան յայտնելու։

— Գաղտնի՞ք մը, յարեց իշխանը ժըպտելով։ Տեսնենք սա Պ. Ֆրանցին գաղտնիքն։

— Ծանր գաղտնիք մը, տէ՛ր։

— Տեսնենք այդ ծանր գաղտնիքն։

— Տէ՛ր, ես ծնողք չունիմ. Ձեր վսեմութիւնն բարեհաճեցաւ ցայսօր խնամել զիս։

— Դու ալ բոլոր խնամքներս ուրոյներս ի դերեւ չի հանեցիր, սիրելիս Ֆրանց։ Երբ տարի առաջ, թէեւ տակաւին շատ մատաղ էիր, քաջութեամբ և իմաստութեամբ մարտնչեցար այն սոսկալի պատերազմին մէջ, ուր զրկեցին զքեզ, որպէս զի վարժուիս։ Հոն մկրտուեցար հրով և առաջին վէրքդ ընդունեցար, սիրելի տըղաս։ Զգենք այն մենամարտութիւնը, զոր չեմ ուզեր յիշել, և որու մէջ ո՛րքան քաջութիւն, նոյնքան ալ վեհանձնութիւն ցոյց տուիր։

— Տէ՛ր. . .

— Կ'աղաչեմ, թո՛ղ որ այս միջոցիս միտքս բերեմ քու բոլոր արժանիքդ, վասն զի ադով կը մոռանամ դառն տաղտկութիւններն, որոց ակամայ և անմեղ պատճառն դու ես։

— Ե՞ս, տէր։

— Դու, վասն զի երթէ այսպէս շարունակ զիս գոհ ընես, չես կրնար դուշակել թէ ի՞նչ ապագայ կը պատրաստեմ քեզ և թէ ի՞նչ անակնկալ վիճակի մը պիտի հասնիս դուցէ։

— Տէ՛ր, գիտէք որ ես պարզ ճաշակի տէր եմ, և . . .

— Սիրելիս Ֆրանց, այդ պարկեշտութիւնք և համեստութիւնը առաքինութիւն կրնան սեպուիլ երբեմն, բայց երբեմն այդ առաքինութիւնները տկարութիւն և վատութիւն են։ Բայց գաղտնիքէն հեռացանք։ Տեսնենք, ի՞նչ պիտի ըսես ինձ։

— Տէ՛ր. . .

— Օ՛ն խօսէ՛. միթէ ինչ կը վախնա՞ս։ Մի թէ քու սրտիդ մէջ կրնա՞յ այնպիսի բան մը գտնուիլ, զոր չի կարենաս ճակատա-

բաց խոստովանիլ։

— Ո՛չ, տէ՛ր։ Ուստի բացէ ի բաց պիտի ըսեմ Ձեր վսեմութեան թէ կ՚ուզեմ ամուսնանալ։

Եթէ կայծակն իյնար իշխանին ոտքին առջև՝ այնքան չպիտի շուարէր, որքան որ շուարեցաւ Ֆրանցի այս խօսքերն լսելով. մէկէն իմէկ թևք քաշեց երիտասարդին թևէն, երկու քայլ ետ գնաց ու գոչեց.

— Ամուսնանա՞լ, Ֆրանց։

—Այո՛, տէ՛ր։

— Խե՞նթ էք։

— Տէ՛ր . . .

— Քսան տարու ամուսնանա՛լ, երբ ես ձեզ համար . . .

Ապա, իշխանն իւր հանդարտութիւնն ու պաղութիւնը ձեռք առնելով՝ ըսաւ.

—Որո՞ւ հետ կ՚ուզէք ամուսնանալ, Ֆրանց։

— Օրիորդ Անթօնին Հիւպէրի հետ, տէ՛ր։

— Այդ օրիորդ Հիւպէրն ո՞վ է։ Անունն ի՞նչ է քսիք։

— Հիւպէր, տէ՛ր։

— Այ օրիորդ Հիւպէրն ո՞վ է։

— Պ. Հիւպէր նախագահին եղբօրաղջիկը, տէ՛ր։

— Այդ օրիորդն ո՞ւր տեսաք։

— Հոս, տէ՛ր։

— Հո՞ս։ Ես երբեք այդ անունով մարդ չընդունեցայ։

— Այս ծառուղւոյն մէջ ըսել կ՚ուզեմ, տէ՛ր։

— Յստակ խօսեցէ՛ք։

— Ձեր վսեմութիւնը կը տեսնէ՞ սա ցած պատը, որ քովի պարտէզը կը պատէ . . .

— Էհ։

— Այս ծառուղւոյն մէջ կը շրջագայէի, տէր, երբ առաջին անգամ տեսայ օրիորդ Անթօնինը։

— Այս պարտէզի՞ն մէջ, յարեց իշխանը՝ մինչև պատը երթալով և քովի պարտէզը նայելով. ապա ըսաւ.

— Ըսել է այդ օրիորդը քովի տո՞ւնը կը բնակի։

— Այո՛, տէ՛ր, իւր հօրեղբայրը դեսնայարկին մէկ մասը վարձած է։

— Խիստ աղեկ։

Պահ մը մտածելէ վերջը, իշխանը խստիւ ըսաւ.

— Ոգեցիք ձեր գաղտնիքներն յայտնել ինձ, լա՛ւ. բայց անկեղծօրէն խօսելու է, ապա թէ ո՛չ . . .

— Տէ՛ր, ըսաւ Ֆրանց տաժանելի զարմացման ձայնով մը։

— Իրաւունք չ՚ունէի ձեր անկեղծութեանը վրայ կասկածելու, Ֆրանց. երբեք կեանքերնուդ մէջ սուտ խօսած չ՚էք. ուստի խօսեցէ՛ք, մտիկ կ՚ընեմ։

— Ձեր վսեմութիւնը գիտէ որ, Բարիզ գալերնուս ի վեր, շատ քիչ անգամ երեկոյներն դուրս կ՚ելլեմ։

— Իրաւ է. ես գիտէի որ դուք ընկերութիւնը շատ չ՚էք սիրեր և այնքան երկչոտ էք որ, չպիտի համարձակիք Ֆբռանսական սրահներու մէջ ներկայանալ. այս մասին չ՚ուզեցի միջամտել, Ֆրանց, և թողուցի որ երեկոյներն ուզածնիդ ընէք։

— Վեց շաբաթ կայ, տէ՛ր, այսպէս երեկոյ մը օրիորդ Անթօնինը տեսայ քովի պարտէզին մէջ։ Նա ծաղիկներ կ՚ոռոգէր, ես այս պատին կռթներ էի. զիս տեսաւ և ես զինքը բարևեցի. կարմրելով բարևիս պատասխանեց և սկսաւ ծաղիկ ջրելը շարունակել. երկու անգամ ևս իմ կողմս նայեցաւ։ Նորէն զիրար բարևեցինք. ապա, բոլորովին մթնելով, օրիորդ Անթօնին պարտէզէն քաշուեցաւ։

Անկարելի է բացատրել այն անբիծ շնորհն, որով Ֆրանց պատմեց իւր այս առաջին տեսութիւնը։ Զայնին այլայլութիւնը, ճակտին կարմրութիւնը այս անբիծ հոգւոյն բովանդակ անմեղութիւնն ցոյց կուտային։

— Ֆրանց, բան մը պիտի հարցնեմ, ըսաւ Իշխանը. այդ օրիորդին մայրը ո՞ղջ է։

— Ո՛չ, տէ՛ր. օրիորդ Անթօնին օրորոցին մէջ եղած ատեն մայրը կորսուցաւ, և հօրը մեռնելն ալ շատոնց է։

— Իւր հօրեղբայրն, Պ. Հիւպէր նախագահը, ամուսնացա՞ծ է։

— Ո՛չ, տէ՛ր։

— Քանի՞ տարու կայ այդ օրիորդն։

— Տասնեհինգու կէս, տէ՛ր։

— Գեղեցի՞կ է։

— Անթօնի՞ն, տէ՛ր . . .

Ֆրանցի այս հարցման մէջ կէս յանդիմանութիւն մը կար, իբրև թէ ներելի չէր օրիորդ Անթօնինի գեղեցկութիւնը չի դիտնալ։

— Ֆրանց, ձեզի հարցուցի թէ այդ աղջիկը գեղեցի՞կ է մի, կրկնեց արքիդուքսը։

— Տէ՛ր, Ձեր վսեմութիւնը կը յիշէ Օֆէնպախի պալատին մէջի քնացած Հէբէն։

— Անիկայ Քօրրէժի գեղեցկագոյն գորգոց մին է։

— Տէ՛ր, օրիորդ Անթօնին՝ Քօրրէժի այդ պատկերին կը նմանի, թէև աւելի գեղեցիկ է։

— Ա՛տ քիչ մը դժուար է։

— Ձեր վսեմութիւնը դիտէ որ ես միշտ ճշմարիտ կը խօսիմ, պատասխանեց Ֆրանց։

— Պատմութիւննիդ շարունակեցէ՛ք։

— Ձեմ կրնար ըսել ձեզ, տէ՛ր, թէ ի՞նչ զգացի երբ, իմ սենեակս դառնալով՝ օրիորդ Անթօնինը մտածեցի. թէ յուզուած և թէ երջանիկ էի։ Գիշերը բնաւ չի քնացայ. լուսինը ծագեցաւ, պատուհանս բացի, և մինչև լոյս պատշգամէն օրիորդ Անթօնինի պարտէզին ծառերուն նայեցայ։ Ո՛հ տէ՛ր, յաջորդ օրն ո՛րքան երկար երևցաւ ինձ — դեռ արևը մարը չի մտած, հուսա, պատին քովը էի։ Վերջապէս օրիորդ Անթօնին եկաւ իւր ծաղիկներն ոռոգելու։ Ամէն վայրկեան, կարծելով որ զիս տեսաւ, կը պատրաստուէի զինքն բարևելու, բայց, չ՚եմ գիտեր ինչպէս եղաւ որ զիս չի տեսաւ։ Սակայն եկաւ ճիշդ պատին քովի ծաղիկները ոռոգելու։ Կուզէի թեթև մը հազալ, որպէս զի հոն ըլլալս հասկցնեմ, բայց չի համարձակեցայ։ Կը մթնէր, իմ ալ սիրտս կը սեղմուէր, տէր, իսկ օրիորդ Անթօնին դեռ զիս չ՚էր տեսնէր։ Վերջապէս իւր ցնցուղն աղբիւրին քով դնելով՝ տուն դարձաւ. բարեբաղդաբար, անշուշտ ցնցուղին տեղը գեշ երևնալով իրեն, ետ դարձաւ և պատին քովի նըստարանին վրայ դըրաւ։ Այն ատեն դիպուածաւ աչքը իմ կողմն դարձնելով, վերջապէս տեսաւ զիս։ Զիրար բարևեցինք, տէ՛ր, և նա շուտ մը տուն դարձաւ։ Այն ատեն քանի մը գեղեցիկ վարդ ժողուեցի և, թէև սիրտս ուժգին կը բաբախէր, չանալով ձախաւել չ՚երևնալ, յաջողեցայ չինած փունջս օրիորդ Անթօնինի ցնցուղին բերանը նետել։ Սենեակս դառնալով, սոսկացի, երբ միտքս բերի թէ ի՞նչ պիտի ըսէ այն ծաղիկները տեսած ատեն, այնքան որ ուզեցի վար իջնալ, պատէն անդին ցատկել և փունջը առնել։ Ձեմ գիտեր ինչ բան չի թողուց զիս։ Ցուսացի որ օրիորդ Անթօնին դուցէ չ՚առնուիր։ Ի՞նչ անհանդիստ գիշեր մ՚անցու-

ցի, տէ՛ր։ Յաջորդ օրը պարտէզ վազեցի. ցնցուղն ու փունջը նստարանին վրայ էին, բայց ի զուր օրիորդ Անթօնինի գալուն սպասեցի, նա ոչ այն երեկոյին և ո՛չ յաջորդ օրը եկաւ ծաղիկները նայելու։ Այս երեք աւուր միջոցին զգացած անձկութիւններս, տէ՛ր, չեմ կրնար նկարագրել ձեզ, և իմ վիշտս պիտի հասկնայիք, եթէ այն միջոցին հոս ըլլայիք։

— Անշուշտ արքունեաց հետ Ֆոնթէնըպլօ գացած ատենս էր։

— Այո՛, տէ՛ր։ Բայց ներեցէ՛ք, մի՛ գուցէ Ձեր վսեմութեան համբերութիւնն հատցընեմ։

— Հ՛է, ո՛չ, Ֆրանց, շարունակեցէ՛ք. կուզեմ ամէն բան գիտնալ։ Օ՜ն, ձեր պատմութիւնն շարունակեցէ՛ք միևնոյն անկեղծութեամբ։

ԺԳ.

Ֆրանց տը Նէօպէրկ, Արքիդքքսին հրամանաւն, իւր պատմութիւնը շարունակեց հիանալի պարզութեամբ մը։

— Օրիորդ Անթօնին երեք օրէ ի վեր չ'էր երևցած, տէ՛ր. տրխուր և յուսահատ էի, սակայն սովորական ժամուն նորէն պարտէզ գացի. ի՛նչ եղաւ իմ զարմանքս և ուրախութիւնս երբ տեսայ որ օրիորդ Անթօնին նստարանին վրայ նստեր է։ Վարդի փունջն, որ արդէն թօշներ էր, ձեռքն էր բռնած, գլուխը ծռեր էր, վիզն ու մազերուն արմատը միայն կը տեսնէի. ինքը հոն ըլլալս չ'էր գիտեր. շունչս բռնելով անշարժ կեցայ, վասն զի կը վախնայի որ հոն ըլլալս իմանալով կ'ելլէ կ'երթայ։ Վերջապէս սիրտ առի և դողալով ըսի իրեն, որովհետև առջի անգամն էր որ հետը կը խօսէի. «Բարիրի՛կո՛ւն, օրիորդ։» Նա ևս սարսռաց. այն ատեն թօշնած փունջը ձեռքէն ինկաւ. Անթօնին զայս չի նշմարեց, և առանց դիրքը փոխելու, առանց գլուխը վեր վերացընելու, ցած և այլայլեալ ձայնիւ պատասխանեց. «Բարիրիկո՛ւն, պարո՛ն։» Տեսնելով որ կը բարեհաճի ինձ պատասխանել, տէ՛ր, ըսի. «Երեք օր է որ ձեր ծաղիկները ջրելու չ'եկաք, օրիորդ։ — Իրաւ է, պարո՛ն, յարեց դողդոջուն ձայնիւ, քիչ մը... տկար էի։ — Ո՜հ, տէ՛ր Աստուած, գոչեցի անանկ սոսկմամբ մը որ օրիորդ Անթօնին պահ մը գլուխը իմ կողմս դարձուց։ Արդարև զինքը շատ դեղնած տեսայ, տէ՛ր. բայց նորէն իւր առջի դիրքն առաւ և իւր վիզը միայն տեսայ, որ թեթև մը դարմրեցաւ։ «Հիմայ, օրիորդ, աղե՞կ էք։ — Այո՛, պարո՛ն,» ըսաւ ինձ։ Ապա, հոահ մը լուռ մնալէ վերջն, ըսի. «Ըսել է պիտի կարենաք ամէն երեկոյ ձեր ծաղիկները ջրելու գալ։ — Չեմ դիտեր, պարո՛ն, բայց կը յուսամ։ — Չ'է՞ք վախնար որ, հիւանդութենէ նոր ելած, երեկոյեան զովութիւնը վնաս է ձեզ։ — Իրաւունք ունիք, պարո՛ն, ես չ'էի մտածեր, պատասխանեց, շնորհակալ եմ։» Արդարև, տէ՛ր, առաւօտուն անձրև եկեր էր և օդը շատ զով էր։ Նստարանէն ելած միջոցին, ըսի իրեն, «Օրիորդ, կ'ուզէ՞ք ինձի տալ սա թօշնած փունջն, որ ձեր ոտից տակ ինկաւ։» Զայն գետնէն առաւ, առանց ձայն հանելու, առանց գլուխը վեր վերցնելու և առանց երեսս նայելու՝ ինձ երկնցուց զայն. գանձի մը պէս առի զայն, տէ՛ր, և քիչ վերջն օրիորդ Անթօնին ճամբուն ծայրէն անհետացաւ։

Իշխանը ուշադրութեամբ մտիկ կ'ընէր իւր սանին ըսածները։ Այս պատմութեան

անբծութիւնն անոր անկեղծ ըլլալը կ'ապացուցանէր։ Մինչև այն ատեն չկար կէտ մը որ կարծել տար թէ Ֆրանց խաղալիկ եղած ըլլայ օտարաց սոսկում պատճառող բարիզցի պչրուհիներէն մէկուն, կամ բաղտախնդիր աղջկան մը.

քսան տարու էր), արդէն խոր արմատ բռնած ըլլալու էր իրենց սրտին մէջ։

Ֆրանց, տեսնելով որ Իշխանին կերպարանքը ևս քան զևս կը խոժոռի, և նայուածքը վերստին ցուրտ երևոյթ մը կ'առնու, շուարած մնաց։

Պիտի մնամ . . . ապահով եղի՛ք, Անբծմին Երես 68

բայց աւելի ծանր վախ մը եկաւ վրան. ասանկ սէր մը, որ ի հարկէ մաքուր ու անբիծ մնացած էր, նոյն իսկ իւր անբծութեանն պատճառաւ, որ ամէն խղճի խայթ ի բաց կը վանէր երկու տղոց սրտէն (մին տասն ևհինգու կէս և միւսը

— Ըսել է, յարեց Արքիդուքսն հեգնաբար, կուզէք ամուսնանալ անանկ աղջկան մը հետ, որու չէնք չնորհք չորս խօսք ըսած չ'էք, և որու հաղուագիւտ գեղեցկութիւնն, ինչպէս որ կ'ըսէք, ձեր գլուխը դարձուցեր է։

— Կը յուսամ որ պիտի յաջողիմ ձեր արքունի Վսեմութեան հաւանութիւնն ստանալ օրիորդ Անթօնին Հիւպէրի հետ ամուսնանալու համար, վասն զի կը սիրեմ զինքը, տէր, և մեր ամուսնութիւնը չի կրնար եւ ետ մնալ։

Այս խօսքերն Ֆրանց, հակառակ իւր սովորական երկչոտութեանն, հաստատամտութեամբ շեշտելուն, իշխանը սարսռաց, և կարծեց թէ սխալեր էր՝ երիտասարդին սէրը գերմանական առածի կարգ անցած մաքուր սէրերէն մին համարելով։

— Եւ պարո՞ն, գոչեց սպառնալից ձայնիւ, ի՞նչու համար այդ ամուսնութիւնը չի կրնար եղեր ետ մնալ։

— Վասն զի ես պատուաւոր մարդ եմ, տէ՛ր։

— Պատուաւոր մա՛րդ։ Դուք կամ անպատիւ մարդ մ՚էք և կամ զոհ մը։

— Տէ՛ր։

— Կամ տան և հինգ տարեկան աղջկան մը անմեղութիւնն չարաչար դրծեր էք և կամ ինքը ձեզ խաբեր է։ Գիտցէք որ բարիզուհիք շատ ճարպիկ են ամուսիններ ձեռք ձգելու արհեստին մէջ։

Ֆրանց պահ մը լռութեամբ իշխանին երեսը նայեցաւ, բայց առանց այլայլութեան կամ բարկութեան, և այնպէս մը որ կարծես այդ խօսքերուն իմաստն ո՛չ իր սիրոյն և ո՛չ պատուոյն կրնար վնասել։

— Ներեցէ՛ք, տէ՛ր, քսաւ, ըսածնիդ չ՚եմ հասկնար։

Ֆրանց անանկ անկեղծութեամբ արտասանեց այս բառերն որ, իշխանը, ևս քան զևս զարմանալով՝ ուշադրութեամբ երիտասարդին նայեցաւ ու ըսաւ։

— Չ՚քսե՞ք որ այդ օրիորդին հետ ձեր ամուսնութիւնը չի կրնար ետ մնալ։

— Այո՛, տէր, և ձեր արքունի Վսեմութեան հրամանաւն՝ չպիտի մնայ։

— Ըսել է եթէ ետ մնայ, ձեր պատուոյն կը դպչի։

— Այո՛, տէր։

— Եւ ինչո՞ւ համար օրիորդ Անթօնին հետ չ՚ամուսնանալնիդ ձեր պատուոյն պիտի դպչի։

— Վասն զի առաջի երկնից երդում ընինք որ իարու ըլլանք, տէ՛ր, պատասխանեց Ֆրանց եռանդեամբ։

— Իշխանը կէս մը ապահովեցաւ, բայց յարեց.

— Է՛յ, ի՞նչ պարագայի մէջ ընինք այդ երդումն։

Վախնալով որ ձեզ դժգոհութիւն կը պատճառեմ կամ կը տաղտկացնեմ, տէ՛ր, պատմութիւնս ընդհատեցի։

— Շարունակեցէ՛ք ուրեմն։

— Տէ՛ր, կը վախնամ որ . . .

— Շարունակեցէ՛ք, բայց ամենևին բան մը զանց մ՚ընէք, կուզեմ ամէն բան իմանալ։

— Շատ հեղ օրիորդ Անթօնինի հօրեղբայրն երեկոյները դուրս կ՚ելլէր, և օրիորդն առանձին կը մնար, տէ՛ր։ Եղանակն այնքան գեղեցիկ էր որ, օրիորդ Անթօնին այդ երեկոյներն պարտէզը կ՚անցնէր։ Երկուքս ալ համարձակութիւն առեր էինք. շատ անգամ երկար բարակ կը խօսէինք, ինքը նստարանին վրայ նըստած, ես ալ պատին կռթնած. այսպէսով նա ամբողջ կեանքն պատմեր էր ինձ. ես ալ իմ կանքս նկարագրեցի իրեն, մանաւանդ ձեզ համար ունեցած խոնարհ սէրս, տէր։ Այսպէսով օրիորդ Անթօնին ալ այս պահուս խոր երախտագիտութիւն մը կ՚ղդայ Ձեր արքունի Վսեմութեան համար։

Ֆրանցի պատմութեան այս կտորին ոտքի ձայն մ՚ելլելով, իշխանին ուշադրութիւնը գրաւուեցաւ. ետին դարձաւ,

և տեսաւ որ իւր զինակնաց մին կուգար, բայց յարգանօք հեռուն կեցաւ. արքիդուքսն նշան մ՚ընելով՝ սպայն քիչ մը մօտեցաւ։

— Ի՞նչ կայ, պարո՛ն, հարցուց իշխանը։

— Ն. Վսեմութիւն պատերազմական գրծոց պաշտօնեայն եկաւ, և ըսաւ թէ ձեր Վսեմութիւնն Ապիկար զինուորաց օթեւանը տանելու պատրաստէ։

— Ըսէ՛ք Ն. Վսեմութեան որ հիմայ կուգամ։

Երբ զինակիցն կը հեռանար, իշխանը ցուրտ կերպով մը Ֆրանցի ըսաւ.

— Ձեր սենեակը քաշուեցէ՛ք, պարո՛ն, և մինչև մեկնած ատենիդ անկեց դուրս մի՛ ելլէք։

— Մինչև մեկնած ատե՞նս, տէր։

— Այո՛։

— Բայց ո՞ւր պիտի ղրկէք զիս, տէ՛ր, հարցուց Ֆրանց յուսահատ։

— Կը տեսնէք. ձեզ Պիւթլէր հաղաբապետին պիտի յանձնեմ. քսան և չորս ժամ չ՚անցած Բարիզէն պիտի հեռանաք։

— Շնո՛րհ, տէր, գոչեց Ֆրանց պաղատանօք և կարծես լսածին չի հաւատալով. գթացէ՛ք ինձի և մի՛ ստիպէք որ մեկնիմ։

— Սենեակնիդ քաշուեցէք, ըսաւ իշխանը զինուորական խստութեամբ, և ձեռօք նշան ընելով որ առաջ անցնի, ես տուած հրամանս բնաւ ետ չ՚եմ առներ։ Հնազանդեցէ՛ք։

Ֆրանց դլխիկոր իւր սենեակը դնաց, որ պալատին առաջին յարկն էր, Արքիդքսին բնակարանին մօտ և պարտէզին վրայ։ Ժամը եօթնին ճաշ բերին երիտասարդ բանտարկելոյն, բայց բնաւ ձեռք չի դպցուց։ Երբ գիշեր եղաւ, Ֆրանց զարմանօք և միանգամայն ցաւօք լսեց որ դուռը վրայէն կը կղպեն. կէս գիշերուն, երբ պալատին մէջ ամէն մարդ կը քնանար, կամաց մը պատուհանը բացաւ, պատշգամը ելաւ, ապա, դուրս ծռելով, գաւազանով մը գետնայարկի պատուհաններէն մէկուն փեղկը բացաւ և հոնգկոխելով, գետին ցատկեց, հասաւ հովանուտ ծառուղին, ցած պատէն անցաւ և Անթօնինի բնակած տանը պարտէզը մտաւ։

Թէև թանձր ամպեր լուսինը ծածկեր էին, ցայն վայր Անթօնինի և Ֆրանցի ժամադրութեան տեղի եղող մեծ ծառերուն տակ անոյշ լոյս մը կար. քանի մը վայրկեան վերջը, հեռուէն սպիտակ բան մը նշմարեց, որ արագ արագ կը յառաջանար. նորատի աղջիկն շուտ մը հասաւ երիտասարդին քով և հապշտապ ձայնիւ ըսաւ անոր.

— Մէկ վայրկենի համար գոնէ եկայ, որպէս զի անհանգիստ չ՚ըլլաք, Ֆրանց։ Հօրեղբօրս պահ մը թմրելէն օգուտ քաղեցի, շատ հիւանդ է, ես չ՚եմ կրնար երկար ատեն քովէն հեռանալ։ Մնաս բարո՛վ, Ֆրանց, ըսաւ Անթօնին հառաչելով, շատ տխուր բան է այսպէս շուտ բաժնուիլն, բայց հարկէ։ Մնաս բարո՛վ, կարելի է վաղը կը տեսնուինք։

Երիտասարդը իւր սիրուհւոյն ըսելիքին վրայ մտածելով՝ չի կրցաւ անոր խօսքն ընդմիջել. ապա, հառաչանօք ընդհատեաց ձայնիւ, գոչեց.

— Անթօնի՛ն, կորսուեցանք։

— Կորսուեցա՛նք։

— Պիտի մեկնիմ...

— Դո՛ւք...

— Իշխանը այսպէս հրամայեց։

— Ա՛հ, Աստուա՛ծ իմ, մրմնջեց Անթօնին դեղնելով և դեղձկական նստարա-

նին կռթնելով, ա՜հ, Աստուա՜ծ իմ։

Եւ չկրնալով ուրիշ խօսք մ՚արտասանել, սկսաւ լալ։ Վայրկեան մը լռութենէ վերջը՝ ըսաւ.

— Դուք կը յուսայիք որ իշխանը կը հաւանի, անանկ չէ՞, Ֆրանց։

— Աւա՜ղ, կը յուսայի որ, երբ ձեզ որքան սիրելս և ձեր այս սիրոյն ո՛րքան արժանի ըլլալս իմանայ՝ հաւանութիւն կուտայ։ Բայց իշխանն անողոք գըտնուեցաւ։

— Մեկնի՛լ, բաժնուի՛լ, Ֆրանց, մրմնջեց Անթօնին՝ վշտաբեկ ձայնիւ, բայց այդ անհնար է. մեզ իրարմէ բաժնել ուզելն, երկուքնիս ալ մեռցնել է . . . ։ Մի՞թէ իշխանը կրնա՞յ ասանկ բան մ՚ընել։

— Իր կամքն անդառնալի է. ինչ որ ալ ըլլայ, գոչեց Ֆրանց՝ նորատի աղջկան ոտքն իյնալով, այո՛. թէ և հոս օտար եմ, ընտանիք չունիմ . . . բայց պիտի մնամ իշխանին կամացն հակառակ։ Ապահով եղե՛ք, Անթօնին։

Ֆրանց չի կրցաւ շարունակել. հեռուէն լոյս մը տեսաւ, և ձայն մ՚անձկութեամբ կը գոչէր։

— Օրիորդ Անթօնի՛ն։

— Աստուա՞ծ իմ, հօրեղբօրս խնամածուն գիս կը փնտռէ. գոչեց նորատի աղջիկն, և խօսքը Ֆրանցի ուղղելով, ըսաւ. Ֆրանց, թէ որ երթաք, ես ալ կը մեռնիմ։

Եւ Անթօնին վազեց դէպ ի այն կողմն ուսկից լոյսը երեւցեր էր։

Երիտասարդը յուսահատութեամբ ինկաւ նստարանին վրայ և դէմքը ձեռացը մէջ ծածկեց։ Քանի մը վայրկեան վերջը, լսեց որ ձայն մը Էլիզէի պարտէզէն զինքը կը կոչէր։

— Ֆրա՛նց։

Իշխանին ձայն ճանչնալով՝ սոսկաց. չէր սխալեր, երկրորդ անգամ իւր անունը լսեց։

Վախը, հնազանդութեան սովորութիւնը, արքիդքսին համար զգացած երախտագիտութիւնն ու յարգանքը զինքը մըղեցին ցած պատին մօտ. այս պատին ետին տեսաւ իշխանը լուսնի լուսով. այս վերջինն ցուրտ հեգնութեամբ մը ձեռքն անոր երկնցուց, որպէս զի վեր ելլէ։

— Քիչ մ՚առաջ վերադառնալով ձեր սենեակը մտայ, ըսաւ արքիդուքսն խրոստութեամբ, և չի գտայ զձեզ, պատուհաններէդ բաց գտնելով, հասկցայ ամէն բան. հիմա ետեւէս եկէ՛ք։

— Տէ՛ր, գոչեց Ֆրանց իշխանին ոտքն իյնալով և ձեռքերն առ նա երկնցնելով, տէ՛ր, մտիկ ըրէք . . . ։

— Պիւթլէր հաղարապե՛տ, ըսաւ իշխանն բարձրաձայն մութին մէջ կեցող անձի մը, կոմս Ֆրանցին հետ իւր սենեակը գացէք, մնաւ քովէն մի՛ զատուիք, և յիշեցէ՛ք որ զինքը ձեռնէ կ՚ուզեմ։

ԺԴ.

Նախորդ դէպքերու պատահած աւուր յաջորդ օրն, արքիդուքսը, միշտ համազգեստ հագած, իւր սենեակը կը գտնուէր, կէս օրէն վերջը ժամը երկուքի միջոցին, իւր զինակցած մին, որ 40՝տարեկան, հանդարտադէմ, հաստատամիտ մարդ մ՚էր. ոտքի վրայ կեցեր էր այն սեղանին քով, որու միւս կողմն իշխանը, սովորականէն աւելի խոժոռադէմ և խիստ նստեր գիր կը գրէր. գրած ատեն, առանց սպային երեսը նայելու։ անոր ըսաւ.

— Պլիւմ հարիւրապետը Ֆրանց կոմսին քո՞ջն է։

— Այո՛, տէր։

— Բժիշկը տեսա՞ք։

— Այո, տէր։

— Ի՞նչ ըսաւ կոմսին համար։

— Ըսաւ թէ շատ դոհացուցիչ վիճակի մէջ է, տէ՛ր։

— Կը կարծէ՞ որ Ֆրանց կոմսն կարենայ անվտանգ տոկալ ճամբու յոգնութեանց։

— Այո՛, տէր։

— Պիւթլէր հազարապե՛տ, հրաման տուր որ անմիջապէս ճամբու կառքերուս մին պատրաստեն։

— Լաւ, տէ՛ր։

— Այս իրիկուն ժամը վեցին Ֆրանց կոմսին հետ ճամբայ պիտի ելլէք, ահա՛ ձեր ուղեցոյցն, ըսաւ իշխանը՝ գրուած թուղթն իր զինակցին տալով։

Ապա յարեց.

Պիւթլէր հազարապետ, գոհունակութեանս ապացոյցն շուտով պիտի տեսնէք, եթէ անձնուիրութեամբ և հաստատամբտութեամբ կատարէք ձեզ յանձնած պաշտօնս։

— Ձեր վստահութիւնն կրնայ ապահով ելլալ։

— Գիտեմ, բայց Ֆրանց կոմսն, երբ մի անգամ իւր առաջին թմրութենէն ըսթափի, անշուշտ պիտի չանայ ճամբան ձեր հսկողութենէն փախչիլ և Փարիզ վերադառնալ։ Եթէ այս դժբաղդութիւնը պատահի, պարո՛ն, զգուշացէ՛ք, բոլոր բարկութիւնս ձեր վրայ կը թափեմ։

— Ապահով եմ որ Ձեր վստահութեան բարեացն անարժան չպիտի ելլամ։

—Ես ալ այդպէս կը յուսամ, պարոն։ Մինչեւ որ սահմանագլուխ հասնիք, օրը երկու անգամ գրեցէ՛ք ինձ։

— Խիստ լաւ, տէ՛ր։

— Երբ Հռենեան նահանգաց վրայ ոտք կոխէք, այս նամակն զինուորական իշխանութեան յանձնեցէ՛ք։

— Լա՛ւ, տէ՛ր։

— Երբ որոշեալ տեղն հասնիք, ինձ իմաց տուէք, և այն ատեն իմ հրամաններս կը հաղորդեմ ձեզ։

— Այս միջոցին դուռը թեթեւ մը զարնուելով, իշխանը հազարապետին ըսաւ.

— Տեսէք ո՞վ է։

Ուրիշ զինակից մը նամակ մը տուաւ սպային և ցած ձայնիւ ըսաւ.

— Մէքսիկայի Պ. դեսպանը տուաւ ինձ այս նամակը Ն. Վսեմութեան համար։

Եւ դուրս ելաւ։

Հազարապետն նամակը իշխանին տըւաւ և ուսկից եկած ելլալն ըսաւ։

— Վերատին կ'ըսեմ որ ամենամեծ հրաշկողութիւն ընելու է՛ք, Պիւթլէր հազարապետ. յարեց արքիդուքսն՝ դեսպանին նամակն առանց բանալու քովը դնելով. Ֆրանց կոմսն մինչեւ սահմանագլուխ տանելու խօսք կուտա՞ք։

— Պատուոյս վրայ խօսք կ'ուտամ, տէ՛ր։

— Գացէ՛ք, պարո՛ն, ես ձեր խօսքին կը հաւատամ, վասն զի անոր արժէքը գիտեմ։ Եթէ խօսքերնիդ պահելու ելլաք, չէք զղջար։ Ուստի ժամը վեցին պիտի մեկնիք, ամէն ինչ պատրաստել տըւէք անմիջապէս, ճամբու համար հարկ եղած ստակը Տիէսպախ պիտի տայ ձեզ։

Հազարապետն խոնարհեցաւ։

—Հէյտէլպէրկ գնդապետին ըսէք որ քանի մը վայրկեանէն Մէքսիկայի պարոն դեսպանն ու անոր հետ եկող կինը ներս մտցնէ։

— Լաւ, տէ՛ր։

Սպայն խոնարհաբար բարևեց և դուրս ելաւ։

— Իշխանն առանձին մնալով, սկսաւ ծանր ծանր նամակը բանալ և ինքնիրեն ըսել։

— Սա դժբաղդ երիտասարդը ազատելու է։ Ասանկ ամուսնութիւն մը յիմարութիւն է։ Ես ալ անմիտ եմ որ Ֆրանցի յիմար սիրոյն հետեւանքէն վախցայ, միթէ ամէն իշխանութիւն չունի՞մ իր վրայ։ Իւր վարմունքն բարկութիւն չազդեր ինձ, այլ դուրթ։

Այս խորհրդածութեան միջոցին իշխանը նամակը բացեր ու աչքէ անցուցեր էր. յանկարծ թիկնաթոռին վրայ ցատկեց իւր դէմքը բարկութեան երեւոյթ մ'առաւ և գոչեց.

— Միրանտայի մարքիզուհին, այն դըժոխային կինը որ դեռ Վերջերս այնքան գայթակղութիւն հաներ էր Պոլոնիոյ մէջ, դրեթէ յեղափոխութիւն մը, խեղճ կարդինալը ժողովրդեան կատաղութեանն ու ֆոհաներուն մատնելով։ Ո՜հ, չեմ ուզեր այս անշահ արարածն հոս ընդունիլ։

Զայս ըսելով՝ իշխանը դէպ ի դուռը վազեց, որպէս զի հրաման տայ որ մարքիզուհին ներս չի մտցնեն։

Բայց շատ ուշ էր։

Այն միջոցին փեղկերը բացուեցան, և Մատլէն ներս մտաւ՝ Մէքսիկայի դեսպանին հետ։

Դիւանագէտն, արքիդքսին ապշութենէն յառաջ եկած լռութենէն օգնելով, յարգանօք խոնարհեցաւ և ըսաւ.

— Տէ՛ր, յուսամ որ Ձեր վսեմութիւնն բարեհաճեցաւ երեկուան խնդրագրոյս մէջ զանց ըրած մէկ կարեւոր կէտս նկատողութեան չառնուլ, որու համար այսօրուան նամակաւս ներումն խնդրելու պատիւն ունեցայ. վասն զի պարտաւոր էի յիշել այն անձին անունը, որու համար ունկնդրութիւն մը կը խնդրէի Ձեր վսեմութենէն. այդ զանցառութիւնս դարմանեցի, հիմայ կը մնայ ինձ Ձեր վսեմութեան ներկայացնել տիկին տը Միրանտա մարքիզուհին, որ մեր երկրին նշանաւոր անուններէն մին կը կրէ, և զայն Ձեր վսեմութեան յանձնարարել։

Դիւանագէտն, իշխանին երկար լռութիւնն արձակուրդ մը համարելով, խոնարհեցաւ և հեռացաւ՝ ասանկ ցուրտ ընդունելութեան մը վրայ ապշելով։

Մարքիզուհին, ըստ սովորութեան, առջի աւուր պէս պարզ ու լայն հագուստներ հագած էր. միայն թէ դիպուած սեպէ կամ դիտմամբ, անկլիական բարակ քօղ մը անցած էր այսօր իւր սպիտակ էրէթէ գլխարկին վրայ և դէմքը գրեթէ ամբողջապէս կը ծածկէր։

Իշխանը, որու բարքն թէ՛ զինուորական անաչառութեամբ և թէ՛ կրօնական բծախնդրութեամբ տոգորեալ էր (Ֆրանցի մօրն համար զգացած սէրը իւր երիտասարդութեան առաջին և միակ յանցանքն եղած էր) իշխանը տեսակ մը զըզուանօք կը նայէր այս կնոջ որ, ըստ իրեն ամէնէն խոր և վտանգաւոր մոլութեան անձնաւորութիւնն էր. վասն զի կ'ըսուէր որ մարքիզուհին գլխաւորաբար պատկառելի և սրբազան անձինքը կը ջանար հըրապուրել. ասկէց զատ կարտինալին նըշանաւոր դէպքը անանկ ցաւալի հետեւանքներ ունեցեր էր՝ որ, քաղաքական վըրէժխնդրութեան զգացում մը աւելի ևս կը գրգռէր Մատլէնի դէմ ունեցած ատելութիւնն։ Ուստի հակառակ իւր ցուրտ այլ կիրթ քաղաքավարութեանն, ի սկզբան մտածեց կոպտութեամբ ճամբել այս կարևոր այցելուն, կամ, առանց ձայն

հանելու, արհամարհանօք քովի սենեակը քաշուիլ։ Բայց հետաքրքիր էր վերջապէս տեսնելու այս կինն, որու վրայ այնքան տարօրինակ բաներ կ'ըսուէին, և մանաւանդ ըստ արժանւոյն անոր հետ անարգանօք վարուելու փափագ ունենալով, ինքզինքը զսպեց. բայց փոխանակ Մատլէնի աթոռ մը տալու, որ իւր քօղին տակէն զինքը կը դիտէր, արքիդուքսը վառարանին կռթնեցաւ, թեւերը ծալեց եւ գլուխը ետի ծռած, յօնքերն պռստած, հպարտութեամբ յոսկից ցգլուխ դիտեց այս այցելուն, և լուռ մնաց, առանց քաջալերութեան կամ դէթ ցուրտ քաղաքավարութեան խօսք մ'ըսելու Մատլէնի։

Մարքիզուհին, որ բոլորովին տարբեր ազդեցութիւն մ'ընելու վարժուած էր, և գուցէ առանց դիտնալու, կ'զգար այն ազդեցութիւնը, զոր կ'ընէ միշտ բարձրաստիճան անձ մը իւր շուրջը գտնուողներուն վրայ, մարքիզուհին կ'ըսենք, այս անարգական ընդունելութենէն շուարեցաւ մնաց։

Սակայն, որովհետեւ իրեն համար խնդրոյն մէջ նուիրական շահ մը կար, և ինքն ալ քաջասիրտ էր, իւր այլայլութիւնն զսպեց, և ինչպէս որ կ'ըսէ ըսպանիական առածը, որ Մէքսիկայի մէջ տեղական եղած է, որոշեց ցո՜ւռ եղջիւրներէն բռնել։ Ուստի անփութօրէն թիկնաթոռի մը վրայ նստելով, անտարբերութեամբ և ժպտելով ըսաւ Իշխանին,

— Տէ՛ր, երկու բան խնդրելու եկայ ձենէ, մին դրեթէ անկարելի և միւսը բոլորովին անկարելի։

Արքիդուքսը շուարեցաւ, մինչեւ իսկ կիներն այնքան յարգանօք և ակնածութեամբ կը տեսնուէին հետը որ, Մատլէնի ընտանեկան անփութիւնն զարմացուց զինքը։ Մատլէն զուարթօրէն յարեց.

— Պատասխան չէք տար, տէ՛ր։ Ձեր վսեմութեան լռութեանը ի՞նչ մեկնութիւն տամ։ Կը մոռացէ՞ք։ Կը վախնա՞ք։ Կը հաւանի՞ք թէ այդ լռութիւնն պարզապէս անկրթութիւն մ'է։ Անկրթութի՞ւն, ոչ, ադոր չեմ կրնար հաւատալ։ Գերիները, Ֆրանսայի հողուն վրայ ոտք կոխելով, կ'ազատագրին, և ամէնէ անկիրթ մարդիկ անգամ քաղաքավարութեան պայմաններն կ'ուսանին։

Իշխանը, որ դրեթէ քարացեալ մնացեր էր այս յանդուգն խօսքերուն իրեն ազդաց զարմանքէն և բարկութենէն, չի կրցաւ խօսիլ։

Մարքիզուհին ժպտելով ըսաւ.

— Եւ ոչ իսկ բառ մը։ Բայց տէ՛ր, ի՞նչ կը նշանակէ Ձեր վսեմութեան լռութիւնը։ Նորէն կ'ըսեմ՝ եթէ կը խորհիք, լա՛ւ։ Եթէ կը վախնաք, յաղթեցէ՛ք ձեր վախին։ Եթէ անկրթութիւն է այդ, յիշեցէ՛ք որ Ֆրանսայի մէջ ենք և ես կին եմ։ Բայց կրնայ ըլլալ որ ձեր լռութիւնն կոյրզկուրայն հաւանութիւն մ'ըլլայ խընդրելիքներուս. եթէ այնպէս է, ըսէ՛ք, որպէս զի գոնէ յայտնեմ ձեզ թէ ի՛նչ են այն շնորհներն, զորս կանխաւ կը շնորհէք։ և որու համար կուզեմ իմ ջերմ շնորհակալիքս յայտնել ձեզ։

Ապա Մատլէն ձեռնոցն հանելով, ձեռքը արքիդքսին երկնցուց։

— Այս փոքրիկ, սպիտակ, փափուկ, նուրբ ձեռքը, որու երկար ըղունգներն վարդագոյն խեցիներու կը նմանէին, իշխանին ուշը գրաւեց ակամայ, կեանցը մէջ ասանկ ձեռք մը տեսած չէր. բայց ընդ հուպ ասանկ դիտողութիւն մ'ընելուն խպնելով, կարմրեցաւ և անդիի ծայր վիրաւորիչ ու անարգական բառ մը բնտրուեց, մէկ հարուածով ջախջախելու հա-

մար այս յանդուգն կինը, որու լրբութիւնը արդէն չափն անցուցեր էր։

Դժբաղդաբար իշխանը աւելի վարժըուած էր իւր զինուորներն կառավարելու և արքունեաց յարգանքներն ընդունելու քան թէ անմիջապէս ծանր բառ մը գըտնելու, մանաւանդ երբ այդ բառն նորատի և սիրուն կնկան մը դէմ պիտի արտասանուի։ և սակայն բնտռեց . . .

Այս իշխանական մտածութիւնն առիթ տուաւ Մաղէնի որ իւր փոքրիկ ձեռքն լայն թեզանիքներուն տակ քաշէ և շարամիտ ժպտով մը ըսէ իշխանին.

Ա՛լ տարակոյս չի վերցներ, տէ՛ր, ձեր Վսեմութեան լռութեանը պատճառն խպնոտութիւնն է, այն ալ Ալմանիական խպնոտութիւն։ Ես ատոր ինչ տեսակ բան ըլլալը գիտեմ։ Գիտունի խպնոտութենէն զատ չկայ բան մը, որ անոր չափ անյաղթելի, հետևաբար, յարգելի ըլլայ, բայց ամէն բան չափ ունի։ Ուստի, տէ՛ր, ինքզինքիդ դատէք, կարծեմ անձիս վրայ շատ պակաւելի բան մը չկայ, յաւել մարքիզուհին՝ առանց տակաւին վերցնելու երեսի քօղն։

Արքիդուքսը անբաղդ էր. որչափ որ աշխատեցաւ, չի կրցաւ ուզածին պէս բառ մը գտնել. բայց զգալով որ կացութիւնն շատ ծաղրելի կ'ըլլայ՝ դուչեց.

— Ձեմ գիտեր, տիկի՛ն, թէ ի՛նչպէս համարձակեցաք հոս գալ։

— Ձեր հաճութեամբն եկայ, տ՛էր։

— Երէկ երբ հաւանեցայ ձեզ ընդունիլ, անուննիդ չէի գիտէր, տիկի՛ն։

— Անուն ձեզի ի՞նչ է քրեր, տէ՛ր։

— Անուննի՞դ, տիկին, անուննի՞դ։

— Այո՛, տէ՛ր։

— Բայց ձեր անունն Ալմանիոյ մէջ գայթակղութիւն ձգեց. մեր բանաստեղծներուն ամենէն հոգեպաշտն, ամենէն կըրօնասէրն Նիւթապաշտ, կռապաշտ, հեթանոս ըրիք։

— Է՛հ, տէ՛ր, պատասխանեց Մաղէն միամտօրէն, յանցանքն իմս չէ։

— Յանցանքը ձերը չէ՞ մի։

— Բաց յաստի, ի՞նչ ինաս եղաւ տէ՛ր։ Ձեր կրօնասէր բանաստեղծն միջակ ոտանաւորներ կը շինէր, այս պահուս հըրաշալի քերթուածներ կը գրէ։

— Միանգամայն աւելի վտանգաւոր, տիկին։ Հապա հոգի՞ն, հոգի՞ն։

— Հոգին ոտանաւորներուն մէջ մըտաւ, տէ՛ր, որով կրկին անմահացաւ։

— Հապա կարդինա՞լը, տիկին։

— Գոնէ, տէ՛ր, չպիտի կարենաք ըսել թէ անոր ալ հոգին կորուսի, վասն զի նա հոգի չունէր։

— Ի՞նչպէս, տիկին, դուք չէ՞ք որ նուաստացուցիք եկեղեցւոյ այդ հովուութեան նուիրական պաշտօնը, այդ քահանայն որ մինչեւ այն ատեն խստակրօն էր, այն Պետական մարդը որ, քսան տարիէ ի վեր ահ և սոսկում կը պատճառէր ամպարշտաց և յեղափոխականաց։ Դուք չէի՞ք որ զինքը չարամիտներու անարգանացն ու ատելութեանը մատնեցիք, վասն զի եթէ անակնկալ օգնութիւն մը չի հասնէր, զինքը պիտի սպաննէին. վերջապէս տիկին, դուք չէի՞ք որ քիչ մնաց Պոլոնիան պիտի յեղափոխէիք։

— Ա՛հ, տէ՛ր, կը շողոքորդէք զիս։

— Եւ կը համարձակի՞ք, տիկին. անանկ իշխանի մը ներկայանալ, որ կը փափագի միշտ Ալմանեան ու Իտալիան հանդարտ և հպատակ տեսնել։ Կը համարձակի՞ք դալ ինձմէ այնպիսի բաներ խընդրել, որոց համար դուք իսկ կ'ըսէք թէ անկարելի կամ գրեթէ անկարելի են։ Եւ այդ անլուր ու անհասկնալի խընդիրքն ալ ի՞նչ կերպով կը ներկայացնէք ինձ.

ընտանեկան և ծաղրական կերպով մը, այնպէս մը որ, կարծես թէ ապահով էք ամէն բան ընդունելու ինձմէ։ Սխա՛լ, տիկին, սխա՛լ. գիտցէք որ ես ոչ Մօղէր Հարթման բանաստեղծին կը նմանիմ, ո՛չ կարդինալին և ո՛չ բոլոր անոնց, զորս հըմայած էք եղեր. շիտակը մարդ քո՞ւն թէ արթուն ըլլալուն վրայ կը տարակուսի։ Բայց ո՞վ է՛ք դուք որ, ինքզինքիդ ամէն պարտականութենէ և յարգանքէ վեր կը համարիք և կը յանդգնիք իբր հաւասար փորձուիլ հետս. մինչդեռ արքունի ընտանիքէ եղող իշխանուհիք իսկ ակնածութեամբ կը մօտենան ինձ։

— Աւա՛ղ, տէ՛ր. ես խեղճ կին մ'եմ, պատասխանեց Մատլէն։

— Եւ եռի նետեց իւր քօղը, որ, մինչեւ այն ատեն վար ձգուած ըլլալով, դէմքը ծածկեր էր արքիդուքսին նայուածքներէն։

ԺԵ.

Իշխանը, բարկութեանը միջոցին հետ զհետէ տաքնալով, խօսած ատեն քիչ-քիչ մօտեցեր էր մարքիզուհւոյն, որ անփութօրէն նստեր էր թիկնաթոռին վրայ։ Երբ սա իւր քօղն նետելով՝ գլուխը քիչ մը եռի ծռեց, որպէս զի կարենայ իշխանին աչքերուն մէջ նայիլ. արքիդուքսն անշարժ մնաց և զգաց զարմացման, հիացման և ակամայ շփոթութեան այն խառնուրդը, զոր գրեթէ ամէն մարդ կ'զգար տեսնելով այս չքնաղ դէմքն, որու դալուկ գոյնն, կապոյտ աչերն, սև յօնքերն ու խարտեաշ մազերն տարօրինակ հրապոյր մը կուտային։

Իշխանին զգացած այս խոր տպաւորութիւնն՝ Շարլը Տիւթէրթրը ևս զգացեր էր, թէ և կինը շատ կը սիրէր, և այն պահուն սոսկալի մտահոգութիւն պաշարած էին զինքը։

Քանի մը վայրկեան արքիդուքսն դիւթուած մնաց այս անխախտ և սուր նայնուածքէն, յորում մարքիզուհին կը ջանար կեդրոնացնել անձին վրայ գտնուած բովանդակ ձգողութիւնն ու կենսական ելեքտրականութիւնն, և ուղղել զայն իշխանին աչքերուն մէջ. վասն զի Մատլէնի նայուածքին ձգողութիւնն պարբերական էր, և, եթէ հնար է այսպէս ըսել, բաբաղխումներ ունէր. իւրաքանչիւր բաբաղխման՝ արքիդուքսն ակամայ կը սարսռար. նորա ցրտութիւնն կարծես կը հալէր, ինչպէս ձիւնն արեւուն տակ. նորա սէգ կերպարանքը կը կակուղնար, հպարտ դէմքը անբացատրելի շփոթութիւն մը կը յայտնէր։

Ցանկարծ Մատլէն քօղը երեսին վրայ ձգեց, գլուխը ծռեց և ջանաց աւելի ևս աներեւութանալ իւր վերարկուին լայն ծալքերուն և երկար շրջազգեստին ներքև, որ կատարելապէս կը ծածկէր իւր ոտքերն, ինչպէս որ լայն թեղանիքներն ծածկեցին այն սիրուն ձեռքը, զոր մտերմաբար իշխանին երկնցուցեր էր. որով սա անորոշ և համեստօրէն քօղարկեալ ձեւ մը միայն գտաւ իւր դէմ։

Սակայն ամէնէն անխիղճ լկտութիւնն ու քծնութիւնն համեստութիւն կը սեպուէին այս խորհրդաւոր անմեղութեան դէմ, որ մինչ իսկ ձեռաց մատներն ու ոտքին ծայրերն ծածկելով դիմացինէն, ազատ ասպարէզ կը թողուր երեւակայութեան, որ ի հարկէ ևս քան զևս պիտի բորբոքէր՝ մարքիզուհւոյն վրայ պատմուած տա-

բօրինակ դէպքերն յիշելով։

Երբ Մատլէնի դէմքն վերատին անեռեւութացաւ քօղին ներքեւ, Իշխանն իւր ակամայ շուարումէն ազատելով, պաղարիւնութիւնն ձեռք առաւ. տկարութեանն համար ինքզինք այպանեց, և վտանգաւոր կացութենէ մը զգուշանալու համար, ջանաց յիշել այն ցաւալի դէպքերն, որք այս կնոջ անողոք և ծանր մարդոց վրայ իսկ ունեցած ազդեցութիւնը կը հաստատէին։

Բայց աւաղ, այս մարդոց անկումն կամ այլափոխութիւնն Իշխանին միտքը կը դարձնէր ակամայ՝ մարքիզուհւոյն և Նորա անդիմադրելի ազդեցութեանը վերայ։ Վտանգին ծանրութիւնը կ'զգար. բայց յայտնի է որ երբեմն վտանգն ալ անդունդի մը պէս առ ինքն կը քաշէ զմարդ։

Իշխանն ի զուր ինքնիրեն կ'ըսէր թէ մինչեւ հասուն տարիքն եկեր էր, առանց զգալու այն յանկարծական և ստորին կիրքերն, որք զմարդ կը նուաստացնեն։ Ի զուր կը մտածէր որ արքայազուն Իշխան մ'էր, թէ իր աստիճանը կը պահանջէր որ ասանկ ամօթալի կրից անձնատուր չըլլայ. եւայլն։ Վերջապէս թշուառ արքիդուքսն շատլաւ կը փիլիսոփայէր, բայց նման այն մարդուն որ, ցից զառ ի վարէ մը դլորած ատեն, հաստատուն ելլալու մեծամեծ առաւելութեան վրայ կը փիլիսոփայէ։

Դժբաղդաբար տողեր, պարբերութիւններ, էջեր պէտք են՝ մտածման պէս վայրկենական տպաւորութիւններն նշմարելի ընելու համար. վասն զի Մատլէնի քօղը վերցնելէն մինչեւ դոցելը ինչ որ նկարագրեցինք երկար բարակ. մէկ քանի մանրերկրորդի մէջ անցեր էր, և արքիդուքսն ինքզինքն այպանելով կը ջանար, ի հարկէ առանց գիտնալու, (վասն զի փիլիսոփայութիւնը իւր միտքը նիւթէն կանջատէր) կը ջանար, կ'ըսենք։ Մատլէնի ուրուագիծերն ընդնշմարել՝ զանոնք ծածկող քօղին տակէն,

— Կ'ըսէի որ, տէ՛ր, յարեց մարքիզուհին՝ դլուխը միշտ խոնարհած բռնելով արքիդքսին անյաղ ու այլայլեալ նայուածքին դէմ, կ'ըսէի որ խեղճ այրի մ'եմ։ որ կարծուածին չափ դէշ չէ և որ արժանի չէ ձեր խստութեանն։

— Տիկի՛ն։

— Ո՛հ, այս մասին ձեզ չեմ այպաներ։ Դուք ալ, շատերուն պէս, անշուշտ հաւատացած էք խել մը խօսքերու։

— Խօսքե՛ր, տիկի՛ն, դոչեց արքիդուքսն՝ ուրախութեամբ զգալով որ իւր առաջին բարկութիւնը վերատին կը զարթնու սրտին մէջ, խօսքեր . . . ։ Մօղէր— Հարթման քերթողին գայթակղական այլակերպութիւնն սին խօսք մ'էր, անանկ չէ՞։

— Այլակերպութիւն բսածնիդ իրականութիւն մ'է, տէր, այո՛, բայց . . . ։

— Կարելի է կարդինալին խայտառակութիւնն ալ սին աղմուկ մ'է, չէ՞ մի, յարեց արքիդուքսն՝ Մատլէնի խօսքն ընդմիջելով։

— Այդ ալ իրականութիւն մ'է, տէր, լա՛ւ. բայց . . . ։

— Ըսել է, տիկի՛ն, դուք ինքնին կը խոստովանիք որ . . . ։

— Կ'ուզաչեմ, տէ՛ր, զիս մտիկ ըրէ՛ք։ Անունս Մատլէն է. գիտէք որ ասի նշանաւոր մեղաւորի մը անունն է։

— Անոր ներուեցաւ, տիկի՛ն։

— Այո՛, վասն զի շա՜ . . . «էրեր էր, սակայն մի՛ կարծեք որ իմ սրբուհի պաշտպանուհւոյս սիրային կեանքին մէջ օրինակ մը կամ արդարացում մը բնտռել ուզեմ։ Ես ներողութեան պէտք չունիմ, ամենեւին, տէ՛ր։ Ասի կ'երեւնայ թէ ձեզ

շատ կը զարմացնէ։ Ուստի, միտքս կատարելապէս հասկցնելու համար ձեզ, ինչ որ բաւական դժուար էպիտի ստիպուիմ Ձեր վսեմութեան դասական յիշատակացդիմել։

— Ի՞նչ ըսել կ'ուզէք, տիկի՛ն։

— Շատ տարօրինակ բան մը. բայց ձեր յանդիմանութեանց կծուութիւնն և դեռ ուրիշ պատճառներ կը հարկադրեն զիս զարմանալի խոստովանութիւն մ'ընել։

— Տիկի՛ն. մտքերնիդ պիտի բացատրէ՞ք։

— Գիտէ՞ք. աէր, Հռովմի մէջ ի՞նչ պայմանաւ կ'ընտրէին Վէսպոյէ տրոհինները։

— Հարկա՛ւ, տիկի՛ն, պատասխանեց իշխանն շիկնելով։

Եւ ապա յարեց։

— Բայց չեմ տեսնէր թէ ի՞նչ յարաբերութիւն կայ . . .

— Լա՛ւ, տէ՛ր, յարեց Մատլէն ժըպտելով, եթէ Հռովմի մէջ ըլլայինք, կեսարներու ժամանակ, ամէն իրաւունք պիտի ունենայի սրբազան հուրն վառ պահելու անբիծ դիցուհւոյն խորանին վրայ։ Ի մի բան, ես այրի եմ, առանց երբէք ամուսնացած ըլլալու, տէ՛ր, վասն զի երբ Եւրոպայէն հայրենիքս դարձայ, Միրանտայի մարքիզը, որ իմ ազգականս էր, մեռնելու վրայ էր, և մահուան անկողնոյն մէջ հետս ամուսնացաւ՝ անունն ու իարստութիւնն ինձ ձգելու համար։

Ճշմարտութեան ձայնն անդիմադրելի է. ուստի իշխանն ի սկզբան Մատլէնի խօսքերուն հաւատաց, թէ և այս գաղտնիքն կատարեալ հակասութեան մէջ էր մարքիզուհւոյն վրայօք զրուցուած զանազան արկածից հետ։

Իշխանին զարմանացն՝ քիչ վերջը խառնուեցաւ նաև անորոշ գոհունակութիւն մը, զոր ինքն ալ չէր հասկնար։ Սակայն վախնալով որ դակարթի մը մէջ կ'ելնայ, ծանրութիւամբ ըսաւ.

— Տիկի՛ն, դուք զիս չափազանց դիւրահաւան կը կարծէք։ Դեռ քիչ մ'առաջ խոստովանեցաք որ . . .

— Ներեցէ՛ք, տէ՛ր, և բարեհաճեցէք քանի մը հարցմանցս պատասխանել։

— Խօսեցէ՛ք, տիկի՛ն։

— Անուրանալի է որ քաջ պատերազմիկի մը բոլոր արտաքին երեւոյթներն ունիք, տէ՛ր, և երբ Վիէննայի մէջ կը տեսնէի զձեզ ձեր գեղեցիկ ձին հեծած և ձեր զինակցաց հետ, որ Բրաբանտէն կ'անցնէիք, շատ անգամ ինքնիրենս կ'ըսէի. «Ինձի համար ահա՛ այս է զօրապետի, զինուորաց հրամայելու համար ստեղծուած մարդու տիպարն։»

— Դուք Վիէննայի մէջ տեսա՞ծ էք զիս, հարցուց արքիդուքսն, որու ձայնը զգալի կերպիւ կ'անուշնար, և աչքերնուդ զարկի՞, հէ՛։

— Բարեբաղդաբար չ'իմացաք, տէ՛ր, ապա թէ ոչ զիս աքսորել կուտայիք, չէ՞ մի։

— Բայց, պատասխանեց իշխանը ժըպտելով, դուցէ՛։

— Օ՛ն, այդ խօսուածքնիդ աւելի հաճոյ է ինձ։ Կ'ըսէի թէ, տէ՛ր, քաջ պատերազմիկի մը բոլոր արտաքին երեւոյթներն ունիք և այդ երեւոյթներն անտեղի չեն։ Սակայն խոստովանեցէք որ ամէնէ քաջ երեւցող պատենի մը տակ երբեմն . . . վատ մը կը գտնուի։

— Հարկա՛ւ, տիկի՛ն։ Հրամանատարութեանս տակ հազարապետ մը կար, որ ամենակատաղի դէմք մ'ունէր և սակայն անկէց վախկոտ մարդ չկար։

— Նոյնպէս նաև խոստովանեցէք որ, տէր, ամենաչնչին պատենի մը տակ դիւցազն մը կրնայ գտնուիլ։

— Ի հարկէ, Մեծն Ֆրէտերիք, էօ-ժէն իշխանը դրսէն բան մը չէին երևնար։

— Աւա՛ղ, տէ՛ր, ես ալ ընդհակառակը դրսէն շատ կ'երևնամ։

— Ի՞նչ ըսել կուզէք, տիկի՛ն։

— Այո՛, ես նման եմ այն վախկոտին որ իւր ահարկու դէմքովն զամէնքը կը վախցնէ, և սակայն իւր վախցուցածներուն ամէնէն վախկոտէն աւելի վախկոտ է։ Ի մի բան, շատ անգամ ակամայ ա-նանկ բաներ կը ներշնչեմ, որ ես չեմ ըզգար. երեւակայեցէ՛ք, տէր, շուրջն հուր ու բոց տարածող խեղճ սառոյց մը։ Ա-սոր համար երբեմն ինքզինքս մասնաւոր երեւոյթ մը կարծելու յաւակնութիւնն պիտի ունենայի, եթէ չյիշէի որ երկրիս գեղեցիկ, փափուկ, քաղցրահամ և անուշահոտ պտուղներն երբեմն սարսափելի ախորժակ կ'ազդէին ինձ, առանց ինքեանք ալ այդ ախորժակն զգալու, առանց ուտուելու ամենաթեթեւ փափագ մ'իմանալու։ Ես ալ այսպէս եմ, տէ՛ր, կ'երևնայ որ, երկրիս պտուղներուն նման անմեղ, երբեմն, այս ինչ նկատմամբ, սաստիկ անօթութիւն կը ներշնչեմ այլոց, ես որ անդիի ծայր ժուժկալ եմ։ Ուստի որոշեցի այլ ևս չի զարմանալ ակամայ ըրած ազդեցութեանս վրայ. բայց որովհետև այս ազդեցութիւնն հզօր է, քանի որում մարդուս ամէնէն բուռն կրից մին կը գրգռէ, կը ջանամ զոհերէս կարելի եղածին չափ օգուտ քաղեմ՝ կամ իրենց և կամ այլոց համար, այս ալ առանց խաբէութեան, առանց խոսամանի և առանց պչրանաց. — «Ձեզի համար կ'այրիմ, կ'ըսեն ինձ։ — Լա՛ւ, այրեցէ՛ք, կարելի է որ ձեր կրակին տաքութիւնն սառոյցս հալեցնէ, կարելի է ձիւնին տակ լաւա կայ յիս։ Այրեցէ՛ք, այրեցէ՛ք, աշխատեցէք որ ձեր բոցն ալ բռնկցնէ, իմ ուզածս ալ այդ է, վասն զի թռչնոյ նման ազատ և տակաւին քսաներկու տարեկան եմ։»

Մատլէն զայս ըսելով՝ գլուխը վերուց քօղը մէկդի նետեց և արքիդքսին երեսը նայեցաւ։

Մարքիզուհին ճշմարիտ կը խօսէր, վասն զի խարտեաշ Փէրովբէին համար զգացած սէրը, զոր պատմեր էր Սօֆի Տիւթէրթրըի։ բնաւ երկրաւոր չ'էր ցայնվայր։

Իշխանն հաւատաց Մատլէնի խօսքին. նախ՝ վասն զի ճշմարտութիւնն գրեթէ միշտ կը համոզէ, երկրորդ՝ վասն զի երջանիկ կ'զգար ինքզինքն նորատի կնոջ խօսքերուն հաւատալով. այլ ևս չ'էր շիկնէր այս տարօրինակ արարածին իւր վրայ ըրած խոր ու յանկարծական տպաւորութիւնն զգալով, վասն զի կ'ըսէր ինքնիրեն թէ վերջապէս արժանի էր Վէրոյէ «ըբ-ղան հուրն վառ պահելու». ուստի անխոհեմն, աչքերն Մատլէնի աչաց վրայ յառած, կը ծծէր թիւդիչ թոյնն՝ տուփանօք զայն դիտելով։

Մատլէն ժպտելով յարեց.։

— Ապահով եմ թէ այս միջոցիս հարցում մը կ'ընէք ինքնիրեննիդ. «զոր ես յաճախ կ'ընեմ ինքզինքիս։

— Ի՞նչ։

— Ինքնիրեննիդ կը հարցնէք թէ (հին երգի մը բառերովն ըսեմ) «Ո՞վ է այն ոբ ղէ՞ էր հըբ-ն պէտ վառ պահելու». ուստի անխոհեմն, աչքերն Մատլէնի աչաց վրայ յառած, կը ծծէր թիւդիչ թոյնն՝ տուփանօք զայն դիտելով։

Մատլէն ժպտելով յարեց.։

— Ապահով եմ թէ այս միջոցիս հարցում մը կ'ընէք ինքնիրեննիդ. «զոր ես յաճախ կ'ընեմ ինքզինքիս։

— Ի՞նչ։

— Ինքնիրեննիդ կը հարցնէք թէ (հին երգի մը բառերովն ըսեմ) «Ո՞վ է այն ոբ ղէ՞ էր հըբ-ն պէտ վառ պահելու։ Ես ալ շատ հետաքրքիր եմ այս մասին ապագայն հասկընալու։

— Սակայն այդ ապագայն ձեր ձեռքն է։

— Ո՛չ, տէր. որպէս զի քնար մը ձա՛յն հանէ հարկ է զայն նուագել։

— Այդ երջանիկ մահացուն ո՞վ պիտի ըլլայ։

— Աստուա՛ծ իմ, ո՞վ գիտէ. թերևս դուք, տէ՛ր։

— Ե՛ս, գոչեց իշխանն այլայլեալ, ե՛ս . . .

— Թերևս ըսի։

— Ի՞նչ պէտք է ընել։

— Ինձ հաճելի ըլլալ։

— Ատոր համա՞ր,

— Մտիկ ըրէ՛ք, տէ՛ր։

— Կ՚աղաչեմ, զիս տէր մի՛ կոչէք. այդ բառն շատ պաշտօնական է։

— Օ՛, օ՛, տէ՛ր, իշխանի մը համար մեծ շնորհ մ՚է որ ընտանեբար խօսուի իր հետ. նախ պէտք է արժանանալ այդ շնորհաց, կը հարցնէք թէ ի՞նչպէս կրնաք ինձ հաճելի ըլլալ։ Կուզեմ ցոյց տալ ձեզ, չէ թէ օրինակ մը, այլ դէպք մը։ Մօղէր - Հարթման քերթողն, զոր այլափոխեր եմ, ինչպէս որ կ՚ըսէք, տարօրինակ ձևով մը իւր սէրն յայտնեց ինձ։ Օր մը բարեկամուհիներէս մէկուն տունը տեսաւ զիս, երկար ատեն երես նայեցաւ և ի վերջոյ շփոթած և բարկացած կերպով մ՚ըսաւ ինձ. « Տիկին։ ձեզ ողջ ողջ թաղել պէտք է, որպէս զի ոդեպաշտութիւնն չվրդովի։ » Եւ դուրս ելաւ. բայց յաջորդ օրն տունս եկաւ, և ըսաւ թէ վայրկենական, նոր և հրատոչոր սիրոյ մը զոհ եղած է։ » Այրեցէք, ըսի իրեն, բայց սա խրատս մի՛ մոռնաք, սէրը ձեզ կը տոչորէ, այդ սէրն ձեր քերթուածոց մէջ թո՛ղ հոսէ։ Մեծ քերթող մ՚եղէք, և այն ատեն ձեր փոսքը դուցէ չլացնէ զիս։ »

— Զի չլացա՞ք, հարցուց իշխանն։

— Ո՛չ, բայց սիրահարս իրը մխիթարութիւն իւր փառքն ունի, և բանաստեղծ մը ամէն բանի մխիթարութիւն կը գտնէ, երբ փառք ունի։ Արդ, տէ՛ր, ըսէք, ազդեցութիւնս լա՞ւ թէ գեշ գործածեցի։

Արքիդուքսն յանկարծ սարսռաց։

Կծու կասկած մը իւր սիրտն սեղմեց։ Այս տաժանելի անձկութիւնք կեղծելով և ժպտիլ ջանալով Մատլէնի ըսաւ,

— Բայց, տիկին, պատուիրակ Կարդինալին դէպքն ատանկ յաջող վախճան մը չ՚ունեցաւ իրեն համար. արդ նա ի՞նչ ունի մխիթարուելու։

— Զինքը ատող ժողովուրդն իւր ներկայութենէն ազատած ըլլալու գիտակցութիւնը, պատասխանեց Մատլէն զուարթօրէն. աս ալ բան մը չ՚է՞, տէր։

— Բայց, խօսքը մէջերնիս, տիկին, ի՞նչ շահ ունէիք այս խեղճ մարդն ատանկ սոսկալի գայթակղութեան մը զոհ ընելով։

— Ի՞նչ շահ, տէ՛ր, բայց լիտի կեղծաւորի մը դիմակը վար առնելու, հաստատահարած քաղքէն զինքն վռնտել տալու, վերջապէս զայն արհամարանօք և ամօթով ծածկելու շահն։ » Ձեր սիրոյն կը հաւատամ, ըսի իրեն, և թերևս ես ալ զձեզ սիրեմ, եթէ Բանտու ձիաւորի հագուստով հետս Ռիալթոյի պարահանդէսը դաք, սիրելի կարդինալս, այս իմ մէկ անհեղեղ ու անմիտ քմահաճութիւնս է, այո՛, բայց պայման մ՚է. ասկեց զատ դիմակին տակին ձեզ ո՞վ կրնայ ճանչնալ։ » Այն սոսկալի քահանային խելքը գլխէն գացեր էր. ընդունեցաւ, ես ալ զինքը կորուսի։

— Իսկ զիս չպիտի կարենաք պատուիրակ Կարդինալին պէս կորսնցնել, տիկին, գոչեց Արքիդուքսն ոտքի ելլելով և գերագոյն ճիգ մ՚ընելով, որպէս զի վանէ այն հրապոյրն, որու անդիմադրելի զո-

րութիւնն կ'զգար։ Դակարթը կը տեսնեմ. ես թշնամիներ ունիմ. դուք ձեր նենգաւոր հրապուրանօքն, կուզէք վտանգաւոր քայլ մ'առնել տալ ինձ, և ապա զիս ալ իմ, տկարութեանս արժանի արհամարհանաց և ծաղու ենթակրել։ Բայց օրհնեա՛լ է Աստուած, նա իմ աչքերս կը բանայ։ Սոսկմամբ կը նշմարեմ այն դժոխային շլացումն, որ մտացս ոյժն կը բառնար, և սակայն սէր չ'էր, ո՛չ, կոշտ ու կոպիտ տրիփ մ'էր, որ կրնայ զմարդ անանցոյն հաւատարեցնել, տռիփ մը, որու անունն կուզեմ տալ, յամօթ ինձ և ձեզ, ԲՂՋԱԽՈՀՈՒԹԻՒՆ, տիկի՛ն . . .

Մատլէն ուսերը ցնցեց, հեգնական կերպով մը սկսաւ խնդալ, ոտքի ելաւ և մօտեցաւ Իշխանին, որ։ Խօսած միջոցին, մինչև. վառարանը ետ դացեր էր. կամաց մը անոր ձեռքէն բռնեց, և բերաւ քովը նստեցուց, և Իշխանն այս քաղցր բռնութեան դիմադրելու ոյժ չ'ունեցաւ։

— Շնորհ ըրէք զիս մտիկ ընելու, տէ՛ր, ըսաւ Մատլէն, քանի մը բառ միայն ունիմ ձեզ ըսելու, և ապա ձեր կենացը մէջ մէկ մ'ալ չպիտի տեսնէք Միրանտայի մարքիզուհին։

ԺԶ.

Երբ Մատլէն Արքիդուքսն իր քով նստեցուց, քսաւ անոր։

— Մտիկ ըրէ՛ք, տէ՛ր, անկեղծօրէն պիտի խօսիմ՝ այնչափ անկեղծօրէն, որ անկարելի է ինձ չի հաւատալ։ Ձեր խելքը դլխէն առնելու յուսով ես հոս եկայ։

— Ըսել է, գոչեց Իշխանն յապուշ կրթեալ, ըսել է կը խոստովանի՛ք։

— Անշուշտ։ Երբ այս նպատակիս հասնէի, իմ Իշխանութենէս օգտելով՝ պիտի ջանայի երկու բան ընդունիլ ձենէ, տէ՛ր, որոց մին, ինչպէս որ քսի եկած ատենս, գրեթէ անկարելի էր և միւսը՝ բոլորովին անկարելի։

— Իրաւունք ունիք, տիկի՛ն, անկարելի է ձեզ չի հաւատալ, քսաւ Իշխանն բռնազբօսիկ ժպտով մը, կը հաւատամ ըսածնուդ։

— Ձենէ ընդունիլ ուզած երկու գործերս մեծ, ազնիւ ու վեհանձնական էին. նոքա ձեզ յարգել ու սիրել պիտի տային։ Կարծեմ ասով ես իմ Իշխանութիւնս ձեզ չարի կամ անարժան գործ մ'ընելու մղած չ'եմ ըլլար, ինչպէս որ կ'ենթադրէք։

— Բայց վերջապէս, տիկին, խնդիրն ի՞նչ է։

— Նախ և առաջ գթութիւն, կամ մանաւանդ արդարութիւն, որ Լօմպարտայի մէջ շատ մը սիրտեր առ ձեզ պիտի ձգէ. Բէրնէթթի գնդապետին ամբողջական ներումն։

— Երբե՛ք, տիկին, երբե՛ք։

— Բէրնէթթի գնդապետին ամբողջական ներումն, որ բոլոր Իտալիոյ ամենէն յարգի անձանց մին է, շարունակեց Մատլէն՝ առանց Իշխանին բացագանչութիւնն նկատողութեան առնելու։ Այս սրտի տէր մարդն իրաւացի հպարտութեամբ երբեք չպիտի դիջանի ամենափոքր ամօքում մը խնդրել իւր ազիտիցն, բայց դուք վեհանձնաբար գթացէք իրեն, ու նորա երախտագիտութիւնն ու անձնուիրութիւնը պիտի շահիք։

— Կը կրնեմ թէ, տիկին, պետական մեծամեծ պատճառներ այդ ձեր քսածին

կ'ընդդիմանան։ Ասի անկարելի է, բոլորովին անկարելի։

— Գիտե՛մ, և նախ ես ձեզ ըսի զայդ, տէ՛ր։ Գանք միւսին, որ աւելի ևս անկարելի է. կը խնդրեմ որ հաւանութիւն շնորհէք ձեր մեծցուցած մէկ երիտասարդին ամուսնութեանն։

— Ե՛ս, գոչեց Արքիդուքսն, կարծես լսածին չկարենալով հաւատալ, ե՞ս Ֆրանց Կոմսին ամուսնութեանն հաւանի՛մ։

— Կոմս ըլլալը չ'եմ գիտեր. իմ գիտցածս սա է որ անունը Ֆրանց է, ինչպէս որ այս առաւօտ ըսաւ ինձ օրիորդ Անթօնին Հիւպէր, քաղցրութեան և գեղեցկութեան հրեշտակ մը, զոր տղայութենէն կը սիրեմ, և որու. համար քրոջ և մօր գորով մը կ'զգամ։

— Տիկի՛ն. Ֆրանց Կոմսը երեք ժամէն Բարիզէն պիտի մեկնի. ահա՛ պատասխանը։

— Բայց, տէ՛ր, ասոնք՝ բոլոր անկարելի են, բոլորովին անկարելի. ադ լաւ գիտեմ։

— Ուրեմն, տիկի՛ն, ի՞նչու կը խնդրեք։

— Ընդունելու համար, տէ՛ր։

— Ի՛նչպէս, ըսածներէս վերջը, տակաւին կը յուսա՞ք։

— Այդ յաւակնութիւնն ունիմ, տէ՛ր։

— Ատանկ վստահութիւն մը . . .

— Շատ համեստ է, վասն զի իմ յոյսս իմ ներկայութեանս վրայ չ'է։

— Հապա ի՞նչ բանի վրայ է, տիկի՛ն։

— Բացակայութեանս վրայ, տէ՛ր, ըսաւ Մատլէն ոտք ելնելով։

— Ձեր բացակայութեա՞նը վրայ։

— Իմ յիշատակիս վրայ ըսել կուզեմ։

— Կը մեկնի՛ք, ըսաւ Իշխանն աշխուժիւ, չկարենալով դժկամակութիւնը ծածկել, կը մեկնի՛ք։

— Ձեզ հաւանութեան բերելու վերջին և միակ միջոցս այս է։

— Բայց վերջապէս, տիկին . . .

— Կեցե՛ք, տէ՛ր, կուզէ՛ք որ ըլլալիքը ըսեմ ձեզ։

— Ըսէք տեսնեմ, տիկի՛ն։

— Ես հիմայ պիտի մեկնիմ։ Ի սկզբան մեծ ծանրութենէ մը պիտի ազատիք իմ ներկայութիւնս՝ ալ ևս չպիտի ճնշէ զքեզ ամէն տեսակ փորձութիւններով, որք իրենց հրապոյրն և դառնութիւնը ունին միանգամայն. ըէ՝ բոլորովին յեր մըտէն պէտք պրպտէ։ Դժբաղդաբար էլ էլ առանց յեր սաղելուն, նորէն մտերնիդ պէտք գամ։ Իմ քաղաքակեալ ու խորհրդաւոր դէմքս ամէնուրեք ձեզ պիտի հալածէ այն ատեն աւելի ևս պիտի զգաք ձեր ինձ համար ունեցած միտման նուազ պաղատոնական մասն, և այդ զգացումն ևս քան զեւս պիտի արծարծի։ Ուստի վաղը, գուցէ միւս օր, մտածելով որ վերջապէս ձենէ խնդրածս ազնիւ ու վեհանձնական բան մ'էր, պիտի զղջաք զիս ձգելնուդ և կանչել պիտի տաք, բայց ժամանակն անցած պիտի ըլլայ, տէ՛ր։

— Ժամանակն անցած պիտի ըլլա՞յ։

— Ինձի համար չ'է, ձեզի համար։ Ես միտքս դրի որ Բէրնէթիի գնդապետը ներուսն գտնէ և Պ. Ֆրանց Անթօնինի հետ ամուսնանայ։ Ուստի, տէ՛ր, պէտք է որ ասոնք կատարուին։

— Հակառա՞կ իմ կամացս։

— Այո՛, տէ՛ր։

— Ատ քիչ մը անհաւատալի է։

— Այս այսպէս է։ Նախ, տէ՛ր, ձեր գիտցած դէպքերն յիշենք. նա որ պատուիրակ կարտինալը կրնայ համոզել որ Բանտուր ձիաւորի հագուստով ծպտի, որ մէկ նայուածքի ջերմութեամբն մեծ բանաստեղծ մը կը յարուցանէ, որ կրնայ,

սիրահար ընել (բառին ամենէն երկրաւոր նշանակութեամբ) ձեզի պէս մարդ մը, տէ՛ր, յայտնի է որ ուրիշ բաներ ալ կըրնայ ընել։ Խեղճ Պ. Ֆրանցը կը ստիպէք որ Բարիզէն երթայ, անանկ չ՚է՞. բայց ճամբան երկայն է, և նա Ֆրանսայէն դուրս չ՚ելած՝ ես երկու օր ունիմ դէմս։ Բէրնէթթի գնդապետին համար փոքր յապաղում մը նշանակութիւն չ՚ունի, և ասկեց զատ միայն դուք չ՚էք որ կրնաք ներել իրեն, տէ՛ր. չ՚էք կրնար երևակայել թէ ազդեցութեանց կապն մինչև ուր կը հասնի, և Ֆրանսայի մէջ ամէն ազատութիւն ու միջոց ունիմ գործելու։ Ըսել է պատերազմ կ՚ուզէք, տէր։ Ես կ՚երթամ և ձեզ արդէն վիրաւոր կը թողում... այսինքն սիրահար։ Է՛հ, Աստուած իմ, (թէև կրնամ այս յաչողութեանս վրայ իրաւամբ. հպարտանալ) պարծենկոտութեան համար չ՚է որ ձեր վրայ բրած վայրկենական ազդեցութեանս կը վստահիմ, քանի որ շիտակն ամենևին չի քծնեցայ. միշտ քօղս ձգուած էր և զգեստմայրապետի զգեստներ են...։ Օ՛ն, մնաքբարո՛վ, տէ՛ր. գոնէ պիտի բարեհաճի՞ք դիս մինչև առաջին սրահին դուռը առաջնորդելու շնորհն ընել ինձ։ Պատերազմն քաղաքավարութեան արգելք մը չ՚է։

Արքիդուքսն անմեկնելի շփոթութեան մը մէջ էր. կզդար որ Մատլէնի ըսածն ճշմարիտ էր, վասն զի արդէն, միմիայն մտածելով թէ գուցէ ցմիշտ կը հեռանայ այս կինն, ճշմարիտ ցաւ մը կզգար, ապա մտածելով որ եթէ այս կնոջ զարմանալի և դրեթէ անդիմադրելի հրապոյրն զօրաւորապէս կ՚ազդէր իւր վրայ, որ զանազան պատճառներով ինքզինքն զերծ կըզգար ասանկ ազդեցութենէ մը, ուրիշներըն կրնային այդ ազդեցութեան տեղի տալ, այն ատեն տեսակ մ՚անստոյգ, բայց կծու նախանձ կզգար, և սակայն չ՚էր կրնար խընդրուած շնորհն ընելու և Ֆրանցի ամուսնութեան հաւանութիւն տալու զիջանիլ. բայց, ինչպէս ամէն վարանող անձ, նա ևս ջանաց ժամանակ վաստկիլ և այլայլութեամբ ըսաւ Մարքիզուհուն։

— Քանի որ այլ ևս ձեզ չպիտի տեսնեմ, գոնէ այս այցելութիւնն քիչ մը երկարեցէք։

— Ի՞նչ օգուտ ունի, տէ՛ր։

— Ձեզ ի՞նչ փոյթ, քանի որ այդ բանն կրնայ զիս երջանիկ ընել։

— Ասի բնաւ ձեզ երջանիկ չի կրնար ընել, տէ՛ր, վասն զի ոչ խնդրածս շնորհելու և ո՛չ զիս ձգելու ոյժն ունիք։

— Ադ իրաւ է, պատասխանեց իշխանն հառաչելով, երկուքն ալ իրարու չափ անկարելի կ՚երևնան ինձ։

— Ա՛հ, երթալէս վերջը, վաղը, կամ թերևս իսկ հիմայ ո՛րքան պիտի զղջաք։

Բաւական երկար լռութենէ մը ետքը, իշխանն ճգամբ և իւր ամենէն շողոմ ձայնիւն ըսաւ։

— Կեցե՛ք, սիրելի Մարքիզուհիս, ենթանդրենք, ինչ՝ որ ենթադրելի չ՚է, թէ թերևս օր մը մտաբերեմ Բէրնէթթի գնդապետին ներումն շնորհել ձեզ։

— Ենթադրութի՞ւն, օր մը թերևս մտաբերէ՞ք մի...։ Ասոնք բոլոր անքննոյդ ու տարտամ բաներ են, տէ՛ր։ Ըսէք պարզապէս. Սեպեցէք որ Բէրնէթթի գնդապետին ներումն կը շնորհեմ ձեզ։

— Լա՛ւ, սեպեցէ՛ք...

— Աղե՛կ, այդ շնորհն կ՚ընէք ինձ, տէ՛ր, և Ֆրանցի ամուսնութեան ալ կը հաւանի՞ք, անանկ չ՚է։ Վասն զի ես կամ ամբողջ կուզեմ և կամ ոչինչ։

— Ադ բնա՛ւ, բնա՛ւ։

— Բնա՛ւ մի ըսէք, տէ՛ր։ Միթէ դուք գիտք։

— Բայց ենթադրութիւն մը ինչպես չ՚ունի։ Վերջապէս սեպենք որ ուզածնիդ ընեմ... գոնէ պէտք է վարձատրութեան է, և դուք միայն կրնաք զայն շնորհել։

— Օ՛, պայման չ՚ուզեր, տէ՛ր։

— Ինչպէ՛ս։

— Բայց անկեղծօրէն խօսինք, տէ՛ր, միթէ կրնա՞մ բան մը խոստանալ։ Ո՞չ ապաքէն ամէն ինչ ձեռնէ կախու�ունի, և



ապահով ըլլամ...

— Այդ բանն ինձմէ՞ կը խնդրէք, տէր։ Ամէն վերհանձն գործ իւր վարձատրութիւնը հետը չի՞ բերեր։

— Այո՛։ Բայց ինձ համար վարձատրութիւն մը կայ, որ ամենէն թանկագին ոչ թէ ինձմէ։ Ձեզ անկէ ինձ հաճելի ըլլալու աշխատիլ։

— Ո՛հ, ի՛նչ կլին, ըսաւ իշխանն դըժկամակութեամբ։ Բայց վերջապէս, պիտի կարենա՞մ ձեզ հաճելի ըլլալ։ Կը կարծէ՞ք որ հաճելի ըլլամ ձեզ։

— Շիտակը, տէ՛ր, չ՚եմ գիտեր։ Մինչև ցարդ այդ մասին ուրիշ բան չ՚ըրիք, բայց եթէ զիս բաւական խստիւ ընդունիլ։

— Տէ՛ր Աստուած, իրաւունք չ՚ունէի, ներեցէք ինձ. բայց եթէ գիտնաք թէ ի՛նչ անհանգստութիւն, գրեթէ երկիւղ կ՚ազդէք ինձ, սիրելի մարքիզուհիս։

— Օ՛ն, անցեալը կը ներեմ, տէ՛ր, և կը խոստանամ թողուլ որ ուզածնուդ պէս հրապուրէք զիս . . . և որովհետև խիստ անկեղծ եմ, աս ալ կ՚ըսեմ որ կարծեմ գոհ պիտի ըլլամ, եթէ յաջողիք։

— Իրա՛ւ, գոչեց իշխանն արբշիռ։

— Այո՛, արդէն կէս մը գահակալ էք, թերևս օր մը ամբողջապէս թագաւորաք, և այն ատեն շատ մը գեղեցիկ ու ազնիւ բաներ կարելի է ընել տալ ձեզ այն բուռն սիրոյն ազդեցութեամբն, զոր քիչ մ՚առաջ իբր ճշմարիտ քաջ-ուն, ներեցէ՛ք այս բառին, պարսաւեցիք։ Օ՛ն, տէ՛ր, եթէ Աստուած այդ կիրքն դրած է իւր արարածոց ներսիդին, ի հարկէ ըրածը գիտէ։ Այսի անհուն զօրութիւն մ՚է, վասն զի զայն գոհացնելու ակնկալութեամբ, բոլոր այդ սէրն զգացողները ամէն բան ընելու կարող են, նոյն իսկ ամենավեհանձն գործեր, չէ՞ մի, տէր։

— Ըսել է, յարեց իշխանն՝ ևս քան զևս յափշտակուելով, կրնամ յուսալ . . .

— Ուզածնուդ չափ յուսացէք, տէր, բայց այնչափ, ես բան մը չ՚եմ խոստանար։ Այրեցէ՛ք, այրեցէ՛ք, իցի՛ւ թէ ձիւնը հալէր ձեր բոցովն։

— Բայց ենթադրենք որ բոլոր խընդրածնիդ շնորհեմ ձեզ, այն ատեն ի՞նչ պիտի զգաք իմ մասիս։

— Կարելի է որ ձեր անձնուիրութեան այդ առաջին ապացոյցն մեծ տպաւորութիւն ընէ վրաս, բայց չ՚եմ կրնար հաստատել. ես այդքան հեռուն չ՚եմ կրնար դուշակել, տէ՛ր։

— Ա՛, շատ անողոք էք, գոչեց իշխանը ցաւագին դժկամակութեամբ մը, դուք միայն պահանջել գիտէք։

— Միթէ աւելի լա՞ւ է կեղծ խոստումներ ընել ձեզ, տէ՛ր։ Ասի ո՛չ ձեզ արժանի է և ոչ ինձ. ասկեց զատ, քիչ մ՚ալ իբր սրտի տէր անձինք խօսինք։ Նորէն կ՚ըսեմ, ի՞նչ է ձենէ խնդրածս. պատուաւոր մարդու մը հետ արդարութեամբ և գթասրտութեամբ վարուիլ. ձեր մեծցուցած որբին համար հայր մ՚ըլլալ։ Գիտնայի՛ք թէ այն խեղճ տղաքն ի՛նչպէս կը սիրեն զիրար։ Ի՛նչ անբծութիւն, ի՛նչ գորով, ի՛նչ յուսահատութիւն։ Այս առաւօտ Անթօնին իւր ակնկալութեանց փճանալուն վրայ խօսած ատեն, զիս յարտասուս շարժեց։

— Ֆրանց բարձրաստիճան անձի մը զաւակ է, ես իր վրայ ուրիշ դիտաւորութիւններ ունիմ, յարեց իշխանը նեղսրտութեամբ, չի կրնար այս աստիճան ստորին խնամութիւն մ՚ընել։

— Շիտակն աղուոր բա՛ռ։ Բայց ես ո՞վ եմ, տէ՛ր։ Մակտալէնա Բէրէզ, Մեքսիկացի պարկեշտ բայց սնանկացեալ խանութպանի մ՚աղջիկն, որ դիպուածաւ մարքիզուհի եղայ։ Եւ սակայն կը սիրէք զիս, առանց վախնալու որ ստորին խնամութիւն մը ըրած կըլլաք։

— Է՛հ, տիկի՛ն, ե՛ս, ե՛ս . . .

— Դո՛ւք ուրիշ, անանկ չէ՞, ինչպէս որ կ՚ըսէ կատակերգութիւնք։

— Գոնէ ես ազատ եմ ուզածս ընելու։

— Եւ ի՞նչու Ֆրանց ազատ չպիտի ըլլայ, երբ իւր միակ իղձն պարկեշտ ու համեստ կեանք մը՝ ազնիւ ու մաքուր սիրով մը պճնեալ։ Օ՛հ, տէ՛ր, եթէ իրաւ-

ցնէ զիս սիրէիք, պիտի կարեկցէիք այս երկու տղոց, որք իրենց տարիքին յատուկ անբծութեամբն ու եռանդեամբն կը սիրեն զիրար։ Եթէ սէրն զձեզ աւելի վեհանձն չ'քներ, ըսել է թէ այդ սէրը ճշմարիտ չ'է, և եթէ կուզէք որ օր մը այդ սէրն ես ալ զգամ, ջանացէք որ նախ հաւատամ անոր, ինչ որ անկարելի է ինձ, քանի որ կը տեսնեմ թէ Ֆրանցի հետ անգթութեամբ կը վարուիք։

— Է՛հ, եթէ զինքը այսքան չի սիրէի, փոյթ չ'էի ըներ։

— Շիտակը ատի սիրելու տարօրինակ դրութիւն մ'է։

— Ը՞ըսի՞ որ ես իր մասին մեծ դիտաւորութիւններ ունիմ։

— Ես ալ կ'ըսեմ որ, տէ՛ր, բոլոր այդ մեծ դիտաւորութիւնք զզուանք պիտի ազդեն իրեն։ Նա երջանիկ, համեստ ու անդորը կեանքի մը համար ծնած է. իւր պարզ ճաշակը, երկչոտ բնաւորութիւնք, նոյն իսկ իւր ձերքերն զինքը պերճութենէ և փառքերէ կը հեռացնեն. այսպէս չ'է՞,

— Բայց ուրեմն, ըսաւ իշխանը զարմանօք, ուրեմն դուք զինքը կը ճանչնա՞ք։

— Բնաւ տեսած չ'եմ։

— Հապա ի՞նչէն գիտէք . . .

— Անթօնին ամէն բան ըսաւ ինձ, և ո՞չ ապաքէն մարդու մը բնաւորութիւնը կրնայ գուշակուիլ՝ իւր սիրելու ձևէն։ Վերջապէս Ֆրանցի բնաւորութիւնն ըսածիս պէ՞ս է, այո՛ կամ ո՛չ։

— Ճշմարիտ է, այդ է իւր բնաւորութիւնն։

— Եւ դուք անդթօրէն պիտի բռնադատէք զինքը որ իրեն համար անտանելի վիճակ մը վարէ, մինչդեռ նորա կեանցը երջանկութիւնը ձեռքին ներքև պատրաստ է։

— Բայց գիտցէք որ ես Ֆրանցը զաւակիս պէս կը սիրեմ, և երբեք չ'եմ հաւանիր զինքն ինէ բաժնելու,

— Ցիրաւի գեղեցիկ հաճոյք մ'է ձեզ համար անդադար աչքերնուդ դեմն ունենալ խեղճ էակի մը վշտաբեկ դեմքն, զոր դուք յաւիտեան թշուառութեան կը դատապարտէք։ Ասկեց զատ Անթօնին որբ է, կրնայ Ֆրանցի հետ գալ. փոխանակ մէկի, երկու զաւակ կունենաք։ Այն ատեն այս մշտաժպիտի և քաղցր երջանկութեան տեսքն ո՛րքան պի մեղմացնէ ձեր մեծութեան հոգերն, ո՞րքան ուրախութեամբ պիտի երթաք ձեր սիրտն ու հոգին կենդանացնել այս երկու տղոց քով, որք չափազանց պիտի սիրեն զձեզ, վասն զի իրենց երջանկութիւնը ձեզ պիտի պարտին։

— Օ՛ն։ Թողէ՛ք զիս, գոչեց իշխանն այլայլելով։ Ձեմ գիտեր թէ ձեր խօսքերն ի՛նչ անհասկնալի զօրութիւն ունին, բայց կ'զգամ որ ամենէն հաստատուն որոշումներս կը խախտին և գաղափարներս կը տկարանան։

— Ատոր կը վշտանա՞ք, տէ՛ր։ Շիտակն, առանց գեշ խօսելու իշխանաց վրայ, կարծեմ թէ աղեկ կ'ընեն՝ եթէ իրենց գաղափարները մէկդի թողուն, վասն զի Աստուած գիտէ թէ այդ գաղափարներն ի՛նչ են։ Օ՛ն, հնազանդեցէք այդ ձեր զգացած տպաւորութեանն, վասն զի լաւ է։

— Է՛հ, միթէ այս պահուս լաւն ու յոռին զանազանելու չափ կարողութիւն ունի՞մ։

— Այդ մասին լաւ դիտեցէք այն անձանց դէմքն, որոց երջանկութեանը պատճառ պիտի ըլլաք. երբ միայն ըսէ՛ք՝ « Խեղճ տարաբի՛ր, գնա՛ հայրենիքդ տե՛ս. եղբարքդ գրկերնին բացեր են

քեզ. » և միւսին՝ « Սիրելի տղաս, երջանիկ եղի՛ր, ամուսնացիր Անթօնինի հետ. » այն ատեն, տէ՛ր, ուշի ուշով նայեցէ՛ք երկուքին երեսն, և եթէ նոցա աչերն արտասուօք կը լենան, ինչպէս որ այս պահուս կը լենան ձեր ու իմ՝ աչերն, ապահով եղի՛ք, տէ՛ր, ձեր բրածն բարի՛ք է, և ձեզ խրախուսելու համար որ այս բարիքն ընէք, վասն զի ձեր այլայլութիւնն սիրտս կը շարժէ, կը խոստանամ Անթօնինի հետ Ալմանիա երթալ։

— Իրա՛ւ, գոչեց իշխանն յափշտակութեամբ, կը խոստանա՛ք։

— Հարկաւ, տէ՛ր, ըսաւ Մատլէն ժպտելով, զիս հրապուրելու ժամանակ տալու է ձեզ։

— Լա՛ւ, ի՛նչ որ ալ ըլլայ, ի՛նչ որ ալ ընէք, վասն զի կարելի է որ հետս կը զուարճանաք, ըսաւ իշխանը՝ Մատլէնի ծնգացը նետուելով, խօսք կուտամ՝ որ տարագրին կը ներեմ, և . . .

— Սրահին դրանն ետին բաւական սաստիկ աղմուկ մ'ըլլալով՝ Արքիդքսին խօսքն ընդմիջեց, աղմուկ մը, յորում՝ շատ մը ձայներ կը խօսէին և ի միջի այլոց սա բառերն կը լսուէին։

— Կ'ըսեմ որ ներս չպիտի մտնէք, պարո՛ն։

Ցանկարծ Արքիդուքսը ոտքի ելաւ, բարկութենէն և դժկամակութենէն տրժգունեցաւ, և ըսաւ Մատլէնի։

— Կ'աղաչեմ, քովի սենեակը մտէք, դուրսը տարօրինակ դէպք մը տեղի կունենայ։ Վայրկեանէ մը ես ալ կուգամ։

Այս միջոցին բաւական բուռն հարուածմը դրուեցաւ դրան։ Իշխանը քովի սենեկին տուռը բանալով՝ ըսաւ Մատլէնի։

— Մտէ՛ք, կ'աղաչեմ։

Ապա դուռը փակեց, և ուղելով այս յանդուգն որ անսովոր աղմուկին պատճառն իմանալ, սրահէն դուրս ելաւ, և տեսաւ Պ. Բասքալը, զոր երկու թիկնապահք կը ջանային բռնել։

ԺԷ.

Թիկնապահք Արքիդուքսը տեսնելով՝ յարգանօք մէկդի քաշուեցան, և Պ. Բասքալ, որ ինքնիրմէ դուրս ելած կ'երևնար գոչեց։

— Կրո՛ղ, հոս զարմանալի ընդունելութիւն կ'ընեն եկողներուն, տէ՛ր . . .

Իշխանը, այն ատեն միայն յիշելով Պ. Բասքալի տուած ժամադրութիւնն և վախնալով որ այս կոպիտ անձք նոր անկրթութիւն մը կ'ընէ, նշան ըրաւ անոր որ ետևէն երթայ ու ըսաւ։

— Եկէ՛ք, տէ՛ր, եկէ՛ք։

Եւ դուռը գոցուեցաւ իշխանին ու դրամատիրոջ վրայէն։

— Հիմայ, պարո՛ն, ըսաւ Արքիդուքսն բարկութենէն դեղնելով և հազիւ ինքզինքը զսպելով, պիտի ըսէ՛ք ինձ ասանկ խայտառակութեան մը պատճառը։

— Ի՛նչ, տէ՛ր, ժամը երեքին ունկընդրութիւն խոստացաք ինձ, և ես ժամանակին եկայ. քառորդ մ'անցաւ, ոչ ոք, կէս ժամ, ոչ ոք. այն ատեն համբերութիւնս հատաւ և ձեր սպայից մէկուն աղաչեցի որ ձեզ յիշեցնէ թէ կըսպասեմ։ Ըսին թէ քովերնիդ մարդ կայ. ձայն չի հանեցի. բայց կէս ժամ՝ ևս անցաւ, այն ատեն ձեր պարոններուն յայտնեցի որ, եթէ չի դան ձեզ իմաց չտան, ես ինքս

պիտի դամ։

— Ատի, պարո՛ն, յանդգնութիւն է։

— Ի՞նչպէս յանդգնութիւն։ Ա՛հ, տէր, ե՞ս ձեզի պէտք ունիմ թէ դուք ինձի։

— Պարո՛ն Բասքա՛ալ . . .

— Ե՞ս ձեզի եկայ, տէ՛ր։ Ե՞ս ձենէ ստակ խնդրեցի։

— Բայց, պարո՛ն . . .։

— Բայց, տէ՛ր, երբ կը հաւանիմ գործերս ձգել ու գալ ձեր անդրասենեակին մէջ սպասել, ինչ որ ուրիշին համար բնաւ չեմ ընէր, կարծեմ՝ թէ պէտք չէ որ զիս ժամ մը սպասեցնէք, մանաւանդ Պօրոյչ ամենէն կարեւոր ատենը, ուր ձեր շնորհիւն այսօր չպիտի կարենամ երթալ, առանց հաշուելու որ ձեր թիկնապահներն զիս կը հրմշտկեն, երբ ես ինքս կ՝ուզեմ գալ ձեզ իմաց տալ թէ՝ ժամադրութեան ատենը եկած է։

— Պատշաճութիւնը կը պահանջէր որ ունկնդրութեանս աւարտելուն սպասէիք, պարո՛ն։

— Կարելի՞է, տէ՛ր. բայց գժբաղդաբար իմ արդարացի անհամբերութիւնս ատոր բոլորովին ներհակն հրամայեց ինձ, և շիտակը կը կարծէի որ ուրիշ տեսակ ընդունելութեան մ՝արժանի էի, քանի որ անանկ ծառայութիւն մը պիտի մատուցանէի ձեզ, որու համար պաղատեցաք ինձ։

Իշխանը իւր բարկութենէ և դժկամակութենէն, ի սկզբան մոռցեր էր որ Միրանտայի մարքիզուհին քովի սենեակէն կրնար ամեն բան լսել, ուստի ամօթէն շիկնելով և զգալով որ հարկ է դիմացինին բարկութիւնն ամոքել, Իշխանը ամեն ճիգ ըրաւ հանդարտ երեւնալու և ջանաց խօսակցելով Պ. Բասքալը պատուհանին կողմը տանիլ, որպէս զի Մատլէն ոյն խօսակցութիւնը չի լսէ։

— Գիտէք որ, Պ. Բասքալ, քսաւ, միշտ ձեր բնաւորութեանը խստութեանցն համբերած եմ։ Այս անգամ ալ նոյնպէս պիտի ընեմ։

— Շիտակը չափազանց քարի էք, տէր, պատասխանեց Բասքալ հեգնօրէն, բայց գիտէք որ ամեն մարդ իւր ներզսուութիւններն ունի և այս միջոցիս ես ալ շատ ներզացած եմ, որով չեմ կրնար ինքզինքս բռնել։

— Այդ բացատրութիւնն կը բաւէ, Պ. Բասքալ, պատասխանեց Իշխանը, որ կը յիշէր թէ մեծ պէտք ունէր դրամատիրոջ օգնութեան։ Գիտեմ որ ընդդիմութիւնն երբեմն ամենէն մեղմ բնաւորութիւններն իսկ կը խստացնէ. ուրեմն ա՛լ ատոր խօսքը չընենք։ Մեր գործը լմնցնենք։ Մեր գործը լմնցնելու համար որոշած պայմանաժամիս երկու օր փութացընել խնդրեցիք։ Ցուսամ որ գոհացուցիչ պատասխան մը բերիք։

— Բերածս բացարձակ Ա.Յ.Ո մ՝է, տէ՛ր, պատասխանեց մեր մարդը մեղմանալով, և գրպանէն թղթակալ մը հանեց։ Ակէ զատ՝ այս պոլին իբր ապացոյց, ահա՛ Ֆըռանսայի դրամատան վրայ փոխանակագիր մը, որով ամբողջ գումարին մէկ տասներորդն կրնաք ստանալ, այս ալ փոխառութեան մնացորդն վճարելու խոստմնագիր մ՝է իմ կողմէս։

— Ա՛հ, սիրելիս Պ. Բասքալ, գոչեց Իշխանն ցնծութեամբ, դուք ոսկիէ մարդ մ՝էք։

— Ոսկէ՞ հոգ մը, ճիշդ, տէ՛ր։ Կ՝երեւի որ ձեր իմ վրայ ունեցած համակրութեան պատճառն այս է։

Իշխանը այս ակնարկութիւնը չի նշմարելու զարկաւ։ Ուստի, երջանիկ ըլլալով այն օրն, որ կարծես իւր զանազան իշխերն պսակել կը թուէր, և փափագելով

ժամ առաջ դրամատէրն ճամբել, որպէս զի Մատլէնի քով երթայ, յարեց։

— Քանի որ ամէն բան որոշուած է, սիրելիս Պ. Բասքալ, թղթերն ստորագրենք, և վաղն առտու կամ միւս օր, երբ որ ժամանակ ունենաք, գործը ամբողջապէս կը կարգադրենք։

— Կ'իմանամ, տէ՛ր, երբ մի անգամ ստակ և ստորագրութիւն ձեռք ձգէք, պիտի փափաքիք ժամ առաջ ձեր գլխէն նետել Բասքալ ծառանիդ, ու վաղը զինքը պիտի յղէք ձեր ստորագասեալներէն մէկուն, որու պաշտօնն է ձեր գործերը կարգի դնել։

— Պարո՛ն։

— Միթէ բնական ընթացքն այս չէ՞, տէր։ Փոխառութենէն առաջ բարեգործող ոգի մը, կէս կամ տարօրէն Աստուած մ'ենք, բայց ստակը տալերնուս վերջը՝ հրեայ ենք, վաշխառու ենք։ Ես լաւ գիտեմ, ասի միտալին հակառակ կողմն է։ Ուստի այդքան մի՛ աճապարէք յիշեալ միտալը դարձնելու, տէր։

— Վերջապէս, պարոն, ի՞նչ ըսել կուզէք։

— Հիմայ կ'ըսեմ, տէ՛ր, վասն զի ես ալ գործ ունիմ։ Ստակն ու ստորագրութիւնս հոս է, թղթակալին զարնելով. գործը լմնցած է, բայց մէկ պայմանաւ։

— Դարձեալ պայմանն՝ե՛ր։

— Ամէն մարդ, տէ՛ր, իւր գործը հասկըցածին պէս կը կարգադրէ։ Ասկէ զատ իմ պայմանս շատ պարզ է։

— Ցեսնենք ի՛նչ է, պարո՛ն։

— Երեկ պարտիզին մէջ գեղեցիկ խարտեաշ երիտասարդ մը տեսայ, որու համար ըսի՛ք թէ հոս կը բնակի։

— Անշո՛ւշտ, ադի Ֆրանց կոմսն է, իմ սանս։

— Արդէն ըսի թէ շատ սիրուն տղայ մ'է։ Ուստի դուք իւր կնքահայրն ըլլալով, ի հարկէ բաւական ազդեցութիւն ունիք իր վրայ, չէ՞ մի։

— Ի՞նչ ըսել կ'ուզէք, պարո՛ն։

— Տէր, նոյն իսկ ձեր սանին օգտին համար կըսեմ թէ Բարիզու օդն դէշ է իրեն։

— Ինչպէս։

— Այո՛, և աղեկ կ'ընէք, եթէ զինքը Ալմանեա դրկէք. ասի իւր առողջութեանը շատ օգտակար կ'ըլլայ, տէ՛ր, խիստ շատ։

— Կատա՞կ կ'ընէք, պարո՛ն։

— Ընդհակառակն, տէր, և մեր գործին եղբակցութեան միակ պայմանն այս է։ Առ առաւելն մինչեւ 24 ժամ ձեր սանը յԱլմանեա մեկնելու է։

— Շիտակը, պարո՛ն, զարմանքէս չեմ կրնար սթափիլ։ Ֆրանցի մեկնելէն ի՞նչ շահ ունիք։ Ասի անհասկանալի է,

— Հիմայ կը հասկցնեմ ձեզ, տէր, և նորա մեկնելէն իմ ունեցած շահս ձեզ ցոյց տալու համար, պէտք է որ գաղտնիք մը խոստովանիմ ձեզ։ Արդ, տէ՛ր, ես խենթի պէս սիրահարուած եմ։ Այո, սիրահարուած. ասի ծիծաղելի՞ կ'երեւի ձեզ, ինձի՞ պէս։ Բայց վերջապէս ասանկ է։ Ուստի, ինչպէս որ կ'ըսէի, ձեր դրացուհիներէն օրիորդ Անթօնին Հիւպէրը անունով աղջիկ մը սիրահարած եմ։

— Դո՛ւք, պարո՛ն, գոչեց իշխանն ապշելով, դո՛ւք։

— Անշուշտ ե՛ս, ե՛ս, Բասքալ, և ինչո՞ւ չէ, տէր։ Սէրը ամէն պոչիէ է, կ'ըսէ երգը։ Միայն թէ, ձեր սանին՝ Պ. Ֆրանցի տարիքն ըլլալով, այս տղեկն սկսեր է օրիորդ Անթօնին Հիւպէրը սիրելու, ասելս այն աղուոր տղան սիրեր է, ինչ որ գիս շատ անշահ կացութեան մը մէջ կը դնէ. բարեբաղդաբար դուք կրնաք օգնել ինձ որ այս կացութենէն ազատիմ, տէր։

— Ե՞ս։

— Այո՛, տէ՛ր, ահա՛ ինչպէս. Պ. Ֆըրանցն անմիջապէս ճամբայ հանեցէք, երաշխաւորեցէք ինձ որ քանի մը տարի Ֆրանսա չպիտի վերադառնայ, և մնացեալն ինձ կը պատկանի։

— Բայց ի՞նչ կ՚ըսէք, պարո՛ն. եթէ այդ աղջիկը Ֆրանցը կը սիրէ...

— Մնացեալն ինձ կը պատկանի, ըսի, տէ՛ր. Հիւպէր նախագահը շատ չ՚ապրիր, իմ մարտկոցներս պատրաստ են. աղջիկը պիտի ստիպուի անդիի ծայր ագահ ու ծակաչք պառաւ ազգականուհիի մը քով երթալ բնակիլ. հարիւր հազար ֆռանքով այն խռֆածը կրնամ ձեռք ձգել, և աղջիկը մէկ մը անոր ճիրաններուն մէջ որ ինայ, կ՚երդնում թէ պիտի ստիպուի կամայ ակամայ փէկէն Բասքալ ըլլալու, և հաւանական է որ բռնադատելու հարկ չի մնար։ Այո՛, տէ՛ր, տասնեւհինգ տարեկան տղեկի մը սէրը նշանակութիւն չ՚ունի, չ՚եմ ըսեր փէկէն արէէրէ, այլ փէկէն մելէոնապէրոհի ըլլալու բաղձանքին քով։ Հիմայ, տէ՛ր, ահա՛ պայմանս բացէ իրաց յայտնեցի. ձեր բնաւ փոյթը չ՚է կարծեմ որ սաներնիդ ստակ մը չ՚ունեցող աղջկան մը հետ ամուսնանայ կամ ոչ։ Առաջարկած պայմանս շատ դիւրին է։ Նորէն կ՚ըսեմ. այո՞ թէ ոչ։

Իշխանն շուարած է, ոչ այնքան Բասքալի դիտաւորութիւններէն և գարշելի շնականութենէն, որքան որ այն կացութենէն, ուր կը նետէր զինքը դրամատիրոջ պայմանն։

Եթէ հրամայէր որ Ֆրանց մեկնի և Անթօնինի հետ ամուսնանալուն դէմ կենար, Մատլէնը կը կորսնցնէր. եթէ Պ. Բասքալի առաջարկած պայմանը մերժէր, կը կորսնցնէր այն փոխառութիւնն, որով պիտի կարենար իւր փառասիրական դիտաւորութիւններն կատարել։

Իշխանն՝ այս երկու բուռն կրից մաքառման առեն, իշխանն, իբրև ճշմարիտ իշխան, յիշեց որ աքսորելոյն ներելու միայն խօսք տուեր էր Մատլէնի, վասն զի Ֆրանցի ամուսնութեանն հաւանութիւն տալու միջոցին Բասքալի բարկութեանը պատճառաւ ծագած աղմուկն իւր խօսքն ընդհատեր էր։

Թէև ասի փախուստի շատ դիւրին միջոց մ՚էր, բայց Արքիդուքսն այս միջոցին զգաց թէ մարքիզուհին ի՞նչ աստիճան ազդեցութիւն ունէր իր վրայ, վասն զի նոյն իսկ այն առտուն վայրկեան մը չպիտի վարանէր Ֆրանցն իւր փառասիրութեանը զոհելու։

Իշխանին վարանումն ու անձկութիւնը ևս քան զիս զարմանք կը պատճառէին Բասքալի, մտքէն իսկ չէր անցած որ Ֆրանցի մասին ըրած առաջարկութիւնը կարենայ խնդիր յարուցանել. բայց, որպէս զի իշխանին մերժման հետեւանքներն ցոյց տալով՝ նորա որոշմանը վրայ ճնշում բանեցնէ, յարեց.

— Շիտակը, տէր, ձեր վարանումն անմեկնելի է, ի՞նչպէս. դպրոցականի սիրոյ մը համար թագ մը ձեռք ձգելու ըստուգութենէն պիտի հրաժարի՞ք։ Վասն զի վերջապէս ձեզ առաջարկուած պայմանն անկախ է։ Այդ դքսութիւնն այս փոխառութեամբ միայն կրնաք ձեռք ձգել, ինչ որ խօսքը մէջերնիս, մեծ պարծանք է բարեմիտ Բասքալին, վասն զի իւր փոքրիկ քսակին իշխանութեամբն կըրնայ թագաւորներ շինել և ըստ հաճոյս թոյլատրել կամ արգելուլ այն սիրուն առևտուրն, յորում եզանց կամ գառանց հօտի մը պէս կը վաճառուին ու կը փոխանակուին ժողովուրդներն։ Բայց ատոնք ինձ չվերաբերիր։ Ես դիւանագէտ չեմ,

իսկ ձեր վարանումն չեմ հասկնար։ Նո-
ըէն կ'ըսեմ, այո՞, թէ ոչ։

— Ո՛չ, ըսաւ Մատլէն՝ մէկէն ի մէկ
քովի սենեակէն դուրս ելնելով՝ ուսկից
լսեր էր նախորդ խօսակցութիւնն՝ հա-
կառակ իշխանին զգուշութեանցն։

ԺԸ.

Արքիդուքսն յանակնկալս տեսնելով
Միրանտայի մարքիզուհին, Պ. Բասքալի
չափ զարմացաւ. սա նախ ապշած նայ-
ուածք մը նետեց Մատլէնի վրայ, կար-
ծելով որ նա ևս պալատը կը բնակի, վասն
զի գլխարկն հաներ էր և նորա տարօրի-
նակ գեղեցկութիւնն իւր բովանդակ պեր-
ճութեամբն կը փայլէր։ Գլխարկին ձգած
շուքը, որ մասամբ կը ծածկէր նորա ճա-
կատն ու այտերն, աներևութացեր էր,
և սենեկին լոյսը Մատլէնի թուխ դէմքին
թափանցիկ մաքրութիւնը աւելի ևս երե-
ան հանելով, նորա խարտեաշ մազերուն
թեթև գանգատներն կ'օսկեզօծէր և սև
ու երկար թարթիչներով կապոյտ աչերուն
կուտար այն ջինջ տեսքն զոր արևու ճա-
ռագայթ մը կուտայ հանդարտ ծովու
կապուտին։

Մատլէն, որու այտերն թեթև մը կար-
միր էին՝ Բասքալի զգիր դիտաւորու-
թեան իրեն պատճառած սրտմտութենէն,
աչերն բոցավառ, ռնգունքն դողդոջուն,
գլուխն սիգօրէն բռնած իւր ճկուն և վա-
յելուչ վզին վրայ, Մատլէն, կ'ըսենք,
սրահին մէջ տեղն եկաւ և խօսքն դրա-
մատիրոջ ուղղելով՝ ըսաւ։

— Ոչ, իշխանը չիպիտի ընդունի այն
առաջարկութիւնը, զոր կը յանդգնիք ը-
նել իրեն, պարո՛ն։

— Տիկի՛ն, թոթովեց Պ. Բասքալ, ըզ-
գալով որ իւր սովորական լրբութիւնն
ձեռքէն կ'երթար և չփոթած ու հիացած
ետ քաշուելով, տիկի՛ն, չ'եմ գիտեր թէ
ո՛վ էք և ի՛նչ իրաւամբ . . .

— Օ՛ն, տէ՛ր, ըսաւ մարքիզուհին խօս-
քը արքիդքսին ուղղելով, եթէ ոչ իշխա-
նի, գոնէ մարդու արժանապատուութիւն-
նիդ ձեռք առէք. ձեզ առաջարկուած
նուաստացուցիչ պայմանն իրեն արժանի
արհամարհանօք մերժեցէք։ Տէ՛ր Աստուած
ի՛նչ զոհողութեամբ պիտի ընդունիք այդ
թագն։ Ի՛նչպէս պիտի համարձակի՞ք այդ
թագն այս մարդուն ոտիցը տակէն առ-
նելու։ Բայց այն ատեն այդ թագն ձեր
ճակատը կ'աղտեղէ. որտի տէր մարդ մը,
ինչ վիճակի մէջ որ ալ ըլլայ, ձեր կրած
նուաստութեանց մէկ հազարերորդին իսկ
չի հանդուրժեր, տէ՛ր։ Եւ դուք իշխան
է՛ք, հպա՛րտ էք, այն կարգի մարդոցմէ
էք՝ որք ինքզինքնին ռամկէն վեր կը կար-
ծեն։ Ըսել է ձեր հպարտութիւնն միմիայն
ստրուկ պալատականաց և երկչոտ ժողո-
վրդեան համար է, Պ. Բասքալի մ'առջև
կը խոնարհի այդ գերագոյն հպարտու-
թի՛ւնը։ Ստակն այդքան զօրաւոր է ուրե-
մքն, յարեց Մատլէն ևս քան զևս գբը-
գռուելով և նախատական շարժմամբ մը
դրամատիրոջ խօսքն ընդմիջելով, տեսէ՛ք
որո՛ւ առջև կը խոնարհին, Փա՛ռք Աստ-
ուծոյ, այս է ուրեմն այս օրուան արք-
քայից արքայն։ Մտածեցէ՛ք, իշխա՛ն,
ձեր փառասիրութեանն է որ այս մարդն
հզօր և յանդուգն է։ Օ՛ն, տէ՛ր, փոխա-
նակ ամօթալի նուաստութեամբ մը դնե-
լու բարձր աստիճանի մը դիւրաբեկ խա-
ղալիկն, մէկտի ըրէք այդ եղկելի ան-
պարծութիւնն, ձեռք առէ՛ք ձեր սրտի

տէր մարդու իրաւունքներն, և պիտի կարենաք այն ատեն խայտառակելով վանտել սա մարդը որ այնքան լրբութեամբ կը վարուի ձեզ հետ, որքան որ դուք վարուած չէք բնաւ ձեր յետին հարկատուին հետ։

Բասքալ, հարստութեան հանելէն ի վեր, վարժուած էր բռնապետութեան և երկիւղած յարգանքներ ընդունելու այն անձերէն, որոց բաղդն իւր ձեռքին մէջ էր. երևակայեցէք իւր զարմանքն ու կատաղութիւնն, երբ այսպէս խօսեցաւ Մատլէն, որ մինչև այն ատեն տեսած կանանց եթէ ոչ ամենէն գեղեցիկն, դոնէ ամենէն հրապուրիչն էր։ Մտածեցէ՛ք իւր յուսահատութիւնը, երբ միտքը բերաւ որ անշուշտ պիտի ստիպուէր Անթօնինէն հրաժարիլ և դքսական փոխառութեան շահը կորսնցնել, ինչ որ իրեն համար սքանչելի գործ մ'էր. ուստի սպառնական կերպով մը գոչեց։

— Զգուշացէ՛ք, տիկի՛ն. այդ ստակի իշխանութիւնն շատ միջոցներ կրնայ հայթայթել վրէժխնդրութեան, զգուշացէ՛ք։

— Փա՞ռք Աստուծոյ, գեղեցի՛կ սպառնալիք, որ զիս շատ կ'ահաբեկէ, յարեց Մատլէն հեգնօրէն խնդալով եւ նշանացի կեցնելով իշխանն, որ քայլ մը կ'առնէր դէպ ի Բասքալ։ Կ'ըսէք թէ ձեր իշխանութիւնն մեծ է, պարոն արկղամուր. իրաւ է, ստակին իշխանութիւնը շատ մեծ է. Ֆըրանքֆորթի մէջ մէկը գիտեմ որ 1830-ին երկու երեք թագաւորաց ըսաւ. «Կուզէք Ֆրանսայի հետ պատերազմել, ՝Ի՞նչ էրծէ՞ն է էր, ուստի ո՛չ ես և ո՛չ ընտանիքս ըստակ չպիտի տանք ձեզ։» Եւ պատերազմ չեղաւ։ Այս բարի ծերուկն, որ ձենէ հաւիւր անգամ աւելի հարուստ է, Պ. Բասքալ, իւր հօրն համեստ տունը կը բնակի և քիչով կ'ապրի, մինչդեռ իւր բարերար անունն արձանագրուած է հասարակաց օգտակար բազմաթիւ շքեղ շէնքերու ճակատն։ Զինքը ԺՈՎԷՐԹՈՅ ԲԱՐԵՐՈՒԸ կը կոչեն, և իւր անունն այնքան կ'օրհնուի, որքան ձերն կ'անիծուի ու կը պախարակուի, Պ. Բասքալ։ Վասն զի ձեր ՈՒՂԻՂ և ՊԱՊՈՒԱՒՈՐ մարդու համբաւն ինչպէս Ֆըրանսայի, նոյնպէս և օտար երկիրներու մէջ հանրածանօթ է։ Ո՛հ, այո՛, դուք շատ ծանօթ էք, Պ. Բասքալ, և չ'էք կրնար երևակայել թէ ի՛նչպէս կը գնահատեն ձեր ազնուութիւնն և ուղղութիւնը։ Մանաւանդ ընդհանուր ակնածութեան առարկայ է այն պատուաւոր դրութիւնն, որով շահեր ու աւելցուցեր էք ձեր անհուն հարստութիւնը։ Բոլոր ասոնք մեծ համբաւ մը տուած են ձեզ, պարոն Բասքալ, և ինքզինքս երջանիկ կը համարիմ որ այս պարագային մէջ կրնամ հաստատել ձեզ դայս։

Տիկին, յարեց Պ. Բասքալ անանկ հանդարտութեամբ մը, որ բարկութենէ հաւիւր անգամ աւելի ահարկու էր, շատ բան գիտէք, բայց սա միայն չ'էք գիտեր թէ ի՞նչ տեսակ մարդ է այն մարդը, զոր կը գրգռէք։ Չէք գիտեր թէ ի՞նչեր կրնայ ընել այն արկղամուրն, ինչպէս որ կ'ըսէք։

Իշխանն վերստին սպառնական շարժում մ'ըրաւ, զոր Մատլէն զսպեց. ապա ուսերն ցնցելով ըսաւ։

— Սա միայն գիտեմ որ, Պ. Բասքալ, հակառակ ձեր յանդգնութեանը, լրբութեանն ու արկղամուրին, բնաւ չպիտի ամուսնանաք օրիորդ Անթօնին Հիւպէրի հետ, որ վաղը պիտի նշանուի Ֆրանց տը Նէօպէրկի, ինչպէս որ իշխանն հիմայ պիտի ըսէ ձեզ։

Եւ առանց Բասքալի պատասխանին ըսպասելու, մարքիզուհին հեգնօրէն կէս

բարև մը տուաւ և քովի սենեակը մտաւ։

Արքիդուքսն, Մատլէնի խօսքերուն վերհանձնութենէն յափշտակուելով և ևս քան զևս հրապուրուելով նորա գեղեցկութենէն, Արքիդուքսն, կ'ըսենք, որու սրտին մէջ շատ ոխ ու բարկութիւն կար դիզուած Բասքալի լրբութեանց պատճառաւ, կզդար այն ուրախութիւնն, զոր կզդայ անարդեալ լուծէն ազատող դերին։ Նորատի կնոջ կրակոտ ձայնը լսելով՝ այս իշխանին հոգին, որ տոհմային հպարտութեամբ կարծրացած և շողաքորդութեան մթնոլորտին մէջ սառած էր, պահ մը ազնուաբար բաբախեց, և ամօթոյ շիկնութիւնն ծածկեց վերջապէս այս սէգ մարդուն ճակատը, երբ չափեց թէ՝ որքան նուաստացեր էր Պ. Բասքալի առջև։

Սա ևս, որ ա՛լ չէր նեղուեր մարքիզուհւոյն ներկայութենէն, գտաւ վերստին իւր յանդգնութիւնն, և խօսքն իշխանին ուղղելով, ըսաւ նմա իր սովորական վայրի հեգնութեամբն, որու կը միանար՝ արքիդքսին ասանկ գեղեցիկ սիրուհի մը ունենալուն համար զգացած նախանձը, (վասն զի Բասքալ այսպէս կը կարծէր)

— Անիծա՛ծ. հիմայ չեմ զարմանար, տէր, այնքան երկար ատեն անդրասենեկին մէջ սպասելուս։ Կը տեսնեմ որ շատ զբաղած էք եղեր։ Ես ասանկ բաները աղեկ կը ճանչնամ, և կը շնորհաւորեմ զձեզ. բայց մեզի պէս մարդիկ չեն թողուր որ կին մը իրենց քթէն բռնէ. ուստի, գիտնալով որ դուք ձեր շահերը լաւ կը ճանչնաք, չեմ կարծեր որ այս փոխառութենէն հրաժարիք և հաւատաք անոր ըսած խօսքերուն, զորս ես չպիտի մոռնամ, տէ՛ր, և, յաւել Բասքալ, որու կատաղութիւնն իւր լրբութիւնը կը կրկնապատկեր, և, հակառակ այն սիրուն կնոջ անմման աչքերուն, պէտք է որ ինձ բրած նախատանաց վրէժն առնում։

— Պ. Բասքալ, ըսաւ իշխանն, ուրախ ելլալով որ վերջապէս պիտի կարենայ վրէժն առնուլ, պարոն Բասքա՛լ, և մատովը դուռը ցոյց տուաւ անոր, դուրս ելէք, և մէկ մ'ալ հոս ոտք մի՛ կոխէք։

— Տէ՛ր, այդ խօսքերն . . .

— Պ. Բասքալ, յարեց իշխանը ձայնը բարձրացնելով և ձեռքը դէպ ի հնչակը երկնցնելով, անմիջապէս դուրս ելէք, ապա թէ ո՛չ ձեզ ես դուրս հանել կուտամ։

— Ընդհանրապէս լրբութեան մէջ այնքան վատութիւն և շահասիրութեան մէջ այնքան նուաստութիւն կայ որ, Պ. Բասքալ, տեսնելով որ յոյսերն կը փճանան և փոխատուութեան շահերն ալ կը կորսընցնէ, զղջաց իւր կոպտութեանն. այնքան նուաստացաւ, որքան որ խրոխտացեր էր մինչև այն ատեն, և ողբալի ձայնով մը ըսաւ իշխանին։

— Կատակ կ'ընէի, տէր. կը կարծէի որ Ձեր Վսեմութիւնն իմ խօսուածքիս ձևէն կ'ախորժէր և ըսածներովս կը զուարճանար, ասոր համար ափեղ ցփեղ խօսեցայ։ Ձեր Վսեմութիւնն կրնա՞յ կարծել որ այն սիրուն տիկնոջ կատակներուն դէմ բարկացած ըլլամ։ Ընդհակառակն, պիտի խնդրեմ՝ Ձեր Վսեմութենէն որ, երբ մեր փոխատուութիւնը կնքուի, ինչպէս որ կը յուսամ, նուիրեմ այն ազնիւ կնոջ ինչ օր մենք՝ արկղամուրքս, ինչպէս որ կ'ըսէր քիչ մ'առաջ, զարդարանաց գնդասեղներ կը կոչենք, այսինքն քանի մը հազար ոսկի. տիկնայք միշտ մանր մունր բաներու պէտք կունենան . . .

— Պարոն Բասքալ, ըսաւ իշխանը, որ նորա նուաստութեանը վրայ կը խնդար, դուք թշուառական մ'էք. դուրս ելէ՛ք,

— Բայց, տէ՛ր, ըլլօրէ՞ն կ'ըսէք ինձ

այդ բանն, գոչեց Բասքալ։

Իշխանն առանց պատասխանելու, հընչակը զարկաւ. Թիկնապահ մը ներս մըտաւ։

— Պարոնը կը տեսնէ՞ք, ըսաւ Արքիդուքսը սպային՝ նշանացի Բասքալը ցոյց տալով։ Դիտեցէք զայն։

— Այո, տէ՛ր։

— Անունը գիտէ՞ք։

— Այո՛, տէր. Պ. Բասքալն է։

— Ուրիշ անգամ եթէ տեսնէք՝ կը ճանչնա՞ք։

— Կատարելապէս, տէ՛ր։

— Լաւ ուրեմն, այս մարդը մինչև փողոցին դուռը տարէք, և եթէ երբեք համարձակի հոս դալ, խայտառակելով վռնտեցէք։

— Շատ աղեկի՝ տէր, պատասխանեց Թիկնապահը, որ, ինչպէս նաև իր ընկերներն, Պ. Բասքալի ՝լրբութիւններէն մասն ունեցեր էր։

Մեր մարդը, տեսնելով որ իւր յոյսերը կը բճանան և ա՛լ ևս քաշուելու կէտ մը չունենալով, յանդգնութիւնք ձեռք առաւ, գլուխը վեր վերուց և ըսաւ Իշխանին որ, այսքան վրիժառութեան գոհ ելլալով, կը փութար Մատլէնի քով երթալ։

— Է՛, պարոն Արքիդուքս, երկուքնուս ալ քաջութիւնք և նուաստութիւնը միևնոյն խմբէ են. անցեալ օր ես հզօր էի ձեր վատութեամբն, ինչպէս որ քիչ մ՚առաջ դուք հզօր եղաք իմ վատութեամբը։ Հոս միակ քաջ անձը այն անիծեալ կինն է, այն սև ընքուիներով, եւ խարտեաշ մազերով կինը, բայց ես ձեր երկուքէն ալ վրէժս պիտի առնեմ։

Իշխանը, բարկանալով որ սպայի մ՚առջեւ այս խօսքերն կ՚ընէ իրեն՝ կարմրեցաւ և կատաղութեամբ ոտքը գետին զարկաւ։

— Դուրս պիտի ելլէ՞ք, պարոն գոչեց սպայն՝ ձեռքը սուրին տանելով և Բասքալի սպառնալով, դ՚ուրս, ապա թէ ոչ...։

— Կեցէ՛ք, պարո՛ն կռռուասէր, պատասխանեց Բասքալ ետ քաշուելով։ Կեցէ՛ք, հոս մարդ սպաննել չելլար, գիտէ՞ք հոս Ֆրանսա է, գիտէ՞ք, և ոստիկանութեան պաշտօնեայներ կան, գիտէ՞ք, որ հարստահարուող պարկեշտ քաղաքացիներն կը պաշտպանեն։

Պ. Բասքալ պալատէն դուրս ելաւ սիրտը թոյնով լի, ատելութեամբ կրծուած և կատաղութենէն պայթելով. միտքը կը բերէր իւր շահն ու սէրը, որք երկուքըն ալ ի դերեւ ելեր էին և մտքէն չէր կրնար վանել Մատլէնի կրակոտ ու դալուկ դէմքն, որ, առանց Անթօնինի կուսական գեղեցկութեան անբծութիւնն մոռցնել տալու իրեն, կարծես աւելի ևս ներկայ ցոյց կուտար զայն իւր մտաց, վասն զի այս երկու կատարեալ և սակայն աննման տիպերն իրարու արժէքն կ՚աւելցընէին, նոյն իսկ այն պատճառաւ որ միմեանց հակապատկեր մը կը ձեւացնէին։

— Մարդս տարօրինակ կենդանի մ՚է, վագրի բնազդումներ կ՚զգամ՚յիս, կ՚ըսէր Պ. Բասքալ ինքնիրեն։ Ծանրաքայլ յառաջանալով Ֆօպուրկ—Սէնթ—Օնորէ փողոցին մէջ, երկու ձեռքերը տափատին գրպաններուն մէջ խոթած։ Ո՛չ, յարեց նա գլխիկոր քալելով և աչքերն մեքենաբար յառելով սալայատակին վրայ, ո՛չ, ասիկայ ուրիշներուն ըսելու չէ, որպէս զի մեզ միլիոնատերաց նոխանձողները չի մխիթարուին։ Վասն զի բարեբախտաբար մեզ նախանձողներն ալ սոսկալի կերպիւ կը տառապին։ Բայց վերջապէս իրականութիւնն այս է, ահաւասիկ ես սքնտուկիս մէջ պէտք եղածէն աւելին ունիմ մարդու մը երազած բոլոր ներելի կամ արդիլեալ վայելքներովն յագենալու

համար. տակաւին երիտասարդ եմ, անմիտ չեմ, առոյգ և առողջ եմ, թռչնոյ պէս աղատ, երկիրն իմն է, կրնամ ըսքանչելի կեանք մը անցնել Բարիզու, Լոնտոնի, Վիէննայի, Նաբոլիի մէջ. կրնայի իշխան, դուքս կամ մարքիզ ըլլալ ու ժապաւէններով զարդարուիլ, այս իրիկուն կրնամ ննջարանիս մէջ ունենալ Բարիզու ամենէն գեղեցիկ և ամենէն ըղձացեալ գերասանուհիները, ամէն օր կրնամ Լուկուլլոսի պէս ընթրել: Բարիզու ամենէն գեղեցիկ ձիերն կառքիս լծել, կամ, մէկ ամսուան մէջ, շքեղ ապարանք մը ունենալով, ուրիշ խել մը աւանակներու կամ խաբեբաներու պէս, տունս ժողուել Բարիզու և Եւրոպայի ընտրելագոյն ընկերութիւնն. սա կէս Ռաֆաէլը, զոր քիչ մը-նաց պիտի օծէի Ֆրանսայի դրամատան սուրբ իւղովն, սա Արքիդուքսը ոտքերս լիզեց: Բայց, յարեց Բասքալ ակռաները կճրտեցնելով, գրաւ կը դնեմ որ աշխարհիս մէջ այս միջոցիս չկայ մարդ մը որ ինձի չափ տառապի: Գիւղային ծերուկ վաշխառուին կօշիկները մաքրած ատենս հիմակուան բաղդատմամբ արքայութիւն էր: Բարեբաղդաբար կրնամ Տիւթէրթրը գոչել: մինչեւ որ լաւագոյն պատառ մ'անցնի ձեռքս: Ոստիկանիս երթանք: . . . .

. . . . . .

Դրամատիրոջ մեկնելէն վերջը Արքիդուքսը փութաց երթալ Միրանտայի մարքիզուհին գտնել, ինչպէս որ ըսինք. բայց զարմանօք տեսաւ որ մտած սենեկին մէջ չէր:

Այս սենեկիս դուռն սպասաւորաց սբրահը հանելով, Իշխանը թիկնապահներուն հարցուց թէ տեսեր էին այն անձը, որու ունկնդրութիւն շնորհած էր: Պատասխանեցին թէ այս տիկինը սրահէն դուրս ելաւ և պալատէն մեկնեցաւ՝ Պ. Բասքալի երթալէն քիչ առաջ:

Արդարեւ Մատլէն հեռացեր էր, թէև ի սկզբան որոշեր էր իշխանին սպասել՝ մինչեւ որ Պ. Բասքալի հետ խօսակցութիւնն աւարտի:

Բայց ահաւասիկ ինչ պատճառաւ հակառակ որոշում մը տուեր էր մարքիզուհին:

Պ. Բասքալի հետ քսան արժանւոյն վարուելէ յետոյ սրահը կը մտնէր, երբ դիպուածաւ պարտէզը նայելով՝ նշմարեց ըղ Ֆրանց, որ շնորհ խնդրեր էր չի մեկնած քանի մը պտոյտ ընել պարտէզին մէջ՝ Պիւթլէր հաղարապետին հետ:

Մատլէն զՖրանց տեսնելով, արձանացաւ:

Ճանչցաւ իւր խարտեաշ հերովբէն, այն իտէական ու մինակ սիրոյն առարկան, զոր խոստովաներ էր Սոֆի Տիւթերթրի:

Ժ Թ.

Մատլէն անմիջապէս հասկցաւ որ իւր տեսած մենամարտութեան դիւցազնը, իւր խարտեաշ քերովբէն, իւր սիրոյն իտէականը, և Ֆրանց՝ Անթօնինի սիրոյն առարկայն, մի և նոյն անձն էին:

Մարքիզուհին այն ատեն խոր ցաւ ըզդաց, մինչեւ այն ատեն այս սէրը, որ խորհրդաւոր և անծանօթ էր, այս անուշ երազի մը յիշատակին նման գեղեցիկ ու անորոշ սէրը բաւ եղած էր իւր սիրտն լեցնելու իւր կենաց շփոթութեանց միջոցին:

Մատլէն երբէք մտաբերած չէր որ իւր

իտէալն ուրիշ կին մը սիրէր, կամ թէ երբեք իւր միտքն այս կասկածը չընդունած չէր. ըստ իրեն, իւր ծիծաղկոտ քերովբէն սպիտակ թեւեր ունէր, որք եթերային անհուն դաշտերուն մէջ ամէն աչքերէ կը կորզէին զինքը, անդադար ոչ պղատոնական թախանձանօք շրջապատեալ ըլլալուն, բարոյական անբացատրելի բերկրութիւն մը կ'իմանար աննիւթ նահանգները բարձրանալ, որ իւր շլացեալ աչքերն իւր իտէային սաւառնելը կը տեսնէին։

Բայց յանկարծ իրականութիւնը քերովբէին թեւերը կտրեց և երկնային օթեւաններէն վար իջնալով, եղաւ գեղեցիկ երիտասարդ մը, որ 15 տարու աղջկան մը սիրահարած և այդ աղջիկն ալ զինքը կը պաշտէր։

Այն ատեն Մատլէն տեսակ մը տրխրութիւն, կամ թէ ըսենք անուշ մելամաղձութիւն զգաց նման այն մելամաղձութեան, զոր կզգայ մարդ գեղեցիկ երազէ մ'արթնցած ատեն. վասն զի ով որ նիւթապէս չի սիրեր, նախանձու տանջանքներն չզգար։ Ըսել է Մատլէն չէր կըրնար նախանձիլ Անթօնինի։ Վերջապէս, Ֆրանց թէ և միշտ գրաւած էր Մատլէնի միտքն, բայց իւր կենացը մէջ փոքր մաս մը միայն ունեցեր է. ուստի անկարելի էր խզել այն հաղարաւոր կապերն, զորս սովորութիւնը, համակրութիւնն ու վստահութիւնը այնքան անուշ կ'ընեն. սակայն տաժանելի նախազգացումներ ունեցաւ, զորս չէր հասկնար... յանկարծ դողաց ու ըսաւ.

— Եթէ դժբաղդութիւնն այնպէս բերէ որ բոլոր ինձ մօտեցողներուն վրայ ըրած ազդեցութիւնս Ֆրանցի վրայ ալ ընեմ, եթէ ես ալ մասնակցիմ այդ տպաւորութեան, տեսնելով որ մինչեւ այսօր սիրաս ու միտքս գրաւող միակ երիտասարդը կը սիրէ զիս, այն ատեն...

Ապա չանալով ապահովել, Մատլէն բաւական ինքնին.

— Բայց ո՛չ, Ֆրանց չափազանց կը սիրէ զԱնթօնին; սա իւր առաջին սէրն է, այն սիրուն անբծութիւնն պիտի պահպանեն զինքը։ Նա իմ մասիս պիտի զգայ այն պաղութիւնը, զոր ես կ'զգամ ամենուն համար։ Այո՛, բայց ի՞նչէն գիտնամ որ Անթօնինի համար ունեցած սուրբ, գրեթէ մայրական սիրոյ պարտականութիւններս մոռնալով, մտաց ու հրապուրանաց ամէն միջոցներն ի գործ չպիտի դնեմ՝ Ֆրանցի անտարբերութեանն յաղթելու համար։ Ո՛հ, ոչ, այդ դարշելի բան կ'ըլլայ. բաց յաստի՝ Ֆրանց զանի չափազանց կը սիրէ։ Աւա՜ղ, Սօֆիի Ֆամուսինն ալ չափազանց կը սիրէ իւր կինը... և կը վախնամ որ...

Մարքիզուհւոյն այս մտածումներն ընդհատեցան Արքիդքսին ձայնէն, որ Բասքալին կը հրամայէր դուրս ելլել. այն ատեն այս վիճաբանութեան ականջ տալով, նա ինքնիրեն ըսեր էր.

— Այս մարդը վռնտելէն ետքը իշխանք հոս պիտի գայ, ամենէ ստիպողականը նայինք։

Այն ատեն գրպանէն տետրակ մը հանեց, մէկ թերթը պատռեց ու մատիտով քանի մը բառ գրեց, ապա թուղթը ծալեց ու գնդասեղով մը գոցեց։ Իրը հաստատ էշխանին համար գրելով վրան, այս տոմսը սրահին մէջ տեղը դտնուած մարմարեայ սեղանի մը վրայ զետեղեց և գլխարկը դ՞ը նելով դուրս ելաւ՝ Պ. Բասքալի երթալէն քիչ առաջ, ինչպէս որ ըսինք արդէն։

Մինչդեռ արքիդուքսն մարքիզուհին չի դտնելուն համար ապշած ու վշտացած, անմեկնելի անձկութեամբ մը կը բանար

նորա տումն, Մատլէն կ'երթար Անթօնի-նի տունը, ուր պիտի գտնուէր նաև Սօ-ֆի Տիւթէրթը։

Մարքիզուհին Հիւպէր նախադահին տունը հասնելով, Սօֆի Տիւթէրթը դէմ ելաւ և անձկութեամբ ըսաւ.

— Մատլէն, իշխանը տեսա՞ր։

— Ա՛յո՛, և յոյս ունիմ։

— Կարելի՞ է . . . ։

— Ա՛յո՛, սիրելիս Սօֆի, կարելի է, բայց այնչափ միայն։ Չեմ ուզեր անտեղի յոյս մը տալ այս խեղճ տղուն։ Ինքն ո՞ւր է։

— Հօրեղբօրը քովն է։ Բարեբաղդա-բար այս առտուան տաղնապը ևս քան զևս դոհացուցիչ արդիւնքներ կունենայ։ Փիչ մ'առաջ բժիշկը ըսաւ որ եթէ այս-պէս շարունակէ, Պ. Հիւպէր այս իրիկուն վտանդէ կ'ազատի։

— Ինձի նայէ՛, Սօֆի, կը կարծես որ Պ. Հիւպէր այցելութիւն մը ընդունելու վիճակին մէջ ըլլայ։

— Որո՞ւ կողմէ։

— Մէկէն։ Ասկէց աւելին չեմ կրնար ըսել առ այժմ։

— Կարծեմ թէ այո՛, վասն զի Պ. Հիւ-պէրի բարեկամաց մին հիմայ դնաց։ Մի-այն թէ բժիշկը ապսպրեր էր իրեն որ շատ չի կենայ, որպէս զի հիւանդը չի յոգնեցնէ։

— Խիստ լաւ։ Անթօնին խիստ մտա-հոգութեան մը մէջ ըլլալու է։

— Խե՛ղճ տղայ, մարդուս սիրտը կը յօշոտի։ Մատլէ՛ն, ապահով եմ որ ցաւէն կը մեռնի, եթէ ստիպուի Ֆրանցէն զատ-ուիլ։ Ա՛հ, մահը հազար անգամ աղեկ է քան թէ ուրիշ տեսակ ցաւերը, յաւել Սօֆի անանկ տխուր ձայնով մը որ աչքե-րէն արցունքներ վազեցին. ապա՝ զանոնք սրբելով, ըսաւ, այո՛, բայց երբ մարդ զա-ւակներ ունի . . . պէտք է ապրի . . . ։

Մատլէն այնքան զարմացաւ տիկին Տիւթէրթի ձայնին, նորա դեղնութիւնը զոր չէր նշմարած, նորա թափած ար-ցունքներուն, որ ըսաւ.

— Սօֆի, ի՞նչ ունիս. ի՞նչ կը նշանա-կեն, այդ տաժանելի խօսքերը, ինչո՞ւ կուլաս։ Երեկ քենէ զատուած ատենս հանդարտ ու երջանիկ էիր, ի բաց առ-եալ ամուսնոյդ գործերուն վրայով ունե-ցած թեթև մտահոգութիւնդ, ինչպէս որ ըսիր։ Ա՛յսօր նոր բա՞ն մը կայ միթէ։

— Ո՛չ . . . չ'եմ . . . կարծեր, պա-տասխանեց տիկին Տիւթէրթը վարան-մամբ։ Բայց, երեկուընէ ի վեր . . . ա-մուսնոյս գործերը չ'են որ ինձ մտահո-գութիւն կը պատճառեն, այլ . . .

— Ի՞նչ։

— Ո՛չ, ո՛չ, ես անմիտ եմ, յարեց տիկին Տիւթէրթը ինքզինքը զսպելով և կարծես բերնէն փախչել ուզող խօսքերն բռնելով, իմ խօսքս չ'ընենք, Անթօնինի վրայ խօսինք, այս խեղճ տղուն յուսա-հատութիւնն այնքան այլայլեց զիս որ, իւր վշտերն կարծես իմ վշտերս են։

— Սօֆի, դու ճշմարիտը չ'ես ըսեր ինձ։

— Իրաւ կ'ըսեմ որ . . .

— Դու փոխուեր և դեղներ ես։ Ա՛յո՛, երեկուընէ ի վեր տառապեր, շատ տա-ռապեր ես, ասոր ստոյգ եմ։

— Բայց ո՛չ, պատասխանեց նորատի կինը՝ թաշկինակը աչացը վրայ դնելով, կը սխալիս։

— Սօֆի, ըսաւ Մատլէն աշխուժիւ՝ Բարեկամուհւոյն ձեռքերն իւր ձեռացը մէջ առնելով, չ'ես գիտեր թէ վրաս վստա-հութիւն չ'ունենալդ ո՛րքան ցաւ կը պատ-ճառէ ինձ. այնպէս կարծել կուտաս ինձ որ ինչ գանգատ մ'ունիս . . .

— Ի՞նչ կ'ըսես, գոչեց Սոֆի, որու ցաւ կը պատճառէր այս կասկածը, դու իմ լաւագոյն մտերմուհիս ես և պիտի ըլլաս միշտ, ու եթէ իմ ցաւերովս քեզ տաղտկացնելէ չի վախնայի։

— Նորէ՞ն, յարեց մարքիզուհին սիրալիր յանդիմանութեան ձայնով մը։

— Ներէ՛, ներէ՛, Մատլէն, բայց միթէ բաւ չէ՞ որ մարդ իւր բարեկամաց վստահի իւր իրական վշտերն, առանց տխրեցնելու զանոնք՝ խոստովանելով անոնց անստոյգ և սակայն սոսկալի կանխազգացումներ։

— Սոֆի, սիրելիս Սոֆի, տեսնենք ի՞նչ են այդ կանխազգացումներն։

— Երէկուընէ ի վեր... բայց ո՛չ, ո՛չ, զիս յիմար պիտի կարծես։

— Կարելի է, բայց կ'աղաչեմ որ խոսիս։

— Շատ լաւ ուրեմն, ինձի այնպէս կուգայ որ երեկուընէ ի վեր ամուսինս տեսակ մը հաստատուն գաղափարի իշխանութեանն տակ է, որ ամբողջապէս կը գրաւէ զինքը։

— Կարելի՞ է գործի զբաղումներ են։

— Ո՛չ, ո՛չ, ուրիշ բան ունի, և այս է որ զիս կը սոսկացնէ։

— Ի՞նչ նշմարեցիր ուրեմն։

— Երեկ, քու մեկնելէդ վերջը, որոշեր էինք որ երկու տեղ պիտի երթար, որք խիստ կարեւոր էին մեզ համար։ Տեսնելով որ ժամանակն կ'անցնի, մեր սենեակը դացի, ուր դացեր էր նաև ինքը հագուելու համար։ Տեսայ որ դեռ իւր աշխատութեան զգեստներուն է, սեղանի մը առջեւ նստած, ճակատը ձեռքին կռթընցուած. ներս մտնելս չէր լսած։ « Շարլը, ըսի իրեն, ժամանակն անցաւ, դուրս պիտի ելլէիր։ — Ինչո՞ւ համար, հարցուց։ — Բայց երկու կարեւոր այցելութիւններ ունէիր գործերուդ համար (և զանոնք յիշեցուցի իրեն)։ — Իրաւունք ունիս, ըսաւ ինձ, մոռցեր էի։ — Բայց ի՞նչ կը մտածէիր ուրեմն, Շարլը, » ըսի իրեն։ Նա կարմրեցաւ, կարծես շփոթեցաւ և պատասխան չտուաւ։

— Կարելի է նպատակ մը, դիտաւորութիւն մ'ունի, զոր չուզեր քեզ բացատրել։

— Կարելի է, և սակայն երբեք բան չի ծածկէր ինէ, նոյն իսկ իւր ամենէն անստոյգ դիտաւորութիւններն. ո՛չ, ո՛չ, իւր միտքը գրաւողը գործերը չեն, վասն զի փոխանակ երեկ իրիկուն հօրն ու ինձ հետ խօսելու իրաց վիճակին վրայ, որ կը խոստովանիմ թէ քեզ ըսածէս շատ ծանր է, Մատլէն, Շարլը բոլորովին տարբեր բաներու վրայ խօսեցաւ։ Եւ միայն այն ատեն չի կրցի զինքը պարսաւել, վասն զի դիմաւորաբար քու վրայօքդ խօսեցաւ մեզ։

Ի՞մ վրաս... ի՞նչ ըսաւ։

— Թէ իրեն հետ շատ ազնուաբար վարուեր ես երեկ առտու. վերջէն հազար բաներ հարցուց ինձ քու մանկութեանդ ու կեանքիդ վրայ, հարկաւ կը դուշակես թէ ուրախութեամբ պատասխանեցի իրեն։ Վերջը մէկէն ի մէկ ինկաւ տխուր լռութեան մը, անանկ խոր մտազբաղութեան մը մէջ որ, ոչինչ կրցաւ զինքն սթափեցընել, և ո՛չ իսկ իւր զաւակաց դգուանքներն։

Այս միջոցին Պ. Հիւպէրի ծերուկ ծառայն, զոր տիկին Տիւթէրթրը կը ճանչնար, զարմացած ու շուարած դէմքով մը ներս մտաւ և Սոֆիին ըսաւ.

— Տիկին, օրիորդ Անթօնին հարկաւ պարոնին քովն է։

— Այո՛, Բիէր, ի՞նչ կայ։

— Ա՛հ, տիկին... շատ զարմացայ, և ի՛նչ պատասխանելիքս չգիտցայ։

— Բիէ՛ր, ի՞նչ կըսես։

— Կեցէ՛ք, տիկին։ Դուրսը սպայ մը կայ, հաւանականաբար Էլիզէի մէջ բնակող իշխանին սպայներէն։

— Վերջը։

— Այդ սպայն կ՚ըսէ թէ նամակ մը ունի, զոր կ՚ուզէ անձամբ յանձնել պարոն Հիւպէրի, որ պատասխան մը պիտի տայ եղեր։ Թէ և ըսի իրեն որ պարոնը շատ հիւանդ է, բայց ինքը պատասխանեց որ խիստ կարեւոր և ստիպողական գործի մը համար է, և թէ Էլիզէ բնակող իշխանին կողմէն կուգայ, այն ատեն վաղեցի ձեզ հարցնելու թէ ի՞նչ պէտք է ընեմ։

Տիկին Տիւթէրթրը իւր վիշտերը մոռնալով՝ Մատլէնին դարձաւ և ուրախութեամբ ըսաւ անոր.

— Ցոյսդ անտեղի չէ եղեր, իշխանին այս նամակն կարելի է իւր հաւանութիւնը կը պարունակէ. խեղճ Անթօնի՛ն, ո՛րքան երջանիկ պիտի ըլլայ։

— Այդքան մի՛ աճապարեր զուարթանալու, սիրելիս Սօֆի։ Սպասենք, բայց դու գնա՛ այն սպային քով, որ անշուշտ իշխանին թիկնապահներէն մին է։ Ըսէ իրեն որ Պ. Հիւպէր, թէև քիչ մը լաւ է, բայց չի կրնար զինքն ընդունիլ. աղաչէ իրեն որ նամակը քեզ յանձնէ, և ըսէ որ զայն Պ. Հիւպէրի տալով՝ պատասխանը կը տանիս իրեն։

— Իրաւունք ունիս, Մատլէն։ Էկո՛ւր Բիէռ, ըսաւ Սօֆի՝ ծերունի սպասաւորին հետ դուրս ելլելով։

— Չէի սխալած, ըսաւ մարքիզուհին՝ երբ առանձին մնաց։ Պ. Տիւթէրթրի այն նայուածքները . . . Շիտակը աղեւտալի բա՛ն։ Բայց, յաւել կիսովին ժպտելով, յուսամ որ նորա այս անհաւատարմութենէն պիտի կարենամ օգուտ քաղել Սօֆիի և իւր ամուսնոյն համար։

Ապա, պահ մը մտածելէ վերջը Մատլէն յարեց։

— Իշխանը շատ ճշտապահ է։ Ո՞ւր էր որ տոմնակիս մէջ դրուած միւս յանձնարարութիւնն ալ նոյնպէս կատարէր։

Այն միջոցին Անթօնին հօրեղբօրը սենեակէն դուրս ելաւ։ Խեղճ տղան՝ մարքիզուհին տեսնելով, չի համարձակեցաւ քայլ մ՚առնել։ Անշարժ, համր ու դողդոջուն մնաց, անձկութեամբ իւր վիճակին սպասելով, վասն զի Մատլէն խոստացեր էր առաւօտուն բարեխօսել իշխանին մօտ։

Այն ատեն Սօֆի ձեռքը բռներ էր թիկնապահին տուած նամակը, զոր Անթօնիի յանձնեց ու ըսաւ։

— Ա՛ռ, աղջիկս, և անմիջապէս հօրեղբօրդ տար։ Շատ կարեւոր է, պատասխանը թո՛ղ քեզ տայ և ես նամակը բերողին կը յանձնեմ զայն։

Անթօնին նամակն առաւ տիկին Տիւթէրթրի ձեռքէն և հետաքրքիր նայուածք մը նետեց իւր երկու մտերմուհեաց վրայ, որք յուսալիր նայուածք մը փոխանակեցին. նոցա դէմքն այնքան զարմանք պատճառեց Անթօնիի որ, խօսքը երկու նորատի կանանց ուղղելով՝ ըսաւ։

— Սօֆի, Մատլէն, ի՞նչ կայ։ Լռութեամբ իրարու երես կը նայիք և այս նամակը . . ի՞նչ կ՚անցնի արդեօք, տէ՛ր Աստուած։

— Շուտ գնա, աղջիկս, ըսաւ Մատլէն, մենք հոս կը սպասենք։

Անթօնին, ես քան զես այլայլելով. շտապաւ իւր հօրեղբօրը սենեակը մտաւ, տիկին Տիւթէրթրը, տեսնելով որ մարքիզուհին գլուխը կը ծռէ և լուռ ու մտախոհ կը մնայ, ըսաւ անոր։

— Մատլէն, ի՞նչ ունիս։

— Ոչինչ, սիրելիս։ Եթէ յոյսերս ի

դերեւ չելլեն, Անթօնին շատ երջանիկ պիտի ըլլայ։

— Եւ այդ երջանկութիւնն քեզ պիտի պարտի։ Ինքն ու Ֆրանց ի՛նչպէս յափշտակութեամբ պիտի օրհնեն զքեզ, վասն զի դու նոցա նախախնամութիւնն եղած պիտի ըլլաս։

Մատլէն Ֆրանցի անունը լսելով՝ սարսռաց, թեթեւ մը կարմրեցաւ և ամպ մը անցաւ ճակտին վրայէն։ Սօֆի ժամանակ չունեցաւ իւր մտերմուհւոյն այլայլութիւնը նշմարելու, վասն զի Անթօնին մէկէն ի՛մէկ դուրս ելաւ քովի սենեակէն, չըքնաղ դէմքը աննկարագրելի զարմացման ու ուրախութեան արտայայտութեամբ մը տոգորուած, ապա առանց խօսք մը կարենալ ըսելու, Մատլէնի վիզը նետուեցաւ, բայց կ'երեւի թէ այլայլութենէն

ՖՐԱՆՑ

պիտի ըլլաս։

Մատլէն Ֆրանցի անունը լսելով՝ սարսռաց, թեթեւ մը կարմրեցաւ և ամպ մը անցաւ ճակտին վրայէն։ Սօֆի ժամանակ չունեցաւ իւր մտերմուհւոյն այլայլութիւնը նշմարելու, վասն զի Անթօնին մէկէն յանկարծ դեղնեցաւ և երկու մտերմուհիք պարտաւորեցան բռնել զինքը։

— Փա՛ռք Աստուծոյ, ըսաւ Սօֆի, հակառակ քու այլայլութեանդ ու դալկութեանդ, սիրելիս Անթօնին, ապահով եմ որ յաջող լուր մը կայ։

— Մի՛ դողար այդպէս, սիրելիս, յարեց նոյնպէս Մատլէն։ Հանդարտէ՛. ինքզինքիդ եկո՛ւր։

— Ո՛հ, եթէ գիտնայի՛ք, մրմնջեց Նորատի աղջիկը։ Ո՛չ, ո՛չ, դեռ չեմ կըրնար հաւատալ։

Միրանտայի մարքիզուհին Անթօնինի ձեռքերն բռնելով դորովանօք, ըսաւ անոր.

— Պէտք է միշտ երջանկութեան հաւատալ, զաւակս. բայց ըսէ տեսնեմք ի՞նչ է։

— Փիչ մ'ռաաջ, յարեց Նորատի աղջիկը ուրախութեան արտասուօք ընդհատեալ ձայնով մը, նամակը հօրեղբօրս տարի, ինձի ըսաւ. « Անթօնին, աչքերս շատ տկար են, կ'աղաչեմ, սա նամակը կարդա։ » Այն ատեն պահարանը բացի. չեմ գիտեր ինչո՛ւ սիրտս տակաւին սոսկալի կերպով կը տրոփէ, տակաւին հիմայ ալ, յաւել Նորատի աղջիկը՝ ձեռքը կուրծքին վրայ դնելով, իբրու թէ նորա տրոփումն արգիլելու համար, ապա յարեց։

— Նամակը կարդացի, մէջը գրուած էր թէ. ո՛հ, բառ մ'անգամ չի մոռցայ.

« Պ. Հիւպէր նախագահ, թէ եւ տըկար վիճակի մէջ է.ք, սակայն կ'աղաչեմ որ, եթէ կարելի է, վայրկեան մը տեսակցութիւն շնորհէ.ք ինձ խիստ կարեւոր և ստիպողական դործի մը համար։

« Ձեր անձնուէրն՝

« ԼԷՕՊՕԼՏ-ՄԱՔՍԻՄԻԼԻԷՆ »

— Բայց, ըսաւ հօրեղբայրս անկողնոյն վրայ նստելով, ատիկայ Էլիզէի մէջ բնակող իշխանին անունն է։ » Կը . . . կը . . . կը կարծեմ . . . որ այո, հօրեղբայր, պատասխանեցի։ — Արդեօք ի՞նչ կ'ուզէ ինէ, յարեց հօրեղբայրս։ — Չեմ գիտեր, պատասխանեցի դողալով ու շիկնելով, վասն զի կը ստէի, և կ'ամչնայի որ տակաւին չէի համարձակած խոստովանիլ իրեն որ Պ. Ֆրանցը կը սիրեմ։ Այն ատեն հօրեղբայրս ըսաւ. « Թէ և հիւանդ եմ, բայց անկարելի է որ իշխանը չընդունիմ։ Կ'աղաչեմ, Անթօնին, ես դեռ շատ տկար եմ և չպիտի կարենամ գրել իրեն, ուստի ըսելիքս լաւ միտքդ պահէ և գնա գրէ՛։

« Տէր, տկարութիւնս չի ներելով որ « անձամբ Ձեր Վսեմութեան պատասխա- « նելու պատիւն ունենամ, օտար ձեռքի « մը կը դիմեմ ըսելու համար ձեզ, տէր, « թէ ձեր հրամանաց պատրաստ եմ։ »

— Հիմայ հօրեղբօրս կողմէն այս նամակը պիտի գրեմ, յարեց Անթօնին՝ սեղանին վրայ դրուած գրակալին մօտենալով, բայց, Սօֆի, ո՞չ ապաքէն պէտք է ծունդի գալով օրհնեմ զՄատլէն, վասն զի եթէ իշխանն ուզէր դէմ կենալ Պ. Ֆրանցի հետ ամուսնանալուս, հօրեղբայրս տեսնելու չէր գար, անանկ չէ՞, Սօֆի։ Եւ եթէ Մատլէն չըլլար, միթէ իշխադը երբեք կը հաւանէ՞ր հոս գալ։

— Ես ալ կ'ըսեմ որ պէտք է Մատլէնն օրհնել՝ յարեց տիկին Տիւթէրթրը, մարքիզուհւոյն ձեռքը սեղմելով։ Բայց նորէն կ'ըսեմ որ դու անպատճառ հմայեակ մը ունիս, որ այսպէս ուզածդ կ'ընդունիս։

— Ամո՛ս, սիրելիս Սօֆի, յարեց մարքիզուհին ժպտելով, այդ հմայեակը, եթէ ունիմ ալ, այլոց օգուտ ունի . . . և ոչ ինձի։

Երբ երկու մտերմուհիք այս խօսքերը կը փոխանակէին, Անթօնին գրակալին առջև

նատեր էր. սակայն երկու վայրկեան ի զուր ճգնելէ վերջը՝ պարտաւորեցաւ գըրելէ եւ քաշուիլ. նորա փոքրիկ ձեռքն անանկ ուժգին կը դողար որ, չէր կրնար գրիչը բռնել։

— Թո՛ղ որ ես անցնիմ քու տէղդ սիրելիս, ըսաւ Մատլէն, քու տեղդ ես կը գրեմ։

— Ներէ՛, Մատլէն, ըսաւ նորատի աղջիկը՝ իւր տեղն մարքիզուհւոյն ձգելով։ Ցանցանքն իմս չէ՝ եթէ չեմ կրնար։

— Ո՛չ, յանցանքն սրտինդ է, խե՛ղճ աղջիկս։ Կ՚ըմբռնեմ քու այլայլութիւնդ, ըսաւ մարքիզուհին հաստատուն ձեռօք գրելով Հիւպէր նախագահին պատասխանը։ Հիմայ, յաւել, մէկը կանչէ, Անթօնին, որպէս զի այս նամակը իշխանին Թիկնապահին յանձնուի։

Մեր սպասաւորը ներս մտաւ և նամակն առաւ որ սպային տայ։

— Այս ժամուս փոքրիկ Անթօնինս, ըսաւ մարքիզուհին նորատի աղջկան, պարտք մ՚ունիս կատարելու, և ապահով եմ որ Սոֆի ալ ինձ համակարծիք է, իշխանը չեկած, պէտք է որ ամէն բան խոստովանիս հօրեղբօրդ։

— Մատլէնի ըսածը շատ իրաւ է, յարեց Սոֆի. չվայլէր որ Պ. Հիւպէր իշխանին այցելութեան հաւանական պատճառը չգիտնայ առաջուց։

— Հօրեղբայրդ բարի ուաղնիւ է, սիրելիս Անթօնին, յաւել Մատլէն, և կը ներէ մինչեւ այսօր վախնալով չի խոստովանելուդ։

— Կզգամ որ երկուքդ ալ իրաւունք ունիք, ըսաւ Անթօնին. ասկէց զատ այդ խոստովանութենէն չեմ խպնիր, վասն զի առանց գիտնալու և ակամայ սիրեցի ես զՊ. Ֆրանց։

— Ուրեմն դնա՛ պատմէ հօրեղբօրդ, զաւակս, վասն զի իշխանը ուր որ է կուգայ։ Բայց, ինձ նայէ՛, յաւել մարքիզուհին, մասնաւոր պատճառաւ մը չեմ ուզեր իշխանին եկած ատենը հոս գտնուիլ. այս սրահէն քու սենեակդ կ՚երթուի՞։

— Սա նրբուղին իմ սենեակս կը հանէ, պատասխանեց Անթօնին, Սոֆի գիտէ ճամբան։

— Այո՛, եկուր քեզ առաջնորդեմ, Մատլէն, յարեց Սոֆի ոտքի ելնելով, ինչպէս նաև մարքիզուհին, որ դորովանօք համբուրելով Անթօնինի ճակատը, հօրեղբօրն սենեկին դուռը ցոյց տուաւ և ըսաւ. շուտ գնա՛, սիրելիս, վայրկեաններն թանկագին են։

Նորատի աղջիկը փափուկ երախտագիտութեան նայուածք մը նետեց երկու մըտերմուհեաց վրայ, ոտքա սրահէն ելլելով կ՚երթային, երբ ծեր սպասաւորն անոնց մօտեցաւ և Սոֆիի ըսաւ.

— Տիկին, Պ. Տիւթէրթրը կ՚ուզէ անմիջապէս խօսիլ հետերնիդ։

— Ամուսի՛նս՝, ո՞ւր է։

— Վարը, տիկի՛ն, կառքով դրան առջևն է։ Ինձ աղաչեց որ ձենէ խնդրեմ որ վար իջնէք։

— Զարմանալի՛ բան, ինչո՞ւ վեր չելաւ։ ըսաւ Սոֆի իւր մտերմուհւոյն նայելով։

— Պ. Տիւթէրթրը քանի մը խօսք միայն պիտի ըսէ տիկնոջ, յարեց Բիէր։

Տիկին Տիւթէրթրը անհանգստութեամբ անոր հետեւեցաւ և խօսքը մարքիզուհւոյն ուղղելով՝

— Հիմայ կուգամ՝ սիրելիս, ըսաւ, վասն զի կուզեմ իշխանին այցելութեան արդիւնքն իմանալ։

Մատլէն առանձին մնաց։

—Աղեկ ըրի որ փութացի, ըսաւ ինքնիրեն տեսակ մը դառնութեամբ. աղեկ ըրի որ իմ առաջին վերհանձնութեանս անսացի. վաղը ալ ժամանակը անցած պիտի ըլլար, թերևս ինքզինքս Անթօնինի զոհե-

լու քաջութիւնն չունենայի. ասի զարմանալի է, ժամ մ'առաջ իւր ու Ֆրանցի վրայ խորհած ատենս՝ բնաւ նախանձ, անձկութիւն չէի իմանար, այլ անուշ մեղամաղձութիւն մը միայն. բայց քիչ քիչ սիրտս կ'սեղմուի ու կ'ցաւի և այս վայրկենիս կը տառապիմ... ո՛հ, շատ կը տառապի՛մ...:

Սոֆիի շտապաւ ներս մտնելն մարքիզուհւոյն խորհրդածութիւններն ընդմիջեց, և տիկին Տիւթէրթրի դէմքին տքնութենէն, գրեթէ սոսկումէն հասկցաւ որ մեծ աղէտ մը կար:

Սոֆի շնչասպառ ձայնով մ'ըսաւ.

— Մաղէ՛ն, առաջարկեցիր օգնել, ինձ ես ակ'ընդունիմ:

— Տէ՞ր Աստուա՛ծ, ի՞նչ ունի՞ս, Սոֆիս:

— Մեր վիճակն յուսահատական է:

— Ի՞նչ կ'ըսես:

— Վաղը, թերևս այս երեկոյ՝ Շարլը պիտի ձերբակալուի:

— Ամուսի՞նդ:

— Այո՛, այո՛, կը հասկնա՞ս:

— Բայց ի՞նչէս, ինչո՞ւ:

— Զարութեան հրէշ մը, զոր մեր բարերարը կը կարծէինք, Պ. Բասքալ...

— Պ. Բասքա՛լ:

— Այո՛... երեկ չհամարձակեցայ, չի կրցի ամէն բան ըսել քեզ, բայց...:

— Պ. Բասքա՛լ, կրկնեց Մաղէն:

— Մեր բաղդն այդ անողոք մարդուն ձեռքն է. կ'ուզէ և կրնայ յետին ծայր չքաւորութեան մէջ ձգել զմեզ. ի՞նչ պիտի ըլլանք, Աստուա՛ծ եմ, հապա մեր տղա՞քը, ամուսնոյս հայրը, ա՜հ, սոսկալի բան, սոսկալի՛ բան:

— Պ. Բասքա՛լ, յարեց մարքիզուհին, զսպուած բարկութեամբ մը, թշուառակա՛նը: Ո՛հ, այո՛, իւր դէմքին վրայ կարդացի, իւր լրբութենէն ու ցածութենէն հասկցայ թէ այն մարդն անողոք է:

— Կը ճանչնա՞ք զինքը,

— Այս առտու իշխանին տունը պատահեցայ իրեն: Ա՜հ, այս վայրկենիս կը զղջամ որ այս մարդուն ինձ ներշնչած արհամարհանաց անսացի, ինչո՞ւ աւելի առաջ չի խօսեցար ինձ. մե՛ղք, Սոֆի, շա՛տ մեղք:

— Ի՞նչ ըսել կուզես:

— Վերջապէս ինչ որ է, անցեալն անդարմանելի է: Բայց Սոֆի, սիրելիս, մի՛ վհատիր, ամէն բան ըսէ ինձ, և կարելի է ձեզ սպառնացող հարուածին առաջքն առնելու միջոցը գտնենք:

— Անկարելի է, միայն յանուն Շարլի, և զաւակաց կը խնդրեմ քենէ որ.»

— Թո՛ղ որ խօսքդ ընդմիջեմ. ինչէ՞ն գիտես անկարելի ըլլալը:

— Պ. Բասքալ անողոք է:

— Աղեկ, բայց ի՞նչ է ձեր կացութիւնն Պ. Բասքալի նկատմամբ:

— Տարի մ'առաջ ամուսինս տագնապալից կացութեան մը մէջ ինկաւ: Պարոն Բասքալ առաջարկեց օգնել իրեն: Շարլը վերհանձն երևոյթներէն խաբուելով, ընդունեց. շատ երկար կ'ըլլայ բացատրել քեզ թէ Շարլը ինչպէս Պ. Բասքալի խոստմանց վստահանալով, քիչ ատենէն ինկաւ այս մարդուն բացարձակ իշխանութեան տակ, որով նա կրնար ուզած ատեն 100,000 սկուտէն աւելի առնելիքն պահանջել ամուսինէս, այսինքն նորա գործը ջնջել և զմեզ չքաւորութեան մէջ գլորել. վերջապէս օր մը Պ. Բասքալ, այս սոսկալի իշխանութեամբ զինեալ, ստիպեց ամուսինս ու զիս կամ անանկանալ և կամ երկու անպատուութիւն գործել:

— Վա՛տը, անամօթը՛:

— Երեկ երբ դու եկար, դեռ նոր

իւր սպառնալիքն ըրեր էր մեզ։ Մենք ալ մեր սրտին ու պատուոյն համեմատ պատասխանեցինք. երդում ըրաւ որ վրէժն պիտի առնու և այսօր իւր երդումն կը կը գործադրէ, կորսուած ենք. չեմ գիտեր ի՛նչ իրաւանց զօրութեամբ, Շարլը պիտի բանտարկել տայ առժամանակեայ կերպիւ։ Իմ կարծիքս այն է որ նախ և առաջ ամուսինս պէտք է բանտէն ազատի։ Նա կը մերժէ, ըսելով թէ ասի դակարթ մ'է, թէ վախնալու բան չունի բնաւ . . .։

Մատլէն, որ պահ մը մտախոհ մնացեր էր, նորէն մտերմուհւոյն խօսքն ընդմիջեց և ըսաւ անոր.

— Ի՞նչ պէտք է որ այլ ևս Պ. Բասքալէն վախ չունենաք։

— Պարտքերնիս վճարել։

— Ամուսինդ ի՞նչ կը պարտի իրեն։

— Հարիւր հազար սկուտէն աւելի՝, որու դրաւ տրուած է մեր գործարանը. բայց երբ միանգամ անկէ դ ուրս ելլենք, ա՛լ աշխարհի վրայ բան մը չունինք։ Ամուսինս անանկացեալ կը հրատարակուի և իւր ապագայն կը կորսուի։

— Եւ բնաւ ուրիշ միջոց չի կա՞յ պարոն Բասքալէն ազատելու։

— Կայ, և ամուսինս այդ միջոցին վըստահացած էր միշտ այս չար մարդուն խօսքին համեմատ։

— Ի՞նչ է։

— Տասն տարի պայմանաժամ շնորհել Շարլին, որ իւր պարտքը վճարէ։

— Եթէ այնպէս ըլլար . . .։

— Կ'ազատէինք, բայց Պ. Բասքալ կ'ուզէ վրէժ առնուլ և երբեք չպիտի հաւանի փրկութեան միջոց մը հայթայթել մեզ։

Այս տխուր խօսակցութիւնն ընդմիջուեցաւ Անթօնինի գալովը, որ, ուրախութեամբ արբեցեալ, սենեակ մտաւ ու ըսաւ.

— Մատլէ՛ն, օ՜հ, եկէ՛ք, եկէ՛ք։

— Ի՞նչ կայ, տղաս, անշուշտ յաջող լուր մը։

— Ա՜հ, սիրելիներս, յարեց մատղաշ աղջիկը, կը վախնամ որ այսքան մեծ երջանկութեան մը չի կարենամ տոկալ։ Հօրեղբայրս ու իշխանն՝ ամէն բանի կը հաւանին. դիտնայիք թէ իշխանն օ՛րքան անուշութեամբ վարուեցաւ հետս. վասն զի ուզեց որ հօրեղբօրս հետ ունենալիք խօսակցութեանը ներկայ գտնուիմ։ Ներումն խնդրեց ինէ որ մեր ամուսնութեան դէմ կենալ ուզելով՝ վիշտ պատճառեր էր ինձ։ « Իմ միակ արդարացումս սա է որ, օրիորդ Անթօնին, բսաւ բարեսրտութեամբ, ձեզ չէի ճանչնար. ձեր բարեկամուհին, տիկին տը Միրանտայի մարքիզուհին, զիս դարձուց. միայն թէ, քանի որ կ'ըսէք թէ հոս է, հաճեցէք ըսել իրեն թէ կը փափագիմ ձեր ներկայութեանն շնորհակալ ըլլալ իրմէ որ միջոց հայթայթեց ինձ ձեր նկատմամբ գործած անիրաւութիւնս դարմանելու։ » Ասոնք աղնիւ ու սրտագրաւ խօսքեր չե՞ն, յարեց նորատի աղջիկն։ Ո՜հ, եկէ՛ք, Մատլէն, իմ բարերարս, քոյրս. մա՛յրս, դուք, որու պիտի պարտինք մեր երջանկութիւնը՝ Ֆրանց ու ես։ Դուք ալ եկէք, Սոֆի, յաւել Անթօնին՝ տիկին Տիւթէրթրի ձեռքէն բռնելով, դուք ալ միթէ մասնակից չէ՞ք իմ երջանկութեանս, ինչպէս որ մասնակից եղաք դաղտնեացս ու անյուսութեանս։

— Սիրելիս, յարեց տիկին Տիւթէրթրը՝ ջանալով իւր տխրութիւնն ծածկել, այդ ընելն աւելորդ է, բայց իշխանին ներկայութիւնը զիս կը խպնեցնէ, և ասկէց զատ, ինչպէս որ կ'ըսէի հիմայ Մատլէնի, պէտք է ես տուն դառնամ։ Չեմ կրնար

աւելի երկար ժամանակ տղաքս առանձին թողուլ։ Օ՛ն, գրկէ զիս, Անթօնին, քու երջանկութիւնդ ապահովեալ է. այս վստահութիւնն անուշ պիտի ըլլայ ինձ, եւ եթէ վիշտ մ՚ունենամ, հաւատա որ այժ պիտի տայ ինձ անոր տակալու։ Մնաս բարով։ Եթէ նոր բան մ՚ունենաս ինձ իմացնելու, վաղն առաւս զիս տեսնելու եկո՛ւր։

— Սօֆի՛, ըսաւ մարքիզուհին ցած, բայց հաստատուն ձայնիւ իր մտերմուհուոյն. ո՛յժ և յոյս. ամուսինդ թողչի մեկնի, վաղն առաւս մինչև կէս օր ինձ սպասէ քու տունդ։

— Ի՞նչ կ՚ըսես։

— Ասկէց աւելին չեմ կրնար ըսել. միայն թէ Անթօնինի օրինակն քիչ մը վստահութիւն թող տայ քեզ։ Այս առտու խեղճը յուսահատ էր, և հիմայ ուրախ է։

— Այո՛, քու շնորհիւդ։

— Օ՛ն։ գրկէ՛ զիս, և ո՛յժ, յո՛յս։

Այն ատեն Մատլէն Անթօնինի մօտենալով՝ ըսաւ.

— Հիմա, աղջիկս, իշխանին քով երթանք։

Նորատի աղջիկն ու մարքիզուհին թողուցին զտիկին Տիւթէրթրը որ ակամայ վստահելով Մատլէնի համոզեալ խօսուածքին, իւր տխուր բնակարանը կ՚երթար, հետը տանելով յուսոյ նշոյլ մը։

Իշխանը Մատլէնի կը սպասէր Հիւպէր նախագահին սրահին մէջ. յարգանօք բարեւեց զայն և Անթօնինի ներկայ ըլլալուն համար քաղաքավարական ձեւերով ըսաւ անոր.

— Կ՚ուզէի ձեր ինձ մատուցած մեծ ծառայութեան համար շնորհակալ ըլլալ ձեզ, տիկին մարքիզուհի։ Դուք գնահատել տուիք ինձ զօրիորդ Անթօնին Հիւպէր. իմ Ֆրանց սանիս երջանկութիւնն ապահովեալ է։ Պ. Հիւպէր նախագահին հետ որոշեցինք որ Ֆրանցի և օրիորդ Անթօնինի նշանտուքն վաղն առաւօտ կատարուի ալմանակաւ սովորութեան համեմատ, այսինքն ես ու Պ. Հիւպէր նախագահը Ֆրանցի և օրիորդին միութեան դաշնագիրն պիտի ստորագրենք։

— Ինչպէս որ ըսեր էք Անթօնինի, տէր, ես զձեզ ճշմարտութեան ճամբուն վրայ դնելէ ուրիշ բան չըրի։ Անթօնին ապացոյց թէ իր վրայ ըսածներս ճշմարիտ են։

— Շնորհ մ՚ունիմ ձենէ խնդրելու։ տիկին մարքիզուհի, յարեց իշխանը գըրպանէն նամակ մը հանելով և Մատլէնի երկնցնելով։ Բէրնէթթի գնդապետին ընտանիքը կը ճանչնա՞ք։

— Շատ լաւ։ տէր։

— Լա՛ւ ուրեմն, բարեհաճեցէք այս նամակն կարդալէ վերջը գնդապետին ձեռքը հասցնել։ Ստոյգ եմ որ, յաւել արքիզուքն այս վերջին բառերն շեշտելով, ստոյգ եմ որ այնքան հաճոյք պիտի ըզգաք այս նամակն ղրկելով, որքան գընդապետն երջանիկ պիտի ըլլայ զայն ընդունելով։

— Ադոր չեմ տարակուսիր, տէր, և իմ անկեղծ շնորհակալութիւններս կը կրկնեմ, ըսաւ մարքիզուհին յարգական խոնարհութիւն մ՚ընելով։

— Ցվա՛ղն, օրիորդ Անթօնին, ըսաւ իշխանն նորատի աղջկան. երթամ այս գեղեցիկ լուրն զգուշութեամբ իմացնեմ խեղճ Ֆրանցիս, որպէս զի շատ չայլայլի, բայց ապահով եմ որ նա ևս պիտի ներէ իրեն վիշտ պատճառելուս, երբ ամէն բան իմանայ։

Եւ Անթօնինն ու մարքիզուհին վերբաստին բարեւելով։ Իշխանն Էլիզէ — Պուրպոն գնաց։ . . . . . .

Յաջորդ առաւօտուն, ժամը տասնին, Մատլէն կառք նստաւ և գնաց ախ նօտարի մը, ու ապա Պ. Բասքալի տունը։

Ի.

Պ. Բասքալ Սէն—Ժորժ թաղին մէջ տան մը գետնայարկը կը բնակէր առանձին։ Մանաւոր դուռ մը յատկացած էր դրամատիրոջ սնտուկին, զոր իր վարէր վստահութեան արժանի մարդ մը, օգնական ունենալով նորատի դրագիր մը։

Բնակարանին գլխաւոր դուռը անդրասենեակն ու միւս սենեակները իր հանէր։ Այս բնակարանն անպաճոյճ, բայց վայելուչ էր. ներսի համար սենեկապան մը և յանձնարարութեանց համար 15 տարեկան տղեկ մը բաւ էին Պ. Բասքալի. վասն զի այս մարդը աշխատութիւնը ու արուեստները քաջալերելու ծախքեր չէր ըներ։

Այն առտուն, ժամը իններկէսին միլոցին, Պ. Բասքալ յուզմամբ կը շրջէր, իր սենեկին մէջ. այն գիշեր բնաւ չէր քնացած։ Լրտես մը, որ երկու օրէ ի վեր պաշտօն ունէր Անթօնինի տան մէջ եղածներն քննելու, լուր բերեր էր Պ. Բասքալի թէ Իշխանն այցելութիւն տուեր էր Հիւպէր նախագահին։

Այս արագ ու նշանակիչ դէպքն բնաւ տարակոյս չէր թողուր դրամատիրոջ որ, նորատի աղջկան վրայ ունեցած դիտաւորութիւններն ոչնչացած էին, այս ցաւալի պատրանքն ուրիշ ոխեր կը յարուցանէր յինքեան. նախ և առաջ կը կասկածէր տեսնելով որ, թէ և միլիոններու տէր էր, և սակայն իւր կամքն ստիպուած էր քնկերկիլ անյաղթելի անկարելիութեանց առջեւ։ Ամէնն այս չէր։ Ինքը Անթօնինի համար սէր չէր զգար, եթէ բուն իւր աղնիւ նշակութեամբն առնունք, այլ այն բուռն մտահաճութեանց մին, որք թերեւս վաղանցուկ, բայց խիստ ուժով են. ասոր համար սա ծայրահեղ անձնասիրական խորհրդածութիւնն ըրեր էր։

«Անպատճառ կ'ուզեմ այս աղջիկը ձեռք ձգել. եթէ պէտք ըլլայ՝ հետը կ'ամուսնանամ, և երբ իրմէ ձանձրանամ, 12—15 հազար ֆրանքի ռսճիկ մը կապելով իրեն՝ կ'ազատիմ։ բաւական հարուստ ըլլալով՝ կրնամ այս մտահաճութիւնն կատարել։»

Ասի, թէ և դարշելի, սակայն կարելի ու օրինաւոր էր արդի ընկերութեան տեսակէտով, և կը կրկնենք թէ այս կարելիութիւնն էր որ անյաջողութիւնը խիստ ցաւալի կընէր Պ. Բասքալին։ Ուրիշ բան ալ կար. Անթօնինի համար զգացածը ըզգայարանաց տրիվ մ'ևեթ ըլլալով, սիրոյ բացարձակ ընտրութեան ենթակայ չէր, ասոր համար տուփանօք ըլլալով այս կուսական ու անբիծ գեղեցկութեան տէր աղջկան, ոչինչ նուազ յափշտակուեր էր նաև Մատլէնի գեղեցկութենէն և գիշերն ի բուն իւր երեւակայութեան առջեւ այս երկու պաշտելի արարածներն միմեանց բաղդատեր է։

Այն ժամուն, յորում մենք զինքը կը տեսնենք իւր սենեկին մէջ, Պ. Բասքալ տակաւին նոյն մտազբաղութեան ենթակայ էր։

«Վա՛յ ինձ, կ'ըսէր՝ անհաւասար ու դողդոջուն քայլիւք պտտելով։ Ուսկի՞ց

նիծեալ ու յանդուգն կինը լսեց որ իւր ապուշ իշխանին հետ իբր ստրուկ մը վարուեցայ, և իմ դէմս յանդիմանեց զինքը այն նուաստութեանց համբերելուն։ Ինքը այն մարդը կ'անարգէ անշուշտ, և իւր տեսակէ բոլոր կանց պէս, ինքն ալ սիրելու է այն եռանդուն մարդը, որ իւր ոտքին տակ առաւ այս թագապսակ սիրամարգը։ Իրաւ է որ իշխանին առջեւ անգթօրէն լուայ զիս, բայց զինքը շողոքորդելու համար էր. մենք այն ճամբաները դիտենք։ Ո՜հ, եթէ կարենայի այն կինը ձեռքէն առնո՛ւլ, ի՜նչ յաղթանակ, ի՜նչ վրիժառութի՜ւն, և ամուսնութիւնս չի կատարուելուն պիտի մխիթարուէի այն ատեն։ Մխիթարուի՜լ, ո՛չ, վասն զի այս երկու կանանց մին միւսը մոռցնել չտար ինձ։ Չեմ դիտեր թէ տարի՞ է, բայց երբեք այն փոքրիկ աղջկան համար զգացած տենչանացս չափ ոյժով փափագ մը ունեցած չեմ։ Վերջապէս, եթէ կարենայի իշխանին հարճն առնուլ ձեռքէն, կամքիս կէսն կատարուած կ'ըլլար և ո՞վ գիտէ, այն կինն Անթօնինը կը ճանչնայ, և կ'երեւնայ որ անոր վրայ ազդեցութիւն ունի։ Ա՛յո՛, ո՞վ գիտէ թէ, երբ անգամ մը ձեռքս անցնէր,, ստակի ոյժով չպիտի կարենայի համոզել զինքը որ . . . անէ՛ծք, գոչեց Բասքալ կատաղի ուրախութեամբ մը. ի՜նչ յաղթանակ. սա խարտեաշ պատանեկին կինը ու այն արքիդքսին գեղեցիկ հարճն յափշտակե՛լ։ Եթէ ամբողջ հարստութիւնս ալ տալ պէտք ըլլայ, այս այսպէս պիտի ըլլայ։

Եւ մեր մարդն շտկուելով կարծես մեծցաւ ու անդիմադրելի կամաց դիրք մը առաւ, մինչդեռ իւր դէմքն գժոխային ուրախութիւն մը կ'արտայայտէր։

— Օ՛ն, օ՛ն, յարեց գլուխը վերցնելով, թէ և իբր անմիտ ու ապերախտ տեսայ այն խարտեաշ մազերով, սև յօնքերով, կապոյտ աչքերով, դալուկ դէմքով և յափշտակիչ տեսքով անիծեալ կինը։ Աւելի՜ւս փափագելի կ'ընէ ինձ այն նորաբոյս աղջիկը։ Վա՜յ ինձ, արդեօք այս երկու դէմքերն շարունակ պիտի հալածե՞ն զիս։ Ո՛րքան անմիտ ու ապուշ գտնուեցայ։ Ուրիշ միջոց մը բանեցնելով, շիտակը չեմ դիտեմ թէ ի՛նչ միջոց, բայց վերջապէս կարելի ու դիւրին էր (և այս է զիս կատղեցնողն), ի հարկէ կրնայի, քանի որ հարուստ եմ, նորատի աղջկան հետ ամուսնանալ և միւսն ալ հարճս ընել, վասն զի ստոյգ եմ որ նա արքիդքսին հարճն է, բայց տեսնենք իմ տալիքիս չափ ստակ կուտա՞յ իրեն . . .։ Ա՜յո՞, այո՛, յարեց ձեռքերն կատաղօրէն սեղմելով։ Խենթենալու բան է մտածել որ՝ « Վերջապէս չէի ուզեր Ռուսիոյ կայսրուհւոյն սիրահարն ըլլալ կամ Անկլիոյ թագուհւոյն աղջիկը առնել . . . ի՞նչ էր իմ ուզածս, պարզ շինական աղջկան մը հետ ամուսնանալ, որու հօրեղբայրն մէկ կուտ չունի։ Մինթէ ասանկ ամուսնութեան հազարաւոր օրինակներ տեսնուած չե՞ն։» Եւ չկրցի յաջողի(, և 30 միլիոնի մօտ հարստութիւն ունի՛մ։ Անէ՛ծք, շիտակը մեծ օգուտ ունի ինձ իմ հարստութիւնս, քանի որ սա ալմանեացի իշխանին հարճն իսկ չեմ կրնար առնուլ ձեռքէն։ Բայց հարկաւ այդ կինը ստակին համար կը սիրէ զինքը. իշխանը 40ի մօտ է, սիրամարգի մը պէս հպարտ, սադի մը պէս ապուշ և սառոյցի մը նման պաղ է։ Ես իրմէ երիտասարդ եմ, թերևս աւելի գեղեցիկ, և եթէ արքիդուքս չեմ, գոնէ արքիմիլիոնատէր եմ։ Ասկէց զատ ես սա առաւելութիւնն ալ ունիմ որ զինքը ոտքիս տակ առի, վասն զի այն ա-

գէշ ըսի ստակին, բայց ստակը աղուոր բան է։

Ապա մտածելու համար կանգ առնելով պահ մը լռութենէ վերջն յարեց.

— Նախ հանդարտինք, գործը լաւ ու յաջող կերպիւ կարգի դնենք։ Լրտեսը այս երեկոյ կ'իմանայ արքիդքսին հարճին ուր բնակիլը, եթէ նա պալատը չի բնակիր, ինչ որ հաւանական չէ։ Երբ միանգամ իւր բնակարանը գտնեմ, յաւել խոհուն կերպիւ ծնօտը շոյելով, անմիջապէս սա պառաւ տիկին Տուսէն կը ղրկեմ իրեն։ Ասի դերասանուհիներու և պահծու կանանց հետ գործը եփելու հին, բայց լաւագոյն միջոցն է, վասն զի վերջապէս իշխանին հարճն ալ պահծու կնոջմէ զատ բան մը չի կրնար ըլլալ։ Գլուխը բաց եկաւ մեր խօսակցութեան մէջ նեռուեցաւ, ամենեւին չէր քաշուեր։ Ըսել է մայր Տուսէնէն լաւ միջնորդ չեմ կրնար գտնել։ Անմիջապէս կանչել տանք զինքը։

Պ. Բասքալ իւր գրաօեղանին վրայ գրելու զբաղած էր, երբ սենեկապանը ներս մտաւ։

— Ի՞նչ կայ, հարցուց դրամատէրն, ես մարդ չի կանչեցի։

— Պարոն, տիկին մը . . .

— Ժամանակ չ'ունիմ։

— Պարոն։ փոխանակագրի մը համար եկեր է։

— Մնտուկը թող երթայ։

— Այն տիկինը կ'ուզէ պարոնին հետ խօսիլ։

— Անկարելի է։

Սենեկապանը դուրս ելաւ։

Բասքալ իւր գիրը շարունակեց. բայց քանի մը վայրկեան վերջը՝ ծառայն նորէն եկաւ։

— Դեռ չի լմնցա՞ւ, դոչեց Պ. Բասքալ. ի՞նչ կայ նորէն։

— Պարոն, այն տիկինը . . .

— Ա՛, խաղի՛ էք ելեր, ըսի որ զինքը մնտուկը ղրկէք։

— Այն տիկինը իւր այցետոմսը տուաւ ինձ, ըսելով թէ աղաչեմ ձեզ որ վրան մատիտով գրածը կարդաք։

— Տուր նայիմ։ Անտանելի բան է, ըսաւ Բասքալ այցետոմսն առնելով, որու վրայ գրուած էր։

ՄԵՐԱՆՏԱՅԻ ՄԱՐՔԻԶՈՒՀԻՆ

Անուանը տակ մատիտով սա բառերը նշանակուած էին։

«Պատիւ ունեցաւ երեկ զՊ. Բասքալ տեսնելու յէլիզէ—Պուրպոն, Ն. Վ. Լէօ-բօլտ արքիդքսին տունը։»

Եթէ շանթ մ'իյնար Պ. Բասքալի ոտքերուն առջեւ, այնքան չպիտի շուարէր. չի կրցաւ աչացն հաւատալ, և անդամ մ'ալ կարդաց՝ ինքնիրեն ըսելով.

— Մերանտայի մարքիզուհի՞ն . . . Ըսել է մարքիզուհի՞ է։ Պա՛հ Լօլա Մոնթէզ կոմսուհի ըլլալուն պէս ինքն ալ մարքիզուհի է, բայց վերջապէս ինքն է։ Ինքը հո՞ս, իմ տո՛ւնս, նոյն իսկ այն վայրկեանին, որ իրեն հետ յարաբերութեան մտնելու միջոցը կը բնտռէի։ Ա՛հ, Բասքալ, սիրելիս Բասքալ, քու ոսկի աստղդ, որ պահ մը ծածկուած էր, նորէն իւր բովանդակ լուսովն կը փայլի։ Եւ փոխանակագրի մը պատրուակաւ եկեր է հէ՛։ Տեսնե՛նք, Բասքա՛լ, սիրելիս. հանդարտէ, մարդս իւր կեանքին մէջ երկու անգամ չի գըտներ ասանկ առիթ մը։ Մտածէ՛ որ եթէ ճարպիկ ըլլաս, կրնաս մէկ ձանձով իշխանին հարճն ու այն խարտեաշ պատանեկին կինը ձեռք ձգել։ Ա՛հ, սիրտս անդիմի ծայր ուժով կը տրոփէ, ապահով եմ որ դեղնած եմ։

— Պարոն, ի՞նչ պատասխանեմ այն տիկնոջ, հարցուց սենեկապանը՝ տիրոջը երկարատեւ լռութեանը զարմանալով։

— Վայրկեան մը սպասէ՛, ապուշ, յարեց Բասքալ։ Օ՛ն, հանդարտինք, կ՚ըսէր ինքնին. այլայլութեամբ ամէն բան կը կորսուի և միջոցներս կը չքանան։ Ասի սոսկալի խաղ մ՚է, զոր պիտի խաղամ, վասն զի խաղն շատ գեղեցիկ ըլլալով, կ՚երդնում թէ կատաղութենէս ըղեղս կը պայթեցնեմ՝ եթէ անյաջողութեամբ կորսնցնեմ զայն։

Բասքալ վայրկեան մը լուռ կենալով՝ յաջողեցաւ իւր ներքին յուզումն զսպել և ինքնիրեն ըսաւ.

— Ահա՛ շտկուեցաւ. թող գայ հիմայ և խաղերնիս սկսինք։

Եւ բարձր ձայնիւ գոչեց.

— Այն տիկինը ներս մտցո՛ւր։

Ծառայն դուրս ելաւ և քիչ վերջը դուռը բանալով՝ ծանոյց։

— Տիկին տը Միրանտա մարքիզուհին։

Մատլէն, հակառակ իւր սովորութեանը, այն օրը ԺԵ-ՄՕՐ պէս չէր հագուած, այլ թարմ պերճութեամբ մը, որ աւելի անգիմադրելի կ՚ընէր իւր գեղեցկութիւնը. բրինձի յարդէ Բամէլայի ձեւ գլխարկ մը, ցորենի հասկերով զարդարուն, մարքիզուհւոյն դէմքն ու վիզը բաց կը թողուր, ճերմակ մուսլինէ թարմ շրջազգեստ մը իւր անման մարմնոյն շրջագծերն երեւան կը հանէր, որք մէքսիկացի գաղթականներու յատուկ վայելչութեան և փափկութեան կատարեալ տիպարն էին, մինչդեռ իւր նոյն դօտին թեթեւ մը կը ծփար նորա մարմարեայ լանջաց հանդարտ ելեւէջներուն համեմատ։

ԻԱ.

Բասքալ պահ մը շլացեալ և յափշտակեալ մնաց։

Մատլէն առջի օրուընէ հազար անգամ աւելի գեղեցիկ ու ըղձալի կը դըտնէր։ Եւ թէև լա՜ հասկցող, ինչպէս որ ըսեր էր իշխանին, թէև շատոնց վայելած էր գեղեցկութեան, թարմութեան ու շնորհաց բոլոր այն գանձերն, զորս չքաւորութիւնը հարկատու կընէ հարստութեան, սակայն բնաւ Մատլէնի նման արարած մը երեւակայած չէր կեանքին մէջ, և տարօրինակ բան, այս պահուս Անթոնինի կուսական դէմքն կ՚երեւէր մարքիզուհւոյն դէմքին քով. իրեն համար նա հէքէն էր, զոր զԱփրոդիտէ Աստղիկը կ՚ամբողջացնէր։

Մատլէն ակամայ լռութենէն օգտելով, ցամաք և հպարտ ձայնով մը ըսաւ իրեն, առանց ամենափոքր ակնարկութիւն մը ընելու առջի օրուան դէպքին։

— Պարո՛ն, ձեր վրայ փոխանակագիր մ՚ունիմ, ահաւասիկ։ Ուզեցի ձեզ տեսնել մի քանի գործերու կարգադրութեան համար։

Այս արհամարհական ու սուղ խօսուածքն Բասքալը շուարեցուց. ինքը կը սպասէր որ առջի օրուան անցքին վրայ եթէ ներում աչ չի խնդրէ, գոնէ բացատրութիւն մը տայ. ուստի թոթովելով ըսաւ։

— Ի՛նչպէս, տիկին, հոս եկաք... միմիայն... այդ փոխանակագրո՞ւն համար։

— Նախ անոր և ապա ուրիշ բանի համար։

— Միտքէս կ՚անցնէր, ըսաւ ինքնին

Բասքալ՝ թեթեւ հառաչ մ՚արձակելով, փոխանակագիրը պատրուակ է։ Ասի աղէկ նշան է։

Ու բարձր ձայնով յարեց.

— Տիկին, փոխանակագիրը գանձապետիս կը վերաբերի. ես կը հրամայեմ իրեն որ ուղածնիդ կատարէ։ Գալով ձեր միւս գործին, յուսամ թէ նա ինձ կը վերաբերի։

— Այո՛։

— Անոր խօսքը չի բացած, տիկին, կը ներէ՛ք ինձ որ հարցում մը ընեմ ձեզ։

— Ի՞նչ։

— Ինձ զրկած այցեւորմնուդ վրայ, տիկին, գրեր էիք թէ երէկ դիս յէլէգէ տեսաք։

— Եւ՞քը՞։

— Բայց հիմայ կ՚երեւնայ որ մեր տեսակցութիւնը բնաւ չէ՛ք յիշեր։

— Ձեմ հասկնար։

— Տեսնենք, ըսաւ Բասքալ քիչ քիչ ինքզինքին տէր ելլալով և մտածելով որ Մատլէնի ցամաք խօսուածքը կեղծիք մը էր, որու նպատակն դեռ չէր հասկնար, տեսնե՛նք, տիկին մարքիզուհի, խոստովանեցէ՛ք որ երեկ շատ խիստ վարուեցա՛ք ձեր խոնարհ ծառային հետ։

— Եւ՞քը՞։

— Ի՛նչպէս, միթէ այդ ըրածնուդ վրայ փոքր ինչ չէ՞ք զղջար, չէ՞ք ցաւիր որ յանիրաւի բռնկեցաք ինձի դէմ։

— Ո՛չ։

— Շատ աղէկ, հասկցայ, ասի ըսքանչելի ազդեցութիւն կրնար ընել այն աղնիւ արքդքիսին վրայ, համարձակեցաւ ըսել Բասքալ, յուսալով որ այս կամ այն միջոցաւ պիտի յաջողի Մատլէնն հանել այն ցուրտ վարմունքէն, որ կը սկսէր զինքն անհանգիստ ընել. շատ մեծ վարպետութիւն է մեր իշխանութեան տակ գտնուողներուն արժանապատուութեան շահերը պաշտպանել ցոյց տալ, վասն զի խօսքը մեջերնիս, դուք որ այդքան գեղեցիկ ու պաշտելի էք, հարկաւ ուզածնիդ կ՚ընէք այս խեղճ իշխանին, բայց երբէք չպիտի կարենաք մտացի ու վեհանձն մարդ մ՚ընել զինքը։

— Շարունակեցէ՛ք։

— Զիս մտիկ ըրէ՛ք, տիկին Մարքիզուհի, դեռ ձեր փոխանակագիրն չի տեսայ, և Բասքալ բացաւ զայն, գրաւ կը դնեմ որ շատ ջնջին բան մ՚է։ Կրո՛ղ, ապահով էի, 40 հազար ֆրա՛նք. ձեղի պէս կին մը այսքան ստակով ի՞նչ կրնայ ընել Բարիզու մէջ։ Հա՛, հա՛, հա՛, 40 հազար ֆրանք։ Ալմանեացի արքիդքսերուն միայն յատուկ է ասանկ նուէրներ տալ։

Մատլէն առջի բերան առանց հասկընալու մտիկ ըրեր էր Բասքալի ըսածներն։ Վերջը հասկցաւ. դրամատէրը կը կարծէր որ ինքը իշխանին հարճն է ու նորա նուէրներովն կ՚ապրի։

Շիկնութեան ամպ մը պատեց յանկարծ Մատլէնի դէմքը։ բայց վայրկեան մը խորհելով՝ հանդարտեցաւ ,ու իւր դիտաւորութեացն յաջողութեանը համար չնորհակալ իսկ եղաւ Պ. Բասքալի այս ենթադրութեանն. ուստի կիսովին ժպտելով՝ յարեց.

— Պարո՛ն, կ՚երեւնայ որ իշխանը չէ՛ք սիրեր . . .

— Կ՚ատեմ. գոչեց Բասքալ յանդգնորէ՛ն մարքիզուհւոյն ժպտելէն սիրտ առնելով։ Կ՚ատեմ այդ անիծեալ իշխանը, վասն զի թանկագին գանձ մ՚ունի, . . զոր կուզեմ ձեռքէն յափշտակել՝ բոլոր իմ գանձերս զոհելով . . .

Եւ Բասքալ բոցավառ նայուածք մը արձակեց Մատլէնի վրայ, որ յարեց.

— Գա՞նձ մը, չէի կարծեր որ իշխանը այդքան հարուստ ըլլայ . . . քանի որ փոխառութիւն մ՚ընելու համար ձեզ կը դիմէր, պարո՛ն։

— Է՛հ, տիկին, քսաւ Բասքալ ցած ու դողդոջուն ձայնիւ, այդ գանձը դուք էք։

— Ձիս կը շողոքորդէք, պարո՛ն։

— Մտիկ ըրէք, տիկին, յարեց Բասքալ պահ մը լուռ կենալէ ետքը, առանց դարձուածքի խօսինք, այս է լաւագոյն դրութիւնն։ Դուք մտացի կին մ՚էք, ես ալ ապուշ չեմ, ուստի կը հասկցուինք։

— Ի՞նչ բանի վրայ, պարո՛ն։

— Հիմայ կըսեմ։ Օտար երկիրներու մէջ եթէ շատ հարուստ ալ չեմ նկատուիր, գոնէ կըսուի թէ բաւական լաւ վիճակ մ՚ունիմ։

— Խիստ հարուստ կը կարծեն ձեզ, պարո՛ն։

— Եւ այդպէս ալ եմ, ու ահա՛ ապացոյցը. մէկ միլիոն կանխիկ՝ նախնական ծախուց համար, հարիւր հազար ֆրանք կենսաւոր եկամուտ, այնպիսի հարսանեկան կողով մը, որու նմանը չեն կրնար տալ՝ եթէ Գերմանիոյ բոլոր արքիդուքսերն միանան, ասնցմէ զատ տունն ալ ձեզի։ Ի՞նչ ըսիք ասոր։

Մատլէն, որ առջի բերան չի հասկըցաւ, զարմանօք նայեցաւ Բասքալի երեսը, որ յարեց։

— Այս առատաձեռնութիւնը ձեզ կը զարմացնէ կամ թերեւս չէք հաւատար։ Բայց հիմայ ապացուցանեմ ձեզ որ ասանկ յիմարութիւն մը կրնամ ընել։ Ահա՛ փոքրիկ տետրակ մը, որ բան մը չ՚երեւնար, և դրասեղանին դարակներէն մէկուն մէջէն տետրակ մը հանեց, ասի իմ հաշուեկշիռս է, և առանց դրամական գործողութեանց հմուտ ըլլալու, կրնաք տեսնել որ այս տարի իմ դրամագլուխս 27 միլիոն 5 հարիւր 60 հազար ֆրանքի բարձրացած է։ Հիմայ ենթադրենք որ իմ յիմարութիւնս երեք միլիոնի նստի ինձ, անդին դեռ 24 միլիոն կը մնայ որ, լաւ գործածուելով, միշտ կրնան մէկ ու կէս միլիոն եկամուտ մը բերել ինձ, և որովհետեւ ես 50—60 հազար ֆրանքով շատ հանգիստ կ՚ապրիմ, ըսել է երեք տարուան մէջ եկամուտով կրնամ լեցնել յիմարութեանս պատճառած կորուսաը։ Ասոնք ըսելուս պատճառն այն է որ, մարքիզուհի, մարդ պէտք է հաշուէ ու ապացուցանէ թէ խոստումն պիտի կարենայ կատարել։ Հիմայ խոստովանեցէք որ Բասքալն արքիդքսի արժէքն ունի։

— Ըսել է այդ բաներն ի՞նձ կ՚առաջարկէք, պարո՛ն։

— Ա՛ռ ի՞նչ հարցում է։ Օ՛ն, ձեր արքիդուքսը թողէ՛ք, տռհաւատչեայ մը տուէք ինձ. և հիմայ մէկ միլիոնը ձեռքերնիդ կը համրեմ։ 100 հազար ֆրանքի կենսատեւ եկամուտն նոտարիս հետ կը կարգադրեմ, և եթէ Բասքալ գոհ ըլլայ, կրնայ դեռ ուրիշ բաներ ալ ընել։

Դրամատէրն ճշմարիտ կ՚ըսէր. անկեղծօրէն կ՚ընէր այս առաջարկութիւնն. Մատլէնի իւր վրայ ըրած տպաւորութիւնը, իշխանի մը հարճն յափշտակելու պատիւը, Բարիզու մէջ զայն շքեղութեամբ ապրեցնելու և ամէնուն նախանձ ազդելու ենապարծութիւնը, վերջապէս ստակի ուժով մարքիզուհին՝ Անթոնինը Ֆրանցի ձեռքէն յափշտակել համոզելու յոյսը, վերջապէս ամէն ինչ կ՚ապացուցանէր Բասքալի առաջարկութեան անկեղծութիւնն։

Մատլէն այն աստեն հասկնալով թէ ի՞նչ աստիճան ազդեցութիւն կ՚ընէ Բասքալի վրայ, ուրախացաւ, և այս առա-

ջարկութեան անկեղծութիւնն լաւ եւս հասկնալու համար, վարանում ցոյց տալու եւ ըսաւ.

— Այդ առաջարկութիւնք, պարո՛ն, իմ ջնջին արժանիքէս շատ վեր են, բայց...

— 50 հազար ֆրանք կենսատեւ եկամուտ աւելի և գիւղի տան մ'ալ, դոչեց Բասքալ, այս է իմ վերջին խօսքս, մարքիզուհի:

— Եւ ահա իմս, պարո՛ն Բասքալ, յարեց Մատլէն ոտքի ելնելով ու անանկ նայուածք մը նետելով դրամատիրոջ վրայ, որ սա ընկրկեցաւ: Զիս մոռիկ ըրէ՛ք. դուք ցած ու ագահ էք, հետեւաբար ձեր առաջարկութենէն հասկցայ որ մեծ ազդեցութիւն ունիմ վրանիդ:

— Եթէ առաջարկածներս բաւական չեն, դոչեց Բասքալ ձեռքերն միացնելով, ըսէք, և...

— Լռեցէ՛ք, ես ձեր ստակին պէտք չունիմ:

— Ամբողջ հարստութիւնս տամ, եթէ կուզէք:

— Աղէկ մը երեսս նայեցէ՛ք, պարոն Բասքալ, և եթէ երբէք համարձակած էք պարկեշտ կնկան մը երեսը նայիլ ու նորա ճակտին վրայ կարդալ ճշմարտութիւնն, պիտի հասկնաք որ ճշմարիտ կը խօսիմ: Եթէ ձեր ամբողջ հարստութիւնն հուսա, տարերուս տակ դնէք, ձեր ինձ ազդած արհամարհանքն ու զզուանքն չպիտի փոխուին:

— Իզմեցէ՛ք զիս, բայց թողէ՛ք որ բաւեմ ձեզ թէ...

— Լռեցէ՛ք: Ուզեցի պահ մը կարծել տալ ձեզ որ ես իշխանին հարճն եմ. նախ անոր համար որ ձեզի պէս մարդու մը համարումն կարեւորութիւն չունի ինձ համար, և երկրորդ, որովհետեւ այս բանն կը քաջալերէր զձեզ ձեր անամօթ առաջարկութիւններն ընելու:

— Բայց ուրեմն ինչո՞ւ...

— Լռեցէ՛ք: Կուզէի գիտնալ թէ ի՛նչ աստիճան ազդեցութիւն ունիմ ձեր վրայ, գիտեմ և պիտի օգտիմ անկէ:

— Ո՛հ, իմ փափաքս ալ այդ է, եթէ կ'ուզէք...

— Ես երկու բանի համար եկայ հոս; նախ սա փոխանակագրոյն համար...

— Հիմայ, բայց...

— Գալուս երկրորդ պատճառն էր վախճան մը դնել այն վատութեան, զոր կը գործէք իմ լաւագոյն մտերմուհւոյս ամուսնոյն, Պ. Շարլը Տիւթէրթրի նկատմամբ:

— Տիւթէրթրքները կը ճանչնա՞ք. ա՜, որոգայթը հիմայ հասկցայ:

— Ամէն միջոց լաւ է ֆնասակար կեանքանները բռնելու համար և դուք ալ բռնուեցաք:

— Ո՛հ, դեռ չէ, դոչեց Բասքալ կասաղութենէն ու յուսահատութենէն ակռաները սեղմելով, վասն զի Մատլէնի գեղեցկութիւնն իւր տուիչը ցնորքի աստիճան կը բարձրացնէր. թերեւս շատ շուտ կը յաղթանակէք, տիկին:

— Հիմայ կը տեսնէք:

— Տեսնե՛նք, ըսաւ Բասքալ՝ ջանալով յանդգնութի՛ւն կեղծել, տեսնենք...

— Հիմայ, սա սեղանին վրայ պայմանագրութիւն մը պիտի ստորագրէք, որով Պ. Տիւթէրթրի պիտի տաք այն պայմանաժամն, զոր բերանացի խոստացեր էիք նմա՝ իւր պարտքը վճարելու համար ձեզ:

— Բայց...

— Որովհետեւ կրնար ըլլալ որ զիս խաբէիք և ես գործէ չեմ հասկնար, նոտարի մը յանձնեցի այդ պայմանագրին խմբագրութիւնը, որպէս զի միմիայն քա-

տորագրելիդ ճնայ։

— Այդ կատակ է։

— Նօտարն հետս է ու քովի սենեակը կը սպասէ։

— Ի՞նչպէս, հե՞տ բերիք . . .

— Կարելի չէ որ մարդ առանձին գայ ձեզի պէս մէկուն տունը . . . ուստի անմիջապէս այն պայմանագրութիւնն պէտք է ստորագրէք։

— Եւ փոխարէ՛ն։

— Իմ արհամարհանքս ու զզուանքս։

— Շիտակը այդ զարմանալի է։

— Բայց այսպէս է։

— Կուզէք ձեռքէս առնուլ իմ լաւագոյն պատուոյ . . . այն վայրկենին որ վրէժխնդրութենէ ուրիշ բան չունիմ քիչ մը մխիթարուելու համար։ Ա՛հ, Տիւթէրթրըն ձեր լաւագոյն մտերմուհին է՛, իւր արցունքներն դա՛ռն են ձեզ համար, այն ընտանեաց ցաւերն ձեր սիրտը պիտի կեղեքէն։ Լա՛ւ, աղէկ յարմարեցաւ և ես ալ իմ վրէժս պիտի առնեմ։

— Կը մերժէ՞ք։

—Կը մերժե՞մ մի, Տիկին մարքիզուհի, դուք զիս ապո՞ւշ կը կարծէք, և շիտակն այդ բրածնիդ մտացի կնկան մը գործ չէ։ Եթէ քիչ մը քծնէիք . . . խոստում մը ընէք . . . կարելի էր որ . . .

— Օ՜ն անդր, միթէ մարդ Պ. Բասքալը հրապուրել ձեւացնելու չափ կը նըուաստանա՞յ։ Կը հրամայէ անոր որ իւր մէկ վատութիւնը դարմանէ, ու կը դարմանէ, և Պ. Բասքալը կ'արհամարուի վերջը՝, ինչպէս առաջ, այսօր՝ ինչպէս երեկ, վաղը՝ ինչպէս այս օր։

— Անէ՛ծք, այս խենդենալու բան է, գոչեց դրամատէրն ապշելով, դրեթէ իսկ սոսկալով Մատլէնի ձայնէն։ Բայց մեր մարդն, որ նենգամիտ ու խոհեմ էր, քիչ քիչ ապահովցաւ ու յարեց.

— Էյ, տիկին։ պատրաստ եմ հնազանդելու՝ եթէ կարենաք բռնադատել զիս. կը սպասեմ։

— Այդի երկար շպիտի տեւէ։

— Կը սպասեմ։

— Ձեր փողոցին մէջ շատ մը բնակարաններ տեսայ վարձու։ Ասի թի հարկէ զարմանալի բան մը չէ, Պ. Բասքալ. բայց բարեբաղդաբար շատ սիրուն բնակարան մը կայ պարապ ճիշդ ձեր տանը դէմ, գետնայարկը։

Բասքալ զարմանօք Մատլէնի երեսը նայեցաւ։

— Այն բնակարանը կը վարձեմ և վաղը հոն կը տեղաւորուիմ։

Անորոշ նախազգացում մը դողացուց դրամատէրն ու դեղնեցաւ.

Մատլէն իւր հրակէզ նայուածքն այս մարդուն աչաց վրայ յառելով՝ շարունակեց։

— Ցերեկ կամ գիշեր ամէն ատեն պիտի գիտնաք որ ես հոն եմ։ Չպիտի կարենաք դուրս ելլել կամ տուն գալ առանց իմ պատուհաններուս տակէն անցնելու, ուր շատ անգամ պիտի նստիմ։ Ապահով եմ թէ տունէն դուրս չպիտի ելլէք։ Անդիմադրելի հրապոյր մը ձեզ հոն պիտի կաշկանդէ ամէն ատեն։ Իմ տեսքս ձեզ պիտի տանջէ և սակայն պիտի ուզէք տեսնել զիս։ Ամէն անգամ որ ձեր աչերն իմ աչաց հանդիպին, ինչ որ շատ անգամ պիտի պատահի, սրտերնուդ մէջ դաշոյնի հարուած մը պիտի զգաք, և սակայն ձեր վարագոյրներուն ետեւ ծածկուած, իմ ամենափոքր նայուածքներս պիտի լրտեսէք։

Մատլէն այսպէս խօսելով՝ քայլ մառաւ դէպ ի Բասքալ, իւր յառեալ իւր յառեալ և հրակէզ աչացն ներքեւ ՝ՀՐԳթայուած բռնելով զինքը։

Մարքիզուհին շարունակեց,

— Ամէնն այս չէ։ Որովհետեւ այն բնակարանն ընդարձակ է, Անթօնին ալ ամուսնանալուն պէս, պիտի գայ ինձի հետ բնակելու. շիտակը չեմ գիտեր թէ այն ատեն ի՞նչ պիտի ըլլաք, խե՛ղճ Պ. Բասքալ։

— Ո՛հ, այս կինը դժոխքէն եկած է, մրմնջեց դրամատէրն։

— Մտածեցէ՛ք թէ ի՞նչ տանջանքներ պիտի կրէք։ Ի հարկէ շատ կը սիրէիք զԱնթօնին, որ կուզէիք անոր հետ ամուսնանալ. անշուշտ զիս ալ կը սիրէիք, որ կուզէիք միլիոններ տալ ինձ։ Լա՛ւ ուրեմն, ո՛չ թէ միայն սոսկալի ցաւեր պիտի իմանաք՝ տեսնելով որ այլք կը վայելեն ձեր խենդի պէս սիրած երկու կիները, (վասն զի ես այրի եմ և կուզեմ նորէն ամուսնանալ) այլ նաեւ պիտի անիծէք ձեր անհուն հարստութիւնն, վասն զի ամէն բան ձեզ պիտի ըսէ թէ նա անկարող եղաւ ու պիտի ըլլայ ձեր ամենէն ջերմ փափաքներն գոհացնելու։

— Թողէ՛ք զիս, թոթովեց Բասքալ Մատլէնի առջեւ ընկրկելով։ Թողէ՛ք զիս։ Բայց այս կինը սադայէլն է։

— Այո՛, յարեց մարքիզուհին, ակամայ կը խղճամ ձեր վրայ, խե՛ղճ պարոն Բասքալ, երբ միտքս կը բերեմ ձեր կատաղութիւնն, նախանձն, որք յիմարութեան պիտի դառնան, երբ անդադար միտքերնիդ բերէք Անթօնինի երջանկութիւնը, վասն զի ամէն օր պիտի տեսնէք զմեզ, շատ անգամ դիշերն ալ. այո՛. օդերը գեղեցիկ են, լուսինն ոքանչելի, և շատ անգամ իրիկունները, ստուերին մէջ ծածկուած, աչքերնիդ իմ բնակարանիս վրայ յառած, երբեմն պիտի տեսնէք զիս ու զԱնթօնին՝ մեր պատշգամին կռթնած, որ երեկոյեան զովութիւնը վայելելով՝ սաստիկ պիտի խնդանք Պ. Բասքալի վրայ, որ անշուշտ այն միջոցին վանդակի մը ետեւէն մեզ կը լափէ աչօք, երբեմն ալ զԱնթօնին ու զՓրանց, որք իրենց պատուհանին առջեւ լուսնի լուսով սիրոյ խօսքեր կընեն, մինչդեռ ես ու իմ ամուսինս ալ ամէն անձն ալ սիրահարութիւն պիտի ընենք ձեր աչացն առջեւ։

— Անէ՛ծք, գոչեց Բասքալ ինքնիրմէ ելլելով, վառ ածուխներով կը տանջէ զիս։

— Դեռ ամէնն այս չէ, յարեց մարքիզուհին ցած և գրեթէ դողդոջուն ձայնիւ. երբ ժամերն անցնին, պիտի տեսնէք որ մեր պատուհաններն կը գոցուին, վարագոյրներն կը քաշուին և նոցա ետեւէն կը պբլպլայ ալապաստրեայ կանդեղին աղօտ լոյսը, որ գիշերային հեշտութեանց համար շատ յարմար է։ Այս մարքիզուհին քարձրաձայն խնդալով, ըսաւ. ուստի, խեղճ Պ. Բասքալս, չեմ զարմանար եթէ օր մը յուսահատութեամբ խեղթենաք կամ քղեղնիդ պայթեցնէք։

— Գոնէ վրէժս առնելէ վերջը, մրմնջեց Բասքալ՝ աչքերն դառնալով ու դէպի դրասեղանն վազելով, որու մէջ լեցուն ատրճանակ մը կար։

Բայց Մատլէն, որ գիտէր թէ ասանկ մարդէ մը ամէն բան կը յուսացուի, քիչ քիչ վառարանին մօտեցեր էր. Պ. Բասքալի սպառնական շարժումն տեսնելով, ուժով մը քաշեց զանգակին լարը։

Եւ երբ Պ. Բասքալ դեղնած ու ահարկու դիմօք՝ Մատլէնին կը դառնար, ծառայն աշխուժիւ ներս մտաւ, զանգակին ոյժով զարնուելուն զարմանալով։

Բասքալ դրան բացուիլը լսելով և քսպասաւորը տեսնելով՝ ինքզինքին եկաւ, ատրճանակը շուտ մը ետին տարաւ ու դորգին վրայ ձգեց։

Այս միջոցին մարքիզուհին դրան մօ-

տեցեր ու բարձր ձայնիւ բսեր էր Նօտարին որ, մօտակայ սենեկի մը մէջ կը սպասէր։

— Ներեցէ՛ք, պարո՛ն, ձեզ այսքան ժամանակ սպասցնելուս և բարեհաճեցէ՛ք ներս մտնել։

Նօտարն եկաւ։

— Դուրս ե՛լ, ըսաւ Բասքալ իւր ծառային։

Եւ դրամատէրը ճակտէն վազած պաղ քրտինքը սրբեց։

Մատլէն Բասքալին ու Նօտարին հետ առանձին մնալով, այս վերջնոյն ըսաւ.

— Պ. Շարլը Տիւթերթրի վերաբերեալ պայմանագիրն պատրաստեցի՞ք, պարոն։

— Այո՛, տիկին մարքիզուհի, միայն դիրն պէտք է վաւերացնել ու ստորագրել։

— Շատ լա՛ւ, ըսաւ մարքիզուհին։

Այս երբ Բասքալ իւր գրասեղանին առջեւ գտնուած թիկնաթոռին կը կռթնէր, նա թերթ մը թուղթ ու գրիչ մ՝առաւ և սա խօսքերը գրեց.

«Պայմանագիրն ստորագրեցէ՛ք, և չէ թէ միայն ձեր տանը դէմ չեմ դար բընակիլ, այլ և այս երեկոյ Բարիզէն կը մեկնիմ և երկար ժամանակ չեմ վերադառնար։ Ես խոստումս կը կատարեմ։»

Մատլէն այս տողերն գրելէ ետքը՝ թուղթը Բասքալին յանձնեց՝ Նօտարին բսելով.

— Ներեցէ՛ք, տէ՛ր, նոյն պայմանագրին վերաբերեալ պայման մ՝է, զոր կուզէմ Պ. Բասքալի ներկայացնել։

— Ազատ էք, տիկին մարքիզուհի. պատասխանեց Նօտարն խոնարհելով, երբ դրամատէրն կը կարդար,

Կարդաց թէ չէ, կարծես թէ մեծ վտանգէ մը փախչելու պէս և այլայլեալ ձայնիւ ըսաւ Նօտարին.

— Ո՞ւր է այն պայմանագրութիւնն, պարոն . . . օ՛ն, լմնցնենք։

— Նախ կարդամ զայն ձեզ, պարոն. պատասխանեց Նօտարն՝ պայմանագիրն հանելով ու ծանր ծանր բանալով։

Բայց Պ. Բասքալ ոյժով մը քաշեց զայն ձեռքէն և ըսաւ.

— Ո՞ր պէտք է ստորագրել։

— Հոս, պարոն, բայց նախ գիրը վաւերացնելու է. սակայն սովորութիւն է որ . . .

Բասքալ դողդոջուն ձայնիւ գրին վաւերացումն գրեց, ստորագրեց, գրինչը գրասեղանին վրայ նետեց ու գլուխը ծռեց, որպէս զի Մատլէնի նայուածքին չի հանդիպի։

— Հսկա ստորագիծ մը կը պակսի, ըսաւ բծախնդիր օտարը։

Բասքալ ստորագծեց, Նօտարն պայմանագիրն առաւ՝ զարմացական, գրեթէ իսկ երկչոտ նայուածք մը նետելով Բասքալի վրայ, վասն զի նորա դէմքն դալուկ ու ահարկու էր։

Մարքիզուհին, միշտ պաղարիւնութեամբ, առաւ իւր փոխանակագիրն, որ գրասեղանին վրայ մնացեր էր, դրամատիրոջ ըսաւ.

— Որովհետեւ ճամբայ ելլելու համար ամբողջ ստակիս պէտք ունիմ, պարոն, և այս երեկոյ պիտի մեկնիմ, եթէ կուզէք այս փոխանակագրին ամբողջ գումարը առնում։

— Ինտուկը գացէք, պատասխանեց Բասքալ մեքենաբար, աչերն մոլեգին ու արիւնալի. վասն զի իւր դեղնութեանն յաջորդեր էր մէկէնիմէկ ծիրանեգոյն կարմրութիւն մը։

Մատլէն գնաց Նօտարին առջեւէն, որ Բասքալը ողջունելու պատրուակաւ անդամ մ՝ալ կը դիտէր զայն, ու ոտներակէն ելլելով՝ դուռը գոցեց ու ծառային ըսաւ.

պարոն . . . օ՛ն, լմնցնենք։

— Նախ կարդամ զայն ձեզ, պարոն. պատասխանեց Նօտարն՝ պայմանագիրն հանելով ու ծանր ծանր բանալով։

Բայց Պ. Բասքալ ոյժով մը քաշեց զայն ձեռքէն և ըսաւ.

— Ո՞ր պէտք է ստորագրել։

— Հոս, պարոն, բայց նախ գիրը վաւերացնելու է. սակայն սովորութիւն է որ . . .

Բասքալ դողդոջուն ձայնիւ գրին վաւերացումն գրեց, ստորագրեց, գրինչը գրասեղանին վրայ նետեց ու գլուխը ծռեց, որպէս զի Մատլէնի նայուածքին չի հանդիպի։

— Հսկա ստորագիծ մը կը պակսի, ըսաւ բծախնդիր օտարը։

Բասքալ ստորագծեց, Նօտարն պայմանագիրն առաւ՝ զարմացական, գրեթէ իսկ երկչոտ նայուածք մը նետելով Բասքալի վրայ, վասն զի նորա դէմքն դալուկ ու ահարկու էր։

Մարքիզուհին, միշտ պաղարիւնութեամբ, առաւ իւր փոխանակագիրն, որ գրասեղանին վրայ մնացեր էր, դրամատիրոջ ըսաւ.

— Որովհետեւ ճամբայ ելլելու համար ամբողջ ստակիս պէտք ունիմ, պարոն, և այս երեկոյ պիտի մեկնիմ, եթէ կուզէք այս փոխանակագրին ամբողջ գումարը առնում։

— Ինտուկը գացէք, պատասխանեց Բասքալ մեքենաբար, աչերն մոլեգին ու արիւնալի. վասն զի իւր դեղնութեանն յաջորդեր էր մէկէնիմէկ ծիրանեգոյն կարմրութիւն մը։

Մատլէն գնաց Նօտարին առջեւէն, որ Բասքալը ողջունելու պատրուակաւ անդամ մ՝ալ կը դիտէր զայն, ու ոտներակէն ելլելով՝ դուռը գոցեց ու ծառային ըսաւ.

— Ինտուիշն ո՞ւր է։

— Բակին վրայ ձախ կողմի առաջին դուռը, տիկին։

Մարքիզուհին սրահէն դուրս կ'ելլէր։ երբ մեծ աղմուկ մը լսուեցաւ Բասքալի սենեկին մէջ։

նստէր նօտարին հետ, երբ տեսաւ որ ծառայն սարսափած դէմքով մը կառնադուռէն դուրս կ'ելլէր։

— Ի՞նչ կայ, տղաս, հարցուց նօտարն, սարսափած կ'երևնաք։

— Ա՜հ, պարոն։ ի՜նչ դժբաղդութի՜ւն,

Պ. ԲԱՍՔԱԼ

կարծես մարմին մը կ'իյնար տախտակամածին վրայ։

Ծառայն անմիջապէս Մաղէնն ու նօտարը թողլով, տիրոջը սենեակը վազեց։

Մարքիզուհին իւր փոխանակագիրն ամբողջ ընդունելէ ետքը՝ կառք պիտի տէրս կաթուածահար եղեր է։ Բժիշկ կանչելու կերթամ։

Եւ վազելով անհետացաւ։

— Ես ալ, յարեց նօտարը՝ խօսքը Մաղէնի ուղղելով, կ'ըսէի թէ այս պարոնը տարօրինակ վիճակի մը մէջ է, ձեզ

ալ այնպէս չերեւցա՞ւ, Տիկին։

— Իրաւունք ես ալ, պարոն, զարմանալի գտայ Պ. Բասքալի կերպարանքը։

— Աստուած տայ որ ծանր չըլլայ, տիկին մարքիզուհի։ Անանկ հարուստ մարդ մը այս հասակին մէջ մեռնի, մե՛ղք։

— Այո՛, մե՛ղք։ Բայց պարոն, եթէ կ՚ուզէք, ձեզ մինչեւ ձեր տունն տանիմ, եւ Պ. Տիւթէրթրի վերաբերեալ պայմանագիրն ինձ յանձնեցէք, վասն զի պէտք ունիմ անոր։

— Աւաղակ, տիկին մարքիզուհի, բայց չեմ հանդուրժէր որ ինձի համար ճամբանիդ դարձնէք։ Իմ տունս սա տեղ է։

— Լաւ։ բարեհաճեցէք ուրեմն սա 40 հազար ֆրանքն առնուլ։ Կ՚ուզէի 10 հազար ֆրանքի ոսկի ունենալ ճամբու համար և 30 հազար ֆրանքի ալ փոխանակագիր մը Վիէննայի մէջ։

— Անմիջապէս տիկին մարքիզուհի. Այդ ստակներն ե՞րբ պէտք են ձեզ։

— Այս երիկուն, ժամը վեցէն առաջ։

— Խիստ լաւ, տիկին մարքիզուհի։

Նոտարն յարգանօք բարեւէց և Մաալէն անմիջապէս Շարլը Տիւթէրթրի գործարանը գնաց։

ԻԲ.

Ըսինք որ Մաալէն Պ. Բասքալի տունէն ելլելով՝ գացեր է տիկին Տիւթէրթրի տունը. սա առանձին քաշուեր էր իւր պառկելու սենեակը, երբ սպասուհին մարքիզուհւոյն գալուստը իմացուց։

Սոֆի, որ այն միջոցին թիկնաթոռի մը վրայ նստած էր, մեծ անյուսութեան մը ենթակայ կ՚երեւնար։ Իւր բարեկամուհին տեսնելով, աշխուժիւ գլուխը վերուց, նորա տխուր սև արտասուաթոր դէմքը անդիի ծայրը դեղնած էր,

— Ա՛ռ, կարդա՛ ու մի՛ լար, գոչեց Մաալէն՝ Պ. Բասքալի ստորագրած պայմանագիրն անոր տալով։ Երեկ իրաւունք չունէի՞ քեզ ըսելու թէ «Ցուսա՛։»

— Այս թուղթը... յարեց տիկին Տիւթէրթրը։ Ի՞նչ է, հասկցո՛ւր։

— Քու և ամուսնոյդ փրկութիւնը։

— Մեր փրկութի՞ւնը...։

— Պ. Բասքալ հաւանեցաւ շնորհել ամուսնոյդ խնդրած պայմանաժամը։

— Իրա՞ւ, ո՛չ, ո՛չ, այդպիսի երջանկութիւն մը... անկարելի է։

— Կարդա՛ ուրեմն, թերեհաւատ։

Սոֆի շուտ մը պայմանագիրն աչքէ անցուց. ապա՝ զարմանօք մարքիզուհւոյն երեսը նայելով՝

— Ասի հրաշք է, ըսաւ։ Չեմ կրնար աչքերուս հաւատալ։ Եւ ի՞նչ միջոցաւ.. բայց Աստուա՛ծ իմ, այս գիւթութիւն է։

— Թերեւս, պատասխանեց Մաալէն ժպտելով, ո՞վ գիտէ։

— Ա՛հ, ներեցէք, սիրելիս, գոչեց Սոֆի՝ մարքիզուհւոյն վիզը նետուելով. այնքան զարմացայ որ, պահ մը մոռցայ երախտագիտութիւնս։ Յայտնել քեզ, Դու զմեզ ինանկութենէ կ՚ազատես, մենք ու մեր զաւակներն ամէն բան քեզ պիտի պարտինք, երջանկութիւն, ապահովութիւն, հարստութիւն. ո՛հ, Մաալէն, դու մեր ազատարար հրեշտակն ես....

Տիկին Տիւթէրթրի երախտագիտութիւնն անկեղծ էր։

Սակայն մարքիզուհին իւր մտերմուհւոյն ձայնին, շարժմանցն ու նայուածքին մէջ տեսակ մը բռնազբօսիկ բան մը նշմարեց։ Իւր կերպարանքն զուարթ չէր

երեւնար, ինչպէս որ պէտք էր ելլալ այս անյուսալի փրկութեան լուրն առնելով։

Անշուշտ տիկին Տիւթէրթրը ուրիշ վիշտ մ'ունէր, ուստի Մաղլէն, պահ մը լուռ կենալէ ետքը, յարեց.

— Օֆի՛, դու բան մը կը ծածկես ինձմէ. քու վիշտերդ դեռ չի լմնցան։

— Ի՞նչ կ'ըսես, երբ քու շնորհիւդ, Մաղլէն, մեր ապագայն այսօր այնքան գեղեցիկ ու ապահով է, որքան որ անյոյս էր երեկ, երբ...

— Ես ալ կ'ըսեմ որ դու տակաւին վիշտ ունիս, Օֆի, պէտք է որ լիակատար ուրախութիւն մը կարդայի դէմքիդ վրայ, և դու հազիւ կրնաս վշտերդ ծածկել։

— Արդեօք զիս ապերա՞խտ կը կարծես։

— Կը կարծեմ որ խեղճ սիրտդ վիրաւորեալ է, և այդ վէրքն այնքան ցաւագին է որ, բերած գեղեցիկ լուրս քեզի դոյզն ինչ չի մեղմացներ զայն։

— Մաղլէն, կ'աղաչեմ, թող զիս, այդպէս երեսս մի նայիր, վասն զի կը խըռովիմ. Մի՝ հարցներ, բայց հաւատայ որ կենացս մէջ բնաւ չպիտի մոռնամ բրածդ։

Եւ տիկին Տիւթէրթրը դէմքը ձեռքերուն մէջ ծածկեց ու սկսաւ լալ։

Մարքիզուհին քանի մը վայրկեան մը-տածեց, վարանեցաւ և յարեց.

— Օֆի, ամուսինդ ո՞ւր է։

Նորատի կինը սարսռաց, դողաց, կարմրեցաւ ու ակամայ, գրեթէ խակ երկիւղիւ գոչեց.

— Զինքը տեսնե՞լ կ'ուզես։

— Այո՛։

Չեմ գիտեր... թէ... գործարա՞նն է, պատասխանեց տիկին Տիւթէրթրը թոթովելով· բայց եթէ կ'ուզես, եթէ անպատճառ կը պահանջես, զինքը կանչել տամ, որպէս զի այս լուրն քու բերանէդ իմանայ։

Մարքիզուհին մեղամաղձութեամբ գլուխը ցնցեց և ըսաւ.

— Ես ամուսնոյդ շնորհակալութիւնները ընդունելու համար չէ որ ուզեցի զինքը տեսնել, Օֆի, այլ իրեն ու քեզ միաս բարով ըսելու համար։

— Մնաս բարո՞վ։

— Այս երեկոյ Բարիզէն պիտի մեկնիմ,

— Պիտի մեկնի՞ս։ գոչեց տիկին Տիւթէրթրը, և իւր ձայնին մէջ զարմացման, տխրութեան և ուրախութեան զարմանալի խառնուրդ մը նշմարուեցաւ։

Նոցա և ոչ մին չվրիպեցաւ Մաղլէնի աչքէն։

Նաև տաժանելի տպաւորութիւն մը իմացաւ։ Իւր աչքերն թրջեցաւ, ապա այլայլութիւնը զսպելով, բարեկամուհւոյն ձեռքերն բռնեց ու ժպտելով ըսաւ։

— Խեղճ Օֆիս, դու նախանձոտ ես,...։

— Մաղլէն։

— Ինձմէ կը նախանձիս, խոստովանէ։

— Կ'ապահովեմ թէ...։

— Օֆի, անկեղծ եղի՛ր, ասի ուրանալով ինձ կարծեցնել կուտաս թէ ես գիտնալով քծներ եմ ամուսնոյդ, և Աստուած գիտէ որ այդ իրաւ չէ, ես զինքը մէկ անգամ միայն տեսայ, այն ալ քու դէմդ...։

— Մաղլէն, գոչեց Նորատի կինն ուռանդեամբ ու չի կրնալով արցունքներն բռնել, ներէ՛ ինձ, այս զգացումն անարժան ու անվայել է, վասն զի գիտեմ սրտիդ ազնուութիւնն և դեռ այս վայրկենին դու զամենքս ալ ազատեցիր, բայց եթէ գիտնայի՛ր...։

— Այո՛, բարի Օֆիս, եթէ գիտնա-

ւակացդ սիրումն գրաւեալ, բնաւ փոյթ չբերեր թէ մաղերուդ ձեւը կը վայլէ՞ սիրուն դէմքիդ, թէ շրջազգեստդ լաւ կը յարմարի՛ շնորհալի իրանիդ, թէ ոտքիդ ամանները վայելո՞ւչ էին։ Ամուսինդ ալ իւր աշխատութեանցը զբաղած, քիչ քիչ ինքզինքը մոռցաւ։ Ձեր աչերն անզգալաբար վարժուեցան այս փոփոխութեան, գրեթէ իսկ առանց նշմարելու, ինչպէս որ միասին ապրող երկու հոգի միմեանց ծերանալը չեն նշմարեր։ Եւ ասի այնքան ճշմարիտ է, Սօֆիս, որ եթէ այս ժամուս միտքդ բերես այն շքեղութիւնն ու սիրուն խնամքներն, որոցմով կը զբաղէիք, դու և ամուսինդ, ձեր սիրոյն գեղեցիկ ժամանակները։ պիտի այլայլիս մնաս՝ ներկայն անցեալին հետ բաղդատելով։

— Ադի շատ ճշմարիտ է, Մատլէ՛ն, պատասխանէց Սօֆի՝ տխուր, գրեթէ ամօթապարտ նայուածք մը նետելով իւր անխնամ հագուստներուն և անկարգ մաղերուն վրայ։ Այո՛, քիչ քիչ ամուսնոյս հաճելի ըլլալու արուեստն կամ փափագը մոռցայ։ Աւա՛ղ, հիմա զղջալու ժամանակն անցած է։

— Ինչո՞ւ։ գոչեց մարքիզուհին, քանի որ տակաւին 25 տարու ես, այդպէս հըրապուրիչ դէմք մը, վայելուչ մարմին մը, գեղեցիկ մաղեր, մարգարտի պէս ակռաներ, անուշ աչքեր, դքսուհւոյ ձեռքեր և տղու ոտքեր ունիս . . . ։ Թո՛ղ որ ես կէս ժամ քո սպասուհիդ ըլլամ, սիրելիս, և պիտի տեսնես թէ ամուսինդ առաջուան պէս քեզ սիրահար դարձնելու ժամանակն անցա՞ծ է մի։

— Ա՛հ, Մատլէն, աշխարհի մէջ քենէ զատ մէկը չկայ որ յուսահատից յոյս տայ, և սակայն քսածներուդ ճշմարտութիւնը կը սոսկացնէ զիս. Ափսո՛ս, իրաւունք ունիս, Շարլը այլ ևս չի սիրեր զիս։

— Միշտ նոյնքան կը սիրէ և թերևս աւելի, խե՛ղճ անմիտ. վասն զի դու իրեն համար փորձուած կին մը, իւր զաւակացը մայրն ես, բայց ոչ առաջուան յափշտակիչ սիրուհին, ասոր համար ձեր երջանկութեան առաջին օրերուն եռանդագին ու կրակոտ սէրը չունի։ Այս բսածներս քիչ մը դրական են։ Սօֆիս, բայց վերջապէս Աստուած ըրածը գիտէ, մեզ բոլորովին աննիւթ չէ ստեղծեր։ Մեր անձին մէջ ամեն բան նիւթ չէ, այո՛, բայց ամեն բան հոգի ալ չէ, ուստի պէտք է զարդարել ու հոտաւետել զայն։ Վերջապէս, ներէ՛ այս այլանդակութեանս։ քնտանիքի մը մէջ քիչ մը բաղնիքանոցաւորդ չէ՝ սովորութեամբ ընդարմացեալ զգայարանքներն արթնցնելու համար, ապա թէ ոչ հրապուրիչ սիրուհին միշտ առաւելութիւն մը կ'ունենայ ամուսնոյն վրայ. և ինչո՞ւ համար կնոջ ու մօր պարտականութիւններն անհամաձայն պիտի ըլլան սիրուհւոյ հրապոյրներուն հետ. ինչո՞ւ ամուսինը, հայրը սիրահար չպիտի կարենայ ըլլալ։ Սօֆի, երկու բառով ամփոփեմ քու և իմ կացութիւնն։ Ամուսինդ տեղ կը «էրէ, բայց չէ ՓԱՓԱԳԻՐ տեղ, ղէ՞ղ «էրէր, և ինչ կը ՓԱՓԱԳԻ։

Ապա մարքիզուհին յիմարի մը պէս խնդալով՝ յաւել.

— Զարմանալի չէ՞ որ ես, օրէ՞որէ՞, որ խնդրոյն մէջ շահ չունիմ, վասն զի կը նմանիմ ստամոքս չունեցող և գեղեցիկ կերակուրներու վրայ խօսող որկրամոլին, զարմանալի չէ՞ որ ես դաս տամ ամուսնացեալ կնկան մը։

— Ա՛հ։ Մատլէն, գոչեց Սօֆի եռանդեամբ, այսօր երկու անգամ փրկեցիր զմեզ, վասն զի ամուսինս քեզ համար զգացածին կրնար քենէ նուազ վերհանձն կնկան մը համար ալ զգալ, և մը-

տածէ՛ թէ այն ատեն ո՛ւրքան պիտի տառապէի ու լայի։ Ո՛հ, իրաւունք ունիս, իրաւունք ունիս. պէտք է որ Շարլը իւր նախկին սիրուհին գտնէ իւր կնոջ վրայ։

Երկու մտերմուհեաց խօսակցութիւնն ընդմիջեցաւ Անթօնինի գալուստը։

Ի Գ.

Մաղէնի ու Սոֆիի խօսակցութիւնն ընդմիջուեցաւ Անթօնինի գալստեամբն, որ ուրախութեան, երիտասարդութեան ու երջանկութեան նման եռանդուն ներս մտաւ գոչելով.

— Սոֆի, երեկ գիտէի որ Մաղէն այս առտու հոս պիտի գայ, և վազելով եկայ ձեզ ըսելու որ . . .։

— Շատ մի՛ խօսիր, յարեց մարքիզուհին զուարթօրէն՝ Անթօնինի ճակատն համբուրելով, կորանցնելու ժամանակ չունինք, պէտք է որ Սոֆիի սենեկապանուհիներն ելլանք, ինչպէս որ ատենով կընէինք դըպրոցին մէջ։

— Ի՞նչ կ՚ըսես, գոչեց Նորատի կինը։

— Բայց, Մաղէն, յարեց Անթօնին, ես եկայ ձեզ իմացնելու որ իշխանն ու ու հօրեղբայրս ամուսնութեանս դաշնագիրն ստորագրեցին այս առտու և . . .։

— Դաշնագիրն ստորագրուեր է, զաւակս, այս էր կարևորն, մնացեալն կը պատմես ինձ՝ երբ մեր սիրելի Սոֆին աղեկ մը զարդարենք. այս ալ խիստ կարևոր և ստիպողական է։

Այս մարքիզուհին ցած ձայնիւ տիկին Տիւթերթրի ականջին ըսաւ։

— Ամուսինդ ուր որ է կուգայ, պէտք է որ հիանայ, և հրապուրուի։

Ապա խօսքն Անթօնինի ուղղելով՝ յարեց.

— Շո՛ւտ, շո՛ւտ, աղջիկս. սա զարդասեղանը բռնէ որ պատուհանին առջեւ բերենք և նախ Սոֆիի մազերը շտկենք։

— Բայց, Մաղէ՛ն, պատասխանեց տիկին Տիւթերթրը ժպտելով, վասն զի ակամայ յոյսն ու երջանկութիւնը կը տիրէին սրտին. դու յիմար ես։

— Կարծածիդ չափ չէ, պատասխանեց մարքիզուհին՝ Սոֆին զարդասեղանին առջեւ նստեցնելով։

Այն ատեն Նորա հիանալի մազերն քակելով՝ ըսաւ.

— Ասանկ մազեր ունեցողն եթէ հըրէշի մը պէս տգեղ ալ ըլլայ, կ՚ուզէ անդիի ծայր հրապուրիչ երեւնալ. դու հիմայ ինքզինքդ դատէ։ Օ՛ն, Անթօնին, օգնէ՛ ինձ, վասն զի այս մազերն այնքան երկայն ու խիտ են որ, ձեռքիս մէջ չեն սեղմիր։

Հրապուրիչ բան մ՚էր այս զանազան գեղեցկութեան տէր երեք մտերմուհեաց այսպէս խմբուիլն տեսնել։ Անթօնինի ամբիծ դէմքն զարմանք կը յայտնէր այս անակընկալ զարդարանաց վրայ։ Սոֆի, անցեալն անուշ յիշատակներէն այլայլած, կ՚զգար որ իւր տխուր ու գեղնած դէմքն խարտեաշ մազերուն քօղին ներքեւ ակամայ կը շիկնէր, մինչդեռ Մաղէն, իւր մտերմուհւոյն հիանալի մազերէն օգտուելով, հրապուրիչ ձեւ մը կուտար անոնց։

— Հիմայ, ըսաւ մարքիզուհին Սոֆիի, ի՞նչ շրջազգեստ պիտի հագնիս։ Բայց եթէ ամենքն ալ միևնոյն ձեւի վրայ կըտրուած են, շատ դէշ են։

— Դժբաղդաբար այնպէս են, պա-

տասխանեց Սոֆի ժպտելով ։

— Աղեկ, յարեց մարքիզուհին, գբրաւ կը դնեմ որ ամենքն ալ գոց են ։

— Այո՛, ըսաւ խեղճ Սոֆի ։

— Աղե՛կ, ըսաւ Մատլէն, այնպէս որ այս սիրուն ուսերը, հրապուրիչ թեւերը մշտատեւ թաղման դատապարտուած են, ողբալի՛ բան ։ Օ՛ն ։ գոնէ վայելուչ դիշերազգեստ մը չունի՞ս ։

— Գիշերազգեստներս ամենքն ալ պարզ են ։ Իրաւ է որ ատենով . . . ։

— Ի՞նչ ։

— Շատ գեղեցիկներ ունէի ։

— Ո՛ւր են անոնք ։

— Ինձի պէս ընտանեաց մօր մը համար շատ զարդարուն ըլլալով, պատասխանեց Սոֆի ժպտելով, սա դարանին վերի աչքը նետեցի կարծեմ ամենքն ալ ։

Մարքիզուհին ա՛լ մտիկ չըրաւ, դարանը բացաւ, տակն ու վրայ ըրաւ եւ վերջապէս երկու երեք սիրուն գիշերազգեստ դուրս գծաւոր սնդուսէ և խիստ թարմ։ Անոնցմէ մին ընտրեց, որու մարմինն բաց կապոյտ և գծերն յարդի գոյն էին. բաց ու լայն թեզանիքներն թեւը մերկ պիտի ձգէին արմուկէն վար, և թէ և առջևէն գոց էր, սակայն կրնար ըստ հաճոյս բացուիլ և կուրծքը երեւան հանել ։

— Սքանչելի՛, ըսաւ Մատլէն, այս կերպասը գեղեցիկ ու նոր է, հիմայ ըսպիտակ մետաքսէ գուլպաներ պէտք են, որք արժանի ըլլան սա Սանտրիլեոնի վայելուչ կիսակօշիկներուն, զոր կը գտնեմ այս դարանին մէջ, ուր զէնքերդ պահեր ես, այլ ես պատերազմի չի դացող զինուորի մը պէս ։

— Բայց, սիրելի՛ս, ըսաւ Սոֆի, ես. . .

— Բայց մայց չկայ, դոշեց մարքիզուհին սրտնեղութեամբ, կ՚ուզեմ որ ամուսինդ վերադարձած ատեն ինքզինքն հինգ տարու պզտիկ կարծէ ։

Սոֆի Տիւթէրթրը թեթեւ մը դէմդընելէ ետքը. հնազանդեցաւ իւր մտերմուհւոյն խրատներուն ։ Փիչ վերջը, երկար աթոռի մը վրայ թոյլօրէն ընկողմանած, հաւանեցաւ որ մարքիզուհին վերջին ներկն ալ տայ այս կենդանի նկարին։ Մատլէն քանի մը գանգուրներ ցրուեց վըզին շուրջը, որ անդիի ծայը սպիտակ էր, լայն թեզանիքներն վեր առաւ, որպէս զի արմուկն աղէկ մը երեւնայ, հակառակ Սոֆիի դժկամակութեանը, քիչ մը բացաւ գիշերազգեստին կուրծքը, և քղանցքներն ալ այնպէս մը շտկեց որ՝ նորատի կնոջ գիրուկ սրունքներուն վարի մասը ու սիրուն ոտքերն կ՚երեւնային ։

Պէտք է ըսել թէ Սոֆի Տիւթէրթրը սքանչելի էր այս դիրքին մէջ. այլայլութիւնը, յոյսը, անորոշ կասկած մը իւր անուշ և հրապուրիչ դէմքը գունաւորելով նորա նայուածքն կ՚ոգեւորէին և՝ կուրծքը տրոփել կուտային ։

— Տէ՛ր Ատուած ։ ես այսքան գեղեցիկ ըլլալդ չէի գիտեր ։

— Սոֆի ինքն ալ չէր գիտեր, պատասխանեց Մատլէն ուսերն ցնցելով. ես եմ որ այս հրապոյրներն գիւտեցանէն հանեցի ։

Տիկին Տիւթէրթրի սպասուհին դուռը զարնելով՝ ներս մտաւ ու տիրուհւոյն ըսաւ.

— Պարոնը կը փափագի տիկնոջ հետ խօսիլ ։ Ինքը գործարանն է. կը հարցնէ թէ տիկինը իւր սենեա՞կն է ։

— Հօս ըլլալդ գիտէ, ըսաւ Սոֆի Մատլէնի՝ ցած ձայնիւ ու հառաչելով ։

— Ըսել տուր որ գայ, յարեց մարքիզուհին ։

— Իմաց տուէք Պ. Տիւթէրթրի որ սենեակս եմ, ըսաւ Սոֆի սպասուհւոյն, որ դուրս ելաւ ։

Այն ատեն Մաուլէն խօսքը բարեկամուհւոյն ուղղեց և թևերն երկնցնելով, ըսաւ։

— Եւ հիմայ, մնաս բարո՛վ, Սօֆի. ըսէ՛ ամուսնոյդ որ Պ. Բասքալէն ազատեցաւ։

— Կը մեկնի՞ս, ըսաւ Սօֆի տխրութեամբ. երբ պիտի տեսնեմ զքեզ անգամ մ՚ալ։

— Չեմ գիտեր. թերևս օր մը . . . բայց ամուսինդ կուգայ . . . ես երթամ։

Ապա ժպտելով յարեց.

— Միայն թէ կուզեմ սա դռնակին եռևէն յաղթանակդ տեսնել։

Եւ Անթօնինի նշան ընելով որ հետն երթայ, քովի սրահին դռնակին եռին քաշուեցաւ այն պահուն որ Պ. Տիւթէրթրը իւր կնոջը ննջարանը կը մտնէր։ Փանի մը վայրկեան Շարլի աչքերն ատա և անդ թափառեցան, կարծես այնպիսի մէկն բնտռելով՝ զոր կը յուսար հոն գտնել, և չի նշմարեց Սօֆիի կերպարանափոխութիւնն։ Կինն իրեն ըսաւ։

— Շարլը, ազատեցա՛նք. ահաւասիկ Պ. Բասքալի ստորագրութիւնը։

— Տէ՛ր Ա՛ստուած, իրա՞ւ է, գոչեց Տիւթէրթրը՝ կնոջը տուած թուղթը կարդալով. ապա աչերն Սօֆիի վրայ դարձնելով, նշմարեց նորա հրապուրիչ զարդարանքն։ Զարմանքէն և հրացումէն պահ մը լուռ կենալէ յետոյ՝ գոչեց.

— Սօֆի՛, ադ ի՞նչ է, այդ ի՞նչ նոր ու գեղեցիկ զարդարանք է. ըսել է մեր ազատութեան օրն կ՚ուզե՞ս տօնել։

— Շարլը, յարեց Սօֆի ժպտելով և կարմրելով, այս զարդարանքն նոր չ՚է։ Եթէ կը յիշես քանի մը տարի առաջ այս վիճակիս մէջ հաճելի էի քեզ։

— Կը յիշե՞մ մի, գոչեց Տիւթէրթրը մեկնելով որ [illegible]

ալ յիշատակներ կը զարթնուին յինքեան ա՜հ, այն մեր սիրոյն գեղեցիկ ժամանակն կը վերածնի։ Առաջուան պէս կը տեսնեմ զքեզ. գեղեցկութիւնդ նոր փայլ մը կ՚առնու ինձ համար։ Չեմ գիտեր թէ ինչ է պատճառը, բայց այս չգեղութիւնը, այս շնորհն, այս զարդարանքը, քու կարմրութիւնդ, սա հիրիկին անուշ հոտը զոր այնքան կը սիրէինք, վերջապէս ա՛յն բան կը յատիշտակէ ղիս։ Ո՛չ, ծրբեք այսչան գեղեցիկ տեսած չ՚էի զքեզ, յարեց Տիւթէրթրը սիրալատ ձայնիւ ու Սօֆիի ձեռքերն համբուրելով։ Ո՛հ, այո՛, դու ես, դո՛ւ, ո՛վ իմ առաջին սէրս պաշտեցեալ առարկայն։

— Հիմայ, աղջի՛կ, կարծեմ թէ քաշուելու ատեն է, ըսաւ Մաուլէն Անթօնինի, առանց ժպիտը բռնելու։

Եւ երկուքն ալ ոտքերնուն ծայրը կսխելով՝ սրահէն ելան, և մարքիզուհին անոր դուռը գոցելով, մտան Պ. Տիւթէրթրի սենեակը, ուսկից պարտէզ կ՚ելլուէր։

— Մաուլէ՛ն, ըսաւ Անթօնին մարքիզուհւոյն, քիչ մ՚առաջ չէ՛ թողուցիր որ խօսքս աւարտեմ։

— Խօսէ՛ տեսնեմ, աղջիկս։

— Պ. Ֆրանց հոս է։

— Հո՛ս, ըսաւ մարքիզուհին գոչելով և չկարենալով ցաւագին զգացում մը չ՚իմանալ։ Եւ ի՞նչպէս, ի՞նչու Պ. Ֆրանց հոս եկաւ։

— Ինձմէ իմանալով որ այս առտու հոս պիտի գտնուիս, յարեց Անթօնին, Պ. Ֆրանց եկաւ իւր շնորհակալիքն յայտնել քեզ։ Պարտէզին մէջն է, ահաւասիկ։

Նորատի աղջիկն զայս ըսելով Ֆրանցը ցուցուց, որ արդարև պարտէզին մէջ նըս-

Մատլէն վերջին ու երկար նայուածք մը ձգեց իւր խորտեաշ Փերովքէին վրայ, և արցունք մը գալարեցաւ աչքերուն մէջ. ապա Անթօնինի ճակտէն համբուրելով, թեթև մ'այլայլեալ ձայնիւ ըսաւ նմա.

— Մնասբարո՛վ, աղջի՛կս։

— Ի՛նչպէս, Մատլէն, գոչեց Անթօնին տպշելով, առանց Պ. Ֆրանցը տեսնելու կ'երթա՞ս. բայց այդ անկարելի է, բայց . . .

Մարքիզուհին մատը շրթանցը վրայ դրաւ նշան ընելով Անթօնինի որ լռէ. ապա անգամ մ'ալ աչերն պարտէզին կողմը դարձնելով՝ հեռացաւ ու անհետացաւ։ . . . . . .

Երկու ժամ վերջը Միրանտայի մարքիզուհին Բարիզէն կը մեկնէր՝ սա տոմսը ձգելով արքիդքսին։

Տեր

« Վ.ԷԷՆՆԱ պէտք եղաւ յեղ ապասեմ. եկէ՛ք Բոլորովքէն հրապուրեցէք պէս։

« ՄԱՏԼԷՆ »

ՎԵՐՋ

[illegible]

ԳՐԱՏՈՒՆ

Ց. Ց. ՋԷՔԵԱՃԻՐՃԵԱՆԵ

ՄԱՀՄՈՒՏ — ԲԱՇԱ թիւ 239

Գրատանս մէջ կը գտնուին Պօլսոյ · Երուսաղէմայ Զմիւռնիոյ, Վենետիկի և Վիեննայի հայ մամլոյն գործերէն զատ · Հայերէն · Տաճկերէն · Գաղղիերէն և Անգլիերէն լեզուաց դասական և այլ գրքեր :

Գրատունս գաւառներու և այլ հեռաւոր տեղից յանձնարարութիւնքը ՝ կընդունի դիւրութիւն խօստանալով իրենց փոխադրութեան միջոցներուն :

Մասնաւոր ցուցակ Գրատանս վերաբերեալ գրեանց հեղինակը կամ աշխատասիրողը Էրկասիրութիւնը

Տիկին Ս. Տիւսաբ	. . . . .	Մայտա
Տիկին Մ. Մամուրեան	. .	Փոքրիկ Տղու մը յուշամէջը
Տ. Տ. Ասլանեան Գ.	. . . . .	Բնագրութիւն
« Տ. Ծերեց	. . . . .	Երկունք Թ. դարու
« Տ. Ծերեց	. . . . .	Թէոթորոս Ինշաուն
« Տ. Ծերեց	. . . . .	Թորոս Լեռնի
« Տ. Մամուրեան Մ.	. . . . .	Գիտելիք պարտիք
« « «	. . . . .	Ընդհանուր ազգայ պատմութիւն
« « «	. . . . .	Ընթերցարան
« « «	. . . . .	Մանկտիք
« « «	. . . . .	Ցիշատակք սիրելիականի
« « «	. . . . .	Պատմութիւն բնական գիտութեան
« « «	. . . . .	Տունէն դուրս
« « Ռ. Պերպերեան	. . . . .	Առաջին տերեւք
« « «	. . . . .	Երկու բանախօսութիւն
« « «	. . . . .	Ժողովրդական զրօսանքներ
« « «	. . . . .	Լամընէ բանք հաւատացելոց
« « «	. . . . .	Հէրման Դորէթէա
« « «	. . . . .	Քաղաքական տնտեսութիւն
« Ն. Պերպերեան	.	Բուրատան մանկանց 1882–1883
« « «	. . . . .	Արմնամարդութիւն

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ ՇԱՐՈՒՆԱԿԵԼԻ
Պատկերազարդ Մատենադարան
Եօթը մանացու մեղքեր · Էօժէն Սուլ ·
ԲԱՐԿՈՒԹԻՆ ԲԶՋԱԽՈՀՈՒԹԻՒՆ
ԸՆԴ ՄԱՄԼՈՎ
Քնոտթիւն հնտեւրոպական ճիւղ լեզուաց Հ. Ս. ՏԷՎՐԻՇԵԱՆԻ

1901
1902
1903

2013